

**ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԾԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Երևան 2009

Ծրագրի անվանումը՝

Հայաստանի Հանրապետության բնակչության
ծերացման վերաբերյալ ընտրանքային
հետազոտություն

Իրագործման ժամկետը՝

2008թ. հունիս-դեկտեմբեր

Իրագործման վայրը՝


Հայաստանի Հանրապետության բոլոր 11
մարզերը, ներառյալ ք. Երևանը

*Իրագործող
կազմակերպությունները՝*

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն,
Աշխատանքի և սոցիալական
հետազոտությունների ազգային ինստիտուտ,
ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

*Ֆինանսավորող
կազմակերպությունը՝*

ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամ (UNFPA),
Բնակչության և զարգացման
ռազմավարություններ (ԲԶՌ)- ծրագիր,
ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի
դեպարտամենտ (UN DESA)
ԱՄՆ ՄՁԳ- Հայաստան, Սոցիալական
պաշտպանության համակարգերի հզորացման
ծրագիր (USAID, SPSS)



Հայաստանի Հանրապետության բնակչության ծերացման վերաբերյալ ընտրանքային հետազոտությունն իրականացվել է 2008թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը՝ բնակչության և զարգացման ռազմավարություններ (ԲԶՌ) ծրագրի շրջանակում, ինչպես նաև ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտը (UN DESA) ցուցաբերել են ֆինանսական և տեխնիկական աջակցություն: Սույն հետազոտության արդյունքների ամփոփմանն աջակցել է ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիրը: Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել 50 և բարձր տարիք ունեցող անձանց և նրանց ամուսինների/կանանց ընտանեկան փոխհարաբերությունները, առողջությունը, սպրեյակերպը, բարեկեցությունը, զբաղվածությունը, կենսաթոշակային և ֆինանսական ապահովվածության աստիճանը: Այս տարիքի մարդիկ կազմում են Հայաստանի Հանրապետության բնակչության կարևոր մի շերտ, որը լուրջ ուշադրության և աջակցության կարիք ունի:

Հետազոտության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Կառավարության տուն 3

Հանրապետության Հրապարակ

0010 Երևան, Հայաստան

Հեռ.՝ (374 10) 56-53-65

Ֆաքս՝ (374 10) 56-37-91

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Կառավարության տուն 3

Հանրապետության Հրապարակ

0010 Երևան, Հայաստան

Հեռ.՝ (374 10) 52-43-26

Ֆաքս՝ (374 10) 52-19-21

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ

Պ. Ադամյան, 14

0010 Երևան, Հայաստան

Հեռ.՝ (374 10) 54-34-16, 54-16-89

Ֆաքս՝ (374 10) 54-38-11

Էլ. փոստ: hovhannisyan@unfpa.org

Սույն զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և ոչ միշտ կարող են համընկնել ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 50+ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ	7
ԳԼՈՒԽ 3. ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 50+ ՏԱՐԻՔԻ ԱՆԴԱՄ ՈՒՆԵՑՈՂ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	10
ԳԼՈՒԽ 4. ՏՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	17
ԳԼՈՒԽ 5. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ	18
ԳԼՈՒԽ 6. 50+ ՏԱՐԻՔԻ ԱՆԴԱՄ ՈՒՆԵՑՈՂ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔ, ՍՈՒՏՔԵՐ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐ	21
ԳԼՈՒԽ 7. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ	57
ԳԼՈՒԽ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՐԱՍՖԵՐՏՆԵՐ	115
ԳԼՈՒԽ 9. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	116
ԳԼՈՒԽ 10. ԱՌՈՂՋԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՆԱՄՔ	126
ԳԼՈՒԽ 11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	150
ԳԼՈՒԽ 12. ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ	151
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	175
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	185
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ (քարտեզներ)	189

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի բնակչության ծերացումը մեր դարի ամենամեծ մարտահրավերներից է: Ցանկացած երկրի համար ծերացող երկիր դառնալն իր մեջ այդ երկրի ապագայի համար վտանգ է պարունակում, սակայն միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ ծերերը պետության ու երկրի մտավոր ու հոգևոր ներուժն են, այն հարստությունը, առանց որի չի կարող գոյատևել և ոչ մի երկիր:

Տարեց մարդկանց բարեկեցությունը միշտ էլ եղել է բոլոր պետությունների ուշադրության կենտրոնում՝ նրանց աղքատության կանխարգելումը, ծերության ու հաշմանդամության նպաստների հատկացումը և ողջ կյանքի ընթացքում նրանց ֆինանսական ապահովության պլանավորումը: Սակայն եկամուտը միակ գործոնը չէ և հաճախ ոչ էլ հիմնական գործոնն է, լիարժեք և երջանիկ կյանքն ապահովելու գործում: Բնակարանային ապահովություն, առողջություն, խնամք, տրանսպորտ և սոցիալական շփումներ՝ այս ամենը վճռորոշ են տարեցների լիարժեք կյանքն ապահովելու գործում: Տարեցների հիմնահարցերի վերաբերյալ կառավարության ռազմավարական մոտեցումները հիմնականում վերաբերվում են տարեցների աղքատության մեջ հայտնվելու ռիսկերին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» 2008թ. անցկացված հետազոտության նպատակն էր ուսումնասիրել 50 և բարձր տարիք ունեցող անձանց և նրանց ամուսինների/կանանց ընտանեկան փոխհարաբերությունները, առողջությունը, ապրելակերպը, բարեկեցությունը, զբաղվածությունը, կենսաթոշակային և ֆինանսական ապահովվածության աստիճանը:

Այս տարիքի մարդիկ կազմում են բնակչության կարևոր մի շերտ, որը լուրջ ուշադրության և աջակցության կարիք ունի:

Գլխավոր համակցության ստրատիֆիկացիան

Հետազոտությունն անցկացվել է 2 հարցաթերթերի միջոցով:

Առաջինը՝ Տնային տնտեսության հարցաշարն էր, որը նախատեսված էր 50+ տարիքի անդամ ունեցող տնային տնտեսության գլխավորի համար: Այն ներառում էր հետևյալ բաժինները.

- Տնային տնտեսության ցուցակը
- Տնային տնտեսության բնակարանային պայմանները
- Տնային տնտեսության ունեցվածքը, մուտքերը և դրամական ներհոսքերը
- Տնային տնտեսության ծախսերը, դրամական փոխանցումները և այլ ելքերը

Երկրորդը՝ Անհատական հարցաշարն էր, որը նախատեսված էր տնային տնտեսությունների 50+ տարիքի անդամների և նրանց զույգերի համար: Այս հարցաշարը բաղկացած էր հետևյալ բաժիններից.

- 50+ տարիքի անձանց և նրանց զույգերի սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը (կրթությունը, ամուսնական կարգավիճակը, ծագումը)
- Առողջական բնութագիրը, սահմանափակումները և խնամքը
- Չբաղվածությունը և կենսաթոշակը
- Երեխաները

- Մասնակցությունը տնային տնտեսության կազմակերպմանը
- Սոցիալական աջակցությունը
- Ֆինանսական տրասֆերտները
- Գործունեությունը
- Արժեքները և դիրքորոշումները

Ընտրանքի ձևավորման համար հիմք է հանդիսացել հանրապետության բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը ստեղծվել էր ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2001թ-ի մարդահամարի արդյունքների հիման վրա՝ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ: Ընտրանքի ձևավորման համար հանրապետության բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան բաժանվել է 4 հիմնական խմբերի/տարածաշրջանների ըստ աշխարհագրական դիրքի.

1. Երևան
2. Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք
3. Լոռի, Շիրակ, Արագածոտն
4. Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք

Հետազոտության ներկայացուցչականության ապահովման և որակյալ արդյունքների ստացման համար կարևոր է գլխավոր համակցության ստրատիֆիկացիան: Ստրատաների քանակը այդ խմբերում կազմել են հետևյալ կերպ՝ 12-ը Երևանի համայնքներն են, մարզային մակարդակով բոլոր տնային տնտեսությունները բաշխվել են ըստ երկու կատեգորիաների՝ քաղաք և գյուղ: Գյուղերը և քաղաքները կազմել են տասական ստրատա:

Համաձայն այդ բաշխման՝ ձևավորվել է պատահական, ըստ մարզերի ստրատիֆիկացված, երկաստիճան ընտրանք: Բոլոր մարզերը, ինչպես նաև բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերն ընտրանքային համակցության մեջ ներառվել են ըստ երկրի ընդհանուր տնային տնտեսությունների կազմում այդ բնակավայրերում ապրող տնային տնտեսությունների համամասնության: **Առաջին փուլով** ընտրվել են հաշվային տեղամասերը, այսինքն՝ ընտրանքի նախնական միավորները, որոնք ընտրվել են չափին համամասնական հավանականության (PPS) մեթոդով:

Այսպիսով ընտրանքում ընդգրկվեցին 31 քաղաք՝ 49-ից կամ հանրապետության քաղաքների 63 տոկոսը և 39 գյուղ՝ 950-ից կամ հանրապետության բոլոր գյուղերի 4 տոկոսը: Երկրորդ փուլով ընտրվել են հետազոտվող տնային տնտեսությունները: Ընտրանքն ստրատիֆիկացված էր ըստ գլխավոր համակցության մեջ ընտրանքի յուրաքանչյուր նախնական միավորի ունեցած տեսակարար կշռի: Կշիռը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$P_{hk} = \frac{a * n * M_h^k}{M_h}$$

$$W_{hk} = \frac{1}{P_{hk}}$$

որտեղ

p_{hk} - հ-րդ ստրատայում k-րդ հաշվային տեղամասի ընտրանքում մասնակցելու հավանականությունն է

a - հ-րդ ստրատայում ընտրանքի համար անհրաժեշտ հաշվային տեղամասերի քանակն է

n - k -րդ հաշվային տեղամասում ընտրանքի համար անհրաժեշտ տնային տնտեսությունների քանակն է

M_h^k - k -րդ հաշվային տեղամասի չափն է

M_h - հ-րդ ստրատայի չափն է

Գաշտային աշխատանքների նկարագրությունը

Հետազոտության դաշտային աշխատանքների իրագործման համար կազմավորվել էր հարցազրուցավարներից և խմբավարներից բաղկացած անձնակազմ: Հետազոտության իրականացումը վերահսկվել է խմբավարների կողմից: Նախքան հետազոտության սկսելը դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմի համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց: Յուրաքանչյուր քլաստերում աշխատանքն ավարտելուց հետո հարցազրուցավարը ներկայացրել է լրացված հարցաշարերն ստուգման համար: Միաժամանակ ներկայացվել է ընտրանքի հաշվետվությունը: Ողջ հավաքագրված տեղեկատվությունն անցել է տրամաբանական ստուգում, մուտքագրված տեղեկատվության հիման վրա ստեղծվել է տվյալների բազա, օգտագործելով տվյալների մուտքագրման համար հատուկ ծրագրային փաթեթ: Մուտքագրված տվյալները տարբեր օպերատորների կողմից համադրվել են, որից հետո անցել ծրագրային տրամաբանական ստուգում և ուղղվել ըստ ստացված սխալների ցանկի: Արդյունքում կազմավորվել է 1264 տնային տնտեսությունների տվյալների բազան: Գաշտային աշխատանքների ընթացքում հարցազրուցավարներն այցելել են 1250 հասցե, իսկ հրաժարման միջին հանրապետական մակարդակը գրանցվել է 5% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

2006թ. հետազոտված տնային տնտեսությունների քանակը և հրաժարման դեպքերն ըստ մարզերի

Մարզեր	Տրված հարցաշարերի թիվը	Հարցազրույցն անցկացված տ/տ-ի թիվը	S/S-ում 50 և ավելի տարիքի անձ չհայտնաբերման թիվը	Լրացված հարցաշարերի թիվը	Հարցազրույցն չկայանալու այլ պատճառների տոկոսը	Հրաժարման տոկոսը
Երևան	759	516	133	383	23	5
Արագածոտն	125	75	12	63	20	10
Արարատ	210	147	42	105	33	13
Արմավիր	196	131	31	100	17	2
Գեղարքունիք	188	132	37	95	25	5
Լոռի	216	144	37	107	18	0

Կոտայք	243	174	51	123	23	2
Շիրակ	190	129	31	98	23	6
Սյունիք	158	119	38	81	24	0
Վայոց ձոր	72	41	4	37	10	4
Տավուշ	143	76	4	72	3	1
Ընդամենը	2500	1684	420	1264	21	5

Հետազոտությանը մասնակցելուց հրաժարման դեպքերի տեսակարար կշիռը, որը հաշվարկվում է որպես հրաժարման դեպքերի հարաբերությունը ընդամենը հասցեների նկատմամբ, գալիորեն տարբերվում է ըստ մարզերի:

Ընտրանքի չափը ձևավորվել է հաշվի առնելով 2% ստանդարտ սխալ, 1,96 գործակցով 95% վստահելի միջակայքն ապահովելու համար (t^2 is a factor to achieve the 95 percent level of confidence), որտեղ $deff=2,5$, n_h – տնային տնտեսությունների միջին չափն է, r – որ փոփոխականը պետք է ճշտվի, nr – ըստ 2001 թվականին անցկացված մարդահամարի արդյունքներից ստացված 50 և ավելի բնակչության մասնաբաժինը:

$$n_{hh} = \frac{[t^2 (r) (1-r) (deff)]}{[StErr^2 (p) (n_h) (nr)]}$$

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 50-ԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԱՆՉԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

50-ից բարձր տարիք ունեցող անդամներով տնային տնտեսությունները կազմում են Հայաստանի Հանրապետության բոլոր տնային տնտեսությունների 2/3-ը:

50-ից բարձր բոլոր տարիքային խմբերում կանայք մեծամասնություն են կազմում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

	50-54 տարեկաններ	55-59 տարեկաններ	60-64 տարեկաններ	65-69 տարեկաններ	70-74 տարեկաններ	75+ տարեկաններ
Կին	56%	57%	60%	55%	58%	68%
Տղամարդ	44%	43%	40%	45%	42%	32%

Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ-ում կանանց մահացության կտրուկ աճ է նկատվում 65-70 տարեկանում, քանզի կանանց տոկոսն այս տարիքային խմբում նվազում է, իսկ տղամարդկանցը՝ ավելանում: Այս տարիքում կանանց մահացության աճի մասին է վկայում նաև այն փաստը, որ 70-74 տարեկան տղամարդկանց շրջանում ավելանում է կին չունեցող տղամարդկանց թվաքանակը:

Տղամարդկանց մահացությունն իր գագաթնակետին է հասնում 70 տարեկանից հետո:

Նկատվում է հետևյալ օրինաչափությունը՝ գյուղաբնակ կանայք և տղամարդիկ ավելի երկար են ապրում (միջինում 5 տարով), քան քաղաքաբնակները:

50+ տարիքի անձանց ամուսնական կարգավիճակի և կրթական ցենզի բաշխվածությունն ունի հետևյալ պատկերը:

Ամուսնական կարգավիճակը

- 50-54 տարեկան տղամարդկանց 90% ամուսնացած է, մինչդեռ նույն տարիքի կանանց շրջանում ամուսնացածները կազմում են ընդամենը 65%: Երբևէ չի ամուսնացել 50-54 տարեկան տղամարդկանց 2%-ը, կանանց՝ 10%-ը: Ամուսնալուծված են կամ ապրում են զույգից առանձին այս տարիքի տղամարդկանց 2%-ը, կանանց՝ 10%-ը: Կին չունեն տղամարդկանց 6%-ը, այրի են կանանց 15%-ը: Այսինքն, միայնակ կանանց տոկոսը այս տարիքային խմբում զգալիորեն գերազանցում է միայնակ տղամարդկանց տոկոսին (աղյուսակներ 2 և 3): Ի դեպ, այս տարիքի երբևէ չամուսնացած կանանց ամենաբարձր տոկոսը կազմում են Երևանում բնակվող կանայք (երևանաբանկ կանանց 20% - ը երբևէ ամուսնացած չեն եղել): Այս տարիքի այրի կանանց ամենաբարձր տոկոսը գրանցվել է Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում: Գրեթե չկան 50-54 տարեկան չամուսնացած կամ ամուսնալուծված տղամարդիկ Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում:
- 55-59 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում նկատվում է մի հետաքրքիր առանձնահատկություն. այս տարիքային խմբում ավելանում է ամուսնալուծված տղամարդկանց թիվը, փոխարենը նվազում է ամուսնալուծված կանանց թիվը (բացառություն է կազմում Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանը, որտեղ ամուսնալուծված կանանց թիվը գրեթե 2 անգամ աճում է՝ 7%-ից հասնելով 12%): Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ երբևէ չամուսնացած տղամարդիկ Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում հանդիպում են միայն այս տարիքային խմբում:
- Գնալով ավելանում է նաև այրի կանանց տոկոսը, որն օրինաչափություն է դառնում բոլոր տարիքային խմբերի համար:
- 60-64 տարեկան կանանց շրջանում այրիների կտրուկ աճ է նկատվում (գրեթե 3 անգամ) Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում: Նշված տարածաշրջանում այս տարիքի կանանց մոտ 41%-ը (այսինքն՝ գրեթե ամեն երկրորդը) այրի է, ինչն իր հերթին, վկայում է 60 տարեկանից հետո տղամարդկանց մահացության կտրուկ աճի մասին: Այսինքն, այս տարածաշրջանում տղամարդկանց կյանքի միջին տևողությունը հանրապետական միջինից ցածր է:
- 65-69 տարեկան տղամարդկանց 14%-ն է միայնակ, այրի է կանանց 49%-ը (Երևանում այս տարիքի այրի կանայք կազմում են 58%): Այս տարիքի Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանի ու երևանաբանակ կանանց ընդամենը 37% է ամուսնացած (համեմատության համար՝ միջին հանրապետականը կազմում է 45%):
- Հատկանշական է, որ Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանի 65-69 տարեկան տղամարդկանց 100%-ն ամուսնացած են: Ինչը վկայում է, մի կողմից այն մասին, որ մեր իրականության մեջ ամուսնալուծված կամ կնոջը կորցրած տղամարդիկ անգամ այս տարիքում ավելի շատ հնարավորություններ ունեն

ամուսնանալու, քան կանայք: Մյուս կողմից, կանայք կենցաղում ավելի ինքնուրույն են, քան տղամարդիկ:

- 70-74 տարեկան տղամարդկանց շրջանում չամուսնացածներ կամ ամուսնալուծվածներ չկան, միայն ամուսնացածներ ու կնոջը կորցրածներ են: Այս տարիքային խմբում Հայաստանի Հանրապետությունում միջինը կնոջը կորցրել է ամեն 5-րդ տղամարդը, իսկ այրի է ամեն 2-րդ կինը: Սակայն կնոջը կորցրածների թիվը բարձր է հանրապետական միջինից Լոռիում, Շիրակում, Արագածոտնում (ամեն 4-րդ տղամարդը), Արմավիրում, Արարատում, Վայոց ձորում ու Սյունիքում (գրեթե ամեն 3-րդ տղամարդը):
- 75+ տարիքային խմբում կնոջը կորցրել է տղամարդկանց 34%-ը, այրի է կանանց 75-80%-ը: Ամուսնացած են այս տարիքի տղամարդկանց 63%-ը, կանանց՝ 19%-ը («հաճելի բացառություն են» կազմում Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանի կանայք՝ նրանց 30%-ն ամուսնացած են):
- Այսինքն, այս տարիքային խմբում (և առհասարակ տարիքի հետ) միայնակ կանանց աննախադեպ աճ է գրանցվում:

Աղյուսակ 2.

Տղամարդիկ (ՀՀ)

	50-54 տարեկան- ներ	55-59 տարեկան- ներ	60-64 տարեկան- ներ	65-69 տարեկան- ներ	70-74 տարեկան- ներ	75 տարե- կանից բարձր
Ամուսնացած	90%	89%	93%	86%	80%	63%
Չամուսնացած	2%	2,0%				
Ամուսնալուծված են կամ ապրում են գույզից առանձին	2%	4%	3%			2%
Կինը մահացել է	6%	5%	4%	14%	19%	34%

Աղյուսակ 3.

Կանայք (ՀՀ)

	50-54 տարեկան- ներ	55-59 տարեկան- ներ	60-64 տարեկան- ներ	65-69 տարեկան- ներ	70-74 տարեկան- ներ	75 տարեկա- նից բարձր
Ամուսնացած	65%	68%	58%	45%	35%	19%
Չամուսնացած	10%	6%	8%	3%	5%	5%
Ամուսնալուծված են կամ ապրում են գույզից առանձին	10%	7%	6%	3%	6%	1%
Այրի է	15%	19%	28%	49%	54%	75%

Կրթական ցենզը

- Գրեթե բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ 75+ տարիքի, տղամարդիկ ավելի հաճախ են բացի դպրոցից մեկ այլ տեղ ևս սովորել, քան կանայք: Սակայն» այստեղ կան տարածաշրջանային առանձնահատկություններ:
- Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանում 50-54 տարեկան կանանց թիվը, որոնք բացի դպրոցից մեկ այլ տեղ էլ են սովորել, գրեթե 10%-ով գերազանցում է

նույն տարիքի տղամարդկանց թիվը: Փոխարենը, 75+ տարեկան կանանց ընդամենը 7%-ն է բացի դպրոցից այլ տեղ սովորել՝ տղամարդկանց 27%-ի դիմաց:

- Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում 55-69 և 75+ տարեկան կանայք ավելի բարձր կրթական ցենզ ունեն, քան նույն տարիքի տղամարդիկ: Հատկապես ուշագրավ է 75+ տարիքային խումբը. այս տարիքի կանանց 35%-ը բացի դպրոցից սովորել է մեկ այլ տեղ ևս, մինչդեռ այդպիսիները տղամարդկանց շրջանում լիովին բացակայում են (0%):
- 50+ տարիքի կանայք ավելի հաճախ, քան տղամարդիկ, բավարարվել են միջին մասնագիտական կրթությամբ: Տղամարդիկ հիմնականում նախընտրել են ավարտել պրոֆտեխուսումնարան կամ ստանալ բարձրագույն կրթություն: Այս հանգամանքն է պատճառներից կամ բացատրություններից մեկը, որ 50+ տարիքային բոլոր խմբերում կանանց գործազրկության տոկոսն ավելի բարձր է, քան տղամարդկանցը: Այսօր աշխատանքի շուկայում հիմնականում պահանջարկված են կամ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետները կամ էլ ընդհակառակը՝ բանվորական մասնագիտությունները: Թեև գործազրկության տոկոսն առհասարակ բարձր է այս տարիքային խմբում, այդ թվում նաև տղամարդկանց շրջանում:

ԳԼՈՒԽ 3. ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 50+ ՏԱՐԻՔԻ ԱՆԴԱՄ ՈՒՆԵՑՈՂ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ընտանիքն ու ընտանեկան հարաբերություններն ուսումնասիրելիս, հետազոտողների մեծ մասն առանձնացնում է 2 տիպի փոխհարաբերություններ ամուսինների միջև՝ համատեղ և անջատ (սեպարատ): Սակայն այս երկու բնութագրերը կրում են ոչ թե բացարձակ, այլ բարդ ու համալիր բնույթ:

Սովորաբար առանձնացնում են փոխհարաբերությունների 4 ոլորտ՝ երեխաների խնամքն ու դաստիարակությունը, տնային պարտականությունները, որոշումների ընդունումը (հատկապես ֆինանսական հարցերի վերաբերյալ) և ազատ ժամանցի կազմակերպումն ու անցկացումը:

Հիմնվելով անցկացված հետազոտության տվյալների վրա, փորձենք հերթականությամբ անդրադառնալ այս 4 ոլորտի կազմակերպման խնդիրներին 50+ տարիքի անդամներ ունեցող տնային տնտեսություններում: Ինչպես նաև պարզել, թե այսօր այդ տնային տնտեսություններում վերը նշված որ տիպի փոխհարաբերություններ են գերիշխում:

14 ՏԱՐԵԿԱՆԻՑ ՓՈՔՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հետազոտության կարևորագույն խնդիրներից մեկն էր՝ ուսումնասիրել, թե ինչպես են բաշխվում երեխաների խնամքի հետ կապված պարտականությունները 14 տարեկանից փոքր երեխաներ ունեցող 50 և ավելի տարիքի մարդկանց, նրանց զույգերի և ընտանիքի այլ անդամների միջև:

Քանի որ երեխաների խնամք ասածը լայն ընդգրկում ունի, ապա այն բաժանվել է մի քանի կարևորագույն բաղադրիչների և ըստ դրանց կատարման՝ դիտարկվել են խնամք իրականացնողները:

«Ո՞վ է երեխաներին հազցնում/կամ հետևում, որպեսզի նրանք հազնվեն» հարցի պատասխանները թույլ են տվել բացահայտել հետևյալ հետաքրքիր իրողությունը:

Երևանաբնակների 17%-ը պատասխանել են «միայն ես կամ սովորաբար ես», 13%-ը գտնում են, որ «սովորաբար ամուսինս/կինս կամ միայն ամուսինս/կինս», 8%-ն էլ համոզված են, որ «ես և ամուսինս/կինս հավասարապես»: Տնային տնտեսության այլ անդամների մասնակցությունը նշել են Երևանի հարցվողների միայն 4%-ը: 57,7%-ը պատասխանել է, որ երեխաներն ինքնուրույն են հազնվում: Սակայն եթե դիտարկենք բոլոր հարցվողներին, ապա երևանաբնակները (թեպետ դա կանխատեսելի էր) այս հարցում ցուցաբերել են էգալիտարիզմի՝ այսինքն, պարտականությունների շատ թե քիչ հավասար բաշխվածության ամենաբարձր ցուցանիշը, քանզի բոլոր հարցվողների մեջ 40,3%-ը հենց երևանաբնակներն են, որ տվել են «ես և ամուսինս/կինս հավասարապես» պատասխանը: Երեխաների ինքնուրույնության աստիճանը նույնպես ամենաբարձրը Երևանում է՝ «երեխաներն իրենք» պատասխան տվողների 70,6%-ը երևանցիներն են:

Փոխարենը, էգալիտարիզմի ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում: Այդ պարտականությունը կամ միայն կնոջ վրա է, կամ էլ ընտանիքի մեկ այլ անդամի: Ի դեպ, նույն պատասխանն են տվել թե 50-ից բարձր տարիքի հարցվողները և թե 50-ից ցածր տարիք ունեցողները:

«Ես և ամուսինս/կինս հավասարապես» պատասխանը Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի, ինչպես նաև Լոռվա, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջաններում հարցվողների շրջանում կազմում է համապատասխանաբար 14,6% և 6,5%: Սակայն՝ եթե դիտարկելու լինենք բոլոր հարցվողների մեջ, ապա այդ պատասխանը նախընտրողների մոտ 30%-ը նշված տարածաշրջանների բնակիչներն են: Բոլոր հարցվողների մեջ «միայն ամուսինս/կինս» պատասխանը վերը նշված տարածաշրջանների բնակիչների միջև հավասար է բաշխվել (յուրաքանչյուրում մոտ 41%):

Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում ընտանիքի այլ անդամներն այս գործին գրեթե չեն մասնակցում՝ «այլ անձինք, որոնք ապրում են տնային տնտեսությունում» պատասխանը գրեթե չի տվել 50+ տարիքի որևէ հարցվող:

Հատկանշական է (և այս օրինաչափությունը նկատվում է գրեթե բոլոր հարցերում), որ եթե կինը (երեխայի մայրը) 50-ից ցածր տարիքի է, ապա երեխաների հազցնելու կամ դրան հետևելու պարտականության գերակշռող մասը նրա ուսերին է ընկնում՝ «միայն ես» պատասխանը տվել են 50- տարիքի Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի բնակիչների 57,9%-ը, որոնք կազմում են այսպես պատասխանողների 60,1%-ը:

Այս հարցում ընտանիքի այլ անդամների դերակատարումն ամենաբարձրն է Լոռվա, Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում:

Սակայն վերը նշված հարցի՝ **«Ո՞վ է երեխաներին հազցնում/կամ հետևում, որպեսզի նրանք հազնվեն»**, պատասխանները հետաքրքիր է վերլուծել ամուսնու և կնոջ դիրքերից՝ համեմատելով, թե նրանց կողմից տված պատասխանները որքանով են համընկնում կամ հակասում մեկը մյուսին: Պարզվում է, որ հարցվող գույգերի պատասխանները միշտ չէ, որ

համընկնում են: Այսպես, 14 տարեկանից փոքր երեխա ունեցող զույգերի 22%-ն են համակարծիք, որ միայն կինն է հազցնում երեխաներին կամ հետևում, որպեսզի նրանք հազնվեն: Զույգերի մոտ 38%-ը միահամուռ նշել են, որ դա սովորաբար կնոջ պարտականությունն է, այսինքն՝ ենթադրվում է, որ ամուսինը կամ ընտանիքի այլ անդամները կարող են դրանում որոշակի դերակատարում ունենալ: Այսպիսով, 14 տարեկանից փոքր երեխա ունեցող 50+ տարիքի և նրանց զույգերի 60%-ը միաձայն նշում են, որ իրենց տնային տնտեսությունում երեխաներին հազցնելը *կնոջ պարտականությունն է*, 28%-ի մոտ երեխաներն ինքնուրույն են հազնվում:

Հաջորդ հարցի՝ «*Ո՞վ է երեխաներին քնեցնում կամ հետևում, որ նրանք զնամ քնելու*» պատասխանների վերլուծության արդյունքից թվում է, թե էգալիտարիզմի ամենաբարձր դրսևորումը ցուցաբերում են Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի, ինչպես նաև Լոռվա, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում, քանզի բոլոր հարցվողների մեջ «ես և ամուսինս/կինս հավասարապես» պատասխանը բաշխվել է միայն այս տարածաշրջանների հարցվողների միջև՝ գրեթե 50%/50%: Սակայն տարածաշրջանի ներսում հարցվողների մեջ այս պատասխանն ամենաբարձր տոկոսները չի հավաքել: Տարածաշրջանի ներսում պատասխանողների մեջ ամենահաճախ հնչող պատասխաններից են. կանանց դեպքում՝ «միայն ես», տղամարդկանց դեպքում՝ համապատասխանաբար «սովորաբար կինս» և «միայն կինս»:

Երեխաներին քնեցնելը Երևանում նույնպես «միայն կամ սովորաբար մոր» գործն է համարվում:

Ինչպես և նախորդ հարցում, ինքնուրույնության ամենաբարձր աստիճանը երևանաբնակ երեխաների մոտ է նկատվում. Երևանում հարցվողների 50,3%-ը նշել են, որ երեխաներն իրենք՝ ինքնուրույն են գնում քնելու, այսինքն՝ երևանաբնակ ծնողները երեխաներին ավելի քիչ են վերահսկում, քան մարզերում: Այս ցուցանիշով երկրորդ տեղում են Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի երեխաները՝ նրանց 29,4%-ն ինքնուրույն է որոշում, երբ գնալ քնելու:

Տարբերվում են երեխաների ինքնուրույն քնելու վերաբերյալ պատասխանները 50-ից բարձր և 50-ից ցածր տարիք ունեցող հարցվողների շրջանում (Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում): 50-ից ցածր տարեկանների տոկոսը, որոնք պատասխանել են «երեխաներն իրենք են քնում», երկու անգամ ավելի է, քան 50-ից բարձր տարեկաններինը՝ 5,7%-ը 12%-ի դիմաց:

Երեխաներին քնեցնելու գործում ընտանիքի այլ անդամները ներգրավված են միայն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում:

Զույգերի 60%-ի մոտ **«*Ո՞վ է երեխաներին քնեցնում կամ հետևում, որ նրանք զնամ քնելու*»** հարցի պատասխանները համընկնում են՝ ինչպես և երեխաներին հազցնելը, նրանց քնեցնելը նույնպես *հիմնականում կնոջ պարտականությունն է համարվում*: Թեև դրա հետ մեկտեղ 33%-ը նշել է, որ երեխաներն ինքնուրույն են քնում:

«*Ո՞վ է երեխաների հետ մնում տանը, երբ նրանք հիվանդանում են*» հարցի «ես և ամուսինս/կինս հավասարապես» պատասխանը բոլոր հարցվողների մեջ ամենաբարձր տոկոսն է հավաքել Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում՝ 74,9%: Սակայն տարածաշրջանի ներսում ամենահաճախ հնչել է «սովորաբար կինս» պատասխանը: Նույն

տարածաշրջանում, թե ներսում, թե բոլոր հարցվողների մեջ «երեխաներն իրենք են մնում, առանց որևէ մեկի օգնության» պատասխանը ամենաբարձր տոկոսն է հավաքել:

Հետաքրքիր է այս հարցի պատասխանների բաշխվածությունը երևանաբնակների շրջանում: Պարզվում է, որ Երևանում, երբ երեխան հիվանդանում է, նրա հետ տանը մնում է հիմնականում մայրը կամ, շատ քիչ դեպքերում, այլ անձինք, որոնք տնային տնտեսությունում չեն ապրում: Այլ տարբերակներ գրեթե չկան:

Տնային տնտեսությունում չբնակվող անձանց դերը երեխաների հետ մնալու գործում, երբ նրանք հիվանդանում են, բացի Երևանից, բավականին բարձր է նաև Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում:

Դեպքեր, երբ այլ անձինք, որոնք ապրում են տվյալ ՏՏ-ում, մնում են տանը հիվանդ երեխայի հետ, հանդիպում են միայն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում: Բոլոր հարցվողների մեջ միայն այս տարածաշրջանի բնակիչներն են տվել նման պատասխան՝ 100%:

Չույզերի 56%-ը միանշանակ պատասխանել է, որ երբ երեխաները հիվանդանում են, նրանց հետ տանը սովորաբար *մայրն է մնում*: Հավասարապես է գնահատում իր և ամուսնու/կնոջ դերակատարումն այս հարցում Չույզերի միայն 5,14%-ը:

Երեխաների հետ խաղալու հարցում ամենահաճախակի հանդիպող դեպքերը (61,6%), երբ երկու ծնողն էլ հավասարապես են խաղում երեխաների հետ, բացառապես Երևանում են գրանցվել: Նման բան բացարձակապես չի գրանցվում Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի բնակիչների պատասխաններում: Մյուս տարածաշրջաններում հարցվողների 1/3 նշում են, որ ծնողները հավասար մասնակցություն ունեն երեխաների հետ խաղալու հարցում:

Առավել հաճախ երեխաներն իրենք են իրենց զբաղեցնում և ինքնուրույն խաղում Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում (այս պատասխանն են տվել բոլոր հարցվողների 61,6%-ը, իսկ տարածաշրջանի ներսում՝ 29,4%):

Հետաքրքիր է, որ երեխաների հետ խաղալու գործընթացի մեջ բացարձակապես ներգրավված չեն տնային տնտեսության ներսում կամ տնային տնտեսությունից դուրս ապրող այլ անձինք:

Մեկ այլ հատկանշական դիտարկում. Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում երեխաների հետ խաղում է ծնողներից միայն մեկը, չեն արձանագրվել ոչ հավասար բաշխվածության, ոչ էլ երեխաների ինքնուրույնության դեպքեր:

Իրենց երկրորդ կեսի հավասար մասնակցությունը Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանների 50-ից ցածր տարեկան բնակիչներն ավելի հաճախ են նշել, քան 50-ից բարձր տարիք ունեցողները:

Ուշագրավ է, որ Չույզերի 42%-ը հակված է *հավասարապես գնահատելու իր և զույգի (ամուսնու/կնոջ) մասնակցությունը երեխաների հետ խաղալու գործում*: Չույզերի 27%-ը միաձայն նշում է, որ երեխայի հետ խաղացողը *հիմնականում մայրն է*: Չույզերի 13,6%-ի կարծիքն էլ համընկել է՝ երեխաների ինքնուրույն խաղալու հարցում:

Երեխաներին օգնում են, որպեսզի նրանք կատարեն տնային աշխատանքները, հիմնականում մայրերը (այդպիսին է տնային տնտեսությունների 40%-ի դասավորվածությունը): Ծնողների հավասար մասնակցություն այս հարցում նկատվում է միայն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի պատասխաններում (այս

պատասխանն է տվել հարցվողների 57,5%-ը), ինչպես նաև Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանում (33,8%): Ի դեպ՝ այս երկու տարածաշրջանների ներսում էլ այս պատասխանը առավել հաճախ հանդիպողն է՝ Լոռիում, Շիրակում և Արագածոտնում 25,8%, իսկ Կոտայքում, Տավուշում ու Գեղարքունիքում 35%:

Միայն Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում են հարցվողները արձանագրել, որ երեխաներն ինչ-որ չափով ինքնուրույն են կատարում իրենց տնային աշխատանքները (տարածաշրջանի ներսում նման պատասխան է տվել յուրաքանչյուր չորրորդ հարցվողը) առանց կողմնակի օգնության կամ վերահսկողության: Մյուս բոլոր տեղերում ծնողները (ավելի շատ մայրը՝ 40%) պարտադիր կերպով մասնակցում կամ վերահսկում են գործընթացը:

Ի տարբերություն նախորդ հարցի, այստեղ տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչները նույն կերպ են իրողությունն արձանագրել:

Ջուլգերի միայն 17,3%-ն է նշել, որ հավասարապես են օգնում երեխաներին կատարել տնային աշխատանքները:

Երկու ծնողների հավասար մասնակցություն է գրանցվել **երեխաներին դպրոց, ցերեկային կենտրոն կամ դայակի մոտ տանել-բերելու գործում** Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանի բնակիչների պատասխաններում (80,7% այս պատասխանը նշածների մեջ և 37,4% տարածաշրջանի ներսում):

Ինչպես և երեխայի հիվանդ լինելու պարագայում՝ դեպքեր, երբ այլ անձինք, որոնք ապրում են տվյալ տնային տնտեսությունում, երեխային տանում-բերում են դպրոց, հանդիպում են միայն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում: Այս պատասխանը նշածները բոլորը հենց այս տարածաշրջանի բնակիչներ են: Գ-պրոց գնալ-գալու հարցում առավել ինքնուրույն են Երևանում, Լոռիում, Շիրակում և Արագածոտնում բնակվող երեխաները: Բացարձակ ինքնուրույնություն չի նկատվում Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի երեխաների շրջանում: Նրանց պարտադիր ինչ-որ մեկը՝ որպես կանոն, մայրը կամ ընտանքի այլ անդամը, տանում-բերում է դպրոց կամ ցերեկային կենտրոն:

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել.

- **Երևանում** 14 տարեկանից փոքր երեխաներ ունեցող 50 և ավելի տարիքի ծնողները երեխայի խնամքի հետ կապված պարտականություններն իրենց զույգերի հետ *շատ թե քիչ հավասարապես են բաշխում միայն երեխաներին հազցնելու և երեխաների հետ խաղալու գործում*: Մյուս կողմից՝ Երևանում, այլ մարզերի հետ համեմատած, չափազանց բարձր է առանց ծնողական օգնության և վերահսկողության ինքնուրույն հազցնող և ինքնուրույն քնոող երեխաների տոկոսը: Մնացած բոլոր դեպքերում, այն է՝ մնալ երեխայի հետ տանը, երբ նա հիվանդանում է, օգնել նրան կատարել իր տնային աշխատանքները, տանել-բերել դպրոց, հիմնական ծանրությունն ընկնում է երեխայի մոր վրա: Տնային տնտեսությունում ապրող այլ անձանց մասնակցությունը երեխայի խնամքի հետ կապված ցանկացած հարցում Երևանում գրեթե բացակայում է: Համեմայն դեպս պատասխանողները նման դեպքեր գրեթե չեն նշել: Փոխարենը Երևանում հանդիպում են դեպքեր, երբ հիվանդ երեխայի հետ տանը մնում է, օրինակ, տնային տնտեսությունից դուրս ապրող որևէ մեկը: Երևանաբնակների 67,5%-ը նշում է, որ բավարարված է պարտականությունների նման բաշխվածությունից իրենց թե

տնային տնտեսության ներսում, թե տնային տնտեսությունից դուրս ապրող այլ անձանց միջև:

- **Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանում** 14 տարեկանից փոքր երեխաներ ունեցող 50 և ավելի տարիքի ծնողները երեխայի խնամքի հետ կապված պարտականություններն իրենց զույգերի հետ *հավասարապես են բաշխում հիմնականում երեխաներին քնեցնելու և նրանց դպրոց կամ ցերեկային կենտրոն տանելու գործում*: Գրեթե բոլոր հարցերում՝ կապված երեխայի խնամքի հետ, այս տարածաշրջանում նկատվում է երեխաների ինքնուրույնության չափազանց ցածր մակարդակ: Ինչպես և Երևանում, այս տարածաշրջանում նույնպես, տնային տնտեսությունում ապրող այլ անձինք գրեթե ոչ մի մասնակցություն չունեն երեխայի խնամքի հարցում: Հիմնական դերակատարը մայրն է: Ինչպես և Երևանում, այս տարածքում նույնպես լինում են դեպքեր, երբ հիվանդ երեխայի հետ տանը մնում է տնային տնտեսությունից դուրս ապրող որևէ մեկը:
- **Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում** 14 տարեկանից փոքր երեխաներ ունեցող 50 և ավելի տարիքի ծնողները երեխայի խնամքի հետ կապված պարտականություններն իրենց զույգերի հետ *համեմատաբար հավասար են բաշխում, երբ անհրաժեշտ է մնալ հիվանդ երեխայի հետ տանը կամ երբ պետք է օգնել երեխային կատարել տնային աշխատանքները*: Գրեթե աննշան է տնային տնտեսությունում ապրող այլ անձանց մասնակցությունը երեխայի խնամքի հարցում: Նման իրավիճակը դուր չի գալիս այս տարածաշրջանի 50+ տարիքի ծնողների գրեթե կեսին (46%): Բոլոր հարցվողների մեջ իրենց և այլ անձանց միջև պարտականությունների մման բաշխվածությունից նույնպես դժգոհ են այս տարածքի 50+ տարիքի ծնողների մոտ 80%-ը: Այս տարածքի երեխաները համեմատաբար ինքնուրույն են հետևյալ հարցերում՝ ինքնուրույն քնում են, տանը կարող են մենակ մնալ, երբ հիվանդանում են, ինքնուրույն խաղում են, ինքնուրույն են դասերը սովորում, ինքնուրույն գնում-գալիս են դպրոց կամ ցերեկային կենտրոն:
- **Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանը** աչքի է ընկնում *երեխայի խնամքի հարցում տնային տնտեսությունում ապրող այլ անդամների բավականին ակտիվ և բարձր մասնակցությամբ՝ ի տարբերություն մյուս բոլոր տարածքների*: Թեև տարածաշրջանի ներսում պարտականությունների այս բաշխվածությունը հիմնականում արժանանում է դրական արձագանքի, սակայն ընդհանուրի մեջ գոհունակության ամենացածր տոկոսը նույնպես այս տարածքի բնակիչներինն է:
- Ամուսինների միջև պարտականությունների բաշխվածությունից ամենադժգոհները, ինչպես նաև ամենագոհերը 50+ տարիքի Երևանի բնակիչներն են: Կոտայքում, Տավուշում ու Գեղարքունիքում 50+ տարիքային խմբի ներկայացուցիչները պարտականությունների բաշխվածությունից ավելի են բավարարված, քան 50-տարիք ունեցողները:

Գաղտնիք չէ, որ երեխաների խնամքի համար նախատեսված ցերեկային կենտրոնները, նախադպրոցական հաստատությունների, երկարօրյա խմբերի դայակները կամ բացակայում են կամ դրանց քանակը բավական չէ կամ էլ պարզապես անմատչելի են

(վճարովի լինելու դեպքում) բնակչության մեծ մասի համար՝ բացառությամբ Երևանի: Մա է պատճառներից մեկը, որ հարցվողները նշել են, որ գրեթե չեն օգտվում նման ծառայություններից: Բոլոր հարցվողների մեջ օգտվողների մեծ տոկոս է արձանագրվել Երևանի և Լոռու, Շիրակի ու Արագածոտնի, այսինքն՝ քաղաքային զարգացած ենթակառուցվածքներ ունեցող տարածաշրջանի բնակիչների շրջանում: Այլ տարածքներում օգտվողների թիվը ձգտում է 0-ի:

14 ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՃՐ ՏԱՐԻՔԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԽԵՏԻՄԱՆԵՐԸ

✚ 14 տարեկանից բարձր տարիք ունեցող և 50+ տարիքի ծնողների հետ բնակվող երեխաներն ունեն հետևյալ ամուսնական կարգավիճակները.

- 14-18 տարեկան թե տղաների, թե աղջիկների մեջ ամուսնացածներ գրեթե չկան:
- 19-23 տարեկան տղաների միայն 1,7%-ն է ամուսնացած:
- 19-23 տարեկան երիտասարդ աղջիկները ծնողների հետ են ապրում հիմնականում 2 դեպքերում՝ կամ ամուսնացած չեն (96%) կամ ամուսնալուծված են (4%):
- Իրավիճակը լուրջ փոփոխվում է 23-35 և 35-ից ավելի տարիքային խմբերում:
- 23-35 տարեկան և ծնողների հետ ապրող տղամարդկանց 42%-ն ամուսնացած են, 58%-ը՝ երբևէ չեն ամուսնացել: Նույն տարիքի և ծնողների հետ ապրող կանանց 17%-ն ամուսնացած են, 77%-ը երբևէ չեն ամուսնացել, 6%-ն էլ ամուսնալուծված են:
- 35 տարեկանից բարձր տարիք ունեցող և ծնողների հետ բնակվող տղամարդկանց 83%-ն են ամուսնացած, երբևէ չեն ամուսնացել 13%-ը, 3%-ը՝ ամուսնալուծված են և 1%-ի կանայք մահացել են:
- Նույն տարիքի և ծնողների հետ բնակվող կանանց 26% ամուսնացած են, երբևէ չեն ամուսնացել 47%-ը, ամուսնալուծված են 24%-ը, այրի՝ 3%-ը:

✚ Համեմատության համար, 14 տարեկանից բարձր տարիք ունեցող և 50+ տարիքի ծնողների հետ չբնակվող երեխաների գերակշռող մեծամասնությունը (միջին հաշվով 85%-ը) ամուսնացած են:

❖ 14 տարեկանից բարձր տարիք ունեցող և 50+ տարիքի ծնողների հետ բնակվող երեխաների հիմնական զբաղվածությունն ունի հետևյալ բաշխվածությունը.

- 14-18 տարեկան թե տղաների, թե աղջիկների մեծ մասը (մոտ 80%-ը) սովորում են դպրոցում կամ ուսանող են:
- 19-23 տարեկան տղաների միայն 22%-ն է աշխատում կամ ինքնազբաղված է, 10%-ն ընտանիքի այլ անդամների հետ մասնակցում է ընտանեկան բիզնեսին կամ հողամասի մշակմանը, 22%-ը գործազուրկ է, ևս 22%-ն ուսանող, 22%-ն էլ զինվորական ծառայության մեջ է:
- 19-23 տարեկան աղջիկների միայն 13%-ն է աշխատում, 6%-ն ընտանիքի այլ անդամների հետ մասնակցում է ընտանեկան բիզնեսին կամ հողամասի մշակմանը, 22%-ը գործազուրկ է, 57%-ն՝ ուսանող:

- 23-35 տարեկան և ծնողների հետ ապրող տղամարդկանց 59%-ն աշխատում կամ ինքնագրադված է, 12%-ն ընտանիքի այլ անդամների հետ մասնակցում է ընտանեկան բիզնեսին կամ հողամասի մշակմանը, 20%-ը գործազուրկ է, 5%-ը՝ ուսանող, մոտ 3%-ը կենսաթոշակառու է ու չի աշխատում:
 - Ծնողների հետ ապրող 23-35 տարեկան կանանց 48%-ն է աշխատում, 10%-ն ընտանիքի այլ անդամների հետ մասնակցում է ընտանեկան բիզնեսին կամ հողամասի մշակմանը, 24%-ը գործազուրկ է, 13%-ն՝ ուսանող, 5%-ն էլ ընտանիքով է գրադվում, չի աշխատում և կենսաթոշակառու չէ:
 - 35 տարեկանից բարձր տարիք ունեցող և ծնողների հետ բնակվող տղամարդկանց արդեն 63%-ն է աշխատում, ընտանիքի այլ անդամների հետ մասնակցում է ընտանեկան բիզնեսին կամ հողամասի մշակմանը 14%-ը, գործազուրկ է 16%-ը, կենսաթոշակառու՝ 3%-ը:
 - Ծնողների հետ բնակվող նույն տարիքի կանանց 55%-ն է աշխատում, 10%-ն ընտանիքի այլ անդամների հետ մասնակցում է ընտանեկան բիզնեսին կամ հողամասի մշակմանը, 23%-ը գործազուրկ է, 5%-ն ընտանիքով է գրադվում, չի աշխատում և կենսաթոշակառու չէ, 3%-ը աշխատող կենսաթոշակառու է:
- ❖ 50+ տարիքի ծնողների հետ չբնակվող երեխաների մեջ գրադվածության ամենաբարձր մակարդակը նկատվում է 35-ից բարձր տարիք ունեցողների մոտ (81%): Մյուս կողմից, գործազրկության ամենաբարձր մակարդակը նույնպես այս տարիքային խմբում է: Ջբադվում են ընտանիքով և չեն աշխատում 19-23 տարեկանները, որպես կանոն՝ կանայք:

ԳԼՈՒԽ 4. ՏՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Հետազոտության խնդիրներից մեկն էր ուսումնասիրել տնային պարտականությունների բաշխումը 50+ տարիքի մարդկանց և նրանց զույգերի միջև:

Հետազոտության արդյունքում պարզվեց, որ ամենօրյա ուտելիքի պատրաստումը տան պարտականությունների բաշխվածության մեջ ամենախտրազատված ոլորտն է՝ այն գրեթե բացառապես կնոջ պարտականությունների մեջ է մտնում (այսպիսին են զույգերի 74,5%-ի պատասխանները):

60% զույգերի մոտ ավսեններ լվանալը նույնպես միայն կնոջ պարտականություններից է: Տնային տնտեսության 21%-ի դեպքում ավսենները լվանում է տնային տնտեսությունում ապրող այլ անդամ: Ամենայն հավանականությամբ այդ անդամը նույնպես կին է: Միաժամանակ, այս երկու հարցում գրեթե նշանակություն չունի, կինն աշխատում է, թե՛ ոչ:

Սննդի գնումը շատ թե քիչ հավասարապես է բաշխվում ամուսինների միջև: 27,3%-ը նշել են, որ հավասարապես մասնակցում են սննդի գնման գործընթացին: Աշխատանք ունեցողների 57%-ը նույնպես նշում է, որ այս պարտականությունը հավասարապես է բաշխվում իրենց և ամուսինների/կանանց միջև:

Տան մաքրումը, անկախ տնից դուրս զբաղված լինել կամ չլինելու հանգամանքից 51% զույգերի կարծիքով, կինը պետք է իրականացնի: Թեև այս հարցում բավականին բարձր է տնային տնտեսությունում ապրող այլ անդամների մասնակցությունը, զույգերի 29%-ը նշում են նրանց օգնությունը տան մաքրման գործում:

Տան վերանորոգում կամ չի իրականացվում, կամ 20%-ի դեպքերում հիմնականում իրականացնում են ամուսինները, 11%-ի դեպքերում՝ տնային տնտեսությունում ապրող այլ անդամները, 3%-ի դեպքերում վերանորոգումն իրականացվում է տնային տնտեսությունից դուրս ապրողների կողմից:

Կոմունալ ծախսերի վճարման հարցում պարտականությունների խիստ բաշխում չի նկատվում՝ ով հասցնում է, նա էլ վճարում է:

Այսպիսով, տնային պարտականությունների բաշխումը 50+ տարիքի մարդկանց և նրանց զույգերի միջև կարելի է բնութագրել իբրև ամուսինների փոխհարաբերությունների առավել անջատ ու խտրազատված ոլորտ:

Սակայն հարցվող կանանց 61%-ը և տղամարդկանց 68%-ը բավարարված են պարտականությունների նման բաշխվածությունից:

ԳԼՈՒԽ 5. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Այժմ դիտարկենք լիդերության խնդիրն ընտանիքում՝ որպես դրա (ընտանիքի) բաղկացուցիչ մասերից մեկը: Տեսնենք, թե ովքեր են հիմնականում որոշումներ ընդունում ընտանիքի առօրյային վերաբերող կարևորագույն հարցերի վերաբերյալ:

Երևանաբնակ 50+ տարիքի տնային տնտեսության անդամների մեծ մասը պնդում են, որ **ամենօրյա գնումների վերաբերյալ որոշումները** միանձնյա են կայացնում (27%), դրան հետևում են «ես և ամուսինս/կինս հավասարապես» (24,2%) և «այլ անձինք, որոնք ապրում են տնային տնտեսությունում» (20,9%) պատասխանները: Բայց, եթե համեմատելու լինենք, ապա Երևանից դուրս մնացած բոլոր տարածաշրջաններում ամենօրյա գնումների մասին համատեղ որոշումներ կայացնող զույգերի թիվն ավելի մեծ է: Այդ պատասխանը ամենաշատ տոկոսն է հավաքել բոլոր մարզերում (բացի Երևանից) առավելագույնին հասնելով Արմավիրում, Արարատում, Վայոց ձորում և Սյունիքում (34,5% տարածաշրջանի ներսում հարցվողների թվաքանակի մեջ): Դրա հետ մեկտեղ, բոլոր հարցվողների մեջ, որոնք բնութագրել են որոշումների կայացումը իբրև համատեղ, երևանաբնակները գերակայում են՝ կազմելով 30% բոլոր հարցվողների ընդհանուր թվաքանակի մեջ:

Հետաքրքիր է, որ 50-ից ցածր տարիքի հարցվողներն ավելի են (համարյա կեսը) հակված ամենօրյա գնումների մասին որոշումների ընդունումը բնութագրել իբրև համատեղ կայացվող, քան 50+ տարիքի հարցվողները:

Ընդհանուր առմամբ, զույգերի 37%-ը համակարծիք են, որ ամենօրյա գնումների մասին որոշումները կայացվում են համատեղ: Եվս 27,8%-ը պնդում են, որ դա սովորաբար կնոջ գործն է, 7,14% տնային տնտեսություններում այս հարցի վերաբերյալ որոշումը կայացնողը տնային տնտեսություններում ապրող այլ անդամն է:

Թանկարժեք գնումների վերաբերյալ որոշումներ ընդհանրապես չեն ընդունում երևանաբնակ 50+ տարիքի մարդկանց 59,5%-ը, Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի

տարածաշրջանում՝ 41,5%-ը, Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում՝ 31,9%-ը, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանում՝ 23,6%-ը:

Բայց նման որոշում կայացնելու դեպքում հարցվողների զգալի մասը (40%) նշում է, որ որոշումները համատեղ են կայացվում: Ի դեպ, այդպես մտածող 50- տարիքի հարցվողները գրեթե 2 անգամ ավելի են, քան 50-ից բարձր տարեկանները: Եվս մեկ հետաքրքիր դիտարկում՝ 50+ տարեկանները նշում են նաև ընտանիքի այլ անդամների մասնակցությունը թանկարժեք գնումների վերաբերյալ որոշումների ընդունման գործում, ինչը բացարձակ չի երևում 50- տարիքի հարցվողների պատասխաններում, բացառությամբ Երևանի, որը չնչին տոկոս է կազմում (3,2%):

Ի տարբերություն երիտասարդ գույգերի, *ինչքան ժամանակ ծախսել վճարովի աշխատանքի վրա*, հատուկ որոշումներ ընդունելն արդեն արդիական ու կարևոր չէ 50+ տարեկանների համար: Լավ է արդեն այն փաստը, որ նրանք ունեն աշխատանք և աշխատում են: Հարցվողների գերակշռող մասը (առնվազն կեսից ավելին) հաստատում են, որ դա այն հարցը չէ, որի շուրջ անհրաժեշտ է այս տարիքում որոշումներ կայացնել: Նրանց հետ համակարծիք են նաև իրենց 50- տարիքի գույգերը:

Գրեթե նույն պատկերն է *ազատ ժամանցի կազմակերպման և անցկացման վերաբերյալ որոշումներ ընդունելու դեպքում*: Սակայն, եթե կարիք կա նման որոշում կայացնելու, ապա 33% դեպքերում այդ որոշումն ընդունվում է համատեղ քննարկման արդյունքում:

Երեխաների դաստիարակության հարցում, եթե ընտանիքում կան 18 տարեկանից փոքր երեխաներ, նկատվում է համատեղ որոշումներ կայացնելու ընդգծված միտում:

Ընդհանրապես պետք է նշել, որ երբ այս հետազոտության տվյալները համեմատում ենք այլ հետազոտությունների տվյալների հետ, որոնք ուսումնասիրում են մինչև 50 տարեկան գույգերի փոխհարաբերությունները, ապա 50+ տարիքում ձգտումը դեպի համատեղ որոշումներ կայացնելը, դեպի էգալիտար հարաբերությունները անհամեմատ աճում է, հատկապես տղամարդկանց մոտ:

Այս դրույթը հաստատում է նաև *եկամուտների տնօրինման կազմակերպումը* 50+ տարեկանների և իրենց գույգերի միջև: Հարցվողների կեսից ավելին նշել են, որ «ամբողջ գումարը հավաքում են մեկտեղ և յուրաքանչյուրը վերցնում է այնքան, ինչքան անհրաժեշտ է»: *Հարցվողների 64%-ը նշել են, որ իրենց բավարարում է նման մոտեցումը*:

Նույն կերպ է կազմակերպված եկամուտների տնօրինումը SS-ի այլ անդամների հետ: Սակայն դա օրինաչափություն է մարզերի համար: Երևանում այս հարցը միանշանակ չի լուծվում՝ տարբերակները շատ են ու ցրված: Ամենատարածված տարբերակն է՝ գումարի մի մասը հավաքել մեկտեղ, մյուսը՝ տնօրինել ինքնուրույն:

Որոշումների ընդունման հետ միասին, ուշադրության է արժանի նաև այն հարցը, *թե ինչ խնդիրների շուրջ են սովորաբար տարածայնություններ ունենում 50+ տարեկաններն իրենց գույգերի կամ ընտանիքի այլ անդամների հետ*:

Պարզվում է, որ *տան տնտեսական հոգսերի, ազատ ժամանակի օգտագործման, սեռական հարաբերությունների, ընկերների կամ ծնողների հետ հարաբերությունների, անգամ ոգելից խմիչքների օգտագործման վերաբերյալ տարածայնություններ գրեթե չեն լինում կամ, եթե լինում են, ապա շատ հազվադեպ*:

Ամենահաճախ հանդիպող տարածայնությունները փողի վերաբերյալ են, մի փոքր քիչ՝ երեխաների հետ խնդիրների շուրջ:

Կենսաթոշակատուների հետ ֆոկուս խմբերից

«Մեր ընտանիքում փոփոխություն տեղի ունեցավ, այն ժամանակ, երբ գումարը չէր բավարարում»:

«Ամեն մանրուք ընտանիքում խոսակցության թեմա է դառնում, երբ միջոց չունես... »:

«Մենք համերաշխ ապրում էինք, երբ ես աշխատում էի ու ֆինանսի խնդիր տանը չկար, անհոգ տարիներ էին, իսկ հիմա տան երիտասարդները չեն աշխատում ու անընդհատ վիճաբանություններ են, հարսս թողեց գնաց»:

«...միակ փոփոխությունը եկամտուն է, ֆինանսն է պակասել, փող, փող չկա»:

«Կունֆլիկտների քանակը շատացել է, բայց պատճառը ֆինանսն է, նեղությունից է: Ես իմ թոշակը տալիս եմ երեխաներիս, որ տան վարձերը հասցնեն մուծել: Բայց եթե չտամ, համոզված եմ, որ տանը խոսակցություն կլինի»:

«Ընտանիքում և միջավայրում խնդիրներ առաջանում են միայն այն ժամանակ, երբ օգնության կարիք ես ունենում: Երբ խնամքի, հոգատարության կարիք եմ ունենում, հոգս եմ դառնում երեխաներիս համար: Շատ ժամանակ անտեսում են, ասում են, որ արդեն մեծացել եմ, էլ նորից չեմ երիտասարդանալու, որ ինձ լավ գգամ»:

Տարեցները նշում են մի քանի պատճառներ, որոնք հիմք են հանդիսանում ընտանիքում լարված փոխհարաբերությունների ձևավորման համար. «Երբ երիտասարդ էի, ամեն ինչ էլ անում էի: Տանն էլ ասեկոսե չէր լինում, ես էի տան մեծը, վերջիվերջո, հիմա էլ ուժ չունեմ, առողջությունս չի ներում, ինչ կարողանում եմ՝ այն եմ անում»: Տարեցների առողջական վիճակի փոփոխությունը ընտանիքում առաջացրել է կունֆլիկտներ, քանի որ տարեցները այլևս չեն կարողանում կատարել նախկին գործերը և ընտանիքի անդամներից կախվածության մեջ են:

Հետաքրքիր է նաև, թե ինչպես են հարցվողներն արտահայտում իրենց անհամաձայնությունը:

Հարցվողների գերակշռող մեծամասնությունը նշում է, որ տարածայնությունների ժամանակ գերադասում են հանգիստ արտահայտել իրենց կարծիքն ու անհամաձայնությունը:

Հատկանշական է, որ 50-ից ցածր տարիքի կանայք ավելի հաճախ չեն արտահայտվում, իրենց կարծիքն իրենց են պահում, քան նույն տարիքի տղամարդիկ, հատկապես Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում:

Տղամարդիկ գրեթե 2-3 անգամ ավելի հաճախ են տաքարյուն վիճում ու բղավում, քան կանայք, հատկապես 50- և 50-60 տարեկանները:

Տղամարդիկ նույնպես ավելի հաճախ, քան կանայք, իրենց բարկությունն ուրիշների վրա են թափում, հատկապես 50-, 55-60 և 65-75 տարեկանները:

50- տղամարդիկ, ի տարբերություն այլ տարիքային խմբերի, ավելի հաճախ են լիցքաթափվում իրեր կոտրատելով կամ կնոջը հարվածելով:

ԳԼՈՒԽ 6. 50+ ՏԱՐԻՔԻ ԱՆԴԱՄ ՈՒՆԵՑՈՂ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔ, ՄՈՒՏՔԵՐ ԵՎ ԴՐԱՍԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐ

Բնակչության ծերացման կանխատեսումների, ծերացման կենսաշրջանի ապահովվածության և կենսամակարդակի ընդհանուր նկարագրության մեջ կարևոր տեղ է հատկացվում համապատասխան խմբի բնակչության կենսական–կենցաղային միջավայրի, դրա հիմնական բնութագրիչների, ցուցանիշների և նման այլ անդամ ունեցող տնային տնտեսությունների գնահատմանը: Բնակչության ծերացման հետազոտության շրջանակներում իրականացված հարցումների արդյունքում տնային տնտեսություններից ստացված ֆինանսա–տնտեսագիտական տվյալները խմբավորվում են երկու հիմնական խմբերում`

1. ունեցվածք և ապահովվածություն
2. դրամական շրջանառություն և հաշվեկշիռ

Բնակչության կենսաապահովման խնդիրներում այս երկու խմբերի հիմնական ցուցանիշները կարևորագույն բնութագրիչներ են տնային տնտեսությունների բարեկեցության և ապահովվածության նկարագրությունների համար:

ՈՒՆԵՑՎԱԾՔ

Կենցաղավարման և տնտեսավարման կայացած արդի ձևերը էականորեն տարբերվում են տնային տնտեսությունների գյուղական և քաղաքային տիպերում, ուստի ունեցվածքի բաղադրիչների առումով ակնհայտ է այս տիպերում տարբերություններով պայմանավորված անհավասարակշռությունները: Ուստի համեմատական գնահատումների տրամաբանության շրջանակներում ենթադրվում է բաղադրիչների նույնական խմբով դիտարկման անհրաժեշտությունը: Հետազոտության հարցաթերթում որպես այդպիսին վերցված է կենցաղային իրերի, սարքավորումների և այլ գույքային հետևյալ համախումբը.

1. հեռախոս` ֆիքսված կապի
2. սառնարան
3. գունավոր հեռուստացույց
4. տեսագրիչ կամ DVD-խաղարկիչ
5. բջջային հեռախոս
6. միկրոալիքային վառարան
7. աման լվացող մեքենա
8. խոհանոցային կոմբայն
9. լվացքի մեքենա
10. տնային համակարգիչ
11. ինտերնետ կապակցում
12. արբանյակային հեռուստակապ
13. տաք ջրի համակարգ
14. տեղային ջեռուցման համակարգ

15. մարդատար ավտոմեքենա կամ միկրոավտոբուս՝ անձնական օգտագործման
16. երկրորդ ավտոմեքենա
17. բեռնատար ավտոմեքենա
18. երկրորդ բնակարան, տուն կամ ամառանոց

Ընդ որում, այս համախմբում կարելի է ներքին վերախմբավորումներ իրականացնել ըստ առաջնահերթության և գնային մեծության հայտանիշերի: Հարցաթերթով տվյալների ստացումը կատարվել է ոչ միայն վերոնշյալ գույքի առկայության վերհանումով, այլև ձեռքբերման հնարավորությունների բացակայության և դրանք ունենալու ցանկության առկայության բացահայտմամբ, պատասխանների հետևյալ ելքերով՝

- “ունենք”
- “կուզենայինք ունենալ, բայց չենք կարող մեզ թույլ տալ”
- “չունենք և չենք ցանկանում ունենալ տարբեր պատճառներով”

Ստացված արդյունքները ամփոփ ներկայացվում են ստորև՝ աղյուսակի 1-ում:

Աղյուսակ 1.

Ունեցվածքի առկայությունը և դրա նկատմամբ դիրքորոշումը 50+ տնային տնտեսություններում

	Գույքը	Ունեն %	Կուզենային ունենալ %	Չեն ցան- կանում ունենալ %
1 խումբ	1. Գունավոր հեռուստացույց	94.62	5.10	0.28
	2. Սառնարան	92.26	7.19	0.55
	3. Հեռախոս՝ ֆիքսված կապի	77.98	18.93	3.09
	4. Լվացքի մեքենա	70.28	26.07	3.65
	5. Բջջային հեռախոս	62.49	26.63	10.88
2 խումբ	6. Տեսագրիչ կամ DVD-խաղարկիչ	43.89	40.71	15.40
	7. Տաք ջրի համակարգ	17.09	66.15	16.76
	8. Տեղային ջեռուցման համակարգ	19.67	63.41	16.92
	9. Միկրոալիքային վառարան	16.59	60.75	22.66
	10. Խոհանոցային կոմբայն	10.05	66.36	23.59
3 խումբ	11. Մարդատար ավտոմեքենա կամ միկրոավտոբուս՝ անձնական օգտագործման	15.08	51.87	30.53
	12. Աման լվացող մեքենա	1.71	65.24	33.05
	13. Տնային համակարգիչ	8.72	55.03	36.24
	14. Արբանյակային հեռուստակապ	4.14	57.52	38.34
	15. Ինտերնետ կապակցում	3.99	51.57	44.44
4 խումբ	16. Երկրորդ բնակարան, տուն կամ ամառանոց	1.55	49.98	48.47
	17. Երկրորդ ավտոմեքենա	1.06	36.41	62.53
	18. Բեռնատար ավտոմեքենա	2.01	26.49	71.50

Ունեցվածքի վերոնշյալ համախումբը ներկայացված է վերադասավորված տեսքով, ըստ առաջին անհրաժեշտության հայտանիշի, որի համար հիմք է ընդունված տնային տնտեսության գլխավորների կողմից տվյալ գույքի նկատմամբ մերժողական վերաբերմունքների մակարդակը: Ըստ այդմ, ստացվում է, որ 1–ին խմբի մեջ ընդգրկված է մինչև 11% սահմանագիծը մերժողական դիրքորոշմամբ գույքը, որն էլ հենց ամենասանհրաժեշտ գույքն է: Դրանք են՝ հեռուստացույցը, սառնարանը, ֆիքսված կապի հեռախոսը, լվացքի մեքենան և բջջային հեռախոսը, նշված ըստ առաջնահերթության: 2-րդ խումբը բաղկացած է 5 անուն տեսականուց և այդ խմբի բաղադրիչների նկատմամբ մերժողական մոտեցումը տնային տնտեսություններում տատանվում է 15-24% տիրույթում: Այն, որ չնայած իր փոքրարժեքությանը, ֆիքսված կապի հեռախոսը հայտնվել է երրորդ տեղում, պայմանավորված է կապի օպերատորի ցանցի հասանելիության և որակի ցածր մակարդակով և դրա փոխարեն բջջային հեռախոսը, որն ավելի մոտ է կանգնած 2-րդ խմբին իր մերժողականության ցուցանիշով և առաջին խմբի նախորդ գույքի դիրքին իր առկայության ցուցանիշով, փոխհատուցում է ըստ էության վերոնշյալ բացը: Այս պատկերը ակնհայտ է որոշակի միջմարզային տարածաշրջաններում և հատկապես գյուղական վայրերում: Այսպես քաղաքային բնակավայրերում ֆիքսված կապի հեռախոսի առկայությունը տնային տնտեսություններում տատանվում է 79%-ից 92%-ի սահմաններում, ընդ որում ամենացածր ցուցանիշը Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանում է (79,21%), իսկ գյուղական վայրերում՝ 39-73% սահմաններում, ամենացածրը՝ Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանում (39,13%): Եվ եթե դիտարկենք բաշխումը երկու տեսակի հաղորդակցության միջոցներից որևէ մեկի առկայության պայմաններով, ապա պատկերը կլինի քիչ այլ: Այսպես՝ որևէ տեսակի հեռախոս ունեն՝ 88,86%–ը, ընդ որում, երկու տեսակն էլ ունեն 51,47%–ը, կուզենային ունենալ՝ 10,05%–ը, ընդ որում, երկու տեսակից էլ՝ 7,61%–ը և մերժողական դիրքորոշում ունեն ընդամենը 1,09%–ը:

Մերժողական դիրքորոշումը համեմատաբար բարձր է 1 և 2 անձից կազմված 50+ տնային տնտեսություններում (3,73% և 1,32%), որի անդամները տարիքավոր ու միայնակ են և տվյալ միջոցներով այլ կողմի հետ հաղորդակցման կարիք քիչ ունեն: Վեց և ավելի անդամներով տնային տնտեսություններում հեռախոսը հանդիսանում է առաջին անհրաժեշտության ամենակարևոր պարագան, ուր գրեթե իսպառ բացակայում է դրա նկատմամբ մերժողական դիրքորոշումը:

Սակայն ակնառու է մեկ օրինաչափություն՝ որքան մեծ է տնային տնտեսությունը, այնքան 1–ին խմբի գույքի առկայության ցուցանիշը բարձր է և ի հակադրություն սրա՝ ցածր է մերժողականության ցուցանիշը:

Այսպիսով, առաջին խմբի պարագաները կարելի է անվանել առաջին անհրաժեշտության գույք:

Երկրորդ խմբի մեջ մտնող բաղադրիչների առկայության և պահանջարկի ցուցանիշների հանրագումարը տատանվում է 77-84% տիրույթում: Այս խմբի պարագաները կարելի է անվանել կենցաղային օգտագործման կամ երկրորդական անհրաժեշտության

գույք: Սրանք չունեն այն նշանակությունը և կարևորությունը տնային տնտեսությունների համար, ինչ առաջին խմբի գույքը:

Նախորդ խմբում ընդգրկված հաղորդակցության երկու միջոցների որոշակի համանմանությամբ երկրորդ խմբում ընդգրկված երկու բաղադրիչները՝ տաք ջրի և տեղային ջեռուցման համակարգերը, կարելի է դիտարկել որպես միասնական: Սա հիմնավորված է, հաշվի առնելով երկու հանգամանք՝ նախ, որ այս համակարգերը աշխատում են գերակշիռ դեպքերում գազով և օպերատորի (գազամատակարարի) ցանցը ունի հասանելիության բարձր մակարդակ, ինչպես նաև նկատի ունենալով այն գործոնը, որ գոյություն ունեցող միասնական (տաք ջրա- և ջերմամատակարարման) համակարգերի սարքերն ունեն նույն գինը, ինչը միայն ջերմամատակարարման սարքերը (մատչելիության նույն մակարդակ), հետևապես տնային տնտեսությունների մի զգալի մասում օգտագործվում են միասնական համակարգերը: Միասնական դիտարկման արդյունքում ստացվում է հետևյալ պատկերը՝ որևէ տեսակի համակարգ ունեն 25,27%-ը, ընդ որում, երկու տեսակն էլ կամ միասնականը ունեն 11,54%-ը, կուգենային ունենալ 61,20%-ը, ընդ որում, երկու տեսակից կամ միասնականը՝ 55,63%-ը և մերժողական դիրքորոշում ունեն ընդամենը 13,53%-ը:

Երրորդ խմբում ընդգրկված գույքի մասին անհրաժեշտ է նշել, որ այստեղ առկա գույքի նկատմամբ մերժողական դիրքորոշումների մակարդակը ի հայտ է եկել 30-45%-ի սահմաններում: Բավականին հետաքրքիր երևույթ է այստեղ դրսևորվում, կապված ավտոմեքենայի կամ միկրոավտոբուսի առկայության (15.08%) կամ դրա նկատմամբ պահանջարկի (51.87%) ցուցանիշների հետ: Թեև դրա արժեքը բավականին բարձր է, քան այս խմբի մյուս բաղադրիչներինը, սակայն այս գույքը հանդես է գալիս նաև որպես գործարար եկամտաբերություն ապահովող պոտենցիալ կամ աղբյուր (տաքսի կամ երթուղային տաքսի), հետևապես սրա պահպանման և շահագործման բարձր ծախսերը հիմնավորվում են տնային տնտեսության բյուջե մուտք կատարվող եկամուտներով: Թերևս սրանով է պայմանավորված մերժողականության ցածր մակարդակը, ինչպես նաև խորհրդային ժամանակաշրջանում սեփականաշնորհված և դեռևս շահագործվող մարդատար ավտոմեքենաների ու միկրոավտոբուսների բավականին մեծաքանակ պարկի գոյությունն ապահովում է այս գույքի առկայության բարձր ցուցանիշ:

Դիտարկելով այս խմբի ևս երկու բաղադրիչների՝ տնային համակարգչի (8.72%) և ինտերնետ կապակցման (3.99%) առկայության ցուցանիշները, կարելի է եզրակացնել, որ ժամանակակից աշխարհում հասարակությունների տեղեկատվայնացման արագընթաց գլոբալ զարգացումներից դեռևս բավականին հետ է մնում հայ հասարակությունը: Կարելի է թերևս գյուղ-քաղաք կտրվածքով դիտարկել ցուցանիշները, որը տրամաբանորեն հիմնավորված է, սակայն քաղաքային տնային տնտեսություններում ևս սրանք ցածր են՝ համապատասխանաբար 11.92% և 5.69%:

Նշանակում է, որ դեռևս պատշաճ գնահատական չի տրված այս տեխնոլոգիաներին և հասարակությունը անհաղորդ է այս ոլորտում առկա գործընթացներին, նույնը կարելի է պնդել նաև պետական կառույցների համար: Այս հիմնական պատճառը, ինչպես նաև հեռահաղորդակցական ծառայությունների ու համապատասխան սարքավորումների բարձր գները, ցածր որակը և այլ բացասական հանգամանքները արգելակող ազդեցություն են թողնում ժամանակակից կենցաղային-կենսական այս կարևորագույն բաղադրիչների

ներդրմանը տնային տնտեսություններում: Հայաստանը արդեն մեկ տասնամյակ խոսում է այս ոլորտի կարևորության մասին և որևէ զգալի առաջընթաց այս ուղղությամբ չի գրանցել, շարունակելով անհուսալիորեն մնալ աֆրիկյան և այլ հետամնաց երկրների շարքում՝ երկրների երկրորդ հարյուրյակի ստորին մասերում: Թերևս կարելի է վստահորեն արձանագրել, որ տեղեկատվական տեխնոլոգիաները չեն կարողանում կամ «չեն ցանկանում» մուտք գործել մեր կենցաղ: Միակ հուսալի ցուցանիշն այն է, որ տնային տնտեսությունների կեսից ավելը (51-56%) այսօր ցանկանում են դրանք տեսնել իրենց կենցաղային իրերի շարքում:

Երրորդ խմբի բնութագրական և բնորոշիչ անվանումը կարելի է սահմանել որպես բարեկեցիկ կենցաղի գույք: Այս խմբից պետք է հանել թերևս ինտերնետ կապակցման բաղադրիչը այն հիմնավորմամբ, որ այն իրականացվում է կամ առանց սարքային ձեռքբերման կամ էլ անհրաժեշտ սարքերը և կապակցման ծախսերը էական չեն, ինչպես նաև ինտերնետ կապակցման անհրաժեշտ պայման է հիմնականում տնային համակարգչի գոյությունը: Հետևապես այս բաղադրիչը կարելի է նմանեցնել արբանյակային հեռուստակապի սարքերի՝ ավեհավաքի և այլնի առկայությամբ անվճար հեռուստաալիքներին ի հավելումն վճարովի ալիքների ձեռքբերման հանգամանքին: Երկու դեպքերում էլ դրանք հիմնականում ոչ թե սարքային ձեռքբերման հանգամանքով են պայմանավորված, այլ իրենցից ներկայացնում են ընթացիկ և պարբերական ծախսային հոդվածներ տնային տնտեսությունների համար: Այս բաղադրիչի ներառումը հարցաշարի այս համախմբում նպատակ ուներ վերհանել հասարակության վերաբերմունքը կենցաղային տեղեկատվական տեխնոլոգիական զարգացումներին և պատկերացում կազմել հասարակության տեղեկատվայնացման մակարդակի մասին, ինչպես նաև ունենալ հավելյալ ցուցիչ տնային տնտեսությունների բարեկեցության և ծախսունակության մակարդակի գնահատման համար:

Չորրորդ խմբի գույքի կազմում ակնհայտորեն ընդգրկված են այնպիսիք, որոնք իրենցից առաջին անհրաժեշտություն թերևս չեն ներկայացնում, և դրանց առկայությունը կարող է ցույց տալ տնային տնտեսության բարեկեցության և եկամտային ապահովվածության բարձր մակարդակը: Բացառություն կարող են կազմել միայն մեծաթիվ տնային տնտեսությունները, որոնց համար բնակարանային պայմանների անբավարարությունն է առկա:

Այս խմբի կազմում ընդգրկված «բեռնատար ավտոմեքենա» բաղադրիչը ներառվել է հարցաշարում որպես հավելյալ ցուցիչ տնային տնտեսությունների բարեկեցության և ծախսունակության մակարդակի գնահատման համար, քանի որ նրա առկայությունն ավելի շուտ ցույց է տալիս տնային տնտեսությունների գործարար եկամուտների ապահովման գործոնի առկայությունը (բեռնատարը ձեռնարկատիրական կամ գյուղատնտեսական գործի մեջ օգտագործելը), քան թե կենցաղային նպատակներով դրա օգտագործումը և առաջնային տնտեսավարման անհրաժեշտության պարագա լինելը:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ չորրորդ խմբի գույքը միանշանակորեն կարելի է անվանել գերապահովվածության գույք, որի կազմում ընդգրկված են երկրորդ բնակարանը, տունը կամ ամառանոցը, ինչպես նաև երկրորդ ավտոմեքենան:

Բավական հետաքրքիր պատկեր է ստացվում բնակավայրի, այսինքն՝ կենցաղավարման երկու տարբեր տեսակներով (քաղաքային և գյուղական), ունեցվածքի

վիճակագրական տվյալները դիտարկելիս: Գրեթե բոլոր գույքային բաղադրիչների առկայության մակարդակը քաղաքային բնակավայրերի տնային տնտեսություններում ավելի բարձր է, քան գյուղական տնային տնտեսություններում, բացառությամբ երկու գույքային բաղադրիչների՝ «տեսագրիչ կամ DVD-խաղարկիչ» (46.16% և 42.74%) և «մարդատար ավտոմեքենա կամ միկրոավտոբուս՝ անձնական օգտագործման» (23.91% և 10.59%): Նախավերջին հանգամանքը բացատրվում է գյուղական վայրերում հեռուստատիվների բազմազանության բացակայությամբ, իսկ ավտոմեքենայի դեպքում՝ գյուղատնտեսական արդյունքների իրացման և տեղափոխման համար վերջինիս բարձր պահանջարկով (նման երևույթ առկա է նաև բեռնատար ավտոմեքենայի համար):

Քաղաքային տնային տնտեսություններում մերժողականությունը գրեթե բոլոր գույքային բաղադրիչների գծով ևս ցածր է մերժողականության մակարդակից գյուղական տնային տնտեսություններում, բացառությամբ վերը նշված երկու գույքի, ինչպես նաև միկրոալիքային վառարանի նկատմամբ, բայց ոչ էական չափով: Քաղաքային և գյուղական տնային տնտեսություններում մերժողականության մակարդակների էական տարբերություններ առաջացել են առաջին անհրաժեշտության գույքի համար՝ 2-6.8 անգամ, սակայն փոքր տոկոսային մակարդակների դեպքում՝ 0.1-5.4%, այս երևույթը պայմանավորված է վիճակագրական շեղումներով և էական չէ, մինչդեռ «տաք ջրա- և ջերմամատակարարման տեղային համակարգի» և «տնային համակարգչի» նկատմամբ մերժողականության մակարդակների 1.5 անգամ տարբերությունը պայմանավորված է գույքի նկատմամբ պահանջարկի մակարդակների և կենցաղավարության տիպերի տարբերություններով:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված նկատառումները, կարելի է անհրաժեշտության հայտանիշի հիման վրա, վերոնշյալ երկու՝ հեռախոսի տարբեր տեսակների, նաև տաք ջրի ու ջեռուցման համակարգերի վերամիավորումներով, ինչպես նաև վերևում նշված բաղադրիչները («ինտերնետ կապակցում», «բեռնատար ավտոմեքենա») հանելով՝ կազմավորել նոր ցանկ, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 2.

Ունեցվածքի վերակազմված ցանկը և գույքի կշիռները

Գույքը	Կշիռը գյուղ. բնակ.	Կշիռը քաղաք. բնակ.	Չեն ցանկանում ունենալ %
Առաջին անհրաժեշտության գույք			
1. Գունավոր հեռուստացույց	0.00015	0.00001	0.28
2. Սառնարան	0.00040	0.00005	0.55
3. Հեռախոս՝ ֆիքսված կապի և/կամ բջջային	0.00113	0.00013	1.09
4. Լվացքի մեքենա	0.00472	0.00269	3.65
Կենցաղային օգտագործման գույք			
5. Տեսագրիչ կամ DVD-խաղարկիչ	0.02124	0.02838	15.40
6. Տաք ջրի և/կամ տեղային ջեռուցման համակարգ	0.04290	0.02827	13.53
7. Միկրոալիքային վառարան	0.05650	0.06466	22.66
8. Խոհանոցային կոմբայն	0.07668	0.06825	23.59

Քարեկեցիկ կենցաղի գույք			
9. Մարդատար ավտոմեքենա կամ միկրոավտոբուս՝ անձնական օգտագործման	0.05955	0.09664	30.53
10. Աման լվացող մեքենա	0.11261	0.11117	33.05
11. Տնային համակարգիչ	0.14181	0.09278	36.24
12. Արբանյակային հեռուստակապ	0.12077	0.12598	38.34
Գերապահովվածության գույք			
13. Երկրորդ բնակարան, տուն կամ ամառանոց	0.16075	0.16435	48.47
14. Երկրորդ ավտոմեքենա	0.20080	0.21663	62.53

Աղյուսակ 2-ում բերված վիճակագրական տվյալների հիման վրա ձևավորվել են ցանկում ընդգրկված գույքի կշիռները մերժողականության և առկայության մակարդակներին համապատասխան, սակայն դրանք կազմավորվել են գյուղական-քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների կտրվածքով: Այս կշիռները օգտագործվում են տնային տնտեսության գույքային ապահովվածության մակարդակի սուբյեկտիվ գնահատականի հաշվարկման համար հետևյալ բանաձևով՝

$$P_i = \sum g_{iu} / \sum G_{iu}$$

որտեղ P_i -ն i -րդ տնային տնտեսության գույքային ապահովվածության մակարդակի սուբյեկտիվ գնահատականն է, g_{iu} -ն i -րդ տնային տնտեսությունում առկա գույքի կշիռներն են, G_{iu} -ն i -րդ տնային տնտեսությունում առկա կամ պահանջվող գույքի կշիռներն են, ընդ որում քաղաքային և գյուղական բնակավայրերի տիպերի համար գույքի կշիռները հաշվարկվում են առանձին:

Տնային տնտեսությունների համար հաշվարկված այս գնահատականների հիման վրա կազմավորվել են ըստ տարածաշրջանների տնային տնտեսությունների մեծության և բնակավայրային տիպերի խմբերում տնային տնտեսությունների գույքային ապահովվածության մակարդակների միջին արժեքները, որոնք և թույլ են տալիս կատարել խմբային, տարածաշրջանային գնահատումներ:

Վերլուծելով տնային տնտեսությունների գույքային ապահովվածության մակարդակի ստացված պատկերն ըստ աղյուսակ 3-ի, ակնառու են հետևյալ պնդումները տնային տնտեսությունների գույքային ապահովվածության վերաբերյալ.

- հարաբերական լավագույն իրավիճակը Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանում է, ամենավատը՝ Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանում, որը թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ սա հիմնականում աղետի գոտի է և տնային տնտեսությունների հիմնական մասը հետադեպային ժամանակահատվածում (20 տարի) դեռ չեն հասցրել վերականգնել աղետի ժամանակ կորսված իրենց գույքային ունեցվածքը: Ընդ որում ամենածանր վիճակն այս տարածաշրջանի քաղաքային տնային տնտեսություններում է տիրում, ցուցանիշը մոտ 1.63 անգամ ցածր է Հայաստանի Հանրապետության քաղաքների միջին ցուցանիշից:
- Հայաստանի Հանրապետության քաղաքներից համեմատաբար ամենաբարվոք վիճակը Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք և Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք

տարածաշրջանների քաղաքային տնային տնտեսություններում է, բայց միևնույն ժամանակ գյուղական բնակավայրերից ամենավատ ցուցանիշները առկա են հենց վերջին՝ Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում

- Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսությունների մեծությունից կախված ամենածանր վիճակը տիրում է 8-ից ավելի անդամ ունեցող տնային տնտեսություններում, տարածաշրջաններում այս պատկերը գրեթե կրկնվում է, բացառությամբ Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանի, որտեղ 1 անձից կազմված տնային տնտեսություններն են ըստ էության ամենաուներգուրկը: Այստեղ մակարդակը ցածր է միջին հանրապետական մակարդակից մոտ 11 անգամ
- գյուղական և քաղաքային տնային տնտեսությունները համեմատելիս կարելի է եզրակացնել, որ հիմնականում քաղաքային բնակավայրերի տնային տնտեսություններում գույքային ապահովվածության մակարդակն ավելի բարձր է, քան գյուղերի տնային տնտեսությունների մոտ, բացառությամբ Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանի, ինչպես նաև փոքր տարբերություններով՝ այլ տարածաշրջաններում տնային տնտեսությունների մեծության մի քանի խմբերի:

Աղյուսակ 3.

Տնտեսությունների գույքային ապահովվածության մակարդակի սուբյեկտիվ գնահատականների միջինը տարածաշրջաններում, բնակավայրի տեսակի և տնային տնտեսությունների մեծության խմբերում (սանդղակային միավորներով)

Տարածաշրջան	ՏՏ-ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր ՏՏ-ներով
	1	2	3-5	6-8	8>	
Երևան	0.212	0.176	0.179	0.261	0.164	0.193
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	0.182	0.192	0.217	0.117	0.090	0.187
ընդ որում՝ քաղաքներում	0.228	0.191	0.301	0.161	0.134	0.248
ընդ որում՝ գյուղերում	0.142	0.192	0.106	0.081	0.068	0.129
Լոռի, Շիրակ, Արագածոտն	0.068	0.100	0.156	0.214	0.115	0.140
ընդ որում՝ քաղաքներում	0.017	0.116	0.117	0.214	0.115	0.115
ընդ որում՝ գյուղերում	0.145	0.082	0.201	0.214	–	0.172
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	0.299	0.256	0.214	0.178	0.109	0.227
ընդ որում՝ քաղաքներում	0.296	0.299	0.267	0.225	0.135	0.272
ընդ որում՝ գյուղերում	0.300	0.216	0.169	0.161	0.082	0.194
Հայաստանի Հանրապետություն	0.190	0.179	0.189	0.192	0.119	0.187
ընդ որում՝ քաղաքներում	0.186	0.185	0.200	0.223	0.138	0.197
ընդ որում՝ գյուղերում	0.201	0.166	0.164	0.152	0.074	0.167

**ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Հարցաթերթում նպատակային վերլուծական բաղադրիչների վերհանման համար կատարվող հարցերի շարքում կարևոր տեղ էր հատկացված տնային տնտեսությունների վարման պատասխանատուների՝ տնային տնտեսությունների գլխավորների, կողմից այս գործառույթների իրականացման դյուրինության կամ դժվարության աստիճանի ենթակայական գնահատմանը՝ ըստ հետևյալ սանդղակի և միավորների.

- ա) մեծ դժվարությամբ՝ 1 միավոր
- բ) դժվարությամբ՝ 2 միավոր
- գ) որոշ ջանքերով՝ 3 միավոր
- դ) բավականին հեշտ՝ 4 միավոր
- ե) շատ հեշտ՝ 5 միավոր

ինչպես նաև վերջինիս առարկայականության աստիճանը հավաստող ծախսունակության բնութագրական հոդվածների առկայությունը տնային տնտեսությունում, պարբերական վճարումների ուշացումների բնութագրիչները և խնայողությունների կուտակման հնարավորությունները:

Տնտեսությունների վարման դյուրինության ենթակայական գնահատականների հիման վրա տնային տնտեսությունների բաշխումը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Տնտեսությունների վարման դժվարության աստիճանի ենթակայական գնահատումների հիման վրա տնային տնտեսությունների բաշխումը (%)

Տարածաշրջաններ	Դժվարության աստիճանը	Տնային տնտեսությունների խմբերն ըստ մեծության (անձ)																	
		1			2			3 - 5			6 - 8			8>			Բոլոր ՏՏ-ներով		
		քաղաք	գյուղ	ընդամ.	քաղաք	գյուղ	ընդամ.	քաղաք	գյուղ	ընդամ.	քաղաք	գյուղ	ընդամ.	քաղաք	գյուղ	ընդամ.	քաղաք	գյուղ	ընդամ.
Երևան	Մեծ դժվարությամբ կամ դժվարությամբ	88.6	-	88.6	56.7	-	56.7	62.3	-	62.3	83.6	-	83.6	100.0	-	100.0	69.1	-	69.1
	Որոշ ջանքերով	10.3	-	10.3	33.5	-	33.5	33.3	-	33.3	14.7	-	14.7	0.0	-	0.0	26.5	-	26.5
	Տարբեր աստիճանի հեշտությամբ	1.1	-	1.1	9.7	-	9.7	4.3	-	4.3	1.7	-	1.7	0.0	-	0.0	4.5	-	4.5
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	Մեծ դժվարությամբ կամ դժվարությամբ	68.8	84.9	77.2	57.9	75.3	69.0	81.3	70.6	76.8	61.5	60.8	61.1	100.0	100.0	100.0	72.5	73.0	72.8
	Որոշ ջանքերով	26.9	5.2	15.6	38.3	20.8	27.2	18.7	27.1	22.3	38.5	39.2	38.9	0.0	0.0	0.0	26.2	23.4	24.8
	Տարբեր աստիճանի հեշտությամբ	4.4	9.9	7.2	3.8	3.9	3.9	0.0	2.2	1.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.3	3.6	2.5
Լոռի, Շիրակ, Արագածոտն	Մեծ դժվարությամբ կամ դժվարությամբ	88.8	78.2	84.5	47.3	51.9	49.3	54.2	52.1	53.2	59.1	72.1	64.8	56.8	0.0	56.8	60.7	59.8	60.3

	Որոշ ջանքերով	11.2	21.8	15.6	45.3	48.1	46.5	35.6	46.0	40.4	40.8	27.8	35.3	43.3	0.0	43.3	33.5	39.2	36.0
	Տարբեր աստիճանի հեշտությամբ	0.0	0.0	0.0	7.5	0.0	4.1	10.2	1.9	6.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	5.8	0.9	3.7
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	Մեծ դժվարությամբ կամ դժվարությամբ	56.3	54.3	55.0	55.7	69.2	62.9	57.0	56.3	56.6	76.9	75.0	75.5	100.0	100.0	100.0	59.1	61.9	60.7
	Որոշ ջանքերով	34.0	35.5	34.9	25.5	17.2	21.1	33.7	41.9	38.2	11.6	22.4	19.5	0.0	0.0	0.0	29.6	32.8	31.5
	Տարբեր աստիճանի հեշտությամբ	9.8	10.3	10.1	18.7	13.6	16.0	9.3	1.8	5.2	11.4	2.6	4.9	0.0	0.0	0.0	11.3	5.3	7.8
ՀՀ տարածա- շրջաններ	Մեծ դժվարությամբ կամ դժվարությամբ	82.7	71.1	79.1	54.9	66.6	59.1	62.9	58.4	61.4	71.2	69.8	70.5	85.0	100.0	89.4	66.5	64.6	65.9
	Որոշ ջանքերով	15.1	22.0	17.2	35.1	27.5	32.5	31.6	39.7	34.1	26.9	29.2	27.9	15.0	0.0	10.6	28.3	32.0	29.6
	Տարբեր աստիճանի հեշտությամբ	2.2	6.9	3.7	9.9	5.8	8.5	5.5	1.9	4.4	2.0	1.0	1.6	0.0	0.0	0.0	5.3	3.4	4.6

Հաջորդիվ՝ աղյուսակ 5-ում, ներկայացված են տարածաշրջանային, բնակավայրի քաղաքային ու գյուղական տիպերի և տնային տնտեսությունների մեծությամբ որոշվող տնային տնտեսությունների խմբերում տնտեսավարման դժվարության աստիճանի միջին գնահատումները:

Աղյուսակ 5.

Տնտեսությունների վարման դժվարության աստիճանի ենթակայական գնահատումների միջինը տարածաշրջաններում, բնակավայրի տեսակից և տնային տնտեսությունների մեծությունից կախված խմբերում (սանդղակային միավորներով)

Տարածաշրջան	ՏՏ-ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր ՏՏ-ներով
	1	2	3-5	6-8	8>	
Երևան	1.56	2.20	2.11	1.73	1.00	1.97
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	1.75	1.95	1.89	2.10	1.51	1.91
ընդ որում՝ քաղաքներում	1.92	2.19	1.85	2.00	1.54	1.94
ընդ որում՝ գյուղերում	1.60	1.81	1.95	2.19	1.50	1.89
Լոռի, Շիրակ, Արագածոտն	1.69	2.31	2.29	1.97	2.00	2.12
ընդ որում՝ քաղաքներում	1.64	2.38	2.25	2.02	2.00	2.11
ընդ որում՝ գյուղերում	1.76	2.23	2.33	1.90	–	2.14
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	2.39	2.33	2.34	1.97	1.00	2.28
ընդ որում՝ քաղաքներում	2.51	2.54	2.44	2.2	1.00	2.43
ընդ որում՝ գյուղերում	2.31	2.14	2.26	1.88	1.00	2.17
Հայաստանի Հանրապետություն	1.78	2.20	2.17	1.95	1.37	2.06
ընդ որում՝ քաղաքներում	1.72	2.28	2.15	1.92	1.41	2.06
ընդ որում՝ գյուղերում	1.92	2.03	2.21	1.98	1.29	2.08

Վերոնշյալ 4-րդ և 5-րդ աղյուսակներից ակնհայտորեն կարելի է եզրակացնել, որ

- տնային տնտեսությունների վարումը ողջ հանրապետությունում, միջինում, ըստ ենթակայական գնահատումների, ընթացել է հիմնականում դժվարությամբ, քիչ շեղված դեպի “որոշակի ջանքերի գործադրմամբ” գնահատականը՝ 2.06 միավոր: Զիչ թե շատ իրավիճակը բարվոք է Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք (2,28 միավոր), ինչպես նաև Լոռի, Շիրակ, Արագածոտն (2,12 միավոր) տարածաշրջաններում: Սպասվելի էր, որ աղետի գոտում այս ցուցանիշը պետք է ցածր լիներ, սակայն, հավանաբար, ենթակայական գնահատումներում այստեղ մեծ դեր են խաղացել լավատեսական տրամադրությունները: Ամենացածր ցուցանիշը առկա է Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք (1,91 միավոր) տարածաշրջանում:
- տնային տնտեսությունների մեծությունից կախված գնահատման միջին միավորները համեմատելիս՝ պարզ է դառնում, որ միջինում տնային տնտեսությունների վարման գործը բարվոք վիճակում է 2 (2,20 միավոր) և 3-5 անձից կազմված (2,17 միավոր) տնային տնտեսություններում, առավել ծանր է վիճակը 9 և ավելի անձից կազմված (1,37 միավոր), ինչպես նաև 1 անձից կազմված (1,79 միավոր) տնային տնտեսություններում:

- վերոնշյալ 2. և 3. կետերում նշված օրինաչափությունները փոքր շեղումներով խախտվում են գյուղական և քաղաքային տեսակների խմբերում դիտարկելիս, սակայն առավել վատթար իրավիճակում են 8-ից ավելի անձից կազմված տնային տնտեսությունները:
- գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունների վարումն ավելի դժվար է, քան քաղաքային տնային տնտեսություններում, բացառությամբ Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանում, որտեղ չնչին տարբերությունը գյուղի և քաղաքի միջև հոգուտ առաջինի է: Ի հաշիվ էրևանում առկա ցածր ցուցանիշի՝ հանրապետությունում միջինում ստացվում է, որ գյուղում իրավիճակը չնչին տարբերությամբ ավելի լավ է, քան քաղաքում:

Այժմ անդրադառնանք առարկայական գնահատումների համար հիմք հանդիսացող հարցերին: Տնային տնտեսությունների ծախսունակության մակարդակի որոշման համար կատարվել է հետևյալ հարցադրումը՝ “Շատերը չեն կարողանում իրենց թույլ տալ ունենալ որոշակի բաներ: Իսկ Ձեր տնային տնտեսությունը կարո՞ղ է թույլ տալ իրեն” որոշակի հողվածներով ծախսեր.

1. ոչ ուշ, քան օրումեջ մտով, հավով կամ ձկնեղենով սնվել
2. նոր, այլ ոչ թե օգտագործած հագուստի գնում
3. տան բավարար ջեռուցման համար վճարել
4. մոտիկ մարդկանց հետ ծննդյան օրերի, տարբեր տոների կամ Ամանորի նշելը
5. ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ ընկերներին կամ հարազատներին հյուրասիրության, ճաշի կամ ընթրելու համար տուն հրավիրել
6. անհրաժեշտության դեպքում տան մաշված կահույքը փոխարինել
7. տնային տնտեսության բոլոր անդամների ամենամյա հանգստի համար վճարել
8. ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ տունը, բնակարանը վերանորոգել

Այս հողվածներով ծախսեր կատարելու հնարավորության վերաբերյալ դրական կամ բացասական պատասխանած տնային տնտեսությունների համար կազմավորվել են բաշխման և գնահատման վերլուծական պատկերներ:

Այսպիսով, ըստ կատարված վերլուծության ստացվում է ծախսունակության վերոնշյալ հողվածներով տնային տնտեսությունների բաշխման պատկերը, որը ներկայացված է աղյուսակ 6-ում: Վիճակագրական այս տվյալների բացասական պատասխանների տոկոսային ցուցանիշների հիման վրա կազմված են համապատասխան հողվածների կշիռները (աղյուսակ 7) գյուղական-քաղաքային տիպերի խմբերում ըստ այս բանաձևի՝

$$k_{ijm} = (100 - T_{ijm}) / \sum (100 - T_{ijm}),$$

m

որտեղ k_{ijm} -ը i-րդ տիպի (գյուղական կամ քաղաքային) բնակավայրի j-րդ մեծության (1, 2, 3-5, 6-8, 8-ից ավելի) տնային տնտեսությունների համար ծախսունակության m-րդ հողվածի կշիռն է, T_{ijm} -ը նույն տնային տնտեսությունների դրական պատասխանների ցուցանիշներն են աղյուսակ 5 – ից, հայտարարում բոլոր հողվածների համապատասխան կշիռների հանրագումարն է:

Կշիռների միջոցով հաշվարկված են տնային տնտեսությունների ծախսունակության գործակիցները հետևյալ բանաձևով՝

$$C_{nij} = \sum k_{ijm} \Delta n_m$$

որտեղ C_{nij} -ն i -րդ տիպի (գյուղական կամ քաղաքային) բնակավայրի j -րդ մեծության (1, 2, 3-5, 6-8, 8-ից ավելի) n -րդ SS -ի ծախսունակության գործակիցն է, Δn_m –ը այդ տնային տնտեսությունում m -րդ հողվածին տրված պատասխանի ելքն է՝ դրականի դեպքում 1, իսկ բացասականի դեպքում՝ 0: Այսինքն տնային տնտեսությունների ծախսունակության գործակիցը դրական պատասխանով հողվածների կշիռների հանրագումարն է:

Այնուհետ հաշվարկվել են ծախսունակության միջին գործակիցները տարածաշրջանների բնակավայրային տիպի և մեծության խմբերում, որոնք տնային տնտեսություններում իրավիճակի նկարագրողական առարկայական բնութագրիչներից են: Սրանք ներկայացված են աղյուսակ 8 – ում:

Ըստ այդմ տնային տնտեսությունների ծախսունակության տեսանկյունից ստացվել է հետևյալ պատկերը՝

- տնային տնտեսությունների ծախսունակության մակարդակը ողջ հանրապետությունում միջինում գնահատվում է 0.321 միավորով: Տարածաշրջաններից ամենաբարձր ցուցանիշը առկա է Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանում (0.348 միավոր), իրավիճակը բավարար չափով բարվոք է Երևանում (0.336 միավոր), ամենացածր ցուցանիշը Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում է (0.262 միավոր): Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանի ցուցանիշը մոտ է միջին հանրապետականին:
- տնային տնտեսությունների մեծությունից կախված գնահատման ՀՀ միջին միավորներով պատկերը հոգուտ 2 և 3-5 անձից կազմված տնային տնտեսությունների է (0.324 և 0.350 միավոր), ծախսունակության ամենավատ ցուցանիշը առկա է 1 և 8-ից ավելի անդամ ունեցող տնային տնտեսություններում (0.249 և 0.201 միավոր), այս օրինաչափությունը առկա է նաև տարածաշրջաններում:
- գյուղական բնակավայրերում ծախսունակության մակարդակը ակնհայտորեն ավելի ցածր է, քան քաղաքային տնային տնտեսություններում, բացառությամբ Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանի 6-8 անձից կազմված տնային տնտեսությունների:

Աղյուսակ 6.

Ծախսունակության հողվածներով դրական պատասխանած տնային տնտեսությունների բաշխումը (%)

Տարածաշրջան	SS-ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր SS-ներով
	1	2	3-5	6-8	8>	
ա) ոչ ուշ, քան օրումեջ մտով, հավով կամ ձկնեղենով սնվելը						
Երևան	26.64	40.92	51.82	37.43	75.40	43.00
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	16.38	34.82	30.24	28.24	0.00	28.15
ընդ որում՝ քաղաքներում	22.79	25.93	36.12	24.33	0.00	30.13
ընդ որում՝ գյուղերում	10.44	39.92	22.40	31.45	0.00	26.25
Լոռի, Շիրակ, Արագածոտն	8.00	25.59	28.97	23.43	13.52	23.41
ընդ որում՝ քաղաքներում	1.92	20.31	19.68	32.98	13.52	18.50
ընդ որում՝ գյուղերում	16.62	31.97	39.59	10.68	–	29.56

Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	19.04	29.69	46.53	24.57	0.00	35.26
ընդ որում՝ քաղաքներում	37.52	44.54	37.91	22.48	0.00	37.23
ընդ որում՝ գյուղերում	7.65	16.57	53.59	25.33	0.00	33.86
Հայաստանի Հանրապետություն	18.89	33.93	41.23	27.94	21.85	33.60
ընդ որում՝ քաղաքներում	22.30	35.83	41.34	31.81	30.95	35.33
ընդ որում՝ գյուղերում	11.33	30.35	41.00	22.95	0.00	30.21
բ) նոր, այլ ոչ թե օգտագործած հագուստի գնումը						
Երևան	11.05	39.16	48.11	43.14	0.00	37.49
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	29.65	39.45	51.70	50.83	100.0	45.68
ընդ որում՝ քաղաքներում	38.42	48.12	48.99	52.64	100.0	48.01
ընդ որում՝ գյուղերում	21.53	34.48	55.31	49.34	100.0	43.45
Լոռի, Շիրակ, Արագածոտն	21.36	39.16	64.26	53.77	56.71	50.05
ընդ որում՝ քաղաքներում	17.90	35.88	60.75	51.88	56.71	46.46
ընդ որում՝ գյուղերում	26.28	43.12	68.28	56.30	–	54.56
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	31.99	52.32	64.93	53.11	13.55	54.98
ընդ որում՝ քաղաքներում	36.04	58.55	66.90	49.50	26.40	58.38
ընդ որում՝ գյուղերում	29.50	46.81	63.32	54.44	0.00	52.55
Հայաստանի Հանրապետություն	20.89	41.90	56.51	50.57	42.70	46.01
ընդ որում՝ քաղաքներում	18.55	42.47	53.47	48.37	36.44	43.74
ընդ որում՝ գյուղերում	26.08	40.81	63.08	53.41	57.72	50.46
գ) տան բավարար ջեռուցման համար վճարելը						
Երևան	26.09	45.72	54.74	41.69	75.40	45.65
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	40.35	48.04	51.51	51.65	100.0	49.40
ընդ որում՝ քաղաքներում	44.98	64.14	56.36	70.15	100.0	58.14
ընդ որում՝ գյուղերում	36.07	38.80	45.02	36.44	100.0	41.04
Լոռի, Շիրակ, Արագածոտն	32.56	58.02	51.42	46.55	13.52	47.92
ընդ որում՝ քաղաքներում	25.48	57.98	61.37	56.67	13.52	52.18
ընդ որում՝ գյուղերում	42.60	58.08	40.03	33.02	–	42.57
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	36.74	60.19	65.54	55.43	0.00	57.67
ընդ որում՝ քաղաքներում	48.83	66.20	70.24	76.19	0.00	65.90
ընդ որում՝ գյուղերում	29.30	54.87	61.68	47.77	0.00	51.81
Հայաստանի Հանրապետություն	32.25	51.87	55.87	48.86	47.20	49.59
ընդ որում՝ քաղաքներում	30.76	53.20	58.59	55.74	42.81	51.61
ընդ որում՝ գյուղերում	35.55	49.36	50.00	39.99	57.72	45.63
դ) մոտիկ մարդկանց հետ ծննդյան օրերի, տարբեր տոների կամ Ամանորի նշելը						
Երևան	13.88	42.43	56.47	50.62	75.40	43.95
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	7.38	16.38	47.95	52.78	84.73	35.48
ընդ որում՝ քաղաքներում	9.75	29.37	46.37	44.94	53.75	37.30

ընդ որում՝ գյուղերում	5.19	8.93	50.07	59.22	100.0	33.73
Լոռի, Շիրակ, Արագածոտն	10.85	41.20	58.54	56.56	13.52	45.90
ընդ որում՝ քաղաքներում	10.41	38.88	53.13	56.27	13.52	42.21
ընդ որում՝ գյուղերում	11.49	44.00	64.72	56.96	–	50.52
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	16.75	43.02	67.46	67.61	62.24	54.71
ընդ որում՝ քաղաքներում	28.08	53.10	65.66	63.15	26.40	56.73
ընդ որում՝ գյուղերում	9.77	34.12	68.94	69.26	100.0	53.27
Հայաստանի Հանրապետություն	12.54	36.60	57.96	56.98	59.23	45.11
ընդ որում՝ քաղաքներում	14.16	41.74	55.72	52.65	42.23	44.39
ընդ որում՝ գյուղերում	8.93	26.88	62.81	62.58	100.0	46.53

Աղյուսակ 6 (շարունակություն)

Տարածաշրջան	SS–ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր SS–ներով
	1	2	3-5	6-8	8>	
ե) ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ ընկերներին կամ հարազատներին հյուրասիրության համար տուն հրավիրելը						
Երևան	7.45	30.62	29.87	15.85	0.00	23.72
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	5.89	16.50	29.64	20.59	66.98	21.63
ընդ որում՝ քաղաքներում	7.79	23.52	28.23	21.75	0.00	22.79
ընդ որում՝ գյուղերում	4.12	12.47	31.52	19.63	100.0	20.51
Լոռի, Շիրակ, Արագածոտն	19.30	35.85	46.62	37.98	13.52	37.91
ընդ որում՝ քաղաքներում	5.21	23.76	31.74	27.65	13.52	24.17
ընդ որում՝ գյուղերում	39.29	50.46	63.65	51.78	–	55.15
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	23.03	28.96	35.96	24.75	62.24	31.18
ընդ որում՝ քաղաքներում	30.08	38.85	44.11	16.90	26.40	38.09
ընդ որում՝ գյուղերում	18.70	20.23	29.28	27.64	100.0	26.25
Հայաստանի Հանրապետություն	12.98	28.36	35.22	25.71	36.17	28.39
ընդ որում՝ քաղաքներում	9.45	29.69	32.15	20.69	9.56	25.67
ընդ որում՝ գյուղերում	20.82	25.83	41.84	32.19	100.0	33.73
զ) անհրաժեշտության դեպքում տան մաշված կահույքը փոխարինելը						
Երևան	2.35	12.63	12.26	4.76	0.00	9.44
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	4.35	0.69	2.74	8.30	0.00	3.50
ընդ որում՝ քաղաքներում	3.40	1.90	3.31	5.41	0.00	3.41
ընդ որում՝ գյուղերում	5.22	0.00	1.99	10.67	0.00	3.58
Լոռի, Շիրակ, Արագածոտն	0.00	6.79	10.45	7.65	0.00	7.31
ընդ որում՝ քաղաքներում	0.00	8.05	4.89	1.03	0.00	3.73
ընդ որում՝ գյուղերում	0.00	5.28	16.82	16.50	–	11.79
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	7.59	11.68	15.64	10.91	13.55	12.88
ընդ որում՝ քաղաքներում	4.04	15.53	16.74	8.54	26.40	13.91

ընդ որում՝ գյուղերում	9.77	8.28	14.73	11.79	0.00	12.15
Հայաստանի Հանրապետություն	3.16	8.55	10.88	7.96	3.46	8.50
ընդ որում՝ քաղաքներում	2.19	10.91	10.21	4.19	4.90	8.02
ընդ որում՝ գյուղերում	5.31	4.10	12.32	12.81	0.00	9.46
է) տնային տնտեսության բոլոր անդամների ամենամյա հանգստի համար վճարելը						
Երևան	2.35	11.01	9.85	3.72	0.00	7.85
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	0.00	1.37	1.12	1.66	0.00	1.06
ընդ որում՝ քաղաքներում	0.00	3.77	1.96	3.69	0.00	2.17
ընդ որում՝ գյուղերում	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Լոռի, Շիրակ, Արագածոտն	2.25	6.79	5.69	2.36	0.00	4.63
ընդ որում՝ քաղաքներում	0.00	8.05	10.66	0.00	0.00	6.11
ընդ որում՝ գյուղերում	5.44	5.28	0.00	5.51	–	2.78
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	0.61	3.23	13.07	0.76	0.00	7.30
ընդ որում՝ քաղաքներում	1.61	6.88	6.83	2.81	0.00	5.58
ընդ որում՝ գյուղերում	0.00	0.00	18.19	0.00	0.00	8.53
Հայաստանի Հանրապետություն	1.57	6.40	8.02	2.10	0.00	5.61
ընդ որում՝ քաղաքներում	1.50	8.98	8.33	2.49	0.00	6.35
ընդ որում՝ գյուղերում	1.72	1.52	7.35	1.60	0.00	4.14
ը) ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ տունը, բնակարանը վերանորոգելը						
Երևան	4.01	11.01	10.04	3.72	0.00	8.31
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	0.00	9.39	6.30	3.52	0.00	5.33
ընդ որում՝ քաղաքներում	0.00	18.93	3.87	1.72	0.00	5.23
ընդ որում՝ գյուղերում	0.00	3.91	9.54	5.00	0.00	5.42
Լոռի, Շիրակ, Արագածոտն	5.24	14.09	9.19	5.16	0.00	8.56
ընդ որում՝ քաղաքներում	8.93	17.00	9.02	4.91	0.00	9.53
ընդ որում՝ գյուղերում	0.00	10.57	9.39	5.51	–	7.34
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	1.71	5.26	10.34	5.63	0.00	7.21
ընդ որում՝ քաղաքներում	0.00	11.21	11.54	2.81	0.00	8.74
ընդ որում՝ գյուղերում	2.76	0.00	9.36	6.6	0.00	6.11
Հայաստանի Հանրապետություն	3.14	10.16	9.23	4.56	0.00	7.53
ընդ որում՝ քաղաքներում	4.0	13.10	9.14	3.5	0.00	8.17
ընդ որում՝ գյուղերում	1.06	4.61	9.41	5.81	0.00	6.29

**Ծախսունակության հոդվածների կշիռներն ըստ SS մեծության
խմբերի և բնակավայրի տիպի**

Բնակավայրի տիպը	SS-ների մեծության խմբերը (անձ)				
	1	2	3-5	6-8	8>
ա) ոչ ուշ, քան օրումեջ մտով, հավով կամ ձկնեղենով սնվելը					
քաղաքներում	0.1120	0.1124	0.1109	0.1192	0.1082
գյուղերում	0.1283	0.1138	0.1149	0.1343	0.2079
բ) նոր, այլ ոչ թե օգտագործած հագուստի գնումը					
քաղաքներում	0.1174	0.1008	0.0880	0.0903	0.0996
գյուղերում	0.1069	0.0967	0.0719	0.0812	0.0879
գ) տան բավարար ջեռուցման համար վճարելը					
քաղաքներում	0.0998	0.0820	0.0783	0.0774	0.0896
գյուղերում	0.0932	0.0827	0.0973	0.1046	0.0879
դ) մոտիկ մարդկանց հետ ծննդյան օրերի, տարբեր տոների կամ Ամանորի նշելը					
քաղաքներում	0.1237	0.1021	0.0837	0.0828	0.0905
գյուղերում	0.1317	0.1195	0.0724	0.0652	0.0000
ե) ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ ընկերներին կամ հարազատներին հյուրասիրության համար տուն հրավիրելը					
քաղաքներում	0.1305	0.1232	0.1283	0.1387	0.1418
գյուղերում	0.1145	0.1212	0.1132	0.1182	0.0000
զ) անհրաժեշտության դեպքում տան մաշված կահույքը փոխարինելը					
քաղաքներում	0.1364	0.1680	0.1658	0.1524	0.1567
գյուղերում	0.1401	0.1494	0.1735	0.1605	0.2007
է) տնային տնտեսության բոլոր անդամների ամենամյա հանգստի համար վճարելը					
քաղաքներում	0.1419	0.1594	0.1733	0.1705	0.1567
գյուղերում	0.1422	0.1609	0.1804	0.1716	0.2079
ը) ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ տունը, բնակարանը վերանորոգելը					
քաղաքներում	0.1383	0.1522	0.1718	0.1687	0.1567
գյուղերում	0.1431	0.1558	0.1764	0.1642	0.2079

Ծախսունակության միջին գործակիցները Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ըստ տնային տնտեսությունների մեծության և բնակավայրի տիպի խմբերի

Տարածաշրջան	SS–ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր SS–ներով
	1	2	3-5	6-8	8>	
Երևան	0.254	0.357	0.363	0.255	0.288	0.336
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	0.227	0.238	0.281	0.271	0.196	0.262
ընդ որում՝ քաղաքներում	0.283	0.275	0.276	0.265	0.238	0.275
ընդ որում՝ գյուղերում	0.176	0.213	0.287	0.277	0.176	0.248
Լոռի, Շիրակ, Արագածոտն	0.240	0.349	0.344	0.301	0.202	0.323
ընդ որում՝ քաղաքներում	0.261	0.359	0.354	0.316	0.202	0.336
ընդ որում՝ գյուղերում	0.226	0.339	0.335	0.284	–	0.312
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	0.269	0.333	0.385	0.310	0.106	0.348
ընդ որում՝ քաղաքներում	0.340	0.422	0.393	0.264	0.489	0.379
ընդ որում՝ գյուղերում	0.218	0.253	0.378	0.330	0.000	0.326
Հայաստանի Հանրապետություն	0.249	0.324	0.350	0.285	0.201	0.321
ընդ որում՝ քաղաքներում	0.273	0.356	0.353	0.275	0.267	0.333
ընդ որում՝ գյուղերում	0.210	0.265	0.343	0.299	0.101	0.300

Դիտարկենք ևս մեկ ցուցանիշ, որը կազմավորված է հետևյալ հարցի պատասխաններից՝ «Վերջին 12 ամիսների ընթացքում երբեք եղե՞լ է դեպք, որ Ձեր տնային տնտեսությունը դրամական միջոցների սղության պատճառով չի կարողացել ժամանակին կատարել հերթական վճարումը»՝ հետևյալ հոդվածներով՝

- Բնակարանի կամ տան վարձավճարը
- Հիփոթեքային, տան վերանորոգման կամ ավտոմեքենայի գնման վարկի մարումը
- Կոմունալ կամ հեռահաղորդակցության ծառայությունների վճարումը
- Կենցաղային իրերի կամ փոքրարժեք այլ գնումների համար ապառիկ կամ կրեդիտ քարտով սպառողական վարկերի մարումը:

Պատասխանները տարանջատվել են հետևյալ չորս տարբերակներով՝ հաճախակի (4 և ավելի անգամ), ոչ հաճախակի (մինչև 3 անգամ), ոչ մի անգամ և նման վճարումներ չեն կատարվում:

Ըստ այդմ 1-4 հոդվածներով 1-ին պատասխանով ելքի դեպքում տնային տնտեսությանը շնորհվել է 1 միավոր, երկրորդ պատասխանի դեպքում՝ 2 միավոր, 3-րդի դեպքում՝ 3 միավոր, իսկ 4-րդ պատասխանի համար միավոր չի տրվել: Տրված միավորներով հաշվարկվել է տնային տնտեսության միջին ցուցանիշը (միավոր չտրված հոդվածները միջինի հաշվարկում բացակայում են): Այս ցուցանիշը բնութագրում է վճարունակության մակարդակը SS-ում, և որքան ցածր են միջին միավորները, այնքան ցածր է վճարունակության մակարդակը:

Ստացված միավորները գտնվում են 1-3 տիրույթում և մեկնաբանվում են հետևյալ կերպ՝

ա) եթե միավորը փոքր է 1.5-ից, ապա վճարումները հիմնականում հաճախակի ուշացվում են, տնային տնտեսությունում անվճարունակության մակարդակ է:

բ) 1.5-ից 2 միավորը՝ որոշ վճարումներ հաճախակի են ուշացվում, տնային տնտեսությունում վճարունակության ցածր մակարդակ է:

գ) 2-2.5 միավորը՝ հիմնականում ոչ հաճախակի ուշացումներով, տնային տնտեսությունում վճարունակության բավարար մակարդակ է:

դ) 2.5-3 միավորը՝ որոշ վճարումներ կատարվում են ոչ հաճախակի ուշացումներով կամ ուշացումները բացակայում են, տնային տնտեսությունում վճարունակության բարձր մակարդակ է:

Այնուհետ տարածաշրջանների համար տնային տնտեսության մեծության և բնակավայրի տիպի խմբերի համար կազմավորվել են միջին ցուցանիշներ: Վերջիններս ներկայացված են աղյուսակ 9 -ում:

Աղյուսակ 9.

Տնային տնտեսություններում միջին վճարունակության մակարդակները Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ըստ տնային տնտեսության մեծության և բնակավայրի տիպի խմբերի

Տարածաշրջան	SS-ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր SS-ներով
	1	2	3-5	6-8	8>	
Երևան	2.17	2.63	2.52	2.22	2.51	2.46
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	2.39	2.58	2.62	2.57	2.71	2.60
ընդ որում՝ քաղաքներում	2.35	2.74	2.62	2.58	2.13	2.60
ընդ որում՝ գյուղերում	2.43	2.48	2.62	2.56	3.00	2.59
Լոռի, Շիրակ, Արագածոտն	2.29	2.77	2.65	2.71	1.86	2.63
ընդ որում՝ քաղաքներում	2.23	2.87	2.64	2.66	1.86	2.64
ընդ որում՝ գյուղերում	2.36	2.66	2.67	2.79		2.63
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	2.56	2.59	2.66	2.49	2.55	2.63
ընդ որում՝ քաղաքներում	2.71	2.58	2.78	2.50	2.13	2.73
ընդ որում՝ գյուղերում	2.47	2.60	2.55	2.48	3.00	2.56
Հայաստանի Հանրապետություն	2.31	2.64	2.60	2.52	2.41	2.57
ընդ որում՝ քաղաքներում	2.27	2.68	2.59	2.46	2.17	2.55
ընդ որում՝ գյուղերում	2.42	2.57	2.61	2.60	3.00	2.59

Տնային տնտեսություններում վճարունակության մակարդակի նկարագրական պատկերը բավականին խառն է: Օրինաչափությունները սակավ են, որը հետևանք է վճարումների ուշացման դրդապատճառների և առարկայական (եկամտային ապահովվածություն) և ենթակայական (մարդկային պատասխանատվություն) հանգամանքներով: Կարելի է ստանալ ավելի պարզ պատկեր, եթե որևէ ձևով մշակվեն վճարումների հողվածների համապատասխան կշիռները: Վերջինս հնարավոր կլինի միայն առավել մանրամասն վիճակագրական տվյալների հիման վրա, ինչպես նաև փոխելով հարցադրման շեշտադրումները:

Այնուամենայնիվ, որոշակիորեն կա թույլ օրինաչափություն՝

- ցուցանիշները բարձր են Լոռի, Շիրակ, Արագածոտն և Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջաններում, ամենացածր ցուցանիշը Երևանում է
- քաղաք-գյուղ համեմատական վերլուծությունը հիմնականում հոգուտ գյուղի է, որովհետև նման վճարումների մեծությունը գյուղում ավելի փոքր է

- 8-ից ավելի անդամ ունեցող տնային տնտեսություններում նկատվում է ցուցանիշի մեծ տատանումներ՝ բնակավայրի տիպի խմբից կախված, հավանաբար հիմնական պատճառը գյուղական բնակավայրում այդ վճարումների փոքրածավալ և միատարր (1-ին և 3-րդ հոդվածներով) լինելն է և տնային տնտեսությունների բազմանդամությամբ պայմանավորված՝ փոքրանում է մեկ շնչին ընկնող ծախսը ընդհանուր հոդվածների մասով

Բավական հետաքրքիր ցուցանիշ է նաև վերոնշյալ բոլոր հոդվածներով վճարում չկատարող տնային տնտեսությունների վիճակագրությունը (աղյուսակ 10): Ըստ այդմ՝

- Հայաստանի Հանրապետությունում 50+ տնային տնտեսությունների, որոնք մոտավորապես բոլոր տնային տնտեսությունների 2/3 մասն են կազմում, 2.96%-ը կոմունալ, հեռահաղորդակցական, վարձակալական և կրեդիտային ծառայությունների համար վճարումներ չեն կատարում, ընդ որում ՀՀ գյուղերում այդ ցուցանիշը 4.66% է, իսկ քաղաքներում՝ 2.10%, քաղաքներից ամենաբարձր ցուցանիշը՝ Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանի քաղաքներում է, գյուղերից՝ Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանի գյուղերում
- Տնային տնտեսությունների մեծությունից կախված ամենաբարձր ցուցանիշը 1 անձից կազմված տնային տնտեսություններում է (4.51%), և որքան մեծ է տնային տնտեսությունն, այնքան ցածր է այս ցուցանիշը: 8-ից ավելի անդամ ունեցող գրեթե բոլոր կամ բոլոր տնային տնտեսությունները կատարում են նման վճարումներ:

Աղյուսակ 10.

Կոմունալ, հեռահաղորդակցական, վարձակալական և կրեդիտային ծառայությունների համար վճարում չկատարող տնային տնտեսությունների բաշխումը (%) Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ըստ տնային տնտեսությունների մեծության և բնակավայրի տիպի խմբերի

Տարածաշրջան	SS-ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր SS-ներով
	1	2	3-5	6-8	8>	
Երևան	4.05	0.00	0.59	3.32	0.00	2.08
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	7.52	0.00	0.30	2.45	0.00	2.95
ընդ որում՝ քաղաքներում	0.00	0.00	0.53	0.00	0.00	1.01
ընդ որում՝ գյուղերում	14.48	0.00	0.00	4.47	0.00	4.80
Լոռի, Շիրակ, Արագածոտն	4.18	2.39	0.25	0.00	0.00	2.18
ընդ որում՝ քաղաքներում	7.12	0.00	0.47	0.00	0.00	3.17
ընդ որում՝ գյուղերում	0.00	5.27	0.00	0.00	-	0.94
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	3.03	2.81	5.41	3.26	0.00	5.18
ընդ որում՝ քաղաքներում	0.01	0.00	0.90	0.00	0.00	1.72
ընդ որում՝ գյուղերում	4.88	5.29	9.12	4.47	0.00	7.65
Հայաստանի Հանրապետություն	4.51	1.09	1.58	2.11	0.00	2.96
ընդ որում՝ քաղաքներում	3.73	0.00	0.61	1.28	0.00	2.10
ընդ որում՝ գյուղերում	6.24	3.16	3.68	3.17	0.00	4.66

Եվ վերջում, տնային տնտեսությունների բարեկեցության անուղղակի գնահատման հայտանիշերից քննարկենք նաև խնայողությունների առաջացման հնարավորությունը տնային տնտեսություններում: Այս հարցին դրական պատասխանած տնային տնտեսությունների պատկերը տրված է աղյուսակ 11 -ում:

Հարցումներից պարզ է դարձել, որ Հայաստանի Հանրապետությունում 50+ տնային տնտեսությունների 7.15%-ի մոտ գոյանում են խնայողություններ: Այս խնայողությունները բարեկեցության բարձրացման հիմք կարող են հանդիսանալ, սակայն խնայողությունների հետագա մանրամասն թվային վերլուծության արդյունքով պարզ կարող է դառնալ, որ այդ խնայողությունները բավարար մակարդակի չեն և ուղղակի փոշիանում են անկանխատեսելի ծախսերի ի հայտ գալու հետևանքով, և կուտակային խնայողություններ են դառնում: Այնուամենայնիվ, նույնիսկ այս փոքրածավալ տվյալների հիման վրա կարող ենք գալ հետևյալ եզրակացություններին՝

- խնայողությունների գոյացման մակարդակը գյուղական բնակավայրերում ավելի բարձր է, քան քաղաքային տնային տնտեսությունների մոտ և ՀՀ–ում, և՛ տարածաշրջաններում
- ամենաբարձր ցուցանիշը և գյուղական և՛ քաղաքային տնային տնտեսություններում առկա է Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանում (15.65% և 14.19%), երկրորդ տեղում է Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանը, հիմնականում ի հաշիվ գյուղական բնակավայրերի, սակայն այստեղ նաև քաղաքային տնային տնտեսություններում ցուցանիշը բարձր է՝ 6.29%
- առանձնապես ցածր են ցուցանիշները Երևանում (3.67%) և Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք (2.42%) տարածաշրջանում
- 8-ից ավելի անդամ ունեցող տնային տնտեսություններում խնայողություններ գրեթե չեն առաջանում (0.00%), ինչը տրամաբանական է, քանի որ բազմանդամությունը մեծացնում է տնային տնտեսությունների անդամների հետ կապված անկանխատեսելի ծախսեր առաջանալու հավանականությունը (առողջապահական և այլ բնույթի), ցուցանիշները ցածր են նաև 1 անձից կազմված տնային տնտեսություններում (3.07%), առավել բարձր են ցուցանիշները 2 և 3-5 անձից կազմված տնային տնտեսություններում (9.04% և 8.21%), այս օրինաչափությունները փոքր շեղումներով ակնառու են նաև տարածաշրջաններում:

Խնայողությունների ունեցող տնային տնտեսությունների բաշխումը (%) Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ըստ տնային տնտեսությունների մեծության և բնակավայրի տիպի խմբերի

Տարածաշրջան	SS–ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր SS–ներով
	1	2	3-5	6-8	8>	
Երևան	0.00	4.04	5.87	0.00	0.00	3.67
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	4.34	0.00	1.68	5.56	0.00	2.42
ընդ որում՝ քաղաքներում	3.40	0.00	1.46	0.00	0.00	1.32
ընդ որում՝ գյուղերում	5.22	0.00	1.99	10.13	0.00	3.48
Լոռի, Շիրակ, Արագածոտն	5.86	14.71	8.75	5.96	0.00	8.71
ընդ որում՝ քաղաքներում	1.90	12.81	4.32	10.42	0.00	6.29
ընդ որում՝ գյուղերում	11.49	17.02	13.82	0.00	-	11.75
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	4.63	21.42	16.31	15.76	0.00	15.04
ընդ որում՝ քաղաքներում	12.16	21.46	12.40	14.07	0.00	14.19
ընդ որում՝ գյուղերում	0.00	21.39	19.51	16.39	0.00	15.65
Հայաստանի Հանրապետություն	3.07	9.04	8.21	6.91	0.00	7.15
ընդ որում՝ քաղաքներում	2.10	7.70	5.91	4.75	0.00	5.31
ընդ որում՝ գյուղերում	5.21	11.57	13.19	9.68	0.00	10.76

Հետազոտության շրջանակներում հետաքրքրություն էր ներկայացնում նաև առաջացած խնայողությունների իրականացման հնարավոր ելքերի ուսումնասիրությունը: Խնայողության հնարավորություն ունեցող տնային տնտեսությունների համար հարցադրումը պարզում էր, թե ի՞նչ եղանակով են նախընտրում պահել խնայողությունները՝ բանկում, բարձի տակ, գործի մեջ դնելով կամ արժեթղթեր գնելով, տոկոսով կամ անտոկոս պարտք տալով, թե թանկարժեք զարդեր գնելով:

Ստորև, աղյուսակ 12-ում, ներկայացված տվյալները ցույց են տալիս, թե որքանով են տնային տնտեսություններում հակված այս կամ այն եղանակներով պահել գոյացած խնայողությունները՝ կախված տարբեր տարածաշրջաններում բնակավայրի տեսակից:

Այս աղյուսակից պարզորեն ուրվագծվում է հետևյալ պատկերը իր եզրակացություններով՝

- Հայաստանի Հանրապետությունում և մարզերում տնային տնտեսություններում անկասկած մերժում են խնայողությունները պահելու արժեթղթեր կամ թանկարժեք զարդեր գնելու, ինչպես նաև անտոկոս պարտքով տալու եղանակները: Վերջին եղանակը բնականաբար համարվում է անշահույթաբեր և ռիսկային եղանակ: Ինչ վերաբերվում է արժեթղթեր գնելուն, ապա աղյուսակում պատկերված վիճակագրությունը մեկ անգամ ևս ցույց է տալիս Հայաստանում արժեթղթերի, ընդ որում նաև պետական պարտատոմսերի, շուկայի չկայացած լինելը և քաղաքացիների անվստահությունը դրանց նկատմամբ:
- Բավական մռայլ է պատկերը նաև բանկային համակարգի նկատմամբ տնային տնտեսություններում եղած վերաբերմունքի մասով: Խնայողություններ ունեցող ՀՀ տնային տնտեսությունների 5.83-7.40%-ն է պահում կամ կցանկանա պահել դրանք բանկերում, ընդ որում ընդհանուր հաշվի վրա՝ 1.57%-ը: Այսինքն տնային տնտեսություններում խուսափում են բանկային ավանդային ծառայություններից օգտվելուց և բանկում համատեղ ֆինանսական

կուտակումներից: Գյուղական բնակավայրերում այդ ցուցանիշը 4.6 անգամ ցածր է քաղաքային բնակավայրերի ցուցանիշից: Տարածաշրջաններից թերևս Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում գյուղական բնակավայրերի ցուցանիշը բավականաչափ բարձր է: Սրա հաշվին ամենաբարձրն է նաև ընդհանուր ցուցանիշը (գյուղ և քաղաք) բոլոր տարածաշրջանների մեջ Երևանից հետո: Ամենացածր ցուցանիշը Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանինն է՝ 0.70%:

- Տնային տնտեսությունների ծանրակշիռ մասը, այնուամենայնիվ, որպես լավագույն և ապահով տարբերակ նախընտրում է “բարձի տակ պահելը”՝ յուրաքանչյուրն իր մոտ (19.37%) կամ տնային տնտեսության որևէ անդամի մոտ (75.31%): Վերջին թվերը հուշում են, որ տնային տնտեսություններում բավականին ամուր ձևով գործում են “ավանդական” ընդհանուր տնտեսավարման կանոնները ֆինանսական հարցերում: Խնայողությունները պահելու այս եղանակի նկատմամբ ունեցած վերաբերմունքով և ընդհանուր ֆինանսական տնտեսավարման մակարդակով երկու տարածաշրջաններ՝ Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք (80.20% և 19.12%) և Լոռի, Շիրակ, Արագածոտն (81.32% և 18.55%) իրար նման են:
- Հետաքրքիր օրինաչափություն է բացահայտվում Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանի համար: Այստեղ պարզվում է, որ եթե քաղաքներում խուսափում են բանկերում պահելու եղանակից, ապա մեծ մասով վստահում են այլ անձանց տոկոսով պարտք տալու եղանակին՝ 30.66% (գյուղերում, ինչպես նշվեց վերևում, հակառակ պատկերն է): Մյուս տարածաշրջաններում՝ գրեթե բոլոր տնային տնտեսություններում այս ձևով խնայողությունները պահելը համարում են անհուսալի և ռիսկային:
- Մեկ այլ հետաքրքիր պատկեր է ստացվել գործարար ակտիվության համար: Ըստ այդմ տնային տնտեսություններում բավականին մեծ հետաքրքրություն կա առաջացած խնայողությունները եկամտաբեր գործի մեջ դնելու տարբերակի նկատմամբ (15.40%), որը հուշում է, որ 50+ տնային տնտեսություններում բավականին բարձր է ակտիվ գործարարությամբ զբաղվելու ձգտումը: Այս ցուցանիշը բավական բարձր է Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում՝ (28.78%), և ամենացածրն է Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանում՝ (8.32%), ինչը բնականաբար պայմանավորված է աղետի գոտում ընդհանուր գործարար ակտիվության մակարդակի ցածր լինելու հանգամանքով:
- Եթե հաշվի առնենք պասսիվ և ակտիվ գործարարությունն ընդհանրապես, ապա երևում է, որ սրա մակարդակը բարձր է Երևանում և Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում:

Խճայողությունները որևէ եղանակով պահելու դիրքորոշմամբ տնտեսությունների բաշխումը (%)
 Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ըստ բնակավայրի տիպի խմբերի

Տարածաշրջան	Բանկում՝ անձնական հաշիվների վրա	Բանկում՝ ընդհանուր հաշիվի վրա	Գներով արժեթղթեր	Տարվ պահույճ՝ տոկոսի դիմաց	Գներով եկամտաբեր գործի մեջ	Յուրաքանչյուրն իր մոտ	Տնային տնտեսության որևէ անդամի մոտ	Գներով թանկարժեք ակտիվներ	Տարվ պահույճ՝ անտոկոս
Երևան	17.44	9.03	0.00	0.00	26.58	21.45	61.09	0.00	0.00
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	15.24	0.00	0.00	8.15	28.78	19.32	51.90	0.00	0.00
ընդ որում՝ քաղաքներում	0.00	0.00	0.00	30.66	43.80	0.00	56.20	0.00	0.00
ընդ որում՝ գյուղերում	20.76	0.00	0.00	0.00	23.35	26.31	50.34	0.00	0.00
Լոռի, Շիրակ, Արագածոտն	4.92	0.00	0.00	0.00	4.80	18.55	81.32	0.00	0.00
ընդ որում՝ քաղաքներում	12.24	0.00	0.00	0.00	0.00	22.26	65.49	0.00	0.00
ընդ որում՝ գյուղերում	0.00	0.00	0.00	0.00	8.03	16.08	91.95	0.00	0.00
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	0.70	0.00	0.00	0.00	11.34	19.12	80.20	0.00	0.00
ընդ որում՝ քաղաքներում	1.78	0.00	0.00	0.00	11.98	35.48	54.33	0.00	0.00
ընդ որում՝ գյուղերում	0.00	0.00	0.00	0.00	10.93	8.55	96.91	0.00	0.00
Հայաստանի Հանրապետություն	5.83	1.57	0.00	0.55	13.23	19.37	75.31	0.00	0.00
ընդ որում՝ քաղաքներում	9.76	3.19	0.00	1.11	15.40	26.06	59.48		0.00
ընդ որում՝ գյուղերում	2.02	0.00	0.00	0.00	11.13	12.89	90.67		0.00

ԴՐԱՍԱԿԱՆ ՍՈՒՏՔԵՐ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

Տնային տնտեսությունների վարման գործընթացների ցուցանիշների և բարեկեցության մակարդակի վերհանման և նկարագրման համար կարևոր և հիմնական խումբ են կազմում դրամական և ոչ դրամական մուտքերը: Սույն հետազոտության շրջանակներում իրականացված հարցումներով ստացվել են նյութական և ոչ նյութական մուտքային ապահովվածության հիմնական խմբերով ստորև ներկայացվող տվյալները.

1. տնային տնտեսության ոչ զբաղվածությունից մուտքերը, որի մեջ համախմբված են՝
 - ա) պասսիվ տնտեսական գործունեությունից եկամուտները՝ սեփական գույքի և հողի վարձակալական գումարները և փոխհատուցումները, բանկային կամ պարտքով տրված գումարներից և արժեթղթերից տոկոսները
 - բ) տնային տնտեսությանը և իր անդամներին մատակարարված ծառայությունների (կրթական, իրավաբանական, բժշկական, կապի, տեղափոխման և այլ) և ապրանքային (դեղորայք, գույք, հատուկ փոխադրամիջոց և այլն) գեղչերն ու արտոնությունները
 - գ) դրամական և ոչ դրամական օգնությունները
 - դ) սեփական ունեցվածքի վաճառքից և ապահովագրական փոխհատուցումներից գոյացած միջոցները
2. տնային տնտեսության և իր անդամների զբաղվածությունից, կենսաթոշակներից և սոցիալական վճարներից եկամուտները
3. դրամական փոխանցումները, թանկարժեք նվերները և ժառանգությունը:

Տնային տնտեսությունների եկամտային ապահովվածության գնահատման համար որպես կայուն և ինչ-որ առումով նաև երաշխավորված եկամտային հոդվածներ վերոնշյալ մուտքային խմբերից վերցվել են 1ա, 2 (բացառությամբ միանվագ և նպատակային սոցիալական վճարումների՝ հուղարկավորության և երեխայի ծննդյան նպաստների) և 3 խմբերի դրամական մուտքերը: Ըստ այդմ հաշվարկվել է տնային տնտեսության մեկ շնչին ընկնող միջին ամսական եկամուտը, որը եկամտային ապահովվածության մակարդակի հիմնական բնորոշիչն է: Տնային տնտեսությունները մեկ շնչին ընկնող ամսական եկամուտների չափին համաձայն խմբավորվել են հետևյալ եկամտային ապահովվածության խմբերում (ԵԱԽ), հետևյալ սանդղակին համաձայն՝

1. 0-18000 դրամ (ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների խումբ)
2. 18001-25000 դրամ (աղքատ տնային տնտեսությունների խումբ)
3. 25001-37000 դրամ (ոչ ունևոր տնային տնտեսությունների խումբ)
4. 37001-50000 դրամ (եկամտային բավարարվածությամբ տնային տնտեսությունների խումբ)
5. 50001-75000 դրամ (ունևոր տնային տնտեսությունների խումբ)
6. 75000 դրամից ավելի (բարեկեցիկ ապահովվածության տնային տնտեսությունների խումբ):

Սանդղակի և խմբերի կազմավորումը հիմնված է հետևյալ տրամաբանության վրա: Առաջին խմբի վերին սահմանագիծ ընդունվել է ծայրահեղ աղքատության կամ նվազագույն պարենային գիծը, որը 2008թ. համար եղել է մոտ 18000 դրամ, 2-րդ խմբի համար՝ աղքատության գիծը, 37000 դրամն էլ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի մոտավոր չափն է 2008թ. համար:

Այստեղ պետք է նշել, որ մեկ շնչին ընկնող եկամտի հաշվարկը էական տարբերություն ունի Համաշխարհային Բանկի կողմից առաջարկվող մեթոդոլոգիայից՝ այն է մեկ չափահաս անձին ընկնող եկամտի հաշվարկից: Սույն հետազոտության համար մեկ շունչ հասկացությունը կիրառվել է տարիքից անկախ, որովհետև մեր կողմից, մեղմ ասած, սխալ է միայն չափահաս անձանց հաշվառումը, քանի որ 17, 15 կամ նույնիսկ 12 տարեկան անձի պարենային, կենցաղային և այլ տիպի նվազագույն պահանջները էական տարբերություն չունեն 18 և ավելի տարիքի անձից: Թերևս պահանջների տարբերություն կարելի է նկատել առավել ցածր տարիքի երեխաների համար, սակայն կարծում ենք, որ պահանջների բաղադրիչների չափերն են փոխվում, սակայն այդ տարիքի համար առաջանում է յուրահատուկ այլ պահանջների (հագուստ, սանիտարա-հիգիենիկ, առողջապահական, հատուկ սննդային, կրթական և այլն) բավարարման անհրաժեշտություն, արդյունքում պահանջների հանրագումարը, կարծում ենք, մնում է նույն կարգի արժեքի շրջակայքում՝ փոքր շեղումներով: Հետևապես առավել ճշգրիտ կլինի առանց տարիքի հաշվառման մեկ շնչին ընկնող եկամտի հաշվարկը ապահովվածության իրական պատկերի ստացման համար:

Այսպիսով, տնային տնտեսությունների խմբավորումների համար Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ստացվել է տնային տնտեսությունների մեծությունից և բնակավայրի տիպից կախված հետևյալ բաշխումը, որը ներկայացված է աղյուսակ 13-ում:

Եկամտային ապահովվածության խմբերով տնային տնտեսությունների բաշխումը՝ Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում՝ ըստ բնակավայրի տիպի և տնային տնտեսությունների մեծության խմբերի (%) և մեկ շնչին ընկնող միջին եկամուտների խմբերում (դրամ)

Տարածաշրջան	SS–ների մեծության խմբերը (անձ)					Բոլոր SS–ներով
	1	2	3-5	6-8	8>	
Երևան	33365	43920	29531	17018	10294	32024
Չեն հայտարարագրել	6.15	3.48	1.61	2.08	0.00	2.98
0-18000	17.85	10.04	31.82	66.25	100.0	27.95
18001-25000	17.92	22.08	22.87	13.41	0.00	20.67
25001-37000	38.35	22.70	23.18	6.85	0.00	24.68
37001-50000	17.39	19.15	11.32	13.49	0.00	14.31
50001-75000	5.43	18.74	6.99	0.00	0.00	8.38
75000-ից ավելի	3.05	7.30	3.83	0.00	0.00	4.01
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	35644	38677	23652	20081	17176	28220
Չեն հայտարարագրել	0.00	1.03	0.50	0.00	0.00	0.43
0-18000	15.31	20.13	42.50	52.84	66.50	35.09
18001-25000	27.92	23.05	22.24	26.92	0.00	23.94
25001-37000	32.62	36.63	23.82	11.46	33.50	26.05
37001-50000	12.53	13.14	5.08	2.70	0.00	7.61
50001-75000	7.51	7.06	4.72	6.09	0.00	5.88
75000-ից ավելի	4.11	0.00	1.64	0.00	0.00	1.42
ընդ որում՝ քաղաքներում	42181	28229	23014	19147	14779	26433
Չեն հայտարարագրել	0.00	2.88	0.88	0.00	0.00	0.89
0-18000	16.21	36.75	48.19	61.25	100.0	43.39
18001-25000	24.67	8.92	19.92	24.43	0.00	19.59
25001-37000	30.92	27.98	17.10	1.72	0.00	18.60
37001-50000	15.27	20.64	7.02	5.99	0.00	10.33
50001-75000	4.39	5.70	6.39	6.61	0.00	5.93
75000-ից ավելի	8.54	0.00	1.38	0.00	0.00	2.16
ընդ որում՝ գյուղերում	29593	44504	24497	20849	18356	29915
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0-18000	14.48	10.86	34.97	45.92	50.00	27.22
18001-25000	30.93	30.93	25.30	28.96	0.00	28.07
25001-37000	34.19	41.45	32.73	19.46	50.00	33.12
37001-50000	9.99	8.95	2.52	0.00	0.00	5.03
50001-75000	10.40	7.81	2.50	5.66	0.00	5.83
75000-ից ավելի	0.00	0.00	1.99	0.00	0.00	0.72
Լոռի, Շիրակ, Արագածոտն	50510	43206	34426	19090	15937	36223
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00

0-18000	7.14	20.81	30.01	48.67	86.48	27.76
18001-25000	17.89	21.96	24.90	25.60	0.00	22.98
25001-37000	31.70	17.42	14.47	25.73	0.00	19.96
37001-50000	9.56	20.13	11.16	0.00	0.00	10.46
50001-75000	25.58	6.88	8.22	0.00	13.52	9.88
75000-ից ավելի	8.11	12.80	11.24	0.00	0.00	8.95
ընդ որում՝ քաղաքներում	35839	37819	28478	18635	15937	29637
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0-18000	4.94	29.04	35.50	52.63	86.48	32.15
18001-25000	20.08	14.66	26.68	19.57	0.00	21.67
25001-37000	42.77	18.48	12.12	27.80	0.00	21.75
37001-50000	9.28	19.80	12.81	0.00	0.00	10.91
50001-75000	21.03	8.69	8.61	0.00	13.52	9.65
75000-ից ավելի	1.90	9.32	4.28	0.00	0.00	3.88
ընդ որում՝ գյուղերում	71320	49719	41233	19698	-	44484
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	0.00	-	0.00
0-18000	10.27	10.86	23.73	43.36	-	22.27
18001-25000	14.79	30.78	22.87	33.66	-	24.63
25001-37000	16.01	16.13	17.15	22.98	-	17.71
37001-50000	9.97	20.53	9.27	0.00	-	9.90
50001-75000	32.04	4.69	7.77	0.00	-	10.17
75000-ից ավելի	16.92	17.02	19.21	0.00	-	15.31
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	46964	44628	35150	22839	14071	36786
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	2.08	0.00	0.30
0-18000	20.11	9.00	18.50	45.47	86.45	21.70
18001-25000	5.54	15.16	20.49	19.43	13.55	16.84
25001-37000	25.28	20.20	28.89	18.55	0.00	24.94
37001-50000	12.99	25.14	14.65	9.69	0.00	15.37
50001-75000	24.29	18.02	13.64	6.85	0.00	15.06
75000-ից ավելի	11.79	12.48	3.82	0.00	0.00	6.09
ընդ որում՝ քաղաքներում	46091	37597	35195	21123	12715	35799
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	8.17	0.00	0.73
0-18000	7.39	13.74	22.59	34.15	73.60	20.15
18001-25000	11.10	5.92	19.57	48.06	26.40	18.17
25001-37000	22.18	28.14	24.84	6.64	0.00	23.16
37001-50000	20.62	27.89	18.87	11.15	0.00	20.03
50001-75000	31.36	22.28	8.15	0.00	0.00	13.71
75000-ից ավելի	7.35	2.03	5.97	0.00	0.00	4.78
ընդ որում՝ գյուղերում	47501	50842	35113	23425	15500	37485
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00

0-18000	27.95	4.81	15.15	49.33	100.0	22.79
18001-25000	2.12	23.32	21.25	9.67	0.00	15.90
25001-37000	27.19	13.19	32.21	22.62	0.00	26.20
37001-50000	8.28	22.71	11.18	9.19	0.00	12.07
50001-75000	19.94	14.26	18.15	9.19	0.00	16.01
75000-ից ավելի	14.52	21.71	2.06	0.00	0.00	7.02
Հայաստանի Հանրապետությունում	40634	42759	30940	19775	14386	33352
Չեն հայտարարագրել	2.31	1.45	0.64	0.94	0.00	1.15
0-18000	15.22	14.44	30.22	52.74	84.73	27.94
18001-25000	17.33	20.84	22.68	21.83	3.46	21.04
25001-37000	33.10	24.05	22.55	16.42	8.50	23.85
37001-50000	13.72	19.29	10.92	5.88	0.00	12.27
50001-75000	14.43	13.39	8.42	3.13	3.31	9.73
75000-ից ավելի	6.20	8.00	5.20	0.00	0.00	5.17
ընդ որում՝ քաղաքներում	36431	39935	29215	18380	13233	31233
Չեն հայտարարագրել	3.39	2.24	0.95	1.68	0.00	1.74
0-18000	13.78	17.39	33.58	57.63	90.41	30.01
18001-25000	18.50	16.69	22.62	21.23	4.90	20.37
25001-37000	36.53	23.36	20.44	12.22	0.00	22.96
37001-50000	15.77	20.75	12.11	7.61	0.00	13.82
50001-75000	11.41	15.80	7.38	1.32	4.69	9.03
75000-ից ավելի	4.00	6.01	3.87	0.00	0.00	3.82
ընդ որում՝ գյուղերում	49635	47982	34631	21546	17150	37442
Չեն հայտարարագրել	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0-18000	18.29	8.97	23.04	46.54	71.12	23.95
18001-25000	14.82	28.51	22.81	22.60	0.00	22.34
25001-37000	25.77	25.35	27.08	21.75	28.88	25.58
37001-50000	9.33	16.57	8.38	3.68	0.00	9.27
50001-75000	20.89	8.92	10.66	5.43	0.00	11.10
75000-ից ավելի	10.90	11.67	8.03	0.00	0.00	7.77

Անհրաժեշտ են մի քանի նկատառումներ ստացված տվյալների արժանահավաստության և ճշգրտության վերաբերյալ: Հարցման ենթարկված տնային տնտեսությունների 1.15%-ը միայն չի ցանկացել կամ չի կարողացել տալ տվյալներ եկամուտների վերաբերյալ: Խմբերում չհայտարարագրման մակարդակը բավական ցածր է՝ մինչև 8.17%, առավել հետաքրքիր է այն հանգամանքը, որ չհայտարարագրումը իսպառ բացակայում է գյուղերում, իսկ քաղաքային տնային տնտեսություններից բարձր է հիմնականում 1 և 2 անձից կազմված տնային տնտեսություններում:

Անդրադառնալով վիճակագրությանը՝ ըստ աղյուսակ 13-ի, Հայաստանի Հանրապետության 50+ տնային տնտեսություններում, որոնք Հայաստանի Հանրապետության բոլոր տնային տնտեսությունների մոտ 2/3-ն են, մեկ շնչին ընկնող եկամուտը կազմում է 33352 դրամ, որը ցածր է նվազագույն սպառողական զամբյուղից շուրջ 18%-ով: Առավել մանրամասն վերլուծությունը

պարզում է, որ՝

- մեկ շնչին ընկնող եկամուտների միջին ցուցանիշով, հարաբերական առումով, բարվոք վիճակում են Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք և Լոռի, Շիրակ, Արագածոտն տարածաշրջանները, ուր այն գրեթե համընկնում է նվազագույն սպառողական զամբյուղին: Ադետի գոտու համար սա կարող է տարօրինակ թվալ, սակայն եթե հաշվի առնենք, որ այս տարածաշրջանում գյուղերում շատ բարձր ցուցանիշ է (44484 դրամ) և քաղաքներում՝ բավական ցածր (29637 դրամ), ապա դա արժանահավատ է դառնում: Հետաքրքիր է, որ ամենացածր ցուցանիշը Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում է (28220 դրամ), ընդ որում՝ ցուցանիշը ցածր է և քաղաքային (26433 դրամ) և գյուղական (29915 դրամ) բնակավայրերի տնային տնտեսություններում: Երևանում տնային տնտեսությունների միջին ցուցանիշը կազմում է 32024 դրամ, որը հակասական է այն առումով, որ Երևանը Հայաստանի Հանրապետությունում տնտեսական այլ ցուցանիշներով գրավում է առաջատար դիրք, սակայն 50+ տնային տնտեսությունների համար վերոնշյալ ցուցանիշը հիմնավորվում է իր յուրահատկություններով:
- ակնառու է այն օրինաչափությունը, որ տնային տնտեսությունների մեծությունից կախված, մեկ շնչին ընկնող եկամուտների միջինացված արժեքները նվազում են, բացառությամբ որոշ տարածաշրջանների և բնակավայրի տիպի 1 և 2 անձից կազմված տնային տնտեսությունների, սակայն ակնհայտորեն 1 և 2 անձից կազմված տնային տնտեսությունների խմբերը գտնվում են ամենաբարվոք վիճակում:
- բոլոր տարածաշրջաններում տնային տնտեսությունների մեծությունից անկախ հաստատվում է այն փաստը, որ մեկ շնչին ընկնող եկամուտներով գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններն առավել բարվոք վիճակում են, քան քաղաքային տիպի բնակավայրերի տնային տնտեսությունները:
- տնային տնտեսությունների մեծությունից կախված տարածաշրջանից տարածաշրջան բնակավայրային տիպի տնային տնտեսությունների խմբերում եկամուտների միջինները մեծ չափով տատանվում են 1 անձից կազմված տնային տնտեսություններում՝ (29593- 71320 դրամ), ավելի քիչ՝ 2 անձից կազմված և 3-5 անձից կազմված տնային տնտեսություններում (28229- 50842 և 23014- 41233 դրամ): Տատանումները քիչ են տնային տնտեսությունների մեծության մյուս խմբերում:

Այժմ ներկայացնենք տնային տնտեսությունների ըստ մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակներում տնային տնտեսությունների բաշխման պատկերը՝

- Հայաստանի Հանրապետության 50+ տնային տնտեսությունների 27.94%-ը գտնվում են ծայրահեղ աղքատության գծից ցածր խմբում, աղքատության գծից ցածր գտնվում են տնային տնտեսությունների 48.98%-ը, իսկ սպառողական զամբյուղը ապահովված չէ տնային տնտեսությունների մոտավորապես 72.83%-ի մոտ: Այսինքն՝ երկրի բարեկեցության մակարդակի ցուցանիշն ապահովող միջին խավին պատկանող տնային տնտեսությունները կազմում են 22.0%-ը: Հարաբերական առումով հարուստ շերտը կազմում է 5.17%: Այս թվերը ցայտուն կերպով ցուցանում են երկրի վիճակը, ինչպես նաև դիրքը համաշխարհային հանրության այլ երկրների շարքում:
- քաղաքային տիպի բնակավայրերում տնային տնտեսությունների ծայրահեղ աղքատ, աղքատ և նվազագույն սպառողական զամբյուղը չապահովված, ինչպես նաև եկամտային բավարարվածության շերտերի տոկոսային արժեքները մի փոքր ավելի բարձր են, քան

գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների մոտ, իսկ ունևոր և բարեկեցիկ ապահովվածության շերտերի կշիռները գյուղում առավել բարձր են, քան քաղաքում:

- Ծայրահեղ աղքատության, աղքատության, նվազագույն սպառողական գծերից ցածր գտնվող տնային տնտեսությունների կշիռները իրենց խմբերում աճում են տնային տնտեսության թվակազմից կախված, բացառությամբ 1 անձից կազմված տնային տնտեսությունների, որոնց ցուցանիշը մի փոքր տատանվում է 2 անձից կազմված տնային տնտեսությունների ցուցանիշից: Իսկ նվազագույն սպառողական զամբյուղի գծից բարձր շերտերում ցուցանիշն անկում է արձանագրում տնային տնտեսությունների մեծության աճի հետ:

Այսպիսով, ամփոփ նկարագրությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝

- Եկամտային ապահովվածության տեսակետից առավել խոցելի են քաղաքային տնային տնտեսությունները, քան գյուղական
- խոցելիության առավել բարձր մակարդակ առկա է 6 և ավելի անդամ ունեցող տնային տնտեսություններում
- քիչ թե շատ բարվոք վիճակում են 2-5 անձից կազմված տնային տնտեսությունները, սակայն այստեղ կարող են լինել էական բացառություններ, մի քիչ ավելի ցածր ապահովվածության մակարդակ արձանագրված է 1 անձից կազմված տնային տնտեսություններում:

Եկամտային ապահովվածության համար հիմք հանդիսացող հիմնական հոդվածներն են աշխատավարձը, տնտեսական գործունեությունից մուտքերը, պետական և համայնքային սոցիալական վճարումները, կենսաթոշակները և դրամական փոխանցումները: Անդրադառնանք դրանցից աշխատավարձին: 50+ տնային տնտեսություններում աշխատողների վերաբերյալ համապատասխան վիճակագրությունը ներկայացված է սույն հետազոտության այլ բաժիններում: Այստեղ կներկայացնենք միջին աշխատավարձին վերաբերվող ցուցանիշները: Ստացված տվյալների հիման վրա ուրվագծվում է հետևյալ պատկերը, որը ներկայացված է աղյուսակ 14-ում:

Անհրաժեշտ է նշել, որ աշխատավարձի վերաբերյալ տվյալները հավաքագրված են առանց պահումների, հարկերի և սոցիալական ապահովագրության վճարների հաշվառման:

Աշխատավարձերի միջին արժեքները Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ըստ տնային տնտեսությունների մեծության և բնակավայրի տիպի խմբերի (դրամ)

Տարածաշրջան	Տղամարդկանց		Կանանց		Ընդհանուր	
	թվա-կազմը	միջին աշխատ.	թվա-կազմը	միջին աշխատ.	թվա-կազմը	միջին աշխատ.
Երևան	86307	85873	64819	59335	151125	74491
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	56574	60469	24584	46931	81158	56368
ընդ որում՝ քաղաքներում	29599	57362	16551	40906	46149	51460
ընդ որում՝ գյուղերում	26975	63878	8033	59346	35009	62838
Լոռի, Շիրակ, Արագածոտն	72578	68571	32827	48899	105405	62444
ընդ որում՝ քաղաքներում	44535	70695	21740	41182	66275	61013
ընդ որում՝ գյուղերում	28043	65198	11087	64033	39130	64868
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	66202	73913	40937	44329	107138	62609
ընդ որում՝ քաղաքներում	3485	80951	28264	40476	62949	62778
ընդ որում՝ գյուղերում	31517	66169	12673	52921	44189	62369
Հայաստանի Հանրապետություն	281661	73501	163167	51602	444826	65468
ընդ որում՝ քաղաքներում	195126	77209	131374	49952	326498	66241
ընդ որում՝ գյուղերում	86535	65140	31793	58419	118328	63334

Աշխատավարձերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 50+ տնային տնտեսությունների վարձու աշխատող անդամների մոտ միջին աշխատավարձը առանց պահումների կազմել է 65546 դրամ, որին մոտավորապես 15% պահումներն ավելացնելով, կստանանք մոտ 75000 դրամ: Այս աշխատավարձը հաշվարկված է այդ SS-ներում գտնվող 444826 աշխատողների համար: Այն ցածր է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջին հանրապետական վիճակագրական տվյալներից՝ 2007 թվականի համար, որը կարելի է բացատրել աշխատավարձերի հայտարարագրման մեջ առկա սովերային և չհաշվառվող, ինչպես նաև միանվագ, սեզոնային աշխատանքների հատվածը, որտեղ աշխատավարձերը ցածր են:

Նախ և առաջ ակնառու է այն փաստը, որ աշխատողների մեջ գերակշռում են տղամարդիկ, առանձնապես գյուղական բնակավայրերում (մոտ 3 անգամ): Քաղաքային բնակավայրերի աշխատողները գրեթե 3 անգամ գերազանցում են գյուղական վայրերից աշխատողներին:

Միջին աշխատավարձերի ավելի խորը վերլուծությամբ կարելի է արձանագրել, որ՝

- ամենաբարձր միջին աշխատավարձը Երևանում է՝ 74491 դրամ, ամենացածրը՝ Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում՝ 56368 դրամ:
- տարածաշրջաններում, գյուղական վայրերի տնային տնտեսությունների անդամ աշխատողների միջին աշխատավարձը ավելի բարձր է, քան քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների աշխատողների միջին աշխատավարձը: Սա առավել ցայտուն երևում է կին աշխատողների աշխատավարձերը համեմատելիս:
- կանանց միջին աշխատավարձը և տարածաշրջաններում և հանրապետությունում 1.44-1.71

անգամ զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձին: Գյուղերում այս տարբերությունը մի քիչ մեղմ է՝ 1.07-1.25 անգամ, իսկ քաղաքներում այն առավել զգալի է՝ 1.40-1.99 անգամ: Ռեկորդակիրները Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանի քաղաքներն են:

Եկամտային ապահովվածության հաջորդ վերլուծական բաղադրիչը, որին կանդրադառնանք ստորև, տնային տնտեսություններին պետական, համայնքային մարմինների, հասարակական կազմակերպությունների, անհատ բարերարների կողմից հատկացվող նյութական օգնությունները և օրենքով երաշխավորված սոցիալական վճարումներն ու օժանդակություններն են:

Հաջորդիվ, աղյուսակ 15-ում, ներկայացված են նման օժանդակություն ստացող տնային տնտեսություններով հաշվարկված մեկ շնչին ընկնող միջին ամսական արժեքները տարածաշրջաններում ՏՏ բնակավայրի տիպի և մեծության խմբերում, ընդ որում՝ եկամտային ապահովվածության շերտերով դիտարկված, ինչպես նաև նման օժանդակություն ստացող տնային տնտեսությունների կշիռները իրենց խմբերում, այսինքն՝ ընդգրկվածության մակարդակները:

Աղյուսակ 15.

Սոցիալական նյութական օժանդակություն ստացող տնային տնտեսությունների՝ Հայաստանի Հանրապետությունում և տարածաշրջաններում ըստ բնակավայրի տիպի և տնային տնտեսությունների մեծության խմբերում օժանդակությունների միջին արժեքները (դրամ) և ընդգրկվածության մակարդակները (%)

Տարածաշրջան	Տնային տնտեսությունների մեծության խմբերը (անձ)										Բոլոր ՏՏ-ներով	
	1		2		3-5		6-8		8>			
	%	դրամ	%	դրամ	%	դրամ	%	դրամ	%	դրամ	%	դրամ
Երևան	25.5	10632	5.9	9159	6.7	26115	10.3	12275	24.7	1667	11.0	15007
0-18000	43.5	8594	0.0	-	10.3	29706	11.4	11490	24.7	1667	14.6	17130
18001-25000	18.9	11698	8.6	5833	2.8	8000	0.0	-	-	-	6.8	9286
25001-37000	28.3	12782	15.7	11062	12.4	25979	0.0	-	-	-	17.9	16696
37001-50000	29.5	8464	0.0	-	0.0	-	21.4	14333	-	-	9.3	9594
50001-75000	0.0	-	3.3	8333	0.0	-	-	-	-	-	1.5	8333
75000-ից ավելի	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	-	-	0.0	-
Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	23.8	10791	14.5	5366	14.2	14226	18.9	16990	33.5	3333	16.9	12069
0-18000	25.1	8971	11.1	13000	14.0	7433	21.2	18435	0.0	-	16.1	11802
18001-25000	0.0	-	7.6	13417	12.1	9456	18.3	9791	-	-	9.9	10194
25001-37000	38.3	4278	19.4	3445	20.1	26451	24.0	24000	100.0	3333	25.3	12430
37001-50000	52.3	20304	26.8	375	0.0	-	0.0	-	-	-	24.7	12438
50001-75000	0.0	-	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	0.0	-
75000-ից ավելի	20.6	41667	0.0	-	52.1	8167	-	-	-	-	20.8	17642
ընդ որում՝ քաղաքներում	35.5	12759	9.8	9615	13.2	7788	18.7	14676	0.0	-	17.2	10861
0-18000	49.4	8971	17.0	13000	15.1	7571	30.6	14676	0.0	-	20.7	10702
18001-25000	0.0	-	0.0	-	16.1	13758	0.0	-	-	-	8.3	13758
25001-37000	53.6	4102	13.9	4167	16.7	1644	0.0	-	-	-	26.3	3379

37001-50000	60.2	26145	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	15.2	26145
50001-75000	0.0	-	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	0.0	-
75000-ից ավելի	20.6	41667	-	-	0.0	-	-	-	-	-	13.9	41667
ընդ որում՝ գյուղերում	12.9	5761	17.1	3968	15.5	21565	19.0	18868	50.0	3333	16.6	13269
0-18000	0.0	-	0.0	-	12.0	7118	10.9	30000	0.0	-	9.0	15640
18001-25000	0.0	-	8.9	13417	7.8	250	31.0	9791	-	-	11.0	8402
25001-37000	25.6	4588	21.5	3271	22.4	39283	25.7	24000	100.0	3333	24.7	17557
37001-50000	41.2	8250	61.2	375	0.0	-	-	-	-	-	43.1	3002
50001-75000	0.0	-	-	-	0.0	-	0.0	-	-	-	0.0	-
75000-ից ավելի	-	-	0.0	-	100.0	8167	-	-	-	-	26.0	8167
Լոռի, Շիրակ, Արագածոտն	21.1	7326	88.0	9973	25.5	11706	27.6	15503	56.8	28049	61.8	10342
0-18000	28.0	583	23.0	7250	30.8	11818	41.4	14120	50.0	35000	33.3	12739
18001-25000	18.8	800	12.5	1272	38.4	12044	7.3	16900	-	-	25.4	10219
25001-37000	21.1	8000	31.7	9548	15.0	3286	21.8	20000	-	-	20.8	9946
37001-50000	24.1	12500	35.8	10806	7.7	42167	-	-	-	-	19.9	17100
50001-75000	26.4	10137	99.3	10011	5.5	5833	-	-	100.0	5833	92.4	9998
75000-ից ավելի	0.0	-	15.3	16667	40.6	1500	-	-	-	-	16.0	8244
ընդ որում՝ քաղաքներում	24.9	8195	29.8	12895	35.3	9218	31.9	14869	56.8	28049	32.1	11142
0-18000	0.0	-	30.1	7250	39.5	10344	35.7	11831	50.0	35000	36.2	11791
18001-25000	28.5	800	7.7	2500	54.9	10892	16.8	16900	-	-	38.6	9750
25001-37000	26.6	8000	32.3	15000	33.5	3286	35.3	20000	-	-	31.1	10817
37001-50000	42.3	12500	44.4	16169	0.0	-	-	-	-	-	21.0	14933
50001-75000	18.2	15417	18.7	16667	9.8	5833	-	-	100.0	5833	16.7	12165
75000-ից ավելի	0.0	-	38.4	16667	40.6	1500	-	-	-	-	35.8	8244
ընդ որում՝ գյուղերում	15.7	5375	93.6	9884	11.6	22416	22.0	16729	-	-	74.4	10196
0-18000	47.0	583	0.0	-	15.9	18081	50.8	16729	-	-	28.0	14958
18001-25000	0.0	-	15.2	917	16.5	17156	0.0	-	-	-	10.8	12066
25001-37000	0.0	-	30.9	1667	0.0	-	0.0	-	-	-	5.0	1667
37001-50000	0.0	-	25.7	-	19.8	42167	-	-	-	-	18.5	20486
50001-75000	34.0	7500	100.0	10000	0.0	-	-	-	-	-	96.6	9978
75000-ից ավելի	0.0	-	0.0	-	-	-	-	-	-	-	0.0	-
Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	22.1	11877	9.3	33986	4.2	16269	11.1	19344	23.7	43000	9.3	18936
0-18000	7.1	8000	37.8	20367	7.1	18671	4.0	24000	27.4	43000	9.3	21510
18001-25000	0.0	-	0.0	-	9.0	14332	31.3	25077	0.0	-	10.7	19622
25001-37000	39.7	5683	0.0	-	3.5	16667	0.0	-	-	-	8.7	8228
37001-50000	54.5	5746	0.0	-	0.0	-	35.4	6667	-	-	10.9	6022
50001-75000	2.5	58000	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	0.7	58000
75000-ից ավելի	25.0	40000	47.4	41831	0.0	-	-	-	-	-	25.3	41252

ընդ որում՝ քաղաքներում	16.5	12894	7.3	20367	3.5	15612	21.8	22183	46.2	43000	8.5	19079
0-18000	50.9	8000	52.8	20367	12.9	18671	21.1	24000	62.8	43000	24.1	21510
18001-25000	0.0	-	0.0	-	3.1	683	34.0	21382	0.0	-	9.9	17620
25001-37000	6.7	8000	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	1.0	8000
37001-50000	46.5	8000	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	7.3	8000
50001-75000	5.1	58000	0.0	-	0.0	-	-	-	-	-	1.8	58000
75000-ից ավելի	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	-	-	0.0	-
ընդ որում՝ գյուղերում	25.6	11474	11.1	41831	4.7	16675	7.2	16175	0.0	-	9.8	18849
0-18000	0.0	-	0.0	-	0.0	-	0.0	-	0.0	-	0.0	-
18001-25000	0.0	-	0.0	-	13.4	16681	26.9	33000	-	-	11.5	21014
25001-37000	56.3	5544	0.0	-	5.7	16667	0.0	-	-	-	13.5	8238
37001-50000	66.7	3333	0.0	-	0.0	-	50.0	6667	-	-	15.1	4898
50001-75000	0.0	-	0.0	-	0.0	-	0.0	-	-	-	0.0	-
75000-ից ավելի	32.8	40000	51.3	41831	0.0	-	-	-	-	-	37.5	41252
Հայաստանի Հանրապետությունում	23.5	10180	59.5	10201	11.6	15601	17.7	16059	34.5	19941	30.7	11437
0-18000	28.9	7730	15.6	12574	15.7	15524	20.6	15217	26.8	28213	18.6	14439
18001-25000	12.0	7426	8.0	5915	15.1	11705	14.8	17872	0.0	-	13.2	11419
25001-37000	30.1	8630	16.8	7667	11.6	20811	14.4	21152	100.0	3333	18.0	12833
37001-50000	37.1	10986	12.3	7429	1.9	42167	24.4	10002	-	-	13.9	11691
50001-75000	12.2	13414	91.2	10008	1.3	5833	0.0	-	100.0	5833	72.1	10042
75000-ից ավելի	11.9	40354	18.2	35186	12.3	4258	-	-	-	-	14.6	27585
ընդ որում՝ քաղաքներում	25.7	10679	11.0	12161	12.5	13851	19.7	15233	36.9	25366	15.9	13063
0-18000	41.6	8620	20.0	12574	17.4	15953	22.9	13277	35.6	28213	21.6	14285
18001-25000	16.5	7426	7.4	5263	16.1	10765	13.0	19750	0.0	-	14.4	10637
25001-37000	29.2	9885	15.1	11400	12.9	15442	24.6	20000	-	-	19.1	12567
37001-50000	37.4	12536	8.0	16169	0.0	-	14.7	14333	-	-	11.5	13402
50001-75000	8.6	23112	4.0	12313	2.1	5833	0.0	-	100.0	5833	4.8	15247
75000-ից ավելի	5.7	41667	11.2	16667	8.4	1500	-	-	-	-	8.7	12718
ընդ որում՝ գյուղերում	18.6	8657	80.6	10085	9.6	20848	15.1	17450	28.9	3333	48.6	10798
0-18000	8.3	583	0.0	-	10.2	13248	17.1	19305	0.0	-	11.4	15142
18001-25000	0.0	-	8.6	6525	13.0	14174	16.8	16140	-	-	11.1	13212
25001-37000	32.9	5247	19.8	2811	9.4	32734	7.1	24000	100.0	3333	16.0	13384
37001-50000	35.9	5154	22.4	222	7.7	42167	50.0	6667	-	-	20.8	8978
50001-75000	16.5	7500	98.7	10000	0.0	-	0.0	-	-	-	87.4	9978
75000-ից ավելի	16.7	40000	23.5	41831	37.0	8167	-	-	-	-	22.5	35371

Վերոնշյալ աղյուսակում ներկայացված թվային տվյալները վերհանում են հետևյալ եզրակացությունները սոցիալական նյութական օժանդակությունների վերաբերյալ՝

ա) ինչ վերաբերվում է ներկայացուցչականությանը կամ ընդգրկվածության մակարդակին, ապա

ակնառու է, որ՝

- Հայաստանի Հանրապետության 50+ տնային տնտեսությունների 30.7%-ը օգտվում են սոցիալական դրամական աջակցություններից՝ դրամական և ոչ դրամական, միջինում 11 437 դրամի չափով
- եկամտային ապահովվածության բոլոր շերտերում առկա է 13.9-18.6% ընդգրկման մակարդակ, բացառությամբ 50001-75000 դրամի չափով մեկ շնչին ընկնող եկամուտ ունեցող տնային տնտեսությունների, որոնց ընդգրկվածությունը 72.1% է ի հաշիվ 2 անձից կազմված (91.2%, 10008 դրամ) և 8 անձից կազմված և ավելի (100.0%, 5833 դրամ) կազմ ունեցող տնային տնտեսությունների
- տնային տնտեսությունների մեծությունից կախված ընդգրկվածության մակարդակը աճում է 1-ից 2 անձից կազմված տնային տնտեսությունների խումբ անցնելիս, այնուհետև նվազում է 3-5 անձից կազմված տնային տնտեսությունների համար, իսկ այնուհետև աճում է մեծ տնային տնտեսություններում, այս պատկերը առկա է նաև գյուղական բնակավայրերում: Քաղաքային բնակավայրերում 1 անձից կազմված տնային տնտեսություններից 2 անձից կազմված տնային տնտեսությունների անցնելիս ցուցանիշը նվազում է, այնուհետև արձանագրվում է անընդհատ աճ
- տրամաբանական օրինաչափությամբ պետք է, որ ընդգրկվածության ցուցանիշը աղքատության շերտերից դեպի բարեկեցության շերտերը անցնելիս շատ բարձր արժեքից նվազեր մինչև 0-ական մակարդակ վերջին երեք շերտերի համար, սակայն և հանրապետական և տարածաշրջանային ցուցանիշներում այս օրինաչափությունը էական խախտումներով է առկա, թերևս համեմատաբար բարվոք է վիճակը Երևանում: Սա հուշում է օժանդակությունների հասցեականության բացակայության մասին, ինչպես նաև դրանց չհամակարգված լինելու մասին: Այսինքն՝ չկա միասնական լավ մտածված ազգային քաղաքականություն սոցիալական օժանդակությունների հարցում:
բ) սոցիալական օժանդակությունների չափի վերաբերյալ ուրվագծվում է հետևյալ պատկերը՝
- Հայաստանի Հանրապետությունում 50+ տնային տնտեսությունների եկամտային ապահովվածության բոլոր խմբերում մեկ շնչին ընկնող միջին օժանդակության չափերը մոտավորապես նույն կարգի թվեր են (10042–14439 դրամ), բացառությամբ ամենաբարձր եկամտային ապահովվածության խմբի (27585 դրամ), որը մեկ անգամ ևս հուշում է վերոնշյալ եզրակացությունների վերջին կետի իրավացիության մասին:
- Կարելի է պնդել, որ եկամտային հայտարարագրման և հաշվառման համակարգը սոցիալական օժանդակության ոլորտում իսպառ բացակայում է: Արդյունքում ստացվում է, որ հասարակությունը, ընդ որում նաև պետությունը, գրեթե հավասար համամասնությամբ և չափերով ցուցաբերում են սոցիալական օժանդակություն բոլոր սոցիալական շերտերին, անկախ տնային տնտեսությունների իրական տնտեսական իրավիճակից, տնային տնտեսությունների մեծությունից:

Մույն հետազոտության արդյունքում ստացված տվյալների հիման վրա 2007թ. մայիսից 2008թ. մայիս ամսվա ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 50+ տնային տնտեսությունների եկամուտների համախառն գնահատված չափը կազմում է 657.46 մլրդ դրամ, աշխատավարձի տեսքով համախառն մուտքերը կազմել են՝ 349.44 մլրդ դրամ (53.2%), կենսաթոշակներից՝ 121.56 մլրդ դրամ (18.5%), ակտիվ և պասսիվ տնտեսական գործունեությունից՝

74.36 մլրդ դրամ (11.3%), դրամական սոցիալական օժանդակության մասով՝ 27.48 մլրդ դրամ (4.2%), արտերկրից՝ մերձավորներից փոխանցումների մասով՝ 28.27 մլրդ դրամ (4.3%), Հայաստանի Հանրապետությունում գտնվող մերձավորներից դրամական փոխանցումների տեսքով՝ 2.93 մլրդ դրամ (0.4%), ոչ դրամական օժանդակությունների և այլ մուտքերը՝ 53.42 մլրդ դրամ (8.1%):

Այսպիսով ստացվում է, որ տնային տնտեսությունների բարեկեցության մակարդակի բարձրացման հիմնական թիրախներն են մնում աշխատավարձը, կենսաթոշակները, ինչպես նաև փոքր և միջին գործարարությունը:

ԳԼՈՒԽ 7. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Պետության կողմից երկրի ծերացման միտումներին համարժեք արձագանքելը, առկա և սպասվող վտանգներին դիմագրավելուն ուղղված միջոցառումները, որպես կանոն, պատճառ են հանդիսանում սոցիալ-տնտեսական համակարգում արմատական փոփոխությունների կատարման: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետության և հասարակության պատասխանատվությունը տարեց բնակչության նկատմամբ խթանում է կենսաթոշակային այնպիսի մոդելների ակտիվ փնտրտուք, որը առավել է համապատասխանում այն մարտահրավերներին լուծումներ տալուն, որոնք պայմանավորված են երկրի ժողովրդագրական հավասարակշռվածության խախտմամբ:

Հանրապետությունում վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճը, որն ուղեկցվել է աշխատավարձի աճով, գործազրկության կրճատմամբ և բնակչության իրական եկամուտների մեծացմամբ, թուլացրել է կենսաթոշակառուների շրջանում զանգվածային աղքատության հիմնախնդիրը, որին զգալիորեն նպաստել է նաև հետխորհրդային հանրապետության կենսաթոշակային համակարգում 1997թ.-ից գործող իրավական նորմը, որի համաձայն կենսաթոշակառուները կարող են աշխատել և միաժամանակ ստանալ նշանակված կենսաթոշակները: Շատ հաճախ կենսաթոշակառուները ստիպված են եկամտաբեր գործունեություն ծավալել ոչ թե անձնական հետաքրքրություններից ելնելով, այլ կենսական անհրաժեշտության պատճառով՝ լրացուցիչ եկամուտների ստացման համար, քանի որ դեռևս ցածր կենսաթոշակները չեն կարող բավարար կենսամակարդակ ապահովել նրանց համար:

Աշխատող և աշխատանք փնտրող 50+ տարիք ունեցող անձանց, մասնավորապես կենսաթոշակառուների համար առկա են տարաբնույթ հիմնախնդիրներ զբաղվածության ոլորտում:

Այս բաժնում ներկայացվում են առանձին խմբեր կազմող հարցադրումների համախմբերին հարցվողների կողմից տրված պատասխանների վերլուծությունները, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնել նրանց զբաղվածության առկա իրավիճակը, վեր հանել կարիքները և գնահատելու տարածաշրջանային զարգացումների միտումները:

50+ տարիք ունեցող անձանց զբաղվածության ընդհանուր գնահատական

Ներքևում բերվող ենթաբաժնում հետազոտությանը մասնակցած հարցվողներին տրվել են հարցեր, որոնք հնարավորություն են տալիս պարզելու երկրի տնտեսության ազատականացման պայմաններում 50+ տարիք ունեցող անձանց զբաղվածության իրավիճակը մարզերում և գնահատելու նրանց տարիքասեռային առանձնահատկություններով պայմանավորված աշխատաշուկայում մրցունակության թուլացման միտումները:

7.1. «Դուք աշխատու՞մ եք, կամ ունե՞ք սեփական գործ կամ ինքնազբաղվա՞ծ եք» հարցադրմանը դրական են պատասխանել հանրապետության տնային տնտեսություններում


բնակչության 25.6%-ը կազմող 50+ տարիք ունեցող անձանց 36.5%-ը, ինչպես նաև 50+ տարիք ունեցող անձանց 50-ից ցածր տարիքի զուգընկերների 42.8%-ը:

Հետագա շարադրանքում չկրկնվելու համար «50+ տարիք ունեցող անձանց 50-ից ցածր տարիքի զուգընկերներ» բառակապակցությունը կփոխարինվի «50-ից ցածր տարիքի զուգընկերներ» կրճատ բառակապակցությամբ պահպանելով բովանդակությունը:

Հայաստանի Հանրապետության տարածաշրջաններում բնակչության 50+ տարիք ունեցող անձանց շրջանում եկամտաբեր գործունեություն ունեցողների տեսակարար կշիռները բերված են գծապատկեր 7.1-ում:

Հանրապետությունում եկամտաբեր գործունեությամբ զբաղված են 50+ տարիք ունեցող տղամարդկանց 50,9%-ը և կանանց 28,3%-ը: Հարցադրմանը դրական պատասխաններ տված հարցվողների շրջանում զբաղվածության ամենաբարձր ցուցանիշներ ունեն 50-54 տարիքային շերտում գտնվող անձինք՝ տղամարդկանց 78,5%-ը և կանանց 49,1%-ը, ինչպես նաև 55-59 տարիքային խմբերում գտնվող տղամարդկանց 74,7%-ը և կանանց 43,3% -ը:

Հանրապետության մարզերում եկամտաբեր գործունեության ցուցանիշով համեմատաբար բարվոք է վիճակը Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում, որտեղ զբաղված են տղամարդկանց 57,9%-ը և կանանց 39,4%-ը: Համեմատաբար վատ է վիճակը Երևան քաղաքում, որտեղ եկամտաբեր գործունեություն ունեն տղամարդկանց 44,9%-ը և կանանց 20,8% -ը:



Գծապատկեր 7.1 Բնակչության 50+ տարիք ունեցող անձանց շրջանում եկամտաբեր գործունեություն ունեցողների տեսակարար կշիռները

Կենսաթոշակային տարիքը լրացած անձանց եկամտաբեր գործունեության ակտիվությունը կրկնակի անգամ նվազում է տղամարդկանց շրջանում հասնելով 28,37%-ի, իսկ կանանց համար՝ 11,1%-ի: Տարիքի մեծացման հետ դիտվել է եկամտաբեր գործունեություն ունեցողների տեսակարար կշիռների նվազում բոլոր տարածաշրջաններում:

Այստեղ ևս դիտվում է գենդերային ընդգծված տարբերություն: Նույն տարիքի կանանց ակտիվությունը կրկնակի անգամ զիջում է տղամարդկանց նույն ցուցանիշին:

Տարիքային 50 - 54 և 55 - 59 շերտերում համեմատաբար բարձր ցուցանիշներ ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող տղամարդկանց 85,8%-ը և 85,5%-

ը, այնպես էլ նույն տարիքային խմբերում գտնվող կանանց՝ 58,0%-ը և 73,4%-ը համապատասխանաբար:

Երևան քաղաքում, որտեղ առկա է թափուր աշխատատեղերի զգալի քանակ (բազմակի անգամ գերազանցում է աշխատուժի այն պահանջարկին, որը գոյություն ունի հանրապետության բոլոր տարածաշրջաններում միասին վերցրած) 50+ տարիք ունեցող անձանց զբաղվածության հանրապետությունում ամենացածր ցուցանիշները բացատրվում են գործատուների կողմից պահանջված աշխատուժի տարիքային սահմանափակումներով: Մասնավոր գործատուները գերազանցապես պահանջում են երիտասարդ աշխատողներ: Եթե ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ պետությունը ևս դրել է տարիքային սահմանափակումներ քաղաքացիական ծառայողների տարիքի վրա՝ այն սահմանելով 65 տարի (առանձին դեպքերում մեկ տարով երկարաձգմամբ), առանց հաշվի առնելու անգամ նախարարությունների աշխատողների բարձր պրոֆեսիոնալիզմը, ապա ակնհայտ է դառնում, որ հանրապետությունում առկա են արգելափակումներ ավագ տարիքի անձանց զբաղվածության ապահովման համար:

Այս տեսակետից համեմատաբար բարվոք է վիճակը գյուղաբնակ 50+ տարիք ունեցող անձանց մոտ, քանի որ նրանք համարվում են ինքնազբաղվածներ՝ կապված հողի սեփականաշնորհման և ֆերմերային տնտեսությունների զանգվածային ձևավորման հետ:

Միավորված ազգերի կազմակերպության ծերացման հարցերով Մադրիդյան պլանի հանձնարարականներով առաջարկվում է մասնակից պետություններին միջոցառումներ ձեռնարկել տարեցների զբաղվածության ապահովման և աշխատաշուկայում նրանց մասնակցության երկարաձգման ուղղությամբ: Այս հանձնարարականների կատարման ընթացքում անհրաժեշտություն կառաջանա վերանայել քաղաքացիական ծառայողների տարիքային սահմանափակումը և թույլատրել ազատ մրցակցություն՝ հաշվի առնելով մասնագիտական հմտությունները և ոչ թե տարիքը:

Վարձու աշխատողների մասին

Եկամտաբեր գործունեությամբ զբաղված 50+ տարիք ունեցող տղամարդկանց 61.7%-ը վարձու աշխատողներ են, որոնք տարածաշրջանային խմբերում ունեն հետևյալ տոկոսային բաշխումները՝

Երևանում՝ կազմում է 74.9%

Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 61.6%:

Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում՝ 55.6%:


Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում՝ 54.6%:

Ամփոփելով բերված տարածաշրջանային ցուցանիշները կարող ենք նշել, որ 50+ տարիք ունեցող անձանց վարձու աշխատանքով զբաղվածության ամենաբարձր տոկոսային ցուցանիշն ունեն Երևանում բնակվողները, իսկ ամենացածրը՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող նույն տարիքային խմբին պատկանող անձինք: Այս տարածաշրջաններում են բնակվում նաև 50+ տարիք ունեցող անձանց 50-ից ցածր տարիքի ամենաբարձր տոկոսային պարունակությամբ վարձու աշխատանքով զբաղված գույրընկերները:

7.2. ՉԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Հարցման պատասխանները ցույց են տալիս, որ երբևէ աշխատանք կամ սեփական գործ են ունեցել հանրապետության 50+ տարիքից բարձր անձանց 78,6%-ը: Ընդ որում, նախկինում աշխատանք կամ սեփական գործ են ունեցել 50+ տարիք ունեցող տղամարդկանց 93,7 %-ը, 50+

տարիքի կանանց 72,3%-ը, ինչպես նաև 50-ից ցածր տարիքի անձանց գույքընկերների 41,9%-ը (Տե՛ս գծապատկեր 7.2.1): Այս ցուցանիշները կապված են մինչ տնտեսության ազատականացումը խորհրդային հանրապետության բնակչության զբաղվածության բարձր մակարդակի հետ:



Գծապատկեր 7.2.1 Տարածաշրջանների բնակչության 50+ տարիք ունեցող անձանց շրջանում երբևէ աշխատանք կամ սեփական գործ ունեցածների տեսակարար կշիռները


Երբևէ աշխատանք կամ սեփական գործ ունեցած անձանց տարիքաստեղծային կառուցվածքը

Գծապատկեր 7.2.1-ում բերված տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հանրապետության աշխատաշուկայում տղամարդիկ ավելի քան 20%-ով ավելի են ներգրավված եղել, քան կանայք: Տարիքային խմբերում ցուցանիշների համեմատական գնահատումները ցույց են տալիս, որ, եթե տղամարդկանց բոլոր տարիքային խմբերում պահպանվում է 90%-ից ավելի մասնակցություն աշխատաշուկայում, ապա կանանց շրջանում տարիքի նվազման հետ նվազում է նաև նրանց մասնակցության աստիճանը: Մասնավորապես, երբևէ աշխատանք կամ սեփական գործ են ունեցել 50+ տարիքի տղամարդկանց 50- տարիքի գույքընկերների 39,9%-ը, ինչպես նաև 50 - 54 տարիքային շերտում գտնվող կանանց 65,05%-ը: Համեմատության համար նշենք, որ երբևէ զբաղվածություն են ունենցել 70-74 տարեկան կանանց 84,17%-ը, այսինքն՝ ավելի երիտասարդ տարիքի կանանց նկատմամբ, տարեց կանանց երբևէ զբաղվածության ցուցանիշը գերազանցում է համապատասխանաբար 44%-ով և 20%-ով:

Վերը բերված արդյունքներն սպասելի էին, քանի որ բարձր տարիքային շերտում գտնվող կանայք ապրել են գործնականում գործազրկություն չունեցող խորհրդային երկրում և աշխատելու ցանկություն ունենալու պարագայում կարող էին առանց դժվարության հարմար աշխատանք գտնել:

Հանրապետության բոլոր տարածաշրջաններում երիտասարդ կանանց երբևէ զբաղվածություն ունենալու հարցադրմանը տրված դրական պատասխանների ցածր տոկոսային պարունակությունների պատճառները պետք է փնտրել երկրի տնտեսության ազատականացման արդեն երկու տասնամյակ տևող պրոցեսների ընթացքում արդյունաբերության փլուզողական անկման, երբեմնի հզոր պլանային տնտեսության դեռևս թուլացված տեմպերով քայքայման շարունակման և կանանց շրջանում երկարատև գործազրկության հետ: Այս ցուցանիշների համախմբերում ևս ընդգծված է տնտեսապես դեռևս ակտիվ բնակչության շրջանում զբաղվածության և գործազրկության գենդերային ասիմետրիկ կառուցվածքի առկայությունը

հանրապետության բոլոր տարածաշրջաններում: Այս երևույթն իր բացասական հետևանքները կունենա ասորվա ինչպես 50-ից ցածր, այնպես էլ 50-54 տարեկան կանանց կենսաթոշակի չափերի վրա: Այս տարիքային շերտերում գտնվող կանանց կենսաթոշակի չափերը զգալիորեն ավելի ցածր կլինեն այն կենսաթոշակներից, որոնք ներկայումս ստանում են տարիքային կենսաթոշակի անցած կանայք, քանի որ հանրապետությունում գործող կենսաթոշակային համակարգում կենսաթոշակի չափի որոշման մեջ վճռական դերակատարում ունի աշխատանքային ստաժը:



Գծապատկեր 7.2.2 Հանրապետության բնակչության 50+ տարիք ունեցող անձանց երբևէ աշխատանք կամ սեփական գործ ունեցածների տեսակարար կշիռներն ըստ տարիքային խմբերի

Արձանագրված միտումների գենդերային և տարիքասեռային առանձնահատկություններն առավել ընդգծված և ցայտուն են արտահայտված հանրապետության տարածաշրջաններում 50+ տարիքից բարձր անձանց տված պատասխանների համախմբերում:

Տարածաշրջաններում դիտվում են նաև երբևէ զբաղված եղած 50+ տարիքից բարձր անձանց զբաղվածության տարիքասեռային նույն օրինաչափությունները: Երբևէ զբաղվածության համեմատաբար բարձր մարզային միջին ցուցանիշներ են գրանցվել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի բնակչության շրջանում՝ 85,9% (տղամարդիկ՝ 95,8 %, կանայք՝ 77,7%), ինչպես նաև Երևան քաղաքում՝ 80, 9% (տղամարդիկ՝ 95,4%, կանայք՝ 75,0%):

Համեմատաբար ցածր են Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում 50 տարեկանից բարձր անձանց երբևէ զբաղվածության վերաբերյալ ստացված պատասխանների տոկոսային պարունակությունները՝ 69, 7% (տղամարդիկ՝ 89,3%, կանայք՝ 61,1%):

Հանրապետության բնակչության ավագ սերնդի զբաղվածության խնդիրն առավել սրությամբ է կանգնած հանրապետության աշխատաշուկայում աշխատուժի առաջարկի և պահանջարկի մեծ անհամապատասխանության հետ կապված: Գործազրկության պաշտոնական ցուցանիշները (հանրապետությունում գործազրկության մակարդակը 2008թ կազմել է 7, 0%), որը 3 և ավելի անգամ ցածր է հայտարարված իրական մակարդակից: Այս իրողությունը արձանագրված է նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում (ԱՀՌԾ):

Հանրապետությունում հարմար աշխատանք գտնելու խնդիրներ ունեն շատ ավելի երիտասարդ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները, որն ավելի է նվազեցնում համեմատաբար բարձր տարիքային շերտերում գտնվող՝ անգամ տնտեսապես ակտիվ

բնակչության աշխատաշուկայում մրցունակությունը:

Ճերացման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ համապատասխան ռազմավարության մշակման հեռանկարում կարևորվում է ավագ սերնդի աշխատաշուկայում մրցունակության բարձրացման հարցադրումների ներառումը և լուծումների մեխանիզմների սահմանումները:

Հաջորդ խումբ հարցերը նպատակաուղղված են վեր հանելու այն կարիքները, որոնց պետության աջակցության պարագայում 50 տարեկանից բարձր անձանց զբաղվածության խնդիրները կարող են լուծումներ ստանալ:


7.3. «Ո՞րն է Ձեր չաշխատելու պատճառը» հարցադրմանը պատասխանելու համար նշվել են թվով 10 պատճառներ, որոնց տրված պատասխանների տոկոսային պարունակությունները բերվում են ներքևում:

Չաշխատելու 1-ին պատճառ

«Աշխատանք չկա» պատասխանը նշել են 50+ տարիքից բարձր անձանց 15,4%-ը:

Հանրապետությունում ամենաբարձր տոկոսային պարունակություն ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող ինչպես տղամարդկանց՝ 22.6%, այնպես էլ կանանց պատասխանները՝ 25.0% (Տե՛ս գծապատկեր 7.3.1-ը):

Այս տարածաշրջանում աշխատատեղերի հետ կապված իրավիճակի այսպիսի գնահատականն սպասելի էր, քանի որ այս տարածաշրջանի քաղաքային բնակչության շրջանում գրանցված է նաև հանրապետությունում գործազրկության ամենաբարձր մակարդակները և որոնք համապատասխանում են նշված տոկոսային մեծություններին:



Գծապատկեր 7.3.1 Տարածաշրջաններում բնակվող 50+ տարիք ունեցող անձանց չաշխատելու վերաբերյալ տրված պատասխանների տեսակարար կշիռներ

Չաշխատելու 2-րդ պատճառ

«Չունեն համապատասխան մասնագիտական հմտություններ» պատասխանը նշել են հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 0.54%-ը:


Այս հարցադրմանը տրված դրական պատասխանների համեմատաբար բարձր տեսակարար կշիռներ կան Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանի կանանց շրջանում 2.9%:

Տղամարդկանց կողմից տրված դրական պատասխանների ամենաբարձր տեսակարար կշիռ է գրանցվել Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում՝ 1.04%-ը: Արմավիրի, Արարատի,

Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանի տղամարդիկ այս հարցին չեն պատասխանել (Տե՛ս գծապատկեր 7.3.2 -ը):

Եթե ամփոփենք չաշխատելու պատճառ հանդիսացող մասնագիտական հմտությունների բացակայության վերաբերյալ տարբեր սեռերի կողմից տրված պատասխանների համախմբերը, կարող ենք փաստել, որ հանրապետության բոլոր տարածաշրջաններում գործատուների կողմից պահանջված մասնագիտական հմտություններ չունենալու պատճառով աշխատանք ունենալու առավել մեծ դժվարություններ ունեն կանայք:

Այս երևույթը միանշանակ խոսում է այն մասին, որ անհրաժեշտություն կա կանանց շրջանում աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագիտությունների, ինչպես նաև պահանջված մասնագիտական հմտությունների ձեռք բերման ուղղությամբ վերապատրաստումների իրականացման:



Գծապատկեր 7.3.2. Տարածաշրջաններում բնակվող 50+ տարիք ունեցող անձանց կողմից մասնագիտական հմտությունների բացակայության հետ կապված չաշխատելու վերաբերյալ տրված պատասխանների տեսակարար կշիռները


Չաշխատելու 3-րդ պատճառ

«Գործատուները խուսափում են աշխատանքի վերցնել իմ տարիքի մարդկանց» պատասխանը նշել են հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 9,44 %-ը:

Երևանում այս հարցադրմանը դրական են պատասխանել հարցվողների 14,15%-ը, ընդ որում՝ տղամարդկանց 12,2% և կանանց 17,2%: Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 50+ տարիքից բարձր անձանց 7,44%-ը, Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում՝ 8,24%-ը, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում՝ 8,61%-ը:

Եթե մարզերում տարիքի պատճառով գերակշռում են տղամարդկանց աշխատանքի չվերցնելը, ապա Երևան քաղաքում դիտվում է հակառակ պատկերը՝ 50+ տարիքից բարձր կանանց 5 տոկոսային կետով ավելի շատ են մերժում, քան տղամարդկանց:

Նշենք, որ այս հարցին տարբեր տարիքային շերտերում գտնվող հարցվողների պատասխաններից հետևում է, որ գործատուները հիմնականում խուսափում են աշխատանքի վերցնել կենսաթոշակառուներին՝ մասնավորապես 65 տարեկանից բարձր անձանց:



Գծապատկեր 7.3.3 Տարածաշրջաններում բնակվող 50+ տարիք ունեցող անձանց կողմից գործատուների կողմից աշխատանքի չվերցնելու պատճառով չաշխատելու վերաբերյալ տրված պատասխանների տեսակարար կշիռները

Այս միտումը դիտվում է հանրապետության բոլոր մարզերում: Աշխատատեղերի պահանջարկի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում սպասարկման, բազմաբնույթ ծառայությունների մատուցման և առևտրի ոլորտներում են, որի հետ կապված գործատուները պահանջում են երիտասարդ և բարետես աշխատողներ: Պահանջված աշխատուժի տարիքի հետ կապված գործատուների նման մոտեցումն ավելի ցայտուն է արտահայտված Երևան քաղաքում:

Հանրապետության բոլոր տարածաշրջաններում մարզերում դիտված այս երևույթը կապված 50+ տարիքի անձանց աշխատանքային երկարակեցության ապահովման հարցադրումների հետ մտահոգության տեղիք է տալիս, որի հետ կապված պետության կողմից գործուն միջոցառումներ պետք է ձեռնարկվի՝ գործատուներին 50+ տարիքից բարձր անձանց աշխատանքի ընդունելը գրավիչ դարձնելու և շահագրգռելու համար, որով հնարավոր կդառնա մեր հանրապետության կողմից ՄԱԿ-ի Մադրիդյան պլանով նախատեսված հանճնառությունների այս կարևոր դրույթի կատարումը:


Չաշխատելու 4-րդ պատճառ

«Գործատուները չեն ցանկանում աշխատանքի ընդունել իմ սեռի մարդկանց» պատասխանը նշել են հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 0.04%-ը:

Նշենք, որ չաշխատելու պատճառների այս տեսակը հանրապետությունում ստացել է դրական պատասխանների ամենացածր քանակը: Այս հարցադրմանը պատասխանել են գերազանցապես կանայք:

Երևանում այս հարցադրմանը դրական են պատասխանել հարցվողների 0.13%-ը (տղամարդկանց 0.1 և կանանց 0.4 տոկոսը): Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի կանանց՝ 0.2 %-ը (Տե՛ս գծապատկեր 7.3.4-ը):

Մնացած տարածաշրջաններում այս հարցին չեն պատասխանել:




Գծապատկեր 7.3.4 Տարածաշրջաններում բնակվող 50+ տարիք ունեցող անձանց կողմից գործատուների կողմից սեռի պատճառով աշխատանքի չվերցնելու վերաբերյալ տրված պատասխանների տեսակարար կշիռները

Չաշխատելու 5-րդ պատճառ

«Չեն կարողանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել» պատասխանը նշել են հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 3,23%-ը:

Նշենք, որ պատշաճ վարձատրությամբ աշխատանք չեն կարողանում գտնել 50 տարեկանից ցածր տարիք ունեցողների՝ 35,86%-ը, որն ամենաբարձր ցուցանիշն է այս հարցին տրված պատասխանների մեջ:


Երևանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք չեն կարողանում գտնել 50+ տարիքից բարձր տղամարդկանց 8.0%-ը (ավելի քան 5 անգամ գերազանցում է մյուս տարածաշրջանների տղամարդկանց պատասխաններին) և կանանց 2.3%-ը , որը ավելի քան կրկնակի անգամ գերազանցում է մյուս արածաշրջանների կանանց պատասխաններին (Տե՛ս գծապատկեր 7.3.5-ը):



Գծապատկեր 7.3.5 Տարածաշրջաններում պատշաճ վարձատրությամբ աշխատանք չգտած 50+ տարիք ունեցող անձանց պատասխանների տեսակարար կշիռները

Չափաատելու 6-րդ պատճառ

«Ցանկություն չունեն աշխատելու» պատասխանն են նշել հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 3,22%-ը: Տարածաշրջաններում այս հարցադրմանը տրված դրական պատասխանների տոկոսային բաշխումները բերված են գծապատկեր 7.3.6-ում:



Գծապատկեր 7.3.6 Տարածաշրջաններում աշխատելու ցանկություն չունեցող 50+ տարիքի անձանց պատասխանների տեսակարար կշիռները

Երևանում ցանկություն չունեն աշխատելու 50+ տարիքից բարձր տղամարդկանց 2,4%-ը և կանանց 6,2%-ը, Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 3,7%-ը, Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում՝ 2,0%-ը, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում՝ 5,17%-ը:

Հանրապետության բոլոր տարածաշրջաններում աշխատելու ցանկություն չեն հայտնել հիմնականում 65 տարեկանից բարձր անձինք :


Չափաատելու 7-րդ պատճառ

«Ֆիզիկապես անաշխատունակ եմ» պատասխանն են նշել հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 14,74%-ը: Տարածաշրջաններում այս հարցադրմանը տրված դրական պատասխանների տոկոսային բաշխումները բերված են գծապատկեր 7.3.7-ում:

Երևանում ֆիզիկապես անաշխատունակության պատճառով չեն աշխատում 50+ տարիքից բարձր անձանց 20,4%-ը, ովքեր հիմնականում գտնվում են բարձր տարիքային շերտերում:

Ֆիզիկապես անաշխատունակության պատճառով չեն աշխատում Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանում 50+ տարիքից բարձր անձանց 14,18%-ը: Այս տարածաշրջանում ֆիզիկապես անաշխատունակ են 65-69 տարեկան անձանց 3,81%-ը, 70-74 տարեկան անձանց 18,24%-ը և 74 տարեկանից բարձր անձանց 40,4%-ը:

Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում ֆիզիկապես անաշխատունակ են 50+ տարիքից բարձր անձանց 12,4%-ը, իսկ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում՝ 9,6%-ը:



Գծապատկեր 7.3.7 Տարածաշրջաններում 50+ տարիքից բարձր ֆիզիկապես անաշխատունակ անձանց տեսակարար կշիռները

Նշենք, որ Երևան քաղաքում ֆիզիկապես անաշխատունակության պատճառով չեն աշխատում կամ աշխատանք չեն փնտրում 60-64 տարեկան անձանց ընդամենը 6,0%-ը: Այսինքն՝ այս տարիքային շերտում գտնվող անձանց գերակշիռ մասը ֆիզիկապես ի վիճակի է աշխատելու:

Համեմատաբար վատ է վիճակը Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում, որտեղ զգալի տոկոս է կազմում ֆիզիկապես անաշխատունակ 60-64 տարեկան անձանց քանակը՝ 13,9%-ը, որն ավելի քան կրկնակի անգամ գերազանցում է Երևան քաղաքի նույն ցուցանիշը:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք այս հարցման արդյունքները, ապա կարող ենք նշել, որ հանրապետության բոլոր տարածաշրջաններում ֆիզիկապես անաշխատունակ են հիմնականում 70 տարեկանից բարձր անձինք:

Հանրապետության բոլոր մարզերում ֆիզիկապես անաշխատունակության վերաբերյալ տրված պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ նախակենսաթոշակային տարիքի և տարիքային կենսաթոշակի անցած հարցվողների 90 տոկոսից ավելին ֆիզիկապես աշխատունակ են և ի վիճակի են աշխատելու՝ նրանց կողմից աշխատելու ցանկության և հարմար աշխատատեղեր լինելու պարագայում:

Չաշխատելու 8-րդ պատճառ

«Սովորելու պատճառով չաշխատելու» հարցադրմանը չեն պատասխանել հանրապետության 50+ տարիքի հարցվողները, որը, ամենայն հավանականությամբ, կապված է տարիքային առանձնահատկություններով պայմանավորված սովորողներ չլինելու հետ:


Չաշխատելու 9-րդ պատճառ

«Զբաղված եմ տնային տնտեսությամբ կամ տնտեսության անդամի խնամքով» հարցադրմանը դրական են պատասխանել հիմնականում 74 տարեկանից բարձր անձինք:

Տարածաշրջաններում այս հարցադրմանը տրված դրական պատասխանների տոկոսային բաշխումները բերված են գծապատկեր 7.3.8–ում:

Տնային տնտեսությամբ կամ տնտեսության անդամի խնամքով զբաղված լինելու հանգամանքը պատճառ է դարձել չաշխատելու կանանց 7,6%-ի (կանանց դրական պատասխանների ամենացածր տոկոսը հանրապետությունում) և տղամարդկանց 0,5%-ի համար:

Նույն հարցադրմանը կանանց կողմից տրված դրական պատասխանների ամենաբարձր տոկոսային պարունակությունն ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում՝ 21.7%: Այս հարցադրմանը բոլոր տարածաշրջաններում տղամարդիկ կան չեն պատասխանել, կան տրված դրական պատասխանները չեն գերազանցում 0.5 տոկոսը (Երևան քաղաքում):



Գծապատկեր 7.3.8 Տարածաշրջաններում տնային տնտեսության կամ տնային տնտեսության անդամի խնամքով զբաղված 50+ տարիքի բնակչության տեսակարար կշիռները

Չախատելու 10 –րդ պատճառ

«Չգիտեմ որտեղ և ինչպես աշխատանք փնտրել» հարցադրմանը պատասխանել են հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 0,74%-ը, ընդ որում Երևանում՝ 1,12%-ը, Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 1.14%-ը, Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում, ինչպես նաև Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում այս հարցադրմանը չեն պատասխանել:

Նշենք, որ այս հարցին տված պատասխաններից հետևում է, որ հանրապետության բոլոր տարածաշրջաններում 50+ տարիքից բարձր անձինք աշխատանքի հետ կապված խորհրդատվական աջակցության կարիք ունեն:


Չախատելու հետ կապված այլ պատճառներ են նշել հանրապետությունում 50+ տարիքից բարձր անձանց 4,7%-ը, Երևանում՝ 3.4%-ը, Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 8,9%-ը, Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում 1.7%-ը, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում՝ հարցվողների 5,9%-ը:

7.4. «Մինչ այժմ դիմել էք որևէ տեղ կամ որևէ մեկին համապատասխան աշխատանք գտնելու համար» հարցին 50+ տարիքի տղամարդկանց և կանանց տրված պատասխանների բաշխումները տարածաշրջաններում բերված են գծապատկեր 7.4.1-ում և աղյուսակ 7.4.2–ում:

Համապատասխան աշխատանք գտնելու համար գործատուներին, զբաղվածության պետական և ոչ պետական գործակալություններին են դիմել հանրապետության 50+ տարիքի բնակչության 18,45% -ը՝ (տղամարդկանց՝ 23,97%-ը և կանանց 16,13%-ը): Հանրապետական այս միջին ցուցանիշը կրկնակի անգամ գերազանցող ակտիվություն ունի Արմավիրի, Արարատի, Վայոց

ծորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքից բարձր բնակչությունը: Այս տարածաշրջանում աշխատանքի փնտրման ակտիվության միջին ցուցանիշը կազմում է 49,9%, ընդ որում՝ տղամարդկանց շրջանում այն կազմում է 57,9%, իսկ կանանց շրջանում՝ 39,36%:

Հանրապետությունում աշխատանք փնտրելու ամենացածր ակտիվություն ունի Երևան քաղաքի 50+ տարիքից բարձր բնակչությունը, որտեղ միջին ցուցանիշը կազմում է 17,15%, (տղամարդկանց 23,0%-ը, կանանց 23,1%-ը):



Գծապատկեր 7.4. 1 Հանրապետության 50+ տարիքից բարձր բնակչության և նրանց 50- տարիքի գույրակներների կողմից աշխատանքի փնտրման հարցադրմանը դրական պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքային խմբերի


Աշխատանք փնտրող 50+ տարիքի բնակչության շրջանում համեմատաբար ակտիվ է 50-54 տարեկան բնակչությունը, ընդ որում՝ ավելի քան 10 տոկոսային կետի տարբերությամբ առավել ակտիվ են տղամարդիկ: Տարիքի մեծացման հետ նվազում է աշխատանք փնտրողների թվաքանակը: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ աշխատանք են փնտրում անգամ 75 տարեկանից բարձր անձինք՝ տղամարդկանց 3,2% -ը և կանանց 2,8%-ը: Ջգալի են նաև 70-74 տարեկան անձանց աշխատանք փնտրելու ակտիվությունը, որը տղամարդկանց շրջանում հասնում է 17,1% -ի:

Մտորև բերված աղյուսակ 7.4.2–ում ներկայացված են տարածաշրջաններում նույն հարցադրմանը տարբեր տարիքի և սեռի հարցվողների կողմից տրված դրական պատասխանների տոկոսային բաշխումները: Աշխատանքի փնտրման ամենաբարձր ակտիվություն ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի ինչպես տղամարդկանց 57,89%-ը, այնպես էլ կանանց 39,36%-ը: Այս ցուցանիշով առավել պասսիվ են Երևանում բնակվող հարցվողները՝ 17,15%, ընդ որում՝ տղամարդկանց շրջանում աշխատանք են փնտրում նրանց 23,0 %-ը և կանանց՝ 14,78%-ը:


Աղյուսակ 7.4.1

Տարածաշրջան	Տարիքը	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
1 Երևան	< 50	42,30	26,70	35,44
	50 - 54	64,93	39,36	46,58
	55 - 59	50,88	33,59	37,78
	60 - 64	25,79	12,14	14,90
	65 - 69	16,03	3,07	7,79
	70 - 74	12,98	3,15	6,95
	>=75	2,75	4,83	3,48
	տարածաշրջանային միջին	23,03	14,78	17,15
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	< 50	-	44,36	44,36
	50 - 54	61,33	42,46	45,70
	55 - 59	51,32	31,42	35,65
	60 - 64	63,43	28,57	37,61
	65 - 69	47,85	28,79	34,75
	70 - 74	32,68		15,34
	>=75	1,81		0,70
	տարածաշրջանային միջին	31,23	22,56	25,19
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	< 50	-	23,64	23,64
	50 - 54	50,30	43,52	45,17
	55 - 59	44,90	23,51	29,97
	60 - 64	16,16	38,89	32,74
	65 - 69	33,83	12,23	20,25
	70 - 74	19,53	10,04	15,24
	> = 75	10,87	3,43	5,21
	տարածաշրջանային միջին	29,23	17,88	21,12
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	< 50		47,91	34,53
	50 - 54	85,77	57,98	77,43
	55 - 59	89,01	73,39	80,08
	60 - 64	85,47	40,82	69,95
	65 - 69	31,43	22,49	26,47
	70 - 74	27,67	12,43	22,49
	>= 75	8,06	10,57	9,08
	տարածաշրջանային միջին	57,89	39,36	49,90

7.5. Աշխատանք փնտրելու համար «Գրանցված եք արդյոք զբաղվածության պետական կամ մասնավոր գործակալություններում» հարցադրմանը 50+ տարիքից բարձր տղամարդկանց պատասխանների համախմբերը տարածաշրջաններում մարզերում բերված են գծապատկեր 7.5.1-ում, իսկ կանանց պատասխանները՝ գծապատկեր 7.5.2-ում:



Գծապատկեր 7.5.1 Տարածաշրջաններում զբաղվածության պետական և մասնավոր զբաղվածության գործակալություններում հաշվառված 50+ տարիքի տղամարդկանց պատասխանների տեսակարար կշիռները



Գծապատկեր 7.5.2 Տարածաշրջաններում զբաղվածության պետական և մասնավոր զբաղվածության գործակալություններում հաշվառված 50+ տարիքի կանանց պատասխանների տեսակարար կշիռները

Այս գծապատկերներում բերված պատասխանները ցույց են տալիս, որ հանրապետությունում հարցվող տղամարդկանց 11,7%-ը և կանանց 17,7%-ն աշխատանք են փնտրում զբաղվածության պետական գործակալությունների, իսկ տղամարդկանց 5,8%-ը և կանանց 4,5%-ը՝ զբաղվածության մասնավոր գործակալությունների միջոցով:

Միաժամանակ պետական և մասնավոր գործակալությունների միջոցով հանրապետությունում աշխատանք են փնտրում կանանց 3,8%-ը: Երևան քաղաքում այս ցուցանիշը կանանց համար կազմում է 10,9%:

Նշենք, որ զբաղվածության մասնավոր գործակալությունները գործում են գերազանցապես Երևան քաղաքում, որտեղ առավել բարձր են այս բիզնեսի զարգացման հնարավորությունները:

7.6. «Ձեր կարծիքով, հետևյալ գործոններից որո՞նք են երեք առավել կարևորները՝ աշխատանք գտնելու կամ սեփական գործ սկսելու համար»

Հանրապետությունում այս հարցադրման համար առաջարկված թվով 8 տարբերակներին հարցվողների կողմից տրված պատասխանների տոկոսային բաշխումները՝ բերված են աղյուսակներ 7.6.1-ում, 7.6.2-ում և 7.6.3-ում:

Աղյուսակ 7.6.1

Տարածաշրջան	Տղամարդկանց դրական պատասխաններ								
	տարիք	բախտ	աշխատասիր.	համա- ռություն	կրթու- թյուն	կապեր	հմտու- թյուն	փորձ	փող
1 Երևան	<50	-	54,99	-	-	54,99	981	-	-
	50-54	7,17	3,43	4,07	13,09	33,53	3,53	11,42	22,27
	55-59	13,19	5,18	2,17	8,97	17,19	2,91	10,38	25,12
	60-64	8,75	2,07	2,07	26,05	23,50	8,73	5,26	24,68
	65-69	8,34	19,14	9,27	32,61	30,32	36,90	29,67	32,88
	70-74	4,97	29,81	24,69	45,70	36,68	25,89	43,87	39,07
	>=75	10,69	9,75	13,43	34,67	47,03	33,96	48,10	60,32
	միջին	8,90	11,31	8,42	24,55	31,58	16,90	23,27	33,84
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50								
	50-54	9,34	9,31	0,00	3,19	12,08	6,60	7,84	7,25
	55-59	6,97	7,62	2,28	5,24	22,06	6,88	18,15	11,21
	60-64	9,38	20,33	3,64	9,34	37,77	8,06	6,75	18,05
	65-69	19,80	7,41	16,10	9,48	53,13	19,66	19,60	22,36
	70-74	27,18	34,37	18,38	25,04	70,61	43,70	28,85	33,90
	>=75	6,20	46,98	14,50	54,04	49,59	37,13	40,95	27,93
	միջին	12,40	21,16	8,26	17,93	37,69	19,83	20,05	18,96
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50								
	50-54	4,87	1,24	5,32	3,43	8,93	11,57	8,99	7,46
	55-59	14,73	7,02	3,95	10,02	19,16	12,28	2,08	12,68
	60-64	0,00	20,12	0,00	3,18	32,83	25,23	11,73	19,22
	65-69	31,86	7,53	5,64	18,51	61,57	20,70	41,49	58,47
	70-74	13,29	13,59	10,24	36,55	29,46	22,02	21,45	16,83
	>=75	50,06	12,41	11,83	37,40	44,95	13,88	18,26	28,57
	միջին	15,78	8,25	5,72	14,51	27,34	16,08	14,75	20,21
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50								
	50-54	2,28	3,24	0,00	8,12	10,25	4,13	8,57	4,58
	55-59	2,49	5,28	0,00	6,97	8,49	0,00	5,71	4,02
	60-64	0,00	8,50	0,00	4,14	12,36	0,00	4,06	14,53
	65-69	28,07	38,72	0,00	39,02	25,01	21,60	15,93	37,36
	70-74	7,77	29,50	19,54	37,63	34,55	28,37	30,94	28,69
	>=75	9,59	49,44	24,92	47,03	33,74	24,31	26,45	51,38
	միջին	6,57	19,87	7,78	22,08	19,87	12,35	15,29	20,72
Հայաստանի Հանրապետություն	<50		35,86			35,86			35,86
	50-54	15,43	4,10	2,59	7,06	16,63	6,59	9,30	10,80
	55-59	26,59	6,09	2,18	8,20	16,58	5,42	8,39	14,85
	60-64	12,10	11,26	1,50	12,79	26,15	10,32	6,73	19,90
	65-69	12,30	17,04	8,21	25,40	42,00	26,78	28,37	37,98
	70-74	6,83	27,54	18,99	37,07	41,96	29,71	32,43	30,55
	>=75	18,43	29,00	16,16	42,94	44,23	29,38	36,55	45,04
	միջին	15,28	14,62	7,61	20,26	29,20	16,29	18,79	24,55

Տարածաշրջան	Կանանց դրական պատասխաններ								
	տարիք	բախտ	աշխատասիր.	համառություն	կրթություն	կապեր	հմտություն	փորձ	փող
1 Երևան	<50	18,19	22,53	7,92	40,57	32,13	12,64	14,24	33,17
	50-54	12,54	5,98	4,11	22,00	38,82	16,50	16,56	43,93
	55-59	7,82	10,56	8,08	34,54	47,12	14,62	28,45	35,40
	60-64	14,64	8,84	5,32	42,36	54,04	31,58	21,44	53,46
	65-69	7,84	19,64	22,87	39,15	73,96	25,93	31,51	58,87
	70-74	16,10	24,74	10,77	42,72	51,94	30,01	47,86	49,80
	>=75	11,39	24,74	20,19	54,53	49,59	28,28	37,97	56,18
	միջին	12,11	16,20	11,63	39,86	49,35	23,30	29,19	48,22
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50	27,89	5,30	6,73	24,18	56,91	15,47	22,42	25,21
	50-54	22,16	5,60	14,16	20,34	51,21	11,34	27,78	29,18
	55-59	24,40	30,27	10,04	39,69	52,41	7,95	28,48	40,99
	60-64	16,79	13,28	5,84	45,28	44,52	21,67	25,48	51,57
	65-69	27,19	31,11	5,01	29,12	43,12	31,77	40,03	36,74
	70-74	25,98	22,10	18,77	55,63	53,60	28,58	38,58	34,41
	>=75	32,80	40,79	13,46	64,53	43,30	29,18	31,42	28,68
	միջին	25,35	20,67	11,39	39,19	49,07	20,06	30,33	34,12
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50	8,93	23,21	11,69	29,00	39,11	31,14	6,96	17,08
	50-54	9,00	8,51	8,14	26,00	29,93	15,47	13,11	18,52
	55-59	21,01	19,82	2,38	23,82	40,34	24,17	11,63	27,22
	60-64	18,20	23,74	8,56	37,12	35,39	18,44	10,71	15,71
	65-69	0,00	35,15	7,31	60,34	63,25	31,36	29,07	26,51
	70-74	44,95	17,87	11,70	34,13	47,61	21,79	26,37	43,85
	>=75	23,04	38,69	9,32	62,03	49,22	25,74	16,45	43,50
	միջին	18,46	21,80	8,42	36,27	40,86	22,79	14,93	27,13
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50	7,05	23,04	2,69	34,82	31,15	12,55	26,28	18,71
	50-54	4,07	11,45	8,63	31,09	26,15	9,46	8,78	25,44
	55-59	2,70	3,76	7,88	10,06	18,72	5,81	13,69	17,19
	60-64	10,58	21,58	0,00	37,75	40,30	16,23	11,01	40,06
	65-69	20,27	39,66	9,34	46,53	57,07	9,78	8,10	41,76
	70-74	4,03	33,27	17,72	48,34	53,87	33,13	19,65	48,77
	>=75	12,21	33,25	9,44	63,42	46,65	32,37	30,23	38,36
	միջին	7,92	22,16	8,54	38,47	37,56	17,22	16,66	32,21
Հայաստանի Հանրապետություն	<50	14,65	19,33	7,92	31,96	39,48	19,70	15,84	22,92
	50-54	12,07	7,72	8,49	24,60	36,74	13,49	16,64	30,00
	55-59	12,56	14,47	6,97	27,27	39,95	13,89	21,05	30,23
	60-64	15,17	15,57	5,24	40,83	45,26	23,76	17,75	41,61
	65-69	14,23	29,46	13,07	41,70	61,00	24,27	27,58	44,69
	70-74	22,44	24,51	14,14	44,28	51,61	28,39	34,01	45,16
	>=75	17,91	32,15	14,74	59,60	47,75	28,74	31,05	45,05
	միջին	15,41	19,70	10,16	38,58	44,77	21,24	23,37	36,95

Աղյուսակ 7.6.3-ում բերված կանանց և տղամարդկանց պատասխանների տոկոսային պարունակությունների համեմատական գնահատումները ցույց են տալիս, որ աշխատանք գտնելու կամ սեփական գործ սկսելու համար երեք ամենակարևոր գործոնների վերաբերյալ կարծիքները համընկել են. դրանք են՝ կապերի և ծանոթությունների առկայությունը, փողը և կրթությունը, ընդ որում՝ երկու սեռերի կողմից առավել կարևորվել է կապերի կամ ծանոթությունների գործոնը (տղամարդիկ՝ 29,20%, կանայք 44,77%): Այս գործոնի համար ամենա-բարձր տոկոսային պարունակությունն ունեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջաններում բնակվող

տղամարդկանց պատասխանները՝ 37,69%-ը և Երևան քաղաքում բնակվող կանանց՝ 49,35%-ը:

Տղամարդկանց 24,55%-ը աշխատանք գտնելու կամ սեփական գործ սկսելու համար երկրորդ տեղում են դրել փողը, իսկ կանանց 38,58%-ը՝ կրթությունը:

Երրորդ տեղում տղամարկանց 20,26%-ը նշել է կրթությունը, իսկ կանանց 36,95%-ը՝ փողը:

Այս վերջին երկու գործոնների համար ամենաբարձր տոկոսային պարունակություններ ունեն Երևան քաղաքում բնակվող տղամարդ հարցվողների պատասխանները՝ 33,84% և 24,55% համապատասխանաբար:

Աղյուսակ 7.6.3

	Սեփական գործ սկսելու համար առավել կարևոր գործոնները	Տղամարդկանց կարծիքը	Կանանց կարծիքը
1	Բախտ, երջանիկ պատահականություն	15,28	15,41
2	Աշխատասիրություն	14,62	19,70
3	Համառություն	7,61	10,16
4	Կրթություն	20,26	38,58
5	Կապեր կամ ծանոթություններ	29,20	44,77
6	Մասնագիտական ունակություններ	16,29	21,24
7	Աշխատանքային փորձ	18,79	23,37
8	Փող	24,55	36,95

7.7.«Այժմ փնտրո՞ւմ եք աշխատանք, կամ փորձո՞ւմ եք կազմակերպել սեփական գործ» հարցադրմանը տարածաշրջաններում հարցվող տղամարդկանց և կանանց կողմից տրված դրական պատասխանների տոկոսային պարունակությունները բերված են աղյուսակ 7. 7-ում:

Աղյուսակ 7. 7


Տարածաշրջան	Տարիքը	Ցուցանիշ	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
			այո	այո	այո
1 Երևան	<50	% 50+ տարիքից բարձր զուգընկերների համար	-	9,68	8,52
	50-54	% 50+ տարիքից բարձր	75,96	38,72	49,23
	55-59	% 50+ տարիքից բարձր	29,73	22,56	24,30
	60-64	% 50+ տարիքից բարձր	45,72	6,51	14,43
	65-69	% 50+ տարիքից բարձր	13,28	0,53	5,18
	70-74	% 50+ տարիքից բարձր	6,70	0,43	2,59
	>=75	% 50+ տարիքից բարձր	-	-	-
	միջին	% 50+ տարիքից բարձր	20,36	9,46	12,59
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50	% 50+ տարիքից բարձր զուգընկերների համար	-	33,39	33,39
	50-54	% 50+ տարիքից բարձր	29,83	21,63	23,04
	55-59	% 50+ տարիքից բարձր	56,08	20,82	28,33
	60-64	% 50+ տարիքից բարձր	29,70	18,90	21,70
	65-69	% 50+ տարիքից բարձր	26,07	-	8,15
	70-74	% 50+ տարիքից բարձր	15,32	-	7,19
	>=75	% 50+ տարիքից բարձր	1,81	-	0,70
	միջին	% 50+ տարիքից բարձր	17,94	11,65	13,56
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50	% 50+ տարիքից բարձր զուգընկերների համար	-	10,07	10,07
	50-54	% 50+ տարիքից բարձր	64,91	33,71	41,29
	55-59	% 50+ տարիքից բարձր	26,93	3,70	10,72
	60-64	% 50+ տարիքից բարձր	8,08	9,00	8,75
	65-69	% 50+ տարիքից բարձր	11,67	-	6,99
	70-74	% 50+ տարիքից բարձր	-	3,49	2,55
	>=75	% 50+ տարիքից բարձր	-	-	0,00
	միջին	% 50+ տարիքից բարձր	16,08	8,49	10,66

4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50	% 50+ տարիքից բարձր գույզըներնների համար	-	11,53	11,53
	50-54	% 50+ տարիքից բարձր	15,67	23,82	22,20
	55-59	% 50+ տարիքից բարձր	36,57	3,43	11,21
	60-64	% 50+ տարիքից բարձր	71,51	4,11	14,65
	65-69	% 50+ տարիքից բարձր	6,20	-	2,08
	70-74	% 50+ տարիքից բարձր	-	-	-
	>=75	% 50+ տարիքից բարձր	-	-	-
	միջին	% 50+ տարիքից բարձր	6,85	5,28	5,78
Հայաստանի Հանրապետություն	<50	% 50+ տարիքից բարձր գույզըներնների համար	-	15,39	14,88
	50-54	% 50+ տարիքից բարձր	55,35	30,11	35,92
	55-59	% 50+ տարիքից բարձր	34,26	15,50	20,21
	60-64	% 50+ տարիքից բարձր	34,13	9,20	14,76
	65-69	% 50+ տարիքից բարձր	13,66	0,22	5,59
	70-74	% 50+ տարիքից բարձր	6,24	0,85	2,96
	>=75	% 50+ տարիքից բարձր	0,48	-	0,15
		միջին	% 50+ տարիքից բարձր	16,28	8,98

Հանրապետության 50+ տարիքից բարձր տղամարդկանց 16,28%-ը և կանանց 8,98%-ը փնտրում են հարմար աշխատանք:


Հանրապետությունում աշխատանք փնտրողների մեջ առավել մեծ տոկոս են կազմում Երևան քաղաքի տղամարդ հարցվողները՝ 20,36%, ինչպես նաև Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի կանայք՝ 11,65%:

7.8. «Պատրաստվում եք գտնել աշխատանք կամ կազմակերպել Ձեր սեփական գործը մոտակա 3 ամիսների ընթացքում» հարցադրմանը տարբեր տարիքային շերտերում գտնվող հարցվող տղամարդկանց և կանանց պատասխանների տոկոսային բաշխումները բերված են գծապատկերներ 7.8.1-ում և 7.8.2-ում:



Գծապատկեր 7.8.1 Տարբեր տարիքային շերտերում գտնվող տղամարդ հարցվողների կողմից տրված պատասխանների տոկոսային բաշխումները

Հարցադրմանը տրված դրական պատասխաններից հետևում է, որ հանրապետությունում 50+ տարիքի տղամարդկանց 3,03% և կանանց 2,11% ունեն որոշակի մտադրություն սեփական բիզնես սկսելու համար:



Գծապատկեր 7.8.2 Տարբեր տարիքային շերտերում գտնվող կին հարցվողների կողմից տրված պատասխանների տոկոսային բաշխումները

Տղամարդկանց 16,61%-ը և կանանց 9,46%-ը տատանվում են մոտակա ամիսներին սեփական գործ սկսել: Նշենք, որ տարիքի մեծացման հետ նվազում է նաև «հավանաբար այո» պատասխան տված հարցվողների թվաքանակը:

Մոտակա երեք ամիսների ընթացքում կտրականապես հրաժարվում են աշխատանք փնտրել կամ սեփական գործ սկսել 50+ տարիքի անձանց 50 տարեկանից ցածր տարիքի զուգրնկերները:

Հանրապետությունում այս հարցադրմանը հարցվողների 88,4%-ը բացասական պատասխաններ են տվել:

Հանրապետությունում 50+ տարիքի անձանց եկամտաբեր գործունեության երկարատևության ապահովման համար կարևորվում է որոշակի մասնագիտություն ունեցող անձանց տնայնագործական աշխատանքներում ներգրավելը, մասնավորապես ժողովրդական արհեստների տիրապետողներին՝ գորգագործներին, կարպետագործներին, ժանյակագործներին, կավագործներին, դարբիններին, գորելեն գործողներին և այլ մասնագետներին:


Տնայնագործության խթանումը, բացի ավագ սերնդի ներկայացուցիչներին զբաղվածություն ապահովելուց, կնպաստի նաև ժողովրդական արհեստների պահպանմանը, որը կարևորվում է նաև ազգային արժեքների պահպանման և երիտասարդ սերնդին փոխանցման նկատառումներով:

Հաջորդ հարցադրումը հնարավորություն է տալիս պարզել հարցվողների շրջանում տնայնագործությամբ զբաղվելու ցանկությունների առկայության և պատրաստակամության իրավիճակը:

7.9. «Եթե հնարավորություն լիներ, կցանկանայիք զբաղվել տնայնագործությամբ» հարցին տրված պատասխանները բերված են աղյուսակ 7.9.1-ում և 7.9.2-ում: Հարցադրմանը դրական պատասխանների ամենաբարձր տոկոսային պարունակություններ ունեն հարցվողների համեմատաբար երիտասարդ տարիքային շերտերում գտնվողները:


Տրված բացասական պատասխանները գերազանցում են 50%-ի սահմանագիծը 65

տարեկանից բարձր կանանց և 70 տարեկանից բարձր տղամարդկանց շրջանում: Եթե համադրենք և ամփոփենք այս հարցադրմանը տարբեր սեռի և տարիքի հարցվողների դրական և բացասական պատասխանների համախմբերը, ապա կարող ենք արձանագրել, որ 50+ տարիքի բնակչության գերակշիռ հատվածը չի ցանկանում զբաղվել տնայնագործությամբ և ձգտում է աշխատանք գտնել գործատուների մոտ:



Գծապատկեր 7.9.1 Տարբեր տարիքային շերտերում գտնվող տղամարդ հարցվողների կողմից տրված պատասխանների տոկոսային բաշխումները

Տրված դրական պատասխաններից հետևում է, որ հարմար գործ լինելու դեպքում տղամարդկանց 20,59%-ը, կանանց 23,4%-ը կցանկանային զբաղվել տնայնագործությամբ: Այս արդյունքները սպասելի էր, քանի որ տնայնագործությունը ծախսատար է և արդյունքների իրացման պրակտիկորեն անհնարին լինելը անհեռանկարային է դարձնում անհատի արհեստագործությամբ եկամտաբեր զբաղվածությունը: Այս իրողությունը կարող էր հարյուր ութսուն աստիճանով շրջվել, եթե գործատուները և ազգային մշակույթի պահպանման համար պատասխանատու համապատասխան պետական մարմինները դեմքով շուռ գային դեպի ժողովրդական արհեստների զարգացմանը: Ամբողջ աշխարհում ձեռքի աշխատանքով ստեղծված արդյունքները շատ թանկ են գնահատվում և ունեն շուկա: Հանրապետությունում տնայնագործական աշխատանքի կազմակերպման և ձեռագործ ապրանքների իրացման ապահովման պայմաններում այն մեծ հեռանկար կարող է ունենալ ոչ միայն բիզնեսի, այլ նաև ժողովրդական արհեստների զարգացման ուղղությամբ:




Գծապատկեր 7.9.2 Տարբեր տարիքային շերտերում գտնվող կին հարցվողների կողմից տրված պատասխանների տոկոսային բաշխումները

Ասվածը հատկապես կարևորվում է տարածաշրջանային անհամաչափ զարգացման առկա իրավիճակի վրա զգալիորեն ազդելու, հատկապես գյուղական համայնքերում զբաղվածության ապահովման հարցադրումներով: Այս տնայնագործական արտադրությունը բիզնեսի տեսակետից գրավիչ է նաև արտադրամասերի ստեղծման և պահպանման ծախսերի բացակայության հետ կապված:

ՀԱՐՑԵՐ ՎՃԱՐՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

7.10. «Աշխատու՞մ եք Դուք որևէ մեկի մոտ կամ որևէ տեղում, որպես վարձու աշխատող» հարցադրման պատասխանները բերված են աղյուսակ 7.10-ում



Գծապատկեր 7.10.1 Վարձու աշխատանք ունեցող տղամարդկանց տեսակարար կշիռներն ըստ տարիքային խմբերի

Այս հարցադրմանը դրական են պատասխանել միայն տղամարդ հարցվողները:

Վարձու աշխատողներ են եկամտաբեր գործունեությամբ զբաղված 50+ տարիքի տղամարդկանց 61,0%-ը: Նրանց գերակշիռ հատվածը մինչև 65 տարեկան է, և ունեցած վարձու աշխատանքը լիովին բավարարում է 4,22%-ին, բավարարում է 33,12%-ին, մասամբ է բավարարում 41,02%-ին, չեն բավարարում 16,77%-ին, ընդհանրապես չեն բավարարում 4,85%-ին:

Վարձու աշխատանք ունեցող հարցվողները «Քանի՞ անմիջական և ոչ անմիջական

ենթականեր և ենթակայության (համակարգման) տակ գտնվող ստորաբաժանումներ ունեք» հարցադրմանը դրական պատասխաններ չեն տվել, այսինքն՝ շարքային աշխատողներ են: Նրանք վարձու աշխատողներ են հետևյալ կազմակերպություններում՝

- | | |
|---|---------------|
| 1. Նոր ստեղծված լրիվ մասնավոր առևտրային կազմակերպությունում՝ | 12,68% |
| 2. Նախկին պետական, ներկայումս սեփականաշնորհված առևտրային կազմակերպությունում՝ | 14,83% |
| 3. Սեփականության խառը ձևի առևտրային կազմակերպությունում՝ | 6,50% |
| 4. Անհատ ձեռնարկատեր կամ ֆերմեր են՝ | 3,05% |
| 5. Լրիվ պետական կամ համայնքային առևտրային կազմակերպություններում՝ | 2,20% |
| 6. Պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում՝ | 31,26% |
| 7. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ | 12,06% |
| 8. Ոչ առևտրային կամ հասարակական կազմակերպություններում՝ | 6,17% |
| 9. Միջազգային կազմակերպություններում՝ | 0,67% |
| 10. Օտարերկրյա ֆիրմայի ներկայացուցչություններում՝ | 0,59% |

Վերևում բերված պատասխանների տոկոսային պարունակությունները ցույց են տալիս, որ հարցվողների 31,26%-ը վարձու աշխատանք ունեն պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, նախկին պետական, ներկայումս սեփականաշնորհված առևտրային կազմակերպությունում՝ 14,83%-ը: Նոր ստեղծված մասնավոր առևտրային կազմակերպություններում՝ 12,68%-ը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ 12,06%-ը:

Հանրապետությունում վարձու աշխատանք ունեցող 50+ տարիքի և նրանց 50-գույրընկերների տարիքային բաշխումները բերված են աղյուսակ 7.10.2-ում

Աղյուսակ 7.10.2

Տարածաշրջան	Տարիք	1	2	3	4	5	6	7	8	9	10
Հայաստանի Հանրապետություն	<50	9,4	4,9	10,4	9,5	7,3	43,1	14,2	1,2	0,0	0,0
	50-54	15,8	16,8	4,6	11,4	2,7	25,6	16,1	5,4	1,1	0,6
	55-59	17,2	14,7	8,8	11,9	0,2	33,5	7,2	6,0	0,0	0,5
	60-64	1,0	14,3	5,5	17,4	1,6	35,4	10,8	12,8	1,3	0,0
	65-69	3,1	16,5	3,8	13,5	8,6	38,4	10,4	0,0	0,0	5,9
	70-74	12,2	12,6	0,0	21,8	0,0	46,8	6,6	0,0	0,0	0,0
	>=75	0,0	0,0	46,5	39,8	0,0	13,7	0,0	0,0	0,0	0,0
	միջին	12,7	14,8	6,5	13,1	2,2	31,3	12,1	6,2	0,7	0,6

Սույն հետազոտության մեջ կատարվել են առանձին հարցադրումներ պարզելու վարձու աշխատողներին տրամադրվող սոցիալական ծառայությունների կամ արտոնությունների առկայությունը: Ստորև ներկայացվում են այդ հարցադրումների պատասխանների համախմբերը:

7.11. Գործատուների կողմից վարձու աշխատողներին տրամադրվող սոցիալական ծառայությունների կամ արտոնությունների ցանկը բերվում է ներքևում:


1. **Ամենամյա վճարովի արձակուրդ** են տրամադրվում վարձու աշխատող հարցվողների գերակշիռ հատվածին:

Հարյուր տոկոսով վճարովի արձակուրդ են տրամադրվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական և համայնքային ծառայողներին, այդ

մարմիններին սպասարկող անձնակազմին, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, լրիվ պետական կամ համայնքային առևտրային կազմակերպություններում, միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև օտարերկրյա ֆիրմայի ներկայացուցչություններում աշխատողներին:


Ամենամյա վճարովի արձակուրդներ տրամադրվում են նաև խոշոր մասնավոր գործատուների կողմից:

Հիմնականում փոխադարձ համաձայնությամբ կամ գործատուի միայնակ որոշմամբ վարձու աշխատողներին վճարովի արձակուրդ չեն տրամադրվում մասնավոր կամ ընտանեկան փոքր ձեռնարկություններում, ինչպես նաև առևտրային և սպասարկման ծառայություններ մատուցող մասնավոր ձեռնարկատերերի կողմից: Վճարովի արձակուրդ, հավանաբար, ոչ բոլորին է տրամադրվում նաև ստվերային տնտեսություններում: Բացասական պատասխաններ տված հարցվողների մի մասը, հավանաբար, աշխատում է ստվերային ձեռնարկություններում, որի մասին չեն բարձրաձայնում:




Գծապատկեր 7.11.1 Ամենամյա վճարովի արձակուրդի վերաբերյալ տրված հարցադրումների պատասխանները տարիքային տարրեր խմբերում

2. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ են ստանում վարձու աշխատող հարցվողների գերակշիռ հատվածը: Այս հարցադրմանը տրված դրական պատասխանների համախմբերը բերված են գծապատկեր 7.11.2.-ում



Գծապատկեր 7.11.2. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու վերաբերյալ տրված հարցադրումների պատասխանները տարիքային տարրեր խմբերում

3. Անվճար բուժում գերատեսչական բժշկական հաստատություններում, լրիվ կամ մասնակի վճարում այլ բժշկական հաստատություններում, բուժման համար արտոնությունների տրամադրման մասին դրական պատասխանների տոկոսային բաշխումները բերված են գծապատկեր 7.11.3-ում: Ներկայացված պատասխաններից հետևում է, որ վարձու աշխատողների շրջանում սոցիալական ծառայության այս տեսակը ընդգրկում չունի:



Գծապատկեր 7.11.3 Գերատեսչական բժշկական հաստատություններում անվճար բուժում կամ լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ բուժում ստանալու վերաբերյալ տրված պատասխանները տարիքային տարբեր խմբերում

Սոցիալական ծառայության այս տեսակի հետ կապված իրողությունը կապված է երկրի առողջապահական համակարգի վերակառուցման հետ: Գերատեսչական պատկանելիության բուժական հաստատությունները պահպանված են միայն ուժային գերատեսչությունների համակարգում, որը անհասանելի է շարքային հարցվողների համար:

Հարցադրմանը հարցվողների կողմից տրված դրական պատասխաններն ավելի շուտ վերաբերվում են այն արտոնություններին, որոնք երաշխավորված են պետության կողմից առանձին խումբ կազմող կենսաթոշակառուների, ինչպես նաև աղքատության ընտանեկան նպաստի համակարգում անապահովության բարձր միավոր ունեցող ընտանիքների համար:


4. Կազմակերպության միջոցներով վերապատրաստման և որակավորման բարձրացման միջոցառումներին մասնակցության վերաբերյալ տրված դրական պատասխանների տոկոսային պարունակությունները ցույց են տալիս, որ դրանցում հիմնականում մասնակցել են 50+ տարիքի անձանց 50- տարիքի գույքը կերպերը՝ տղամարդկանց 69,0%-ը և կանանց 36,0%-ը:

5. Երեխաների անվճար խնամքը գերատեսչական նախադպրոցական հիմնարկներում, լրիվ կամ մասնակի վճարում նախադպրոցական այլ հիմնարկներում երեխաների խնամքի համար հարցադրմանը տրված պատասխանների համախմբերը բերված են գծապատկեր 7.11.4 –ում:

Ինչպես երևում է հետազոտությանը մասնակցած հարցվողների պատասխաններից, վարձու աշխատողների շրջանում սոցիալական ծառայության այս տեսակը ևս ընդգրկում չունի: Այդ իրողության պատճառները հանրապետությունում գերատեսչական նախադպրոցական ցանցի քայքայված վիճակն է:


Ներկայումս կառավարությունը ծրագրային միջոցառումներ է ձեռնարկում

հանրապետությունում սոցիալական այս տեսակի ծառայության նախկինում ունեցած դիրքերի, վերականգնման ուղղությամբ:



Գծապատկեր 7.11.4 Գերատեսչական նախադպրոցական հաստատություններում երեխաների անվճար խնամքի կամ նախադպրոցական այլ հաստատություններում լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ ծառայություն ստացած հարցվողների պատասխանները տարիքային տարբեր խմբերում

6. **Բնակվարձի վճարի արտոնություն** ունեցող հարցվողների կողմից տրված դրական պատասխանների բաշխումը ներկայացված է գծապատկեր 7.11.5 -ում:



Գծապատկեր 7.11. 5 Բնակվարձի արտոնություններ ունեցող հարցվողների պատասխանների տոկոսային պարունակությունները

Ինչպես երևում է գծապատկերից, հանրապետությունում այս արտոնության տրամադրման վերաբերյալ դրական պատասխաններ են տրվել 55-59 տարիքային շերտում գտնվող տղամարդ հարցվողների 5,1%-ի կողմից, ինչպես նաև 50-54 տարիքային շերտում գտնվող տղամարդկանց 3,0%-ի և կանանց 0,5%-ի կողմից: Հանրապետությունում բնակարանային վարձի արտոնություններ կամ դրամական փոխհատուցումներ են տրվում ուժային գերատեսչությունների բնակարանային խնդիրներ ունեցող աշխատակիցներին:

Դրական և բացասական պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ սոցիալական

աջակցության այս տեսակը հանրապետությունում ընդգրկում չունի:

7. Տրանսպորտի, սննդի և այլնի համար վճարների արտոնություններ

Ըստ գործող օրենսդրության («Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշում) հաշմանդամության բոլոր խմբերին պատկանող կենսաթոշակառուներն իրավունք ունեն՝

- Անվճար բուժման
- Անվճար բուժսպասարկման
- Անվճար պրոթեզա-օրթոպեդիկ պարագաներով ապահովման
- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներն ունեն անվճար դեղորայք ստանալու իրավունք
- Հաշմանդամության 3-րդ խմբի հաշմանդամները կարող են դեղորայք ստանալ 50%

զեղչով

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները կարող են անվճար օգտվել

էլեկտրատրանսպորտից,

- Հայրենական պատերազմի և նրանց հավասարեցված հաշմանդամները կենցաղային հետևյալ ծառայությունների՝ աղբահանության, հեռախոսի և ռադիոյի վարձերը մուծում են 50% զեղչով, իսկ գազի, ջրի և տրանսպորտային ծախսերի կատարման համար ստանում են փոխհատուցման գումար՝ ամսական 5700 դրամի չափով

- Հայրենական պատերազմի մասնակից կենսաթոշակառուները գազի, ջրի և տրանսպորտային ծախսերի կատարման համար ստանում են ամսական փոխհատուցման գումար՝ 3800 դրամի չափով

- Բնակչությունն իրավունք ունի անվճար օգտվելու ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններից:

Պետության կողմից երաշխավորված այս բոլոր արտոնությունների մասին նախապես տեղեկացվեցին հարցման մասնակիցները, որից հետո տրված պատասխանները ցույց տվեցին, որ նշված իրավունքներից օգտվել են համեմատաբար երիտասարդ հարցվողները՝ մինչև 50 տարեկան կանանց 9,0%-ը, 50-54 տարեկանների 2,8%-ը և 55-59 տարեկան կանանց 3,9%-ը: Տղամարդկանց շրջանում արտոնություններից օգտվել են՝ 50 -54 տարեկանների 8,5%-ը, 55-59 տարեկանների 4,9%-ը և 60-64 տարեկան տղամարդկանց 12,9% -ը:

Ավելի բարձր տարիքի հարցվողները դրական պատասխաններ չեն տվել:

7.12. Հետևյալ հարցադրումներին՝ **«Իրավունք ունե՞ք ստանալու որևէ լրացուցիչ կորպորատիվ կամ ճյուղային կենսաթոշակ Ձեր ձեռնարկությունից»** և **«Ո՞վ է վճարում այդ կորպորատիվ կամ ճյուղային կենսաթոշակային համակարգի կամ ծրագրի վճարները»** հարցվողների կողմից դրական պատասխաններ չեն տրվել, քանի որ հանրապետությունում կենսաթոշակային նման համակարգեր չեն գործում:

7.13. Հաշվի առնելով ընտանեկան հանգամանքները, գործատուները թույլատրում են աշխատատեղում աշխատել ճկուն աշխատաժամանակով հանրապետության 50+ տարիքի բնակչության 25,86%-ին, կանանց 24,31%-ին և տղամարդկանց 27,25%-ին, ընդ որում՝ Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում գործատուները թույլատրում են այս ռեժիմով աշխատել վարձու աշխատողների 35,84%-ին՝ կանանց 40,26%-ին և տղամարդկանց 31,93%-ին:

Երևան քաղաքում նման արտոնություններից օգտվում են վարձու աշխատողների 20,85%-ը, ընդ որում՝ կանանց 18,50%-ը և տղամարդկանց 23,23%-ը:

7.14. «Ինչպե՞ս են ձևավորված Ձեր աշխատանքային հարաբերությունները» հարցադրմանն առաջարկված չորս տարբերակներին տրված պատասխաններն ունեն հետևյալ տոկոսային պարունակությունները:

1-ին տարբերակ. Գրավոր աշխատանքային պայմանագրեր են կնքվել անորոշ ժամանակով հանրապետությունում 50+ տարիքի տղամարդկանց 44,2%-ի և կանանց 52,3%-ի հետ:

Ամենաբարձր ցուցանիշներ գրանցվել են Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում: Գրավոր աշխատանքային պայմանագրեր են կնքվել այս տարածաշրջանի տղամարդ հարցվողների 56,05%-ի և կանանց 51,62%-ի հետ:

2-րդ տարբերակ. Որոշակի ժամանակահատվածի համար գրավոր աշխատանքային պայմանագրեր են կնքվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 24,44%-ի և կանանց 28,41%-ի հետ:

Այս տեսակի աշխատանքային իրավահարաբերությունների ամենաբարձր ցուցանիշներ են գրանցվել Երևանում բնակվող տղամարդկանց 38,67%-ի մոտ և կանանց 33,49%-ի մոտ:

3-րդ տարբերակ. Կապալային կամ այլ իրավական աշխատանքային պայմանագրեր են կնքվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 2,65 %-ի և կանանց 3,76%-ի հետ:

4-րդ տարբերակ. Գործատուի հետ բանավոր համաձայնությամբ են աշխատել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 28,73%-ը, կանանց՝ 15,56%-ը: Տարածաշրջաններում դրական պատասխան տված ամենաբարձր տոկոսը կազմում են Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի հարցվողները՝ տղամարդկանց 52,40%-ը և կանանց 6,76%-ը: Ըստ տրված պատասխանների բոլոր վարձու աշխատողները գործատուների հետ ունեն համաձայնություն աշխատանքային ռեժիմի, աշխատավարձի չափի և արձակուրդի տրամադրման վերաբերյալ, որոնք արտահայտված են աշխատանքային պայմանագրերում:

7.15. Վարձու աշխատողների վերջին 12 ամսվա ընթացքում աշխատանքի բնույթից կախված աշխատանքային ռիթմի վերաբերյալ հանրապետությունում հարցվողների կողմից հարցադրման պատասխանները բերված են աղյուսակ 7.15-ում:

Աղյուսակ 7.15

	Աշխատանքի ռիթմը	Տղամարդիկ %	Կանայք %
1	Անընդմեջ /նշտական/ աշխատանք՝ տարվա ընթացքում	75.37	91.77
2	Սեզոնային աշխատանք	11.65	1.82
3	Աշխատանք՝ ընդհատումներով	11.25	5.57
4	Միանգամյա, պատահական աշխատանք	-	0.6
5	Այլ	1.73	0.20

Աղյուսակում բերված տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հանրապետության 50+ տարիքի վարձու աշխատող տղամարդկանց 75.37%-ը և կանանց 91.77%-ը տարվա ընթացքում աշխատում են անընդհատ ռիթմով: Ընդհանուր առմամբ, սեզոնային և ընդհատումներով աշխատանքով են զբաղված տղամարդկանց 22,9%-ը՝ կանանց 7,39%-ի դիմաց:

Հանրապետության աշխատանքի շուկայում գոյություն ունեցող լարվածության պարագայում արձանագրված այս վերջին միտումը սպասելի արդյունք էր, կապված տղամարդու կողմից ընտանիքի հիմնական կերակրողի դերակատարման հետ:

7.16. «Որքանո՞վ եք բավարարված Ձեր աշխատանքի հուսալիությամբ, աշխատանքը չկորցնելու հավանականությամբ» հարցադրման պատասխանները բերված են ստորև

ներկայացված աղյուսակ 7.16-ում:

Աղյուսակ 7.16

	Բավարարվածության ասնդակ	Տղամարդիկ %	Կանայք %
1	ընդհանրապես չեն բավարարում	1.06	2.94
2	չեն բավարարում	13.95	16.64
3	մասամբ են բավարարում	47.78	42.62
4	բավարարում են	34.08	34.53
5	լիովին բավարարում են	3.13	3.28

Աղյուսակում բերված պատասխանների տոկոսային պարունակությունների համեմատությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում հարցվող կանանց 19.6%-ը և տղամարդկանց 15,1%-ը բավարարված չեն վարձու աշխատանքի հուսալիությամբ: Այս տեսակետից՝ աշխատանքը պահպանելու անվտանգությունը բարձր է Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում, որի ցուցանիշը կանանց շրջանում կազմում է 25,7%, իսկ տղամարդկանց շրջանում՝ 27,1%:

Աշխատանքի պահպանման հուսալիությամբ մասամբ են բավարարված տղամարդկանց 47.78%-ը և կանանց 42.62%-ը:

Ունեցած վարձու աշխատանքը պահպանելու լիովին բավարար և բավարար հույս ունեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 37,2%-ը և կանանց 37,8%-ը:

Հանրապետության մարզերում ունեցած վարձու աշխատանքը պահպանելու առավել մեծ վստահություն ունեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող կանանց 48.0%-ը և տղամարդկանց 89.4%-ը:

7.17. «Պատրաստվո՞ւմ եք տեղափոխվել այլ գործատուի մոտ աշխատելու կամ սկսել սեփական գործ մոտակա 3 տարիների ընթացքում» հարցադրման պատասխանները ցույց են տալիս, որ հանրապետության 50+ տարիքի վարձու աշխատանք ունեցող տղամարդկանց 86,7%-ը և կանանց 87,1%-ը մոտակա երեք տարիների չեն պատրաստվում փոխել աշխատանքը կամ սկսել սեփական գործ: Երևան քաղաքում այս ցուցանիշները կազմում են տղամարդկանց համար 93,6%, կանանց համար՝ 81.0%:

Կանանց շրջանում բացասական պատասխանների ամենաբարձր քանակ է գրանցվել Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 96,3%:

Մոտակա երեք տարիների ընթացքում աշխատանքը փոխելու մտադրություն ունեն տարածաշրջանների համեմատաբար երիտասարդ տարիքի հարցվողներն, ովքեր գտնվում են 50-59 տարիքային շերտերում, իսկ Երևան քաղաքում նաև 60-64 տարիքային շերտում գտնվող կանայք:

Այս հարցադրմամբ ամենաբարձր ցուցանիշներ է արձանագրվել Երևան քաղաքի կանանց շրջանում՝ 50-ից ցածր տարիքի կանանց՝ 16.54%-ը, 50-54 տարիքային շերտում գտնվողների 17.29%-ը, 55-59 տարիքային շերտում՝ 15.14%-ը և 60-64 տարիքային շերտում՝ 21.28%-ը:

Հանրապետությունում 50+ տարիքի վարձու աշխատանք ունեցող արձանագրված այս միտումները ցույց են տալիս, որ աշխատանքի շուկայում իրավիճակը համեմատաբար բարվոք է Երևան քաղաքում, որտեղ աշխատանքը կամ գործատուին փոխելու ավելի մեծ հնարավորություններ կան, քան հանրապետության մյուս տարածաշրջաններում:

Մոտակա երեք տարիների ընթացքում պատրաստվում են դադարեցնել աշխատանքային գործունեությունը հանրապետությունում վարձու աշխատանք ունեցող 50+ տարիքի

տղամարդկանց 10,7%-ը, կանանց 11,2%-ը: Այս մտադրությունն ունեն հիմնականում բարձր տարիքային շերտում գտնվողները, մասնավորապես, տղամարդկանց շրջանում՝ 70-74 տարիքային շերտում գտնվողների 51.35%-ը և նույն տարիքային շերտում գտնվող կանանց 27.22%-ը: Այսինքն՝ հիմնականում առողջական վիճակի հետ կապված նույն տարիքի տղամարդկանց քանակը, ովքեր որոշում են կայացրել դադարեցնել աշխատանքը գրեթե կրկնակի անգամ, գերազանցում է կանանց: Այս իրողությունը կապված է կանանց առավել երկարակեցության և ավելի երկար աշխատունակությունը պահպանելու տարիքային առանձնահատկություններով:

Հարցվողները լրացուցիչ աշխատանք ունենալու հետ կապված դրական պատասխաններ չեն տվել:

ՀԱՐՑԵՐ ԻՆՔՆԱՉՔԱՂՎԱԾՆԵՐԻՆ

7.18. «Ինքնազբաղվածության հետևյալ կարգավիճակներից ո՞րն է համապատասխանում Ձեզ» հարցադրման պատասխանները տրված են ներքևում բերված աղյուսակ 7.18–ում:

Աղյուսակ 7.18

	Ինքնազբաղվածության կարգավիճակներ	Տղամարդիկ %	Կանայք %
1	Գործի սեփականատեր կամ համասեփականատեր են	19.71	14.04
2	Արհեստավոր կամ մասնագետ են և աշխատում են գործարքով որպես ինքնուրույն անձ	31.02	5.04
3	Ընտանեկան գործի /նաև ֆերմերային/ մասնակից են	46.33	74.92
4	Ազատ մասնագիտությամբ անձ են /ստեղծագործող և այլն/	2.16	5.69
5	Նոտար, մասնավոր ուսուցիչ, կրկնուսույց են և այլն	0.79	0.31

Աղյուսակում բերված տեղեկատվությունից հետևում է, որ ինքնազբաղված հարցվող տղամարդկանց 46.33%-ը և կանանց 74.92%-ը ընտանեկան գործի /նաև ֆերմերային/ մասնակից են: Արհեստավորներ են տղամարդկանց 31.02%-ը և կանանց 5.04%-ը:

Գործի սեփականատեր կամ համասեփականատեր են հարցվող տղամարդկանց 19.71%-ը և կանանց 14.04%-ը: Տղամարդկանց նկատմամբ կրկնակի գերազանցում են ազատ մասնագիտության (ստեղծագործող և այլն) տեր կանանց թվաքանակները:

7.19. Ինքնազբաղված հարցվողների գործունեության իրավական կարգավորման հետ կապված հարցադրումներն արվել են ներքևում բերված տարբերակների համաձայն: Տրված պատասխանները ներկայացված են աղյուսակ 7.34-ում:

1. Դուք գրանցված եք որպես անհատ ձեռնարկատեր՝ վկայականի և այլ նման փաստաթղթերի ձևակերպմամբ:
2. Ձեր կազմակերպությունը գրանցված է որպես իրավաբանական անձ:
3. Գործունեության գրանցումը ձևակերպման փուլում է:
4. Դուք կամ Ձեր կազմակերպությունն աշխատում եք առանց գրանցման կամ փաստաթղթերի ձևակերպման:

Հայտատուի ընտանիքի կազմը	Տղամարդիկ				Կանայք				
	տարիք	1	2	3	4	1	2	3	4
<50							4.96	5.24	89.81
50-54	29.16	5.09	3.43	62.32	3.83	4.29	0.00	91.88	
55-59	15.07	15.47	0.00	69.46	9.71	4.47	0.00	85.82	
60-64	20.15	3.52	0.00	76.33	8.49	0.00	0.00	91.51	
65-69	5.52	0.00	0.00	94.48	0.00	0.00	0.00	00.00	
70-74	4.90	0.00	0.00	95.10	23.82	0.00	0.00	76.18	
>=75	3.95	0.00	0.00	96.05	16.25	8.50	0.00	75.25	
միջին	17.87	6.00	1.20	74.93	7.14	3.81	0.98	88.07	

Աղյուսակում բերված տեղեկատվության համաձայն՝ ինքնագրադաված հարցվողների գերակշիռ մասն աշխատում է առանց գրանցման կամ փաստաթղթերի ձևակերպման՝ մասնավորապես տղամարդկանց 74.93%-ը և կանանց 88.07%-ը:

Այս իրավիճակը կապված է գյուղատնտեսական հողի սեփականաշնորհման արդյունքում ձևավորված անհատ ֆերմերային տնտեսությունների զանգվածային ձևավորման հետ: Քանի որ հանրապետությունում գյուղմթերքների արտադրության խրախուսման հետ կապված՝ այդ տնտեսություններն ազատված են եղել հարկերից, անհրաժեշտություն չկար գրանցվելու կամ փաստաթղթային ձևակերպումներ կատարելու:

Իրավաբանական անձի կարգավիճակ ունեն 6.0% տղամարդ հարցվողների և 0,96% կին հարցվողների կողմից ստեղծված կազմակերպությունները:

Անհատ ձեռնարկատեր են ձևակերպված ինքնագրադաված տղամարդկանց 17.87%-ը և կանանց 7.14%-ը: Ինքնագրադավածների տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների հիմնադիրներ են, համեմատաբար, երիտասարդ հարցվողները:

7.20. «Ձեր կարծիքով ինչպե՞ս կզարգանա Ձեր գործը, կազմակերպությունը կամ տնտեսությունը մոտակա 3 տարիների ընթացքում» հարցադրմանը հանրապետության 50 տարեկանից բարձր տղամարդկանց և կանանց պատասխանների համախմբերը բերված են ներքևում առաջարկված տարբերակների համաձայն (Տե՛ս աղյուսակ 7.20–ը):

Աղյուսակ 7.20

	Ինքնագրադավածների գնահատումներ	Տղամարդիկ	Կանայք
1	Կաճի և կրճատվի	11.07	-
2	Կմնա նույն մակարդակին, ինչ այժմ	37.45	18,0
3	Անկում կապրի	15.19	50.78
4	Հնարավոր է ընդհատի իր գոյությունը	5.79	12.19
5	Չգիտի	30.51	26.3

Վերևում բերված աղյուսակային տվյալները ցույց են տալիս, որ հանրապետությունում ինքնագրադաված հարցվող տղամարդկանց 48,5%-ը և կանանց 18,0%-ը գտնում են, որ իրենց գործը կամ կազմակերպությունը մոտակա երեք տարիների ընթացքում կաճի և կրճատվի կամ կմնա նույն մակարդակին:


Հայաստանի Հանրապետության ինքնագրադաված 50-ից բարձր տարիքի տղամարդկանց 20,9%-ը և կանանց 18,0%-ը գտնում են, որ իրենց գործը կամ կազմակերպությունը մոտակա երեք տարիների ընթացքում անկում կապրի կամ հնարավոր է, որ ընդհատի իր գոյությունը:

Իրենց գործի ապագայի նկատմամբ անորոշության մեջ են գտնվում տղամարդկանց 30.51%-ը և կանանց 26.3%-ը:


Հանրապետության ինքնագրադված 50+ տարիքի տղամարդկանց 20,9%-ը և կանանց 18,0%-ը գտնում են որ իրենց գործը կամ կազմակերպությունը մոտակա երեք տարիների ընթացքում անկում կապրի կամ հնարավոր է, որ ընդհատի իր գոյությունը:

Իրենց գործի ապագայի նկատմամբ զգալի են անորոշության մեջ գտնվող տղամարդկանց 30.51%-ը և կանանց 26.3%-ը:

Տարածաշրջաններում այս հարցադրմանը տրված պատասխանների համախմբերը բերված են ստորև՝ գծապատկերներ 7.20.1-ում և 7.20.2-ում, որոնց համեմատական գնահատումները ցույց են տալիս իրավիճակի հետևյալ պատկերը՝



Գծապատկեր 7.20.1 Մոտակա երեք տարիներին սեփական բիզնեսի փոփոխությունների գնահատումները տարածաշրջաններում բնակվող տղամարդ հարցվողների շրջանում



Գծապատկեր 7.20.2 Մոտակա երեք տարիներին սեփական բիզնեսի փոփոխությունների գնահատումները տարածաշրջաններում բնակվող կին հարցվողների շրջանում

«Մոտակա երեք տարիների ընթացքում սեփական գործը կամ կազմակերպությունը կաճի և կընդլայնվի» պատասխանների ամենամեծ տեսակարար կշիռները տղամարդ և կին հարցվողների շրջանում արձանագրված է Երևան քաղաքում, համապատասխանաբար՝ 17,8% և 11,8%: Նույն կարծիքին են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի տղամարդկանց՝ 7,2%-ը, որն ամենացածր ցուցանիշն է հանրապետությունում:

«Մոտակա երեք տարիների ընթացքում սեփական գործը կամ կազմակերպությունը կմնա նույն մակարդակում»: Այսպես են գնահատում իրենց բիզնեսը Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի սեփական գործ ունեցող տղամարդ հարցվողների՝ 50,5%, որն ամենաբարձր ցուցանիշն է հանրապետության մյուս տարածաշրջանների համեմատությամբ: Այս կարծիքն ունեն հանրապետության բոլոր տարածաշրջանների հարցվող գործարար կանանց գերակշիռ հատվածը:

«Անկում կապրի կամ հնարավոր է ընդհատի իր գոյությունը»: Այս կարծիքն են հայտնել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի տղամարդկանց 25,6%-ը և կանանց 28,6%-ը, որոնք հարցադրմանը տրված ամենաբարձր տոկոսային պարունակություններն են հանրապետության մյուս տարածաշրջանների հետ համեմատած:

«Զգիտեն» պատասխանն են տվել Երևան քաղաքի հարցվող տղամարդ գործարարների 53,3%-ը (ամենաբարձր ցուցանիշը հանրապետությունում):

7.21 «Որքանո՞վ եք բավարարված Ձեր ինքնագրադավածությամբ» հարցադրմանը տրված պատասխանների համախմբերը բերված են բավարարության սանդղակում ներկայացված տարբերակների համաձայն (Տես՝ աղյուսակ 7.21-ը):

Աղյուսակ 7.21

	Բավարարվածության սանդղակ	Տղամարդիկ %	Կանայք %
1	ընդհանրապես չեն բավարարում	7.58	6.06
2	չեն բավարարում	22.29	16.23
3	մասամբ են բավարարում	47.50	53.71
4	բավարարում են	22.24	24.00
5	լիովին բավարարում են	0.39	-

Ինչպես հետևում է աղյուսակում բերված պատասխանների տոկոսային պարունակություններից, հանրապետությունում ինքնագրադավածությունը բավարարում և մասամբ են բավարարում 50+ տարիքի տղամարդկանց 69,7% և կանանց 77,7%-ին: Ինքնագրադավածությունից հանրապետության մյուս տարածաշրջանների համեմատ առավել բավարարված են Արմավիրի, Արարատի և Վայոց ձորի տարածաշրջանի 50+ տարիքի տղամարդկանց 78,0%-ը և կանանց 79,2%-ը:

Ինքնագրադավածությունը չի բավարարում կամ ընդհանրապես չի բավարարում 50+ տարիքի տղամարդկանց 29,9%-ին և կանանց 22,3%-ին: Երևան քաղաքում ինքնագրադավածությունից դժգոհում են տղամարդկանց 41,8%-ը և կանանց 44,92%-ը:

Ինքնագրադավածությունից դժգոհ հարցվողների շրջանում զգալի են այն անձանց տեսակարար կշիռերը, ովքեր մոտակա տարիների ընթացքում պատրաստվում են փոխել գործի բնույթը կամ անցնել վարձու աշխատանքի: Այսպես, Երևան քաղաքում տղամարդկանց 44,14%-ը և կանանց 21,55%-ը, Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի 50+ տարիք ունեցող տղամարդկանց 40,7%-ը և կանանց 11,3%-ը, Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանի տղամարդկանց 27,53%-ը և կանանց 15,92%-ը պատրաստվում են փոխել գործի բնույթը կամ անցնել վարձու աշխատանքի:

Հանրապետությունում այս ցուցանիշը տղամարդկանց շրջանում կազմում է 26,4%, իսկ կանանց շրջանում 10,4%:

Հանրապետությունում 50+ տարիքի ինքնագրադաված տղամարդկանց 20,8%-ը և կանանց


13,4%-ը մոտակա երեք տարիների ընթացքում պատրաստվում են դադարեցնել եկամտաբեր գործունեությունը, նրանց գերակշիռ հատվածը՝ 80%-ից ավելին, մտադրություն չունի դադարեցնելու ինքնազբաղվածությունը:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԽՆԱՄՔՈՎ ՁԲԱՂՎԱԾՆԵՐ


7.22. «Խնդրում են նշեք տնային տնտեսությամբ կամ ընտանիքի անդամների խնամքով Ձեր զբաղվածության աստիճանը» հարցադրմանը պատասխանելու համար առաջադրվել են երեք պատասխանների տարբերակներ, որոնք բերված են գծապատկերներ 7.22.1 և 7.22. 2 –ում:

Հարցվածների պատասխանների տոկոսային պարունակությունների համադրումները ցույց են տալիս, որ տնային տնտեսությամբ կամ ընտանիքի անդամների խնամքով հանրապետությունում հարցվողները գերազանցապես զբաղվում են ըստ անհրաժեշտության և հնարավոր դեպքերում, ընդ որում՝ այս պատասխանն են տվել տղամարդկանց 90.4%-ը և կանանց 55.1%-ը:

Երևանում այս ցուցանիշը տղամարդկանց համար կազմում է 92.28%, իսկ կանանց համար՝ 43.78%, այսինքն՝ տնային հոգսերով ըստ անհրաժեշտության հիմնականում զբաղվում են տղամարդիկ: Հանրապետությունում հարցվող կանանց շրջանում տնային հոգսերով ըստ անհրաժեշտության ամենաբարձր զբաղվածությունն ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում, որը կազմում է 73.0%:



Գծապատկեր 7.22.1 Տնային տնտեսությամբ կամ ընտանիքի անդամի խնամքի հետ կապված զբաղվածությունը 50+ տարիքի տղամարդկանց շրջանում



Գծապատկեր 7.22.2 Տնային տնտեսությամբ կամ ընտանիքի անդամի խնամքի հետ կապված զբաղվածությունը 50+ տարիքի տղամարդկանց շրջանում

Հիմնականում տնային տնտեսությամբ կամ ընտանիքի անդամի խնամքով են զբաղված 50+ տարիքի տղամարդկանց 7,1%-ը և կանանց 29,6%-ը:

Բացառապես տնային հոգսերով են զբաղված հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 2,5 %-ը և կանանց 15,3%-ը:

7.23 «Քանի տարեկանից եք սկսել զբաղվել տնային տնտեսությամբ կամ ընտանիքի անդամների խնամքով» հարցադրմանը տրված պատասխանների համախմբերը բերված են աղյուսակ 7.23-ում:

Ինչպես ցույց է տալիս տղամարդկանց և կանանց կողմից տրված պատասխանների համադրումները, կանայք շատ ավելի երիտասարդ տարիքից են սկսել զբաղվել տնային տնտեսությամբ կամ ընտանիքի անդամների խնամքով:

Աղյուսակ 7.23

	Հարցվողների տարիքը	Տղամարդիկ %	Կանայք %
1	<=19 տարեկանից	-	6,4
2	20 - 29	-	27,1
3	30 - 39	11,2	15,3
4	40 - 49	17,5	17,2
5	50 - 59	35,6	26,1
6	60 - 69	24,1	6,5
7	> = 70 տարեկանից	4,5	1,3

Տղամարդիկ սկսում են զբաղվել տնային հոգսերով ավելի հասուն տարիքում:

ՁԲԱՂՎԱԾՆԵՐ

7.24. «Պատրաստվո՞ւմ եք 3 տարիների ընթացքում դադարել աշխատել և սեփական գործ վարել կենսաթոշակի իրավունք ստանալուց կամ վաղաժամ կենսաթոշակի անցնելուց հետո կամ էլ, եթե թոշակառու եք» հարցադրմանը տարածաշրջաններում հարցվողների կողմից տրված պատասխանները բերված են աղյուսակ 7.24-ում:

		Տղամարդկանց պատասխաններ				Կանանց պատասխաններ			
		որոշակի ոչ	ոչ	այո	որոշակի այո	որոշակի ոչ	ոչ	այո	որոշակի այո
Հ Հ	<50	66,32	33,68			51,73	39,02	9,26	
	50-54	46,91	44,53	7,85	0,70	53,65	43,70	1,74	0,91
	55-59	28,44	59,21	11,78	0,57	34,20	54,30	10,26	1,24
	60-64	36,20	54,04	9,24	0,52	46,31	37,09	12,64	1,96
	65-69	20,57	76,84	2,59	4,20	35,87	52,10	22,02	2,4
	70-74	16,52	59,38	24,10	7,53	34,43	59,17	24,51	2,8
	>=75	36,00	42,32	11,14	10,54	34,39	35,96	29,65	-
	միջին	36,31	53,06	9,79	1,85	44,60	45,28	8,72	1,41

Այս հարցադրմանը հանրապետությունում 50+ տարիքի տղամարդկանց 89,4%-ը և կանանց 90,1%-ը վաղաժամ կենսաթոշակի անցնելուց հետո շարունակելու են աշխատել կամ վարել սեփական գործը: Տարիքի մեծացման հետ նվազում են տրված դրական պատասխանների տոկոսային պարունակություններն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում:

Դադարեցնելու են աշխատանքային գործունեությունը կին և տղամարդ հարցվողների 10 տոկոսից մի փոքր ավելին: Նման մտադրությունը հարցվողների շրջանում ուժեղանում է տարիքի մեծացմանը զուգընթաց:

7.25. «Ենթադրենք, որ Դուք մոտակա 3 տարիների ընթացքում անցնելու եք կենսաթոշակի կամ արդեն թոշակառու եք: Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս կանդրադառնա կամ անդրադարձել է դա Ձեր կյանքի տարբեր կողմերի վրա» հարցադրմանը տարածաշրջաններում հարցվողների կողմից տրված պատասխանները բերված են աղյուսակ 7.25.1- ում:

Տրված պատասխանների համարակալումը համապատասխանում է ներքևում բերված հարցադրումների և պատասխանների տարբերակներին.

Հարցադրումներ	Շատ կլավանա կամ լավացել է	Կլավանա կամ լավացել է	Կմնա կամ մնացել է նույնը	Կվատանա կամ վատացել է	Շատ կվատանա կամ վատացել է
1.Ձեր հնարավորություններն՝ անել այն, ինչ ցանկանում եք	1	2	3	4	5
2.Ձեր ֆինանսական դրությունը	1	2	3	4	5
3.Շրջապատի վերաբերմունքը Ձեր նկատմամբ	1	2	3	4	5
4.Ձեր տրամադրվածությունն ու բավարարվածությունը կյանքից	1	2	3	4	5
5.Ձեր առողջական վիճակը	1	2	3	4	5
6.Մտերմություն Ձեր ամուսնու հետ	1	2	3	4	5
7.Մտերմություն Ձեր երեխաների և թոռների հետ	1	2	3	4	5

1. «Ձեր հնարավորություններն՝ անել այն, ինչ ցանկանում եք» հարցադրման պատասխանները բերված են աղյուսակ 7.25.1-ում

		Տղամարդկանց պատասխաններ					Կանանց պատասխաններ				
	տարիք	1	2	3	4	5	1	2	3	4	5
Հ Հ	<50		5,81	21,60	72,59			11,91	68,86	18,19	1,04
	50-54		9,19	60,78	25,30	4,72	0,11	10,04	65,42	23,29	1,15
	55-59	0,83	13,73	60,07	19,38	5,99	1,27	12,74	59,64	22,38	3,97
	60-64		11,78	60,81	25,58	1,83		14,28	57,58	24,85	3,29
	65-69	1,14	4,71	64,94	27,85	1,36	1,22	10,44	51,52	34,91	1,90
	70-74		8,44	56,47	31,34	3,76	0,90	4,60	64,59	28,27	1,63
	>=75	1,18	5,67	57,47	30,98	4,70	0,15	8,67	64,08	24,58	2,52
	միջին	0,48	9,11	59,67	26,76	3,99	0,47	10,23	62,28	24,80	2,22

Տրված պատասխանները ցույց են տալիս, որ տղամարդ 59,67% հարցվողների կարծիքով՝ ունեցած հնարավորությունները կմնա կամ մնացել է նույնը: Այդպես են գտնում նաև կանանց 62,28%-ը:

Տղամարդ հարցվողների 26,76%-ի և կին հարցվողների 24,80%-ի պատասխաններից հետևում է, որ ցանկալին անելու ունեցած հնարավորությունները վատանալու է կամ արդեն վատացել է: Այս հարցադրմանը դրական պատասխան են տվել մեկ տոկոսից պակաս տեսակարար կշռով հարցվողները:

2. Ֆինանսական դրության հետ կապված փոփոխությունների վերաբերյալ պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ տղամարդ հարցվողների 42,95%-ի կարծիքով ֆինանսական դրությունը մնալու է կամ մնացել է նույնը: Այդպես են գտնում նաև 50+ տարիքի կանանց 47,12%-ը: Տղամարդ հարցվողների 37,74%-ը և կին հարցվողների 31,02%-ը գտնում է, որ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով իրենց ֆինանսական դրությունը վատանալու է կամ արդեն վատացել է:

Այս հարցադրմանը դրական պատասխան են տվել 0,3 տոկոսից պակաս տեսակարար կշռով հարցվողները:

3. Շրջապատի վերաբերմունքի փոփոխության վերաբերյալ հարցվողների պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ տղամարդ ռեսպոնդենտների 59,67%-ի կարծիքով շրջապատի վերաբերմունքն իր անձի նկատմամբ մնալու է կամ մնացել է նույնը: Այդպես են գտնում նաև 50+ տարիքի կանանց 62,28%-ը: Տղամարդ հարցվողների 26,76%-ը և կին հարցվողների 24,80%-ը գտնում են, որ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով շրջապատի վերաբերմունքն իրենց անձի նկատմամբ վատանալու է կամ արդեն վատացել է:

Վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով շրջապատի վերաբերմունքն իր անձի նկատմամբ կլավանա 0,5 տոկոսից պակաս տեսակարար կշռով հարցվողների կարծիքով:

4. Չեր տրամադրվածությունն ու բավարարվածությունը կյանքից

Հարցադրմանը տրված պատասխաններից հետևում է, որ 50+ տարիքի տղամարդկանց 61,26%-ի կարծիքով վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով տրամադրվածությունն ու բավարարվածությունը կյանքից կմնա կամ մնացել է նույնը: Այդպես են գտնում նաև 50+ տարիքի կանանց 60,75%-ը:

Հանրապետությունում տարիքային տարբեր շերտերին պատկանող հարցվողների պատասխանների տոկոսային տարբերությունները չեն գերազանցում 10–ի սահմանագիծը:

Տղամարդ հարցվողների 30,19%-ը և կին հարցվողների 29,24%-ը գտնում է, որ վաղաժամկետ

կենսաթոշակի անցնելով տրամադրվածությունն ու բավարարվածությունը կյանքից վատանալու է կամ արդեն վատացել է:

Վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով, տրամադրվածությունն ու բավարարվածությունը կյանքից կլավանա 0,5 տոկոսից պակաս տեսակարար կշռով՝ հարցվողների կարծիքով:

5. Կենսաթոշակի անցնելուց հետո առողջական վիճակի փոփոխությունների մասին հարցվողների կարծիքների տոկոսային պարունակությունները ցույց են տալիս, որ տղամարդ հարցվողների 65,11%-ի կարծիքով առողջական վիճակը, վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով, կմնա կամ մնացել է նույնը: Նույն կարծիքին են նաև 50+ տարիքի կանանց 66,03%-ը: Տղամարդկանց 27,50%-ը և կանանց 24,80%-ը գտնում են, որ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով առողջական վիճակը կվատանա կամ արդեն վատացել է:

Վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով առողջական վիճակը կլավանա 0,5 - 1,0 տոկոս տեսակարար կշռով՝ հարցվողների կարծիքով:

6. Տրված պատասխաններից հետևում է, որ 50+ տարիքի տղամարդկանց 72,72%-ի կարծիքով **վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով կնոջ հետ մտերմությունը** մնալու է կամ մնացել է նույնը: Այդպես են գտնում նաև 50+ տարիքի կանանց 49,44%-ը: Դիտվում է տղամարդկանց և կանանց կարծիքների զգալի տարբերություն: Կանայք այս հարցում ավելի վատատեսորեն են տրամադրված, քան տղամարդիկ:

Տարիքային տարբեր շերտերին պատկանող հարցվողների պատասխանների տոկոսային տարբերությունները հիմնականում չեն գերազանցում 20-ի սահմանագիծը: Զգալիորեն տարբերվում է միայն 75 տարեկանից բարձր տարիքային խմբում գտնվող ինչպես տղամարդկանց, այնպես էլ՝ կանանց կարծիքները: Տարբերվում են ավելի քան 30 տոկոսային կետով:

Տղամարդ հարցվողների 5,02%-ը և կին հարցվողների 2,57%-ը գտնում են, որ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով տրամադրվածությունն ու բավարարվածությունը կյանքից վատանալու է կամ արդեն վատացել է:

Տղամարդ հարցվողների 3,13%-ը և կին հարցվողների 2,62%-ը գտնում են, որ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով, զուգընկերոջ հետ մտերմությունը կլավանա:

7. Կենսաթոշակի անցնելուց հետո երեխաների և թոռների հետ մտերմության փոփոխությունների մասին հայտնած կարծիքները ցույց են տալիս, որ տղամարդ հարցվողների 85,26%-ի կարծիքով վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով մտերմությունը երեխաների և թոռների հետ մնալու է կամ մնացել է նույնը: Նույն կարծիքին են նաև 50+ տարիքի կանանց 84,5%-ը: Տղամարդկանց 4,78%-ը և կանանց 4,64%-ը գտնում են, որ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով մտերմությունը երեխաների և թոռների հետ կվատանա կամ արդեն վատացել է:

Վաղաժամկետ կենսաթոշակի անցնելով, մտերմությունը երեխաների և թոռների հետ կլավանա տղամարդկանց 1,47%-ի և կանանց 1,62%-ի կարծիքով:

7.26. Հարցվողների կողմից կենսաթոշակի անցնելու պատճառները կապված են եղել կենսաթոշակի սահմանված տարիքին հասնելու, ինչպես նաև հաշմանդամության կարգավիճակի հետ: Ընտանիքի կերակրողին կորցնելու դեպքում նշանակվել է կենսաթոշակ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.27. «Դուք կենսաթոշակառու՞ եք» հարցադրմանը տարածաշրջաններում հարցվողների կողմից տրված պատասխանների համախմբերը բերված են աղյուսակ 7.27-ում.

Տարածաշրջան	Տարիք	Տղամարդիկ	Կանայք	Ընդամենը
		կենսաթոշակառու են	կենսաթոշակառու են	կենսաթոշակառու են
1 Երևան	<50	54,99		7,26
	50-54	4,78	6,41	5,76
	55-59	9,04	13,08	11,41
	60-64	21,58	51,16	40,36
	65-69	100,0	100,0	100,0
	70-74	100,0	100,0	100,0
	>=75	100,0	100,0	100,0
	միջին	51,01	55,57	53,89
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50		4,88	4,88
	50-54	12,39	7,97	9,75
	55-59	18,22	19,85	19,15
	60-64	28,44	80,14	58,91
	65-69	100,0	100,0	100,0
	70-74	100,0	100,0	100,0
	>=75	100,0	100,0	100,0
	միջին	55,67	55,17	55,37
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50			
	50-54	1,47	16,23	9,77
	55-59	19,83	18,78	19,26
	60-64	36,97	66,22	55,55
	65-69	100,0	100,0	100,0
	70-74	100,0	100,0	100,0
	>=75	100,0	100,0	100,0
	միջին	45,48	49,78	48,17
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50			
	50-54	12,77	5,16	8,38
	55-59	5,06	14,89	10,70
	60-64	16,36	49,20	35,08
	65-69	100,0	100,0	100,0
	70-74	95,73	96,06	95,90
	>=75	100,0	100,0	100,0
	միջին	49,54	49,98	49,80
Հայաստանի Հանրապետություն	<50	35,86	1,00	2,84
	50-54	7,37	8,99	8,32
	55-59	12,54	15,97	14,49
	60-64	25,27	59,96	46,55
	65-69	100,0	100,0	100,0
	70-74	98,74	99,07	98,93
	>=75	100,0	100,0	100,0
	միջին	50,37	52,92	51,95

Հարցադրմանը տրված պատասխաններից հետևում է, որ 50+ տարիքի հարցվողների շրջանում կենսաթոշակառուներ են տղամարդկանց 50,37%-ը և կանանց 52,92%-ը:

Տարածաշրջաններում իրականացված հետազոտություններում պատահական ընտրանքում կենսաթոշակառուների ամենամեծ տեսակարար կշիռ է եղել Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 55,37% և ամենացածրը՝ Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում, որը կազմել է 50+ տարիքի հարցվողների 48,17%-ը:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ

Իրավիճակը

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող կենսաթոշակային համակարգը բաշխման համակարգ է և հիմնված է սերունդների համերաշխության սկզբունքի վրա:

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը ներկայումս կենսաթոշակներով ապահովում է բնակչության մոտ 20 տոկոսին՝ նրանց գերակշիռ հատվածի համար հանդիսանալով կենսաապահովման հիմնական աղբյուր:

Հայաստանի Հանրապետությունում գործող կենսաթոշակային համակարգը բաշխման սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային համակարգ է, որի բնութագրիչ գծերն են՝

- կենսաթոշակային ապահովության պետական մենաշնորհը, սոցիալական ապահովագրական վճարների պարտադիր լինելը
- անհամարժեքությունը վճարվող կենսաթոշակի չափի և կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման գործում ապահովագրված անձի մասնակցության չափի միջև, արտահայտվում է միայն կենսաթոշակառուի ապահովագրական ստաժից կախված կենսաթոշակի չափի տարբերակման մեջ
- գնողունակության տեսանկյունից ցածր կենսաթոշակները, որոնք չեն բավարարում կենսաթոշակառուների նվազագույն պահանջմունքները
- կենսաթոշակների վճարման միջոցների բաշխման հիմքում գոյություն ունեցող անհամապատասխանությունը՝ տնտեսության մեջ զբաղվածների և կենսաթոշակ ստացողների թվաքանակի միջև:

2002-2007թթ ընթացքում միջին աշխատավարձը հանրապետությունում նշանակալից չափով աճել էր, սակայն նվազել էր կենսաթոշակային համակարգի փոխհատուցման գործակիցը: 2008թ. հունվարին կենսաթոշակների 60% աճը նպաստեց, որպեսզի համակարգի փոխհատուցման գործակիցը 16.3%-ից հասնի 24%-ի:

Կենսաթոշակների բացարձակ ավելացումները զգալիորեն հետ են մնացել հանրապետությունում միջին աշխատավարձի աճի տեմպերից: Արդյունքում ապահովագրական կենսաթոշակը միջին աշխատավարձի համեմատ նվազել է (2002թ. արդեն իսկ շատ ցածր մակարդակից՝ 23%) և 2006թ. կազմել է միջին աշխատավարձի 17.2%-ը¹:

Ըստ տնային տնտեսությունների հետազոտությունների, եթե չվճարվեն կենսաթոշակները, իսկ կենսաթոշակառու բնակչությունը չկարողանա փոխհատուցել այդ կորուստն այլ աղբյուրների հաշվին, ապա աղքատության մակարդակը կենսաթոշակառուների շրջանում էապես կավելանա՝ 27 տոկոսից կազմելով 40.1 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը կենսաթոշակառուների շրջանում կավելանա 4.2 տոկոսից մինչև 20.5 տոկոս:

Անհրաժեշտ է ելնել նաև այն իրողությունից, որ կենսաթոշակի ցածր մակարդակը պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ հանրապետությունում գործող կենսաթոշակային բաշխման համակարգը և սոցիալական ապահովագրության համար հատկացված ֆինանսական ռեսուրսները ճիշտ չեն օգտագործվում, այլ նրանով, որ այդ ռեսուրսները անբավարար են:

Բնակչության տարեց շերտի կյանքի որակը բնութագրվում է ոչ միայն նյութական բավարարությամբ այլ նաև հասարակության և մերձավորների վերաբերմունքով: Նշված

¹ Համեմատության համար՝ ԵՄ/25/ միջին փոխհատուցման ցուցանիշը 2004թ. կազմում էր 51 տոկոս, Էստոնիայում՝ 47, Լատվիայում՝ 60 և Լիտվայում 47 / Աղբյուրը՝ Եվրոստատ/:

բնութագրիչներով միայնակ, ինչպես նաև բարձր տարիքային խմբերում գտնվող տարեցները խոցելիության բարձր աստիճան ունեն: Ասվածի հետ կապված միջտերմային հարաբերությունների, ընտանեկան արժեքների գնահատման ուղղությամբ հետազոտություններ գրեթե չեն իրականացվում, որը մեծ բացթողում է, քանի որ աղքատությունը գնահատվում է ոչ միայն նյութական, այլ նաև սոցիալ-հոգեբանական ցուցիչներով: Շատ հաճախ այդ ցուցիչները փոխկապակցված են, և բնակչությունը, որպես կանոն, հայտնվում է աղքատության թակարդում այդ ցուցիչների գումարային ազդեցությամբ:

Հայաստանի Հանրապետության տնային տնտեսություններում բնակչության 25.6%-ը կազմող 50+ տարիք ունեցող անձանց 36.5%-ի, ինչպես նաև 50+ տարիք ունեցող անձանց 50-ից ցածր տարիքի գուզրնկերների 42.8%-ի շրջանում իրականացված հետազոտության պատահական ընտրանքում ընդգրկված տնային տնտեսություններում, կենսաթոշակառուների 65.1%-ը տարիքային ապահովագրական, իսկ 10,6%-ը ծերության կենսաթոշակ են ստանում:

Հետազոտությանը մասնակցած կենսաթոշակառու հարցվողների համար բերված տվյալները ցույց են տալիս, որ հետազոտության արդյունքները կարելի է տարածել ամբողջ հանրապետության վրա, քանի որ հանրապետության կենսաթոշակառուների 63,4%-ը տարիքային ապահովագրական կենսաթոշակ են ստանում, 22,5%-ը հաշմանդամներ են (Տես՝ աղյուսակ 7.28.1-ը), իսկ 9,7%-ը ծերության կենսաթոշակառուներ են:

Աղյուսակ 7.28.1

Վիճակագրական աղյուսակ կենսաթոշակառուների թվաքանակների վերաբերյալ

	Կենսաթոշակի տեսակը	Կենսաթոշակառուների թվաքանակը	
		2007թ.	2008թ. հուլիս
	Հայաստանի Հանրապետությունում	516247	516291
	Ապահովագրական կենսաթոշակներ, որից՝	469107	468149
1	Տարիքային	332300	327358
2	Արտոնյալ պայմաններով	11084	8582
3	Հաշմանդամության 1-ին խումբ	8298	8250
4	Հաշմանդամության 2-րդ խումբ	60444	63122
5	Հաշմանդամության 3-րդ խումբ	27334	29981
6	Կերակրողին կորցնելու դեպքում	13643	14404
7	Մասնակի	6667	8700
8	Երկարամյա ծառայության	9337	7752
	Սոցիալական կենսաթոշակներ	47140	48142
9	Ծերության	5303	5030
	Հաշմանդամության, որից՝	33658	34992
10	1-ին խումբ	3576	3615
11	2-րդ խումբ	13202	13616
12	3-րդ խումբ	8449	9285
13	Կերակրողին կորցնելու դեպքում	8179	8120
	Զինծառայության հետ կապված կենսաթոշակներ	12009	10992
14	Զինծառայության ժամանակ հաշմանդամ դարձածներ	1334	1290
15	Հայրենական պատերազմի և նրանց հավասար. հաշմանդամներ	5069	4469
16	Կերակրողին կորցնելու դեպքում 2-րդ կ/թ ստացողներ	5594	5223

Հանրապետության կենսաթոշակային համակարգում նշանակվող կենսաթոշակի տեսակները բերված են ներքևում ներկայացված սանդղակում:

Կենսաթոշակների սանդղակ

Ապահովագրական կենսաթոշակներ

1. Տարիքային
2. Արտոնյալ
3. Հաշմանդամության 1-ին խումբ
4. Հաշմանդամության 2-րդ խումբ
5. Հաշմանդամության 3-րդ խումբ
6. Կերակրողին կորցրածի գծով
7. Մասնակի
8. Երկարատև ծառայության

Սոցիալական կենսաթոշակներ

9. Ծերության
10. Հաշմանդամության 1-ին խումբ
11. Հաշմանդամության 2-րդ խումբ
12. Հաշմանդամության 3-րդ խումբ
13. Կերակրողին կորցրածի գծով

Զինվորական ծառայության հետ կապված կենսաթոշակներ

14. Զին.պարտականությունների կատարման հետ կապված հաշմանդամության 1-ին խումբ
15. Հաշմանդամության 2-րդ խումբ
16. Հաշմանդամության 3-րդ խումբ

Հայրենական պատերազմի և նրան հավասարեցված հաշմանդամներ

17. Հաշմանդամության 1-ին խումբ
18. Հաշմանդամության 2-րդ խումբ
19. Հաշմանդամության 3-րդ խումբ
20. Զին կերակրողին կորցրածի գծով

7.29 «Ասացեք խնդրեմ, ի՞նչ տեսակի կենսաթոշակ եք ստանում» հարցադրմանը 50+ տարիք ունեցող անձանց կողմից տրված պատասխանների համախմբերը բերված են աղյուսակ 7.29.1-ում: Աղյուսակում տրված պատասխանների համարները համապատասխանում են վերևում բերված կենսաթոշակների սանդղակի համարներին:

Աղյուսակ 7.29 1


Հայատառ մի հանրապետություն	Ընտրանքում կենսաթոշակատուների տեսակարար կշիռներն ըստ կենսաթոշակի տեսակների տոկոսներ														
	տարիք	1	2	3	4	5	8	9	10	11	12	15	16	17	18
<50															
50-54	3,7	11,6	4,8	18,9	3,4	2,7	3,4	16,6	17,9	14,5	2,5				
55-59	11,2	11,7	2,3	28,7	15,5	6,2			15,3	4,2	2,1	2,9			
60-64	50,3	11,2		11,5	5,4	2,2	8,6	2,1	7,0	0,9					
65-69	74,6	6,3	0,7	4,6	2,7	0,4	9,7		0,2		0,4				
70-74	75,5	6,9	1,7	1,5	1,8	0,7	10,1	0,3	0,6	0,5	0,4				
>=75	71,0	6,2	1,1	4,5		0,2	14,4		1,5					0,8	0,3
միջին	65,1	7,4	1,3	6,1	2,4	1,0	10,6	0,9	3,2	1,0	0,34	0,1	0,3	0,1	

Ինչպես հետևում է աղյուսակում բերված տեղեկատվությունից՝ ընտրանքում գերակշռում են տարիքային ապահովագրական, ծերության, արտոնյալ պայմաններով վաղաժամկետ կենսաթոշակի անցածների և 2-րդ խմբի հաշմանդամների թվաքանակները: Հարցվողների տարիքային կազմի դիտարկումը ցույց է տալիս, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակառուների տարիքը հիմնականում գտնվում է 50-59 տարեկան շերտում: Սույն հետազոտության ընտրանքում տարիքային կենսաթոշակառուների 75,5%-ի տարիքը գտնվում է 70-74 տարիքային շերտում:


7.30. «Որքանո՞վ եք բավարարված կենսաթոշակառուի Ձեր կարգավիճակով» հարցադրմանը տրված 50+ պատասխանների համախմբերը բերված են գծապատկերներ 7.30.1 և 7.30.2, ինչպես նաև՝ աղյուսակ 7.30.3-ում: Աղյուսակում ներկայացված պատասխանների համարակալումը համապատասխանում է բավարարվածության սանդղակում պատասխանների համարներին:

Բավարարվածության սանդղակ

1. ընդհանրապես չեն բավարարում
2. չեն բավարարում
3. մասամբ են բավարարում
4. բավարարում են
5. լիովին բավարարում են



Գծապատկեր 7.30.1 Տղամարդ կենսաթոշակառուների կողմից կենսաթոշակի կարգավիճակով բավարարվածության տարբերակներին տրված պատասխանների տեսակարար կշիռները



Գծապատկեր 7.30.2 Կին կենսաթոշակառուների կողմից կենսաթոշակի կարգավիճակով բավարարվածության տարբերակներին տրված պատասխանների տեսակարար կշիռները

Հարցադրմանը տրված պատասխաններից հետևում է, որ կենսաթոշակառուի կարգավիճակը չի բավարարում տղամարդ կենսաթոշակառուների 38,7%-ին, որոնց մեջ մեծ տոկոս են կազմում համեմատաբար երիտասարդ տարիքի կենսաթոշակառուները՝ տարիքային 50-54 շերտում՝ 47,0% և 55-59 տարիքային շերտում՝ 44,5%:

Կենսաթոշակառուի կարգավիճակով մասամբ են բավարարված տղամարդ կենսաթոշակառուների 37,8%-ը, ովքեր հիմնականում գտնվում են ավելի բարձր տարիքային շերտերում: Կենսաթոշակառուի կարգավիճակով բավարարված կամ լիովին բավարարված են կենսաթոշակառուների 9,8%-ը: Հարցադրմանը դրական են պատասխանել 50-54 տարիքային շերտում գտնվող հարցվողների 19,1%-ը:

Պատկերը նույնն է կին կենսաթոշակառուների շրջանում: Կենսաթոշակառուի կարգավիճակը չի բավարարում կին կենսաթոշակառուների 33,6%-ին, մասամբ է բավարարում նրանց 37,5%-ին: Կենսաթոշակառուի կարգավիճակով բավարարված (9,8%-ը) կամ լիովին բավարարված են (1,4%-ը) կին հարցվողների 10,2 %-ը:

Հանրապետությունում կենսաթոշակառուի կարգավիճակն ընդհանրապես չի բավարարում հարցված տղամարդկանց 13,7%-ին և կանանց 17,6%-ին:

Եթե անփոփենք այս հարցադրման արդյունքները, ապա կարող ենք արձանագրել, որ կենսաթոշակառուի կարգավիճակից դժգոհ են հանրապետության կենսաթոշակառուների 90%-ը:

Այս ընդհանրական գնահատականը լրջագույն մտահոգությունների տեղիք է տալիս: Հետագա վերլուծություններում կփորձենք վեր հանել այս դժգոհությունների պատճառները:

Հանրապետության տարածաշրջաններում այս հարցադրմանը հարցվողների կողմից տրված պատասխանների համախմբերը բերված են աղյուսակ 7.30.3-ում:

Աղյուսակ 7.30.3

Տարածաշրջաններ	Տարիք	Տղամարդիկ					Կանայք				
		1	2	3	4	5	1	2	3	4	5
1 Երևան	<50		100,0								
	50-54		81,2	18,9				47,9		52,1	
	55-59		60,5	39,5			13,8	29,2	56,9		
	60-64		15,2	84,8			13,9	32,0	45,0	8,0	1,1
	65-69	14,4	51,8	24,4	8,5	0,9	18,0	35,1	31,5	13,3	2,2
	70-74	15,8	29,3	43,1	11,8		24,8	34,4	34,1	4,0	2,8
	>=75	16,1	34,9	47,2	1,8		28,7	43,3	22,6	4,6	0,9
	միջին	13,4	40,1	40,2	6,1	0,3	22,9	38,1	30,2	7,3	1,5
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50										
	50-54	8,0	41,7		32,5	17,9	9,9	31,3	47,9		11,0
	55-59		61,2	38,8			30,1	14,1	49,4	6,3	
	60-64		26,8	56,5	7,6	9,1	22,1	24,6	30,5	16,5	6,3
	65-69	34,0	26,0	26,8	13,3		7,4	38,0	44,1	6,0	4,4
	70-74	3,8	37,8	40,0	18,5		7,7	21,0	50,1	17,1	4,1
	>=75	15,3	20,8	34,8	15,6	13,5	18,1	33,1	34,7	11,6	2,6
	միջին	14,0	30,1	34,0	15,7	6,2	14,5	28,9	39,9	12,6	4,1
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50										
	50-54						33,6	31,1	35,3		
	55-59	46,5	24,9	10,5	18,1		13,0	31,5	55,5		
	60-64	38,7	61,3				20,5	43,4	28,4	7,7	
	65-69	16,6	59,8	18,1	5,5		18,3	37,6	37,2	6,9	
	70-74	11,7	57,9	24,5	6,0		16,2	46,6	29,2	8,0	
	>=75	15,7	37,2	39,9	7,2		25,6	21,3	38,9	14,2	
	միջին	19,8	50,4	23,2	6,6		21,3	34,9	35,1	8,7	

4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50										
	50-54	25,4	43,3	31,4			12,6		26,7	60,7	
	55-59		48,6	51,4			20,1	32,9	35,9	11,1	
	60-64		47,5	43,8	8,7		8,6	56,2	21,3	13,8	
	65-69	2,5	15,7	62,1	19,7		1,4	39,0	46,4	13,1	
	70-74	1,9	38,6	56,2	3,2		0,8	27,7	57,1	14,5	
	>=75	16,2	36,9	45,8	1,1		12,7	17,7	61,7	7,8	
	միջին	8,1	34,7	51,8	5,5		7,1	29,0	51,2	12,7	
Հայաստանի Հանրապետություն	<50										
	50-54	12,9	47,0	21,1	12,3	6,8	19,0	30,8	29,5	18,5	2,3
	55-59	19,7	44,5	28,2	7,7		18,2	27,6	50,6	3,6	
	60-64	12,4	37,3	45,2	3,0	2,2	17,0	36,7	33,4	11,0	2,0
	65-69	17,0	42,6	29,5	10,6	0,3	11,6	37,1	38,9	10,6	1,9
	70-74	8,4	39,5	42,5	9,7		13,9	33,4	41,1	9,9	1,7
	>=75	15,9	32,1	42,6	6,0	3,4	23,0	32,2	35,5	8,4	0,9
	միջին	13,7	38,7	37,8	8,3	1,5	17,6	33,6	37,5	9,8	1,4

7.31. «Երիտասարդ տարիներին Դուք հետաքրքրվո՞ւմ էիք գործող կենսաթոշակային օրենսդրությամբ, հատկապես այն դրույթներով, որոնք կենսաթոշակի անցնելիս կապահովեն բարձր կենսաթոշակ և բարեկեցիկ ծերություն» հարցադրմանը տարածաշրջաններում հարցվողների պատասխանները բերված են աղյուսակ 7.31-ում:

Աղյուսակ 7.31

Տարածաշրջաններ	տարիք	Տղամարդիկ			Կանայք			Ընդամենը		
		այո	ոչ այնքան	ոչ	այո	ոչ այնքան	ոչ	այո	ոչ այնքան	ոչ
1 Երևան	<50		45,01	54,99		38,45	61,55		39,32	60,68
	50-54	5,15	36,43	58,42	2,56	49,85	47,58	3,59	44,53	51,88
	55-59	6,14	33,84	60,03	4,70	41,01	54,29	5,30	38,04	56,66
	60-64	13,54	28,93	57,52	4,32	50,64	45,04	7,69	42,71	49,60
	65-69	12,79	44,78	42,43	18,09	36,58	45,33	15,68	40,32	44,01
	70-74	21,37	30,60	48,04	11,39	34,54	54,07	15,39	32,96	51,65
	>=75	15,95	39,74	44,31	5,45	41,95	52,60	8,48	41,32	50,20
	միջին	11,45	36,04	52,52	6,22	42,81	50,96	8,14	40,33	51,53
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50				16,16	23,53	60,31	16,16	23,53	60,31
	50-54	15,93	21,59	62,48	12,35	27,68	59,97	13,79	25,23	60,98
	55-59	50,47	24,73	24,80	9,80	24,09	66,11	27,34	24,36	48,30
	60-64	22,73	54,93	22,33	32,44	8,47	59,09	28,46	27,55	43,99
	65-69	19,08	27,57	53,36	13,12	54,58	32,30	15,58	43,41	41,01
	70-74	17,83	39,83	42,34	14,44	28,64	56,92	15,99	33,77	50,24
	>=75	29,81	19,00	51,19	11,94	22,57	65,49	18,95	21,17	59,88
	միջին	25,02	29,25	45,74	14,97	26,71	58,32	18,89	27,70	53,42
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50			100,00	8,77	27,95	63,28	8,67	27,63	63,70
	50-54	9,24	46,59	44,18	6,09	43,01	50,89	7,47	44,58	47,95
	55-59	10,16	65,18	24,66	9,84	55,90	34,26	9,98	60,10	29,91
	60-64	19,89	54,05	26,06	12,01	63,72	24,27	14,88	60,19	24,92
	65-69	10,85	68,68	20,47	26,84	27,54	45,61	17,51	51,56	30,93
	70-74	25,27	29,53	45,20	14,73	44,33	40,94	18,53	39,00	42,48
	>=75	23,76	22,28	53,96	9,30	53,76	36,94	13,34	44,98	41,69
	միջին	14,39	49,63	35,97	10,63	46,39	42,98	12,04	47,60	40,36

4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50			100,00		20,68	79,32		19,25	80,75
	50-54	6,20	35,31	58,48	14,60	35,24	50,15	11,06	35,27	53,67
	55-59	7,44	57,74	34,83	5,40	42,02	52,58	6,27	48,72	45,02
	60-64	2,85	29,44	67,71	3,55	31,10	65,35	3,25	30,39	66,37
	65-69	27,12	37,10	35,79	9,37	26,74	63,88	15,83	30,50	53,68
	70-74	24,88	25,10	50,01	20,90	35,46	43,64	22,81	30,49	46,70
	>=75	6,20	38,03	55,77	11,02	33,49	55,49	9,21	35,19	55,60
	միջին	11,45	36,90	51,65	10,32	33,37	56,30	10,77	34,78	54,45
Հայաստանի Հանրապետություն	<50		29,35	70,65	6,40	28,04	65,55	6,07	28,11	65,82
	50-54	8,95	35,67	55,38	8,39	39,71	51,90	8,62	38,04	53,35
	55-59	14,72	46,03	39,24	6,93	42,12	50,95	10,28	43,80	45,92
	60-64	14,57	40,03	45,40	11,40	42,21	46,39	12,62	41,37	46,01
	65-69	15,93	46,09	37,98	16,14	37,16	46,71	16,05	41,20	42,75
	70-74	22,40	30,76	46,84	15,05	36,14	48,81	18,16	33,86	47,97
	>=75	18,39	31,35	50,26	8,50	38,92	52,58	11,74	36,45	51,82
	միջին	14,99	37,97	47,05	9,91	38,42	51,68	11,84	38,25	49,92

Հարցադրմանը տրված պատասխաններից հետևում է, որ տղամարդ կենսաթոշակառուների 85,1%-ը (չի հետաքրքրել 47,05%-ին և ոչ այնքան՝ 37,97%-ին) և կանանց 88,1%-ը (չի հետաքրքրել 49,92%-ին և ոչ այնքան՝ 38,25%-ին) իրենց տնտեսապես ակտիվ տարիներին անտարբեր են եղել բարձր կենսաթոշակներով իրենց ծերության ապահովմանը: Տղամարդկանց 14,99%-ը և կանանց 38,42%-ն են հետամուտ եղել այս հարցին:

Այս արդյունքները սպասելի էին, քանի որ հետազոտությանը մասնակցած հարցվողները 50+ տարիք ունեցող անձինք են, ովքեր ապրել և աշխատել են Խորհրդային երկրում, որտեղ կենսաթոշակային համակարգը կառավարվել է միակ գործատու հանդիսացող պետության կողմից և որտեղ չկար գործազրկության խնդիր: Ներկայումս իրավիճակն այլ է, և յուրաքանչյուր ոք պետք է իր երիտասարդ տարիներին լրջորեն մտածի իր բարեկեցիկ ծերության ապահովման ուղղությամբ:

7.32 «Եթե այո, ապա ինչպիսի քայլեր էիք ձեռնարկում այդ ուղղությամբ» հարցադրման պատասխանները բերված են աղյուսակ 7.32 –ում:

Հարցվողներին առաջարկվել է ընտրել հարցադրման պատասխանների հետևյալ տարբերակները՝

- 1. Կանոնավոր վճարել են սոցիալական վճարները՝ պետության կողմից սահմանված չափաբաժիններով և կարգով*
- 2. Աշխատել են հարկային դաշտում գտնվող աշխատատեղերում*
- 3. Աշխատել են չլինել գործազուրկ և ունենալ երկարատև ապահովագրական ստաժ*
- 4. Ափսոսում են, որ իմ երիտասարդ ժամանակ հանրապետության կենսաթոշակային համակարգում չկար լրացուցիչ կենսաթոշակ ապահովող կուտակային քաղաքիչներ*

Հարցադրմանը տրված պատասխաններից հետևում է, որ տղամարդ կենսաթոշակառուների 69,2%-ը և կին կենսաթոշակառուների 63,0%-ը կանոնավոր վճարել են սոցիալական վճարները՝ պետության կողմից սահմանված չափաբաժիններով և կարգով: Այս հարցադրմանն ամենաբարձր տոկոսային պարունակություն ունեն՝ Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող տղամարդ հարցվողների պատասխանները՝ 79,6%, իսկ ամենացածրը՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում՝ 32,4%: Կանանց շրջանում այս հարցադրման հետ կապված ավելի հետևողական են եղել Երևան քաղաքի բնակիչները:

Տղամարդ կենսաթոշակատուների 18,4%-ը և կին կենսաթոշակատուների 24,09%-ը աշխատել են չլինել գործազուրկ և ունենալ երկարատև ապահովագրական ստաժ:

Կանանց և տղամարդկանց շրջանում այս հարցադրման հետ կապված ամենաբարձր ցուցանիշներ ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի բնակիչները:

«Աշխատել են հարկային դաշտում գտնվող աշխատատեղերում» պատասխանը տվել են հանրապետության 50+ տարիք ունեցող բնակչության 8,4%-ը:

«Ափսոսում եմ, որ իմ երիտասարդ ժամանակ հանրապետության կենսաթոշակային համակարգում չկար լրացուցիչ կենսաթոշակ ապահովող կուտակային բաղադրիչներ» հարցադրմանը դրական են պատասխանել հանրապետության 50+ տարիք ունեցող բնակչության 8,4%-ը:

7.33. «Ծանոթ եք, արդյոք, կենսաթոշակային օրենսդրությանը» հարցադրմանը դրական են պատասխանել հանրապետության 50+ տարիք ունեցող բնակչության 10,05%-ը և բացասական՝ 50,45%-ը (Տես՝ աղյուսակ 7.33-ում «ընդհանուր» հատվածի «այո» և «ոչ» պատասխանների հանրապետական միջին տոկոսային պարունակությունները):

Աղյուսակ 7.33

Տարածաշրջան	տարիք	Տղամարդիկ			Կանայք			Ընդամենը		
		այո	ոչ այնքան	ոչ	այո	ոչ այնքան	ոչ	այո	ոչ այնքան	ոչ
1 Երևան	<50			100,0		31,42	68,58		27,28	72,72
	50-54	5,15	45,52	49,32	3,73	38,08	58,20	4,29	41,03	54,68
	55-59	7,50	39,93	52,57	5,05	39,31	55,64	6,06	39,57	54,37
	60-64	12,55	36,02	51,43	4,32	45,07	50,61	7,32	41,77	50,91
	65-69	16,27	28,86	54,87	17,15	36,61	46,24	16,75	33,08	50,17
	70-74	22,14	37,79	40,07	13,57	36,77	49,66	17,00	37,18	45,81
	>=75	27,46	17,13	55,42	5,49	31,98	62,53	11,84	27,68	60,47
	միջին	14,11	34,20	51,70	6,66	37,03	56,31	9,40	35,99	54,61
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50				17,20	14,17	68,63	17,20	14,17	68,63
	50-54	20,56	27,86	51,58	11,13	29,55	59,32	14,93	28,87	56,20
	55-59	43,10	23,06	33,84	6,17	33,07	60,76	22,10	28,76	49,15
	60-64	30,15	34,41	35,44	20,16	37,96	41,88	24,26	36,50	39,23
	65-69	27,22	24,71	48,07	6,23	28,07	65,70	14,92	26,68	58,41
	70-74	10,38	46,35	43,27	8,23	24,90	66,86	9,21	34,73	56,06
	>=75	16,48	39,56	43,95	5,01	26,20	68,79	9,51	31,44	59,05
	միջին	23,47	32,65	43,88	10,16	28,11	61,74	15,34	29,88	54,78
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50			100,0	5,80	44,25	49,95	5,73	43,74	50,52
	50-54	9,26	67,96	22,78	6,82	42,15	51,03	7,89	53,45	38,66
	55-59	12,79	62,96	24,25	16,95	48,06	34,99	15,07	54,81	30,12
	60-64	9,69	72,55	17,76	12,32	72,63	15,04	11,37	72,60	16,03
	65-69	10,85	68,68	20,47	7,79	60,09	32,12	9,58	65,11	25,32
	70-74	7,19	42,20	50,62	5,70	49,65	44,65	6,24	46,96	46,80
	>=75	6,41	20,49	73,11	9,53	55,56	34,91	8,66	45,77	45,57
	միջին	9,70	59,19	31,11	9,25	51,26	39,49	9,42	54,23	36,36
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50		21,20	78,80		20,95	79,05		20,97	79,03
	50-54	6,10	43,40	50,50	11,76	37,60	50,64	9,37	40,05	50,58
	55-59	12,83	53,54	33,63	0,91	49,84	49,25	5,99	51,42	42,59
	60-64	15,48	40,83	43,69	6,15	47,10	46,75	10,16	44,40	45,44
	65-69	6,67	37,04	56,29	11,91	19,35	68,74	10,01	25,77	64,22
	70-74	9,14	29,37	61,50	1,19	45,02	53,79	5,00	37,51	57,49
	>=75	2,91	29,82	67,27	4,84	33,09	62,08	4,11	31,86	64,02
	միջին	8,48	39,22	52,30	5,67	37,32	57,01	6,79	38,08	55,13

Հայաստանի Հանրապետություն	<50		5,81	94,19	5,57	30,22	64,20	5,28	28,94	65,78
	50-54	9,97	47,32	42,71	8,01	36,99	55,00	8,82	41,27	49,90
	55-59	15,90	46,36	37,74	7,19	42,80	50,01	10,93	44,33	44,74
	60-64	16,27	44,71	39,01	9,60	50,70	39,70	12,18	48,39	39,43
	65-69	15,53	39,47	45,00	11,91	33,97	54,12	13,55	36,46	49,99
	70-74	12,84	38,01	49,15	7,65	39,76	52,59	9,85	39,02	51,13
	>=75	15,61	26,35	58,03	6,06	35,66	58,28	9,18	32,62	58,20
	միջին	13,76	40,83	45,41	7,78	38,68	53,54	10,05	39,50	50,45

Հանրապետությունում այս հարցադրմանը «ոչ այնքան» պատասխան են տվել հարցվողների 39,5%-ը: Կանանց շրջանում կենսաթոշակային օրենսդրությանը իրազեկվածությունը գրեթե կիսով չափ զիջում է տղամարդկանց: Դրական պատասխանների տոկոսային պարունակությունները կազմում են համապատասխանաբար 7,78% և 13,76%:

50+ տարիք ունեցող բնակչության շրջանում կենսաթոշակային օրենսդրության իրազեկվածության ամենացածր մակարդակ է դիտվել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում՝ 6,8% և ամենաբարձրը՝ Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 15,34%:

7.34. «Կարող եք հաշվարկել Ձեր կենսաթոշակի չափը» հարցադրմանը տարածաշրջաններում տրված պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ հանրապետությունում 50+ տարիք ունեցող բնակչության 11,23%-ը չեն կարող հաշվարկել իրենց կենսաթոշակի չափը:

Հարցադրմանը դրական պատասխան են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գույրակերների 12,93%-ը և նույն տարիքի կանանց 11,23%-ը:

Համեմատաբար բարձր տոկոսային պարունակությամբ դրական պատասխաններ են տվել Երևան քաղաքում բնակվող հարցվողների 16,35%-ը:

Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում այս ցուցանիշը կազմում է 5,44%, որը ամենացածրն է ողջ հանրապետությունում: Հարցադրմանը «ոչ այնքան» պատասխան են տվել հետազոտությանը մասնակցած հարցվողների 24,43%-ը: Ըստ ստացված արդյունքների՝ նրանց համար կենսաթոշակային համակարգի կանոնները դժվար հասկանալի են:

Ամփոփելով կենսաթոշակառուների կենսաթոշակային օրենսդրության գրագիտության գնահատման նպատակով տրված հարցադրումների պատասխանների տոկոսային պարունակությունները՝ կարող ենք արձանագրել, որ կենսաթոշակառուներին անհրաժեշտ տեղեկատվության մատուցմամբ պայմանավորված նրանց իրազեկվածությունը և կենսաթոշակային օրենսդրության վերաբերյալ գրագիտությունը գտնվում է ցածր մակարդակում:

7.35. «Տեղա՞յ եք, թե ինչպիսի՞ անվճար սոցիալական ծառայություններ են տրամադրվում կենսաթոշակառուներին պետության կողմից» հարցադրման պատասխանները բերված են աղյուսակ 7.35–ում:

Տարածաշրջան	Տարիք	Տղամարդիկ			Կանայք			Ընդհանուր		
		այո	նշ այնքան	նշ	այո	նշ այնքան	նշ	այո	նշ այնքան	նշ
1 Երևան	<50			100,00		27,07	72,93		23,50	76,50
	50-54	4,29	22,47	73,25	2,98	29,96	67,06	3,50	26,99	69,52
	55-59	4,60	26,13	69,27	5,01	32,04	62,95	4,84	29,60	65,56
	60-64	9,40	40,37	50,23	5,52	31,00	63,48	6,94	34,42	58,65
	65-69	0,90	27,93	71,17	4,86	25,47	69,67	3,06	26,59	70,35
	70-74	21,38	34,33	44,29	15,82	25,80	58,38	18,05	29,22	52,74
	>=75	19,24	18,48	62,28	11,28	21,84	66,88	13,58	20,87	65,55
	միջին	9,26	26,90	63,85	7,11	27,38	65,52	7,90	27,20	64,90
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50				11,07	27,11	61,82	11,07	27,11	61,82
	50-54		41,47	58,53	10,54	24,31	65,15	6,29	31,22	62,48
	55-59	9,58	56,12	34,30	10,70	28,67	60,63	10,22	40,51	49,28
	60-64	17,36	35,79	46,85	9,59	35,65	54,76	12,78	35,71	51,51
	65-69	19,81	38,01	42,18	10,73	19,11	70,16	14,49	26,93	58,59
	70-74	16,49	22,03	61,49	6,45	36,53	57,03	11,05	29,89	59,07
	>=75	23,40	29,55	47,05	8,05	15,17	76,78	14,07	20,81	65,12
	միջին	12,86	37,22	49,92	9,58	25,56	64,85	10,86	30,10	59,04
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50			100,00	13,05	27,58	59,37	12,90	27,26	59,84
	50-54	18,10	24,01	57,89	5,20	36,42	58,38	10,85	30,99	58,16
	55-59	21,81	40,52	37,67	26,98	34,79	38,22	24,64	37,39	37,97
	60-64	17,49	46,26	36,24	28,92	37,47	33,60	24,75	40,68	34,57
	65-69	24,18	24,72	51,09	18,56	31,57	49,88	21,84	27,57	50,59
	70-74	17,21	45,60	37,19	12,89	35,63	51,48	14,45	39,23	46,32
	>=75	3,61	28,57	67,83	20,54	17,99	61,47	15,82	20,94	63,24
	միջին	17,98	33,35	48,67	16,81	31,71	51,48	17,25	32,33	50,43
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50			100,00		22,53	77,47		20,98	79,02
	50-54	3,33	40,70	55,97	10,88	24,14	64,98	7,69	31,14	61,17
	55-59	3,83	22,77	73,40	0,69	25,47	73,84	2,03	24,32	73,65
	60-64	6,81	29,45	63,74	2,98	44,97	52,05	4,63	38,30	57,07
	65-69	6,67	38,11	55,22	12,29	26,15	61,56	10,25	30,49	59,26
	70-74	12,64	23,66	63,70	2,81	37,11	60,08	7,52	30,66	61,82
	>=75	5,15	10,19	84,66	4,84	21,46	73,70	4,96	17,23	77,81
	միջին	6,19	27,30	66,51	5,38	27,89	66,74	5,70	27,65	66,65
Հայաստանի Հանրապետություն	<50			100,00	6,86	26,32	66,82	6,50	24,94	68,56
	50-54	6,95	31,26	61,78	7,04	29,00	63,96	7,01	29,94	63,06
	55-59	9,84	34,12	56,04	10,30	30,69	59,01	10,10	32,16	57,73
	60-64	12,29	38,34	49,37	11,47	35,96	52,57	11,79	36,88	51,33
	65-69	11,59	30,83	57,58	10,07	25,03	64,89	10,76	27,66	61,58
	70-74	16,93	30,72	52,35	10,25	32,98	56,77	13,08	32,02	54,90
	>=75	14,55	20,91	64,54	11,23	19,74	69,03	12,32	20,12	67,56
	միջին	11,34	30,66	58,00	9,55	28,15	62,29	10,23	29,11	60,66

Պետության կողմից անվճար սոցիալական ծառայությունների տրամադրման մասին տեղյակ են հանրապետության 50+ տարիք ունեցող բնակչության 10,23%-ը, մասնակի են տեղյակ 29,11%-ը և տեղյակ չեն 60,66%-ը:

Անվճար սոցիալական ծառայությունների տրամադրման մասին իրազեկվածության առավել ցածր մակարդակ ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում՝ 5,7%, ինչպես նաև Երևան քաղաքում՝ 7,9%: Այս վերջին արդյունքը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս հանրապետությունում սոցիալական ծառայությունների մատուցման համակարգի կայացվածության մասին:

Եթե հանրապետության մայրաքաղաքում, որտեղ կենտրոնացված են սոցիալական տարբեր ծառայություններ մատուցող կառույցները և բնակչության տարեց հատվածը, որը շատ ուշադիր է պետության կողմից իրականացվող աջակցության բոլոր ծրագրերին, այդ թվում նաև սոցիալական ծառայությունների անվճար մատուցման ծրագրերին, պրակտիկորեն անտեղյակ են, ապա պետք է սպասել, որ հանրապետության մյուս տարածքներում առավել ծանր վիճակ պետք է լինի: Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ծառայություններ մատուցող պետական գործակալությունները զբաղված են միայն աղքատության ընտանեկան նպաստների նշանակմամբ: Բնակչության շրջանում սոցիալական ծառայությունները իմիտացվում են աջակցության այդ տեսակի հետ, որի հետ կապված Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում արձանագրվել է պետության կողմից անվճար սոցիալական ծառայությունների մասին իրազեկվածության ավելի բարձր աստիճան՝ 17,25 %, քան Երևան քաղաքում:

7.36. «Ինչպիսի՞ սոցիալական օգնության կարիք ունեք» հարցադրմանը 50+ տարիքի տղամարդկանց պատասխանները բերված են աղյուսակ 7.36.1, իսկ կանանց պատասխանները՝ աղյուսակ 7.36.2-ում:

Աղյուսակներում պատասխանների համարակալումը համապատասխանում է ներքևում բերվող սոցիալական օգնությունների տեսակների համարակալմանը:

Սոցիալական օգնությունների տեսակներ

1. Սննդի
2. Հագուստի
3. Առողջապահական
4. Գեղորայքի
5. Կենցաղային ծառայությունների
6. Առօրյա խնամքի և սպասարկման
7. Բարոյական աջակցության
8. Գրամական
9. Հոգեբանական
10. Իրավաբանական խորհրդատվության
11. Բնակարանային պայմանների բարելավման
12. Ինքնուրույն տեղաշարժման միջոցների

Աղյուսակ 7.36.1

Տարածաշրջան	տարիք	Տղամարդկանց պատասխանները											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1 Երևան	<50	55,0					45,0						
	50-54	23,6	10,7	28,8	12,6	-	3,5	26,3	75,8	9,1	5,21	15,5	
	55-59	33,1	-	25,8	21,1	13,9	1,9	10,7	74,8	2,4	1,36	30,9	
	60-64	21,9	11,9	34,8	10,7	12,3	-	36,1	94,4	3,0	4,74	14,9	
	65-69	33,8	8,2	59,0	24,1	14,5	1,9	13,1	75,3	19,3	-	10,9	
	70-74	25,7	4,8	59,5	29,5	7,0	5,2	-	84,8	9,1	0,67	13,1	
	>=75	38,0	7,2	51,5	45,7	6,0	8,6	13,4	80,3	24,2	-	4,1	1,8
	միջին	29,9	6,8	42,6	23,2	8,4	4,3	16,6	80,4	10,8	2,0	15,1	0,3

2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50												
	50-54	24,8	17,6	36,6	24,6	8,7	2,8	44,9	70,7	12,0	2,9	16,1	5,1
	55-59	29,8	16,6	45,14	23,3	4,6	1,6	30,3	62,2	13,5	18,7	30,1	1,8
	60-64	46,2	12,1	32,5	18,0	6,7	1,9	20,4	75,2	2,2	2,5	10,4	
	65-69	26,7	13,9	37,9	37,6	8,3	14,2	22,8	84,7	15,7	2,3	16,7	
	70-74	22,7	9,8	39,0	11,8	10,3	13,9	12,2	95,1	20,7		8,2	
	>=75	21,0	12,0	54,3	45,2	14,5	20,2	27,3	74,9	7,6		7,5	
	միջին	27,4	14,1	41,2	27,6	9,2	8,9	28,7	76,3	11,9	4,0	14,6	1,6
3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50												
	50-54	37,7	19,3	24,0	18,0	7,84	14,5	12,4	69,9	7,9	5,2	19,3	
	55-59	27,1	17,7	22,3	20,3	6,54	17,9	19,9	78,4	14,8	1,3	31,5	
	60-64	21,5	17,9	31,0	15,2	31,09	3,1	47,2	74,7	12,1			
	65-69	8,3	13,6	42,3	59,5	5,64	5,5	5,6	88,1	45,0		13,1	
	70-74	37,0	43,9	50,5	37,7	4,88	16,4	12,1	52,6	7,2		14,2	
	>=75	54,3	22,6	39,6	31,5	28,01	11,1	-	70,4	-		25,0	
	միջին	31,1	21,4	31,8	27,1	11,97	12,6	16,1	72,7	14,0	1,8	18,7	
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50	21,2							78,8				
	50-54	53,9	24,8	15,6	9,6	7,26	0,9	9,9	68,4	18,0		12,3	
	55-59	51,8	19,4	30,8	8,7	11,89	1,2	7,0	59,7			9,7	
	60-64	51,9	30,8	19,2	5,3	20,23	3,0	11,6	48,5	5,1		17,0	
	65-69	39,2	-	34,9	19,7	29,26	14,4	14,4	83,0	6,7		9,	
	70-74	24,6	15,4	36,0	25,1	7,93	5,3	27,5	65,6	24,1	4,1	9,6	
	>=75	29,8	11,9	39,7	26,6	15,37	20,8	22,6	76,9				1,3
	միջին	42,1	18,2	28,1	15,5	12,95	6,4	15,3	66,8	10,3	0,8	9,5	0,2
Հայաստանի Հանրապետություն	<50	41,7	-	65,2	-	7,38	29,3	7,3	94,1	-	-	-	-
	50-55	34,6	17,8	26,2	16,1	5,79	5,8	22,3	71,4	11,5	3,5	16,0	1,1
	55-60	35,1	11,7	29,1	18,5	9,98	6,0	15,6	70,4	7,5	3,9	26,2	0,3
	60-65	33,4	17,3	30,1	12,1	16,99	1,7	29,9	76,1	5,2	2,2	11,1	
	65-70	26,8	9,4	46,5	35,1	13,44	7,4	13,4	81,7	23,0	0,4	12,3	
	70-75	26,9	16,6	46,4	26,0	7,59	9,3	13,1	75,1	15,7	1,4	11,2	
	>=76	34,3	11,9	47,6	38,9	13,82	14,8	17,0	76,6	10,5	-	7,2	0,9
	միջին	32,4	14,3	36,5	23,3	10,44	7,6	18,7	74,6	11,7	2,1	14,6	0,8

Աղյուսակ 7.36 2

Տարածաշրջան	Տարիք	Կանանց պատասխանները											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1 Երևան	<50	16,2	7,4	11,9	16,3	12,8	5,1	36,8	81,4	17,7		17,4	
	50-54	30,9	15,5	29,4	10,2	10,8		16,6	82,4	9,2		10,2	
	55-59	17,4	7,5	42,4	19,7	6,2	5,6	17,8	83,4	5,7	1,0	14,6	
	60-64	37,3	13,5	35,4	19,7	8,6	5,2	12,15	86,5	10,5		7,5	
	65-69	29,3	8,1	61,7	40,8	11,5	1,6	18,6	68,0			8,8	1,6
	70-74	36,1	5,2	50,0	38,9	11,0	10,4	4,4	86,8	17,1		5,0	1,4
	>=75	38,4	5,1	53,3	42,8	11,9	10,4	7,3	78,1	4,0	0,8	4,7	1,8
	միջին	30,9	9,1	42,4	27,5	10,2	5,8	14,1	81,1	8,1	0,3	9,0	0,7
2 Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք	<50	38,2	16,1	31,5	27,6	9,0	2,0	30,9	75,2	10,7	5,3	14,6	
	50-54	29,9	10,9	37,1	13,7	12,6	-	28,6	81,8	7,7		21,1	
	55-59	33,0	1,0	47,2	35,5	10,5	1,7	19,5	85,2	6,9		21,0	
	60-64	27,2	1,4	39,5	37,8	4,1	8,5	22,5	82,3	18,9	2,6	28,8	
	65-69	14,8	9,5	61,1	53,2	4,3	2,7	24,8	82,2	14,0		7,6	
	70-74	33,0	9,8	29,6	51,8	16,7	10,6	21,2	83,3	11,4		4,4	
	>=75	28,7	5,1	52,7	48,0	15,8	26,7	33,9	69,9	1,8		5,8	
	միջին	29,3	10,3	42,7	35,6	11,2	7,9	26,7	79,6	9,2	0,8	15,1	

3 Լոռի, Շիրակ, Արագածոտն	<50	31,3	22,4	22,8	3,0	26,2	15,2	16,0	71,2	18,8		20,2	
	50-54	26,8	24,7	29,1	21,1	21,0	12,0	21,3	81,5	10,4	4,2	22,8	
	55-59	19,0	14,4	49,9	40,6	4,6	6,8	23,5	61,2	20,1		19,7	
	60-64	41,6	21,3	51,7	40,3	21,9	3,2	11,3	46,6	1,2	10,5	12,1	
	65-69	28,3	21,8	37,2	28,1	12,9	7,3	13,4	78,9	16,0		28,5	
	70-74	44,5	22,2	29,1	38,2	12,9	3,3	7,6	68,2	12,0	3,3	14,3	
	>=75	40,7	22,1	51,0	51,7	2,7	6,7	19,5	57,3	5,5		9,9	
	միջին	32,7	21,5	38,1	31,4	14,9	8,3	17,1	66,9	11,7	2,7	17,8	
4 Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք	<50	63,7	28,9	21,2	13,9	10,5		10,1	60,0	5,8		13,9	
	50-54	51,0	16,6	15,2	16,0	3,8	2,0	19,6	56,4	1,0		6,3	
	55-59	53,3	20,0	27,3	24,4	11,4	4,8	12,9	66,4	2,4		3,6	1,6
	60-64	63,8	23,7	25,5	10,9	11,0	1,4	6,1	57,2			-	
	65-69	14,2	19,0	33,3	12,1	4,5	6,5	12,0	81,7			2,4	
	70-74	27,1	18,02	33,7	22,9	12,9	7,9	13,2	75,0	4,0		12,6	1,9
	>=75	32,1	9,9	51,2	42,8	13,1	12,3	13,2	73,1				
	միջին	43,4	18,3	29,5	21,9	9,3	5,3	13,4	66,6	1,7		5,3	0,5
Հայաստանի Հանրապետություն	<50	35,8	18,9	21,7	13,4	16,	6,9	22,8	72,1	14,2	1,1	17,1	
	50-55	34,0	17,0	28,0	15,0	12,3	3,5	21,2	76,4	7,3	1,1	15,1	
	55-60	28,4	12,4	41,6	28,4	7,7	5,1	18,4	74,5	8,7	0,4	14,4	0,4
	60-65	41,3	17,3	38,3	26,5	11,4	4,7	12,8	70,8	8,0	3,0	11,3	
	65-70	22,1	13,1	51,1	35,0	8,3	3,9	17,7	76,3	5,7	-	1,0	0,6
	70-75	35,5	13,6	37,0	37,4	13,0	8,0	10,4	78,6	11,6	0,8	9,1	0,9
	>=76	35,8	9,4	52,3	45,5	11,1	13,2	15,9	71,7	3,1	0,3	5,0	0,7
	միջին	33,7	14,2	38,7	28,9	11,3	6,7	17,2	74,4	7,8	0,9	11,6	0,4

Հանրապետությունում և տղամարդ և՛ կին հարցվողների համար աջակցության առաջին երեք ամենակարևոր կարիքները նույնն են՝ դրամական, առողջապահական և սննդապահովման, ընդ որում՝ դրամական աջակցության կարիքը կրկնակի անգամ գերազանցում է առողջապահական և սննդապահովման կարիքներին, եռակի և ավելի անգամ դեղորայքի, բարոյական աջակցության և բնակարանային պայմանների բավարարման կարիքներին:

Դրամական աջակցության առավել կարիք ունեն Երևան քաղաքում բնակվող 50+ տարիք ունեցող տղամարդ հարցվողների 80,4%-ը և կին հարցվողների 81,1%-ը:


Առողջապահական աջակցության ամենաբարձր կարիք ունեն Երևան քաղաքում բնակվող 50+ տարիք ունեցող տղամարդ հարցվողների 42,6%-ը և կին հարցվողների 42,4%-ը:

Դեղորայքի աջակցության կարիքն ավելի շատ ունեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիք ունեցող տղամարդկանց 27,6%-ը և կանանց 35,6%-ը:

Բնակարանային պայմանների բարելավման հարցադրմանը տրված դրական պատասխաններն ամենաբարձր տոկոսային պարունակություն ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիք ունեցող տղամարդկանց և կանանց շրջանում, որոնք կազմում են համապատասխանաբար 18,7% և 17,8%: Այս վերջին իրողությունը կապված է 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով ավերված բնակֆոնդի դեռևս մեծ պահանջարկի առկայության հետ:

Ներկայացնենք կարիքների վերաբերյալ գծապատկերների շարք, որոնք կազմված են կենսաթոշակառու հարցվողների կողմից տրված դրական պատասխանների հիման վրա:

1. Դրամական օգնության կարիք




Գծապատկեր 7.36.1 Դրամական աջակցության կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Ինչպես երևում է գծապատկերից, տարիքային տարբեր շերտերում գտնվող կենսաթոշակառուների պատասխանների տոկոսային պարունակություններից, դրամական օգնության կարիքներ ունեն բոլոր տարիքային շերտերում գտնվող կենսաթոշակառուների 70 տոկոսից ավելին: Այս կարիքի մեծագույն արժեքը գտնվում է 95 տոկոսի սահմանագծում: Դրամական օգնության կարիքը գերակշռում է կենսաթոշակառուների շրջանում այլ կարիքների հետ համեմատած:

2. Առողջապահական օգնության կարիք

Կենսաթոշակառուների շրջանում այս կարիքն իր ընդգրկմամբ և ծավալներով գտնվում է երկրորդ տեղում՝ դրամականից հետո:




Գծապատկեր 7.36.2 Առողջապահական օգնության կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Ինչպես երևում է տարիքային տարբեր շերտերում գտնվող կենսաթոշակառուների պատասխանների տոկոսային պարունակություններից, առողջապահական կարիքները մեծանում են տարիքի մեծացման հետ: 50+ տարիքի կենսաթոշակառուների շրջանում այդ կարիքի

առավելագույն արժեքը գտնվում է 53 տոկոսի սահմանագծում:

Դիտված օրինաչափության մեջ չի տեղավորվում 50+ տարիքի կենսաթոշակառուների 50-տարիքի զուգընկերների առողջապահական կարիքների մասին տրված պատասխանների տոկոսային բարձր պարունակությունը՝ 66,2%: Այս երևույթն առավել խորքային հետազոտության կարիք է զգում, որը դուրս է գալիս այս հետազոտության շրջանակներից:

3. Գեղորայքի կարիք




Գծապատկեր 7.36.3 Գեղորայքի կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Ինչպես երևում է տարիքային տարբեր շերտերում գտնվող կենսաթոշակառուների պատասխանների տոկոսային պարունակություններից, գեղորայքի կարիքը մեծանում է ինչպես առողջապահական, այնպես էլ տարիքի մեծացման հետ: Այս կարիքի սահմանային արժեքը գտնվում է 50 տոկոսի սահմանագծում:

Գեղորայքի կարիքը առավել արտահայտված է կին կենսաթոշակառուների շրջանում, ընդ որում՝ տարիքի մեծացման հետ այն աճում է:

4. Սննդապահովման կարիք




Գծապատկեր 7.36.4 Սննդի կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Ինչպես երևում է տրված պատասխանների տոկոսային պարունակություններից, սննդամթերքի կարիք ունեն բոլոր տարիքային շերտերում գտնվող ինչպես տղամարդ, այնպես էլ կին կենսաթոշակառուների 20-42%-ը:

Այս տեսակի կարիքի առավելագույն տոկոսային եզրը գտնվում է 42%-ի սահմանագծում:

Եթե համեմատաբար ավելի ցածր տարիքային շերտերում գերազանցում են տղամարդկանց սննդապահովման կարիքները, ապա բարձր տարիքային շերտերում սննդի կարիքն առավել զգալի է կանանց շրջանում:


5. Բնակարանային պայմանների բարելավման կարիք



Գծապատկեր 7.36.5 Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող կենսաթոշակառուների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Ինչպես երևում է պատասխաններից՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող կենսաթոշակառուների շրջանում գերակշռում են առավել ցածր տարիքային շերտերում գտնվողները: Այս կարիքը մոնոտոն նվազում է և նվազագույն պահանջի է հասնում 75 տարեկանից բարձր տարիքի կենսաթոշակառուների շրջանում՝ տղամարդկանց 7,3%-ի և կանանց 5,0%-ի ընտանիքներում: Այս տեսակի կարիքի առավելագույն տոկոսային եզրը գտնվում է 27%-ի սահմանագծում:


6. Բարոյական աջակցության կարիք



Գծապատկեր 7.36.6 Բարոյական աջակցության կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Բարոյական աջակցության կարիք ունեցող կենսաթոշակառուների շրջանում առավել բարձր ցուցանիշ է գրանցված 60-64 տարեկան տղամարդկանց մոտ, որը հավանական է՝ կապված է կենսաթոշակառուի տարիքի վրա հասնելու և նոր կարգավիճակի հետ չհամակերպվելու հետ: Բարոյական աջակցության կարիքն իր հիմքում կարող է տարբեր դրոսապատճառներ ունենալ: Տրված պատասխանների համախմբերի մեջ թերևս բացատրելի է 75 տարեկանից բարձր կենսաթոշակառուների շրջանում բարոյական աջակցության կարիքի աճը ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում՝ ընտանիքում դերակատարումների հնարավոր փոփոխության հետ:


7. Հոգեբանական օգնության կարիք



Գծապատկեր 7.36.7 Հոգեբանական աջակցության կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Հոգեբանական աջակցության կարիք ունեցող կենսաթոշակառուների շրջանում առավել բարձր ցուցանիշ է գրանցված 65-69 տարեկան տղամարդկանց մոտ՝ 23.0%, որը հավանական է կապված է կենսաթոշակառուի կարգավիճակի հետ:Տարիքի մեծացման հետ տղամարդկանց շրջանում մոնոտոն նվազում է այս կարիքն ունեցողների տեսակարար կշիռը, 75 տարեկանից բարձր տարիք ունեցողների մոտ այն հասնում է 10,6%-ի:


8. Հագուստի կարիք



Գծապատկեր 7.36.8 Հագուստի կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Պատասխանների տոկոսային պարունակությունները ցույց են տալիս, որ հագուստի կարիք ունեն բոլոր տարիքային շերտերում գտնվող ինչպես տղամարդ, այնպես էլ կին կենսաթոշակառուները, որոնց պատասխանների վերին եզրը կազմում է 20 տոկոս: Նշենք, որ այդ տոկոսային շերտում հագուստի առավել կարիք ունեն համեմատաբար ցածր տարիքի կենսաթոշակառու կանանց 19,9%-ը: Տարիքի մեծացման հետ հագուստի կարիքը նվազում է, որն ըստ երևույթին կապված է մեծահասակների կողմից հագուստի նկատմամբ նվազ պահանջկոտության հետ:


9. Կենցաղային ծառայությունների կարիք



Գծապատկեր 7.36.9 Կենցաղային ծառայությունների կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Կենցաղային ծառայությունների կարիք ունեցող տղամարդ կենսաթոշակառուների տեսակարար կշիռները գտնվում են 17.0-5,8 տոկոսային միջակայքում, իսկ կանանց տեսակարար կշիռները՝ 16,3-7,7 տոկոսային շերտում: Այս ծառայությունների մատուցման կարիքը առավելապես զգալի է 75 տարեկանից բարձր կենսաթոշակառուների շրջանում:


10. Առօրյա խնամքի և սպասարկման կարիք



Գծապատկեր 7.36.10 Առօրյա խնամքի և սպասարկման կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Առօրյա խնամքի և սպասարկման կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումները ցույց են տալիս, որ այս կարիքը սկսած 65 տարեկանից աճում է հասնելով առավելագույն արժեքի՝ 75 տարեկանից բարձր կենսաթոշակառու տղամարդկանց 14,9%-ի և կանանց 13,2%-ի շրջանում:


11. Իրավաբանական խորհրդատվության կարիք



Գծապատկեր 7.36.11 Իրավաբանական խորհրդատվության կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Իրավաբանական խորհրդատվության կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային պարունակություններն ընկած են 0,4-3,9 տոկոսային միջակայքում: Այս միջակայքում իրավաբանական խորհրդատվության առավել բարձր կարիք են գգում նախակենսաթոշակային տարիքի տղամարդիկ: Իրավաբանական խորհրդատվության կարիքն առավելապես զգում են 55-59 տարեկան տղամարդկանց 3,9%-ը և 60-64 տարեկան կանանց 3.0%-ը: Տարիքի մեծացման հետ իրավաբանական խորհրդատվության կարիքը գործնականում վերանում է:

12. Ինքնուրույն տեղաշարժման միջոցների կարիք



Գծապատկեր 7.36.12 Ինքնուրույն տեղաշարժման միջոցների կարիք ունեցող կենսաթոշակառու հարցվողների պատասխանների տոկոսային բաշխումներն ըստ տարիքի և սեռի

Ինքնուրույն տեղաշարժման միջոցների կարիք ունեցող կենսաթոշակառուների պատասխանների տոկոսային պարունակություններն ընկած են 0,3-1,2 տոկոսային միջակայքում: Այս կարիքը համեմատաբար բարձր է արտահայտված ավագ տարիքային շերտերում գտնվող կանանց շրջանում:

ԳԼՈՒԽ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ

Չհաշված ուտելիքի և բնակարանի համար կատարված ծախսերը՝ 50+ տարիքի մարդկանց և նրանց գույքընկերների միայն 12%-ն է գումար, նյութական ավելներ, կամ աջակցություն ցուցաբերել ընտանիքի անդամներին կամ այլ մարդկանց: Այս ցուցանիշը համեմատաբար բարձր է Հայաստանի Հանրապետության տարածաշրջաններում: Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում նման մարդիկ կազմում են 12%, Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում՝ 17,9%, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանում՝ 16%, Երևանում՝ միայն 5%:

Ի դեպ, աջակցություն ցուցաբերած 50- տարիքի մարդիկ (օրինակ, Երևանում գրեթե 3 անգամ) ավելի են, քան 50-ից բարձր տարեկանները:

Նվիրած գումարի չափը տատանվում է 3000-400000 դրամի սահմաններում, միջինում կազմելով 58500 դրամ: Երևանում գումարը կազմում է 55000 դրամ, Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 44000 դրամ, Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում՝ 51500 դրամ, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանում՝ 80800 դրամ:

Հիմնականում հետևյալ նպատակներով են գումար նվիրում.

- *Ամենօրյա կարիքները հոգալու համար:* Այս նպատակով գումար նվիրածների 15%-ը Երևանի, 64,4%-ը՝ Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանի, 10,7%-ը՝ Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանի բնակիչներ են:
- *Խոշոր գնումներ կատարելու համար (բացի տուն կամ բնակարան գնելը):* Այս նպատակով գումար նվիրողների գերակշռող մեծամասնությունը (92,7%) բնակվում են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում:
- *Ընտանեկան խոշոր իրադարձությունների համար (ծնունդ, ամուսնություն):*
- *Օգնություն բարեկամներին՝ կորստի կամ հիվանդությունների ժամանակ:*
- *Ուսումը շարունակելու համար:*

50+ տարիքի մարդկանց և նրանց գույքընկերների 18,8%-ն է գումար կամ նյութական ավել ստացել ընտանիքի անդամներից կամ այլ մարդկանցից: Ի դեպ, ստացողների 14,9%-ը երևանաբնակներ են, 18,9%-ը՝ Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանի, 27,2%-ը՝ Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանի, 15,9%-ը՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանի բնակիչներ են: Այսինքն, ամենից հաճախ գումարային աջակցություն ստանում են Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանի 50-ից բարձր տարիքի մարդիկ և նրանց գույքընկերները:

50+ տարիքի հարցվողներին աջակցություն ցուցաբերողները հիմնականում որդիներն ու դուստրերն են:

Նույն տարիքի Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանի հարցվողները

մատնանշում են հիմնականում ամուսնուն/կնոջը, դուստրերին, հարսների/փեսաներին կամ այլ հարազատների:

Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանի հարցվողների համար նյութական աջակցության հարցում դերակատարում ունեն իրենց հայրերը, որդիները (ամենակարևորն են), ընկեր/ընկերուհիներն ու հարևանները:

50- տարիքի երևանաբնակ հարցվողները նշում են, որ իրենց նյութական աջակցություն են ցուցաբերում նաև եղբայրները:

50- տարիքի Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի հարցվողներին նյութական աջակցություն ցուցաբերողներն իրենց որդիներն են (նաև՝ խորթ), թոռները, քույրերը, իսկ ամենահաճախակի՝ այլ հարազատները:

Ստացված գումարները միջինում կազմում են 176000 դրամ:

Երևանում ստացվող գումարը 166000 դրամ է, Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 68000 դրամ, Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում՝ 278000 դրամ, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանում՝ 119000 դրամ:

Հիմնականում գումար նվեր են ստանում հետևյալ նպատակներով.

- *Ամենօրյա կարիքները հոգալու համար:* Այս նպատակով գումար նվեր ստացողների 34,2%-ը Երևանի, 30,5%-ը՝ Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանի, 18,9%-ը՝ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի տարածաշրջանի, 16,5%-ը՝ Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանի բնակիչներ են:
- *Ընտանեկան խոշոր իրադարձությունների համար (ծնունդ, ամուսնություն):*
- *Օգնություն հիվանդության ժամանակ:*

50+ տարիքի մարդիկ և նրանց զույգերը պնդում են, որ ոչ մի ժառանգություն կամ սեփականություն, բացի վերը նշված գումարներից, երբևէ չեն ստացել:

ԳԼՈՒԽ 9. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ըստ միջազգային հետազոտական պրակտիկայի, եկամտային և ունեցվածքային ապահովվածության հետ մեկտեղ, տնային տնտեսության բնակարանային բավարար պայմանների առկայությունը հանդիսանում է բարեկեցության կարևորագույն ցուցանիշ:

Շուկայական տնտեսության մեջ բնակարանային ապահովվածությունը բնութագրվում է 3 հիմնական բաղադրիչներով՝

- բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը
- բնակելի մակերեսի կահավորվածությունը
- բնակարանի ապահովվածությունը կոմունալ հարմարություններով

Տնային տնտեսության բնակարանի նկատմամբ սեփականությունը դեռևս որոշիչ չէ բարեկեցության գնահատման ավելի բարձր ստրատաներում հայտնվելու համար: Բնակարանային պայմանների գնահատման առումով կարևորվում են մեկ շնչին ընկնող բնակմակերեսը, ինչպես նաև սենյակների թիվը:

Վարձակալած բնակելի մակերեսը ևս կարող է ծառայել ինդիկատոր տնային տնտեսության բարեկեցության և եկամուտների անուղղակի գնահատման համար:

Միջազգային փորձագետների կողմից հետազոտություններում բնակարանային

պայմանների բավարարվածության գնահատման համար օգտագործվում է սենյակային բավարարության ինդեքսի գնահատման բանաձև հետևյալ բովանդակությամբ՝

սենյակների քանակ

$$\text{Սենյակային բավարարություն ինդեքս} = \frac{\text{-----}}{A \times 1 + B \times 0.5 + D \times 0.5 + K \times 0.5} \quad (1)$$

- որտեղ՝**
- A -ն** զուգընկեր չունեցող չափահաս անդամների թիվն է
 - B -ն** զուգընկեր ունեցող չափահաս անդամների թիվն է
 - D -ն** մինչև 18 տարեկան միասեռ երեխաների թիվն է՝ աղջիկներ կամ տղաներ
 - K -ն** մինչև 18 տարեկան երկսեռ երեխաների թիվն է՝ աղջիկներ և տղաներ

Միջազգային հետազոտական պրակտիկայում օգտագործվող վերևում բերված (1) բանաձևի հայտարարում մեր կողմից կատարվել է նոր գործոնի հաշվի առնում K անդամի տեսքով: Այս գործակցի ավելացումը մեծացնում է տվյալ ընտանիքի համար բավարար համարվող սենյակների քանակը , որը հիմնավորվում է երկսեռ երեխաների տարբեր սենյակներում բնակվելու անհրաժեշտությամբ: Նշենք, որ Խորհրդային Հայաստանում բնակարանների բաշխման գործող կարգով երկսեռ երեխաներ ունենալու պարագայում ընտանիքին տրվում էր մեկ սենյակ ավելի: Այս բանաձևում սենյակային բավարարության ինդեքսը հավասարեցնելով 1-ի, կստանանք բնակարանի սենյակների այն անհրաժեշտ թիվը, որը բավարար ապահովվածություն կհամարվի տվյալ ընտանիքի համար՝ կապված ընտանիքի անդամների թվից, սեռից և արյունակցական կապից:

Այս հետազոտության մեջ մեր կողմից կատարվել են կենսաթոշակառու ընտանիքների բնակարանային պայմաններով բավարարվածության գնահատումներ, ինչպես մեկ շնչին ընկնող բնակելի մակերեսի, այնպես էլ կացարանի բեռնվածության հետ կապված: Մշակվել է բնակարանի սենյակային և մեկ շնչին ընկնող բնակելի մակերեսի մատրիցան, որի օգնությամբ կատարվել է բնակարանային բավարարվածության գնահատումներ:

Մեր կողմից կատարված հաշվարկներում բնակասանիտարական նորման մեկ շնչի համար ընդունվել է 9 քմ: Այս նորման գործել է Խորհրդային Հայաստանում բնակարանի համար հերթագրված ընտանիքներին բնակարանների հատկացման ընթացքում և հանրապետությունում բազմաբնակարանային շենքերում ընտանիքի անդամների թվից կախված՝ բնակարանները բաշխվել են այս նորմայով:

Այս ենթաբաժնի մեթոդական մասում ներկայացված մոտեցմամբ կառուցվել է կենսաթոշակառուների ընտանիքների սենյակների և բնակասանիտարական նորմայի /9քմ/ բավարարության ինդեքսների մատրիցան, որը ներկայացված է աղյուսակ 9.2-ում:

Տարբեր գույներով ընդգծված են բնակարանների սենյակների թվաքանակի և մեկ շնչին ընկնող բնակասանիտարական նորմային համապատասխան կառուցված 2 ինդեքսներով կենսաթոշակառուների ընտանիքների կազմից կախված համալիր բավարարվածության մակարդակները:

Կարմիրով ընդգծված է խիստ անբավարար գնահատվող 2 ինդեքսների՝ (0-0.5 : 0-0.5) հատման կետում գտնվող կենսաթոշակառուների ընտանիքների 2.33%-ը:

Կանաչով ընդգծված է սենյակների քանակի և մեկ շնչին ընկնող բնակմակերեսի նորմային հավասար գնահատվող 2 ինդեքսների՝ /1:1/ հատման կետում գտնվող ընտանիքների տեսակարար

կշիռը, որը կազմում է 12.17%:

Մուգ կապույտով ընդգծված է սահմանված և հաշվարկային նորմաները կրկնակի և ավելի անգամ գերազանցող 2 ինդեքսների՝ (2> : 2>) հատման կետում գտնվող ընտանիքների տեսակարար կշիռը՝ 8.18%:

Այլ գունավորումներով ներկայացված են ինդեքսների տարբեր արժեքներով գնահատված ընտանիքների տեսակարար կշիռները:

Աղյուսակ 9.1

Սենյակների և բնակասանիտարական նորմայի /9քմ/ բավարարության ինդեքսների մատրիցան

Բնակասանիտարական նորմայի /9քմ/ բավարարության ինդեքս	Սենյակների բավարարության ինդեքս				
	0 - 0.5	0.5 - 1	1	1-2	2 >
0 - 0.5	2.33	8.24	0.00	0.00	0.00
0.5 - 1	0.00	13.74	17.25	4.40	0.00
1	0.00	0.00	12.17	11.45	0.00
1 - 2	0.00	0.00	0.00	15.68	6.56
2 >	0.00	0.00	0.00	0.00	8.18

Օրինակ, դեղինով ներկայացված է այն ընտանիքների տեսակարար կշիռը՝ 17.25%, որոնք ունեն ինդեքսների 0.5-1: 1 բավարարվածության մակարդակ, որը ցույց է տալիս այդ ընտանիքների սենյակների բավարարության պայմաններում 1 շնչին ընկնող բնակելի մակերեսի անբավարարություն: Այդպիսի բնակարաններում սենյակների քանակները շատ են, բնակելի մակերեսները՝ փոքր /օրինակ, այդպիսին են երկրի բնակֆոնդում զգալի զանգված ունեցող և բնակչության շրջանում «խրուշչովկա» տարածված անվանում ունեցող փոքր մակերեսներով սենյակներ ունեցող բնակարանները:

Հանրապետությունում 50+ տարիքի բնակչության սոցիալական վիճակը ուսումնասիրվել է մասնաճյուղային մեթոդաբանության մեջ ընդունված տնային տնտեսության բնակարանային պայմանների՝ սենյակային և մեկ շնչին ընկնող բնակմակերեսի բավարարության և եկամտի գործոնների համատեղ ազդեցությունների հաշվառմամբ, որոնց արդյունքները բերվել են աղյուսակ 9.1 – ում:

Այս աղյուսակում բերված ցուցանիշների բաշխումները ցույց են տալիս, որ մեկ շնչին ընկնող մեծ եկամուտներ ունեցող ընտանիքներն ապրում են բնակարանային բարձր բավարարության պայմաններում: Ընդ որում, դիտվում է մեկ շնչին ընկնող եկամուտների աճի հետ զուգընթաց բնակարանային պայմանների բավարարվածության աճի հստակ ընդգծված միտում:

Օրինակ, մեկ շնչին մինչև 18000 դրամ եկամուտ ունեցող ընտանիքների 45.6 տոկոսն ապրում է բնակարանային վատ պայմաններում, ընդ որում՝ 3.7 տոկոսն ապրում է բնակարանային ծանր պայմաններում (սենյակների քանակը և մեկ շնչի համար բնակասանիտարական նորման (մեկ շնչին 9 քմ) պակաս է կրկնակի և ավելի անգամ): Մեկ շնչին ընկնող այս եկամտային շերտում բնակարանային բավարար պայմաններում են ապրում 10.4%-ը, իսկ բնակարանային և սենյակային բարձր ապահովվածություն ունեն ընդամենը 2.97 տոկոսը: Տարբերությունը կազմում է՝ ավելի քան 15 անգամ:

Մեկ շնչին ընկնող 75000 դրամից ավելի եկամուտ ունեցող ընտանիքների 6.75 տոկոսն ապրում է սենյակային և մեկ շնչին ընկնող բնակասանիտարական նորմային մի փոքր զիջող

բնակարանային պայմաններում: Այսպիսի բարձր եկամուտներ ունեցող ընտանիքների 48.5%-ն ապրում է բնակարանային լավ պայմաններում, իսկ 6.8 տոկոսի սենյակային, և մեկ շնչին ընկնող բնակմակերեսի չափերը գերազանցում են բավարարության նորմաները կրկնակիից ավելի անգամ:


Ընտանիքների բնակարանային բավարարվածության և եկամտի ուղղակի կապը պարզորոշ արտահայտված է եկամուտների 18000-75000 դրամ միջակայքում:

Աղյուսակ 9.2

Տարբեր եկամուտներ ունեցող ընտանիքների բնակարանային բավարարվածությունները

Բնակ. մակերեսի բավարարության ինդեքս	Սենյակների բավարարության ինդեքս				
	0 - 0.5	0.5 - 1	1	1 - 2	2 >
Մինչև 18000 դրամ					
Բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների ցանկում 2-րդ տեղում է պետության կողմից բնակչության որոշակի շերտերի համար սոցիալական երաշխիքների շրջանակներում սահմանված դեղորայքի, պրոթեզի և այլ բժշկական պարագաների ու ծառայությունների տրամադրումը, որից օգտվել են 50+ տարիքային շերտում գտնվող անձանց 2,7%-ը:

«Ո՞վ է Ձեզ ցուցաբերել սոցիալական ծառայություն (օրինակ՝ տնային խնամք, խորհրդատվություն, տնային սպասարկում և այլն) վերջին 12 ամիսների ընթացքում» հարցադրմանը տրված պատասխանները բերված են գծապատկեր 11.1-ում:




Գծապատկեր 11.1. Սոցիալական ծառայություն մատուցած կազմակերպություններն ու անձինք

Այս հարցադրմանը տրված պատասխանների պարզ դիտարկումը ցույց է տալիս, որ բնակչության 50+ տարիքային շերտին սոցիալական ծառայություններ հանրապետությունում գործնականորեն չեն մատուցվում: Քիչ թե շատ ծառայություններ մատուցվում են բարեկամների 6,7% և պետական մարմինների կողմից՝ 2,4%:

Չնայած հանրապետությունում գործում են հարյուրավոր հասարակական բարեգործական կազմակերպություններ, արձանագրում ենք, որ խիստ անբավարար է հասարակական կազմակերպությունների կողմից բնակչության 50+ շերտի հետ տարվող աշխատանքների ծավալները:

Մատուցված սոցիալական ծառայությունները հարցվողների կողմից գնահատվել են հետևյալ կերպ.



Գծապատկեր 11.2. Հարցվողների կողմից մատուցված սոցիալական ծառայությունների գնահատում

Գծապատկեր 11.2-ում բերված պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ տարբեր կազմակերպությունների կողմից մատուցված սոցիալական ծառայությունները հանրապետության 50+ տարիքի բնակչությանը հիմնականում բավարարել են մասամբ՝ 50,3%, կամ չեն բավարարել՝ 21,8%: Ամենաբարձր անբավարարվածություն ունեն Երևան քաղաքի հարցվողները՝ 18,8%:

ԳԼՈՒԽ 12. ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Այս բաժնում ներառված են հարցադրումներ և պնդումներ, որոնց տրված պատասխանները հնարավորություն կտան առավել խորությամբ ճանաչել երկրի տարեց անձանց, տեսնել նրանց կենսաձևի ընդհանրական գծերը, վեր հանել նրանց ոչ նյութական կարիքները, դրանց տարածաշրջանային առանձնահատկությունները, գնահատել տարիքի մեծացման հետ կապված կարիքի խորացման և սրացման միտումները:

«Ի՞նչ կրոն եք դավանում» հարցին տրված պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 94,8%-ը քրիստոնյաներ են, այլ կրոն են դավանում 0,5%-ը և ոչ մի կրոն չեն դավանում 1,8%-ը:

Այս հարցմանը չեն պատասխանել տղամարդկանց և կանանց՝ 3%-ը:

Կրոնական դավանանքի պատկանելիության վերաբերյալ հարցմանը պատասխանողների սեռատարիքային բաշխումները ցույց են տալիս, որ քրիստոնյաներ են 50+ տարիքի անձանց 50-տարիքի տղամարդ գուգրնկերների 98,73%-ը և 50- տարիքի կին գուգրնկերների 100%-ը:

Հարսանեկան, կնունքի և այլ արարողություններից բացի, կրոնական ծիսակատարություններին մասնակցության պարբերականության վերաբերյալ պատասխանները ցույց են տալիս, որ հանրապետությունում 50+ տարիքի անձանց և նրանց 50- տարիքի գուգրնկերները կրոնական ծիսակատարություններին հիմնականում մասնակցում են տարեկան

պարբերականությամբ՝ 36,9%-ը, ամիսը մեկ՝ 28,9%-ը և շաբաթը մեկ՝ 13,5%-ը:

Տղամարդկանց համեմատ կրոնական ծիսակատարություններին մասնակցության համեմատաբար բարձր ակտիվություն ունեն կանայք: Այսպես, հանրապետությունում կանանց ամսական մասնակցությունը կրոնական ծիսակատարություններին կազմում է 31,7%, որը 7,3 տոկոսային կետով գերազանցում է տղամարդկանց ակտիվությունը:

Ավելի բարձր է այս տարբերությունը կրոնական ծիսակատարություններին շաբաթական մասնակցության հետ կապված: Կանանց մասնակցությունը կազմում է 16,9%, տղամարդկանց 7,9%-ի դիմաց:

Այս հարցադրմանը տրված պատասխանների տարածաշրջանային գնահատումները ցույց են տալիս, որ կրոնական ծիսակատարումներին առավել հետևողական մասնակցություն ունեն Երևան քաղաքում բնակվող 50+ տարիքի անձինք և նրանց 50- տարիքի զուգընկերները՝ շաբաթը մեկ՝ 9,8%, ամիսը մեկ՝ 33,3%, ինչպես նաև Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում՝ 10,3% և 20,7% համապատասխանաբար:

Նշենք, որ այս վերջին երեք մարզերում բարձր է նաև կրոնական ծիսակատարություններին տղամարդկանց մասնակցության ակտիվությունը: Այն 7%-ով գերազանցում է կանանց ակտիվությունը՝ 50,1%, կանանց 43%-ի դիմաց:

Հանրապետությունում երբեք չեն մասնակցում կրոնական ծիսակատարություններին 50+ տարիքի անձանց 28,6%-ը: Մասնակցության վերաբերյալ բացասական պատասխանների ամենաբարձր տոկոսային պարունակություն ունեն Կոտայք, Տավուշ և Գեղարքունիք տարածաշրջանի 50+ տարիքի անձանց պատասխանները՝ 42,1%:




«Երեխայի ծննդյան հետ կապված՝ կարևոր է կատարել նաև կրոնական արարողությունը» պնդմանը տրված տարբեր տարիքի կանանց և տղամարդկանց պատասխանների դիտարկումը ցույց է տալիս, որ հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի զուգընկերների 81,6%-ը համաձայն են այս պնդման հետ:


Բացասական պատասխաններ են տվել տղամարդկանց 14,9%-ը, կանանց՝ 9%-ը, այսինքն զիջում են դրական պատասխաններին 6 անգամ և ավելի:

Այս ծիսակատարությունը համեմատաբար ցածր ընդգրկում ունի Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի 50+ տարիքի 65,6% բնակչության շրջանում: Հիմնականում այսպիսի մոտեցումը պայմանավորված է բարձր տարիքային խմբերում գտնվող հարցվողների դրական պատասխանների համեմատաբար ցածր տոկոսային պարունակությամբ: Նշված տարածաշրջաններում 50-ից ցածր տարիքի զուգընկերների դրական պատասխանները կազմել են 100%:

Մյուս տարածաշրջաններում այս պնդմանը մոտավորապես նույնատիպ գնահատականներ են տրվել:

«Ամուսնությունը զրանցելուց բացի՝ կարևոր է նաև իրականացնել կրոնական հարսանեկան արարողությունը» պատասխաններն ունեն հետևյալ բաշխումները.









Վերևում բերված դիտարկումը ցույց է տալիս, որ հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 80%-ը (լիովին համաձայն են 37,5% և համաձայն են 42,5%) համաձայն են այս պնդման հետ: Ավելի բարձր տոկոսային պարունակություններ ունեն 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների դրական պատասխանների համախմբերը՝ 87,7%, 44,5% և 43,2% համապատասխանաբար:

Ամուսնությունը գրանցելուց բացի կրոնական հարսանեկան արարողության կատարման ծիսակատարությունը համեմատաբար ցածր ընդգրկում ունի Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում՝ 65,5%: Հիմնականում այսպիսի մոտեցումը պայմանավորված է 55-59 և 60-64 տարիքային խմբերում գտնվող հարցվողների դրական պատասխանների համեմատաբար ցածր տոկոսային պարունակությամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 13,5% և 13,2%:

Մյուս տարածաշրջաններում մոտավորապես նույնատիպ գնահատականներ են տրվել այս արարողության կատարման անհրաժեշտությանը:

Հանրապետությունում կրոնական արարողություններ կատարվում են նաև թաղումների ժամանակ: Հարցաշարում ներառված այն պնդմանը, թե «**Թաղման ժամանակ կարևոր է նաև պահպանել կրոնական արարողակարգը**» տրված պատասխանները հանրապետության տարածաշրջաններում ունեն հետևյալ բաշխումները, որոնք ներկայացված են ստորև.





Ինչպես երևում է վերևում բերված պատասխանների տոկոսային պարունակություններից, հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի զուգընկերների 75,6%-ը համաձայն են այս պնդման հետ:

Բացասական պատասխաններ են տվել տղամարդկանց 14,9%-ը, կանանց՝ 9,9%-ը, այսինքն՝ զիջում են դրական պատասխաններին համապատասխանաբար 5,5 և 8 անգամ:

Ինչպես ցույց են տալիս այս պնդմանը տարածաշրջաններում տրված պատասխանների

համախմբերի տվյալները, ծիսակատարությունը համեմատաբար ցածր ընդգրկում ունի Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի 50+ տարիքի 65,6% բնակչության շրջանում: Հիմնականում այսպիսի մոտեցումը պայմանավորված է բոլոր տարիքային խմբերում գտնվող հարցվողների դրական պատասխանների համեմատաբար ցածր տոկոսային պարունակությամբ: Այս տարածաշրջանում 50-ից ցածր տարիքի զուգընկերների դրական պատասխանները կազմել են 0%: Մյուս տարածաշրջաններում այս պնդմանը տրված դրական պատասխաններն ընկած են 75-80% միջակայքում:

Բոլոր տարիքային խմբերում տրված դրական պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ բոլոր տարածաշրջանների բարձր տարիքային խմբերում գտնվող բնակչությունը առավել հակված է թաղման ժամանակ կրոնական ծիսակատարումների կատարմանը, որը հասկանալի միտում է քրիստոնյա մեծահասակների համար, քանի որ բնակչության այս շերտերը մոտ են երկրային կյանքին հրաժեշտ տալուն:

Ամփոփելով կրոնական ծիսակատարումների վերաբերյալ տարածաշրջանների 50+ տարիքի բնակչության մոտեցումները՝ կարող ենք արձանագրել, որ համեմատաբար ցածր դրական տոկոսային պարունակություն ունեն Լոռվա, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում տրված պատասխանները: Մնացած տարածաշրջաններում բնակչության դիրքորոշումը մոտավորապես նույն մակարդակում է:

Հաջորդ խումբ կազմող հարցադրումները վերաբերում են տարածաշրջանների 50+ տարիքի բնակչության կենսակերպին և շրջապատում իր անձի վերաբերյալ մոտեցումների ինքնազնահատմանը:

«Ես ճանաչում եմ բազմաթիվ մարդկանց, որոնց կարող եմ դիմել խնդիրներ առաջանալու դեպքում» հարցին տրված պատասխանների տոկոսային պարունակություններից երևում է, որ հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի զուգընկերների 43,95%-ը գտնում են, որ շրջապատում ճանաչում են բազմաթիվ մարդկանց, որոնց կարող են դիմել խնդիրներ առաջանալու դեպքում: Ավելի ցածր տոկոսային պարունակություններ ունեն 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի զուգընկերների պատասխանները՝ 33,5%:

Բացասական պատասխաններ են տվել 50+ տարիքի տղամարդկանց 20,11%-ը, կանանց՝ 23%-ը:

Տարածաշրջաններում այս պնդումը համեմատաբար ցածր տոկոսային պարունակություն ունի Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի՝ 24,75% և ամենաբարձր՝ 54,85%, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի 50+ տարիքի բնակչության շրջանում: Այս հարցում կանայք զգալիորեն զիջում են տղամարդկանց:

Ուսումնասիրությունների ընթացքում նույն հարցադրմանը պատասխանել են նաև ընտանիքի կազմում գտնվող զուգընկերները, որոնց պատասխանները երբեմն տարբերվել են: Այս իրողության հետ կապված անհրաժեշտություն էր առաջացել կազմել զույգերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան, որը բերված է **մատրիցա 12.1-ում**:

Մատրիցայի առաջին հատվածում բերված են Հայաստանի Հանրապետությունում 50+ տարիք ունեցող անձանց կշռված թվաքանակները, իսկ երկրորդ հատվածում բերված են նույն հարցին տրված պատասխանների երեք տարբերակների տոկոսային պարունակությունները, որոնց տրվել են տարբեր գունային երանգավորումներ: Մատրիցայում բերված թվերի զույգերը համապատասխանում են հարցվողների կողմից տրվող պատասխանների

համապատասխանության աստիճաններին: Այդ աստիճանները ներկայացված են առանձին սանդղակով, որն անվանվել է «**վիճակի սանդղակ**»: Այս սանդղակում տարբերակվել են թվով հինգ իրավիճակներ՝

Վիճակի սանդղակը	
0,00	Խիստ բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ մեկի մոտ
0,00	Դրական՝ զույգի մոտ
0,00	Խիստ դրական՝ զույգի մոտ

Այսպես, «**շրջապատում ճանաչում են բազմաթիվ մարդկանց, որոնց կարող են դիմել խնդիրներ առաջանալու դեպքում**» պնդմանը տրված պատասխաններում լիակատար համընկել են ՀՀ-ում 50+ տարիք ունեցող զույգերի 31,76%-ի մոտ: Այլ խոսքերով ասած, հանրապետության 50+ տարիք ունեցող զույգերի 248715 կշռված քանակից 78982 զույգերի մոտ պատասխանների համապատասխանությունը գնահատվել է խիստ դրական՝ զույգի մոտ (Տես՝ վիճակի սանդղակի ստորին աստիճանն իր երանգավորումով):

Մատրիցա 12.1

		Կանայք				Չույգերի մոտ %		
		1	2	3		1	2	3
Տղամարդիկ	1	78982	26548	5439	ԳՂ-ում կշռված քանակը	31,76	10,67	2,19
	2	16067	57925	14329		6,46	23,29	5,76
	3	3649	11537	34239		1,47	4,64	13,77
Ընդամենը					248715			

Այս նույն հարցադրմանը տղամարդկանց և կանանց կողմից տրված «**Հավաստի չէ**» պատասխանները միանշանակ չեն համընկել զույգերի 13,77%-ի մոտ, որը վիճակի սանդղակում գնահատվել է որպես «**խիստ բացասական՝ զույգի մոտ**»:

«**Կան ոչ քիչ թվով մարդիկ, որոնց նկատմամբ դուք լիահույս եք**» հարցին հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի զուգընկերների 54,22%-ը պատասխանել են, որ շրջապատում կան ոչ քիչ թվով մարդիկ, որոնց նկատմամբ լիահույս են: Շրջապատի նկատմամբ ավելի ցածր վստահություն ունեն 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի զուգընկերները: Դրական են պատասխանել նրանց 38,93%-ը:

Այս պնդմանը դրական են արտահայտվել և համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտն տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի անձանց պատասխանները՝ 56,05%:

Շրջապատող մարդկանց նկատմամբ վստահություն չունեն և հարցադրմանը բացասական պատասխաններ են տվել 50+ տարիքի տղամարդկանց 16,28%-ը, կանանց՝ 22,52%-ը:

Ինչպես ցույց են տալիս տարածաշրջաններում տրված պատասխանների համախմբերի տվյալները այս պնդումը համեմատաբար ցածր տոկոսային պարունակություն ունի Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի 50+ տարիքի բնակչության շրջանում՝ 32,45%: Այս հարցում ևս կանայք զգալիորեն զիջում են տղամարդկանց:

Այս հարցադրմանը պատասխանել են նաև ընտանիքի կազմում գտնվող զուգընկերները, որոնց պատասխաններում դիտվել են մոտեցումների ինչպես համընկնումներ, այնպես էլ

տարբերություններ: Այս իրողության հետ նույն տրամաբանությամբ և մոտեցումներով կազմվել է ընտանիքում զույգերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և վիճակի սանդղակը, որը բերված է ստորև.

Մատրիցա 12.2

		Կանայք			ԳՂ-ում կշռված քանակը	Զույգերի մոտ %		
		1	2	3		1	2	3
Տղամարդիկ	1	82241	33126	3737	248714	33,07	13,32	1,50
	2	19801	58375	10705		7,96	23,47	4,30
	3	4221	11658	24850		1,70	4,69	9,99
Ընդամենը					248714			

Վիճակի սանդղակը	
0,00	Խիստ բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ մեկի մոտ
0,00	Դրական՝ զույգի մոտ
0,00	Խիստ դրական՝ զույգի մոտ

Ինչպես երևում է մատրիցայից, նույն հարցադրմանը տրված պատասխանների տարբերակներից, զույգերի պատասխանները լիակատար համընկել են 33,07%-ի մոտ և չեն համընկել 10%-ի մոտ:

«Ես դատարկություն եմ զգում» հարցադրմանը հարցվողների կողմից տրված պատասխանների համախմբերը ցույց են տալիս, որ հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի զուգընկերների 9,87%-ը հարցադրմանը տվել են դրական պատասխան, ընդ որում՝ բարձր են 65-69 տարիքային շերտում գտնվող տղամարդկանց պատասխանները՝ 15,06 % և 75 տարեկանից բարձրների մոտ՝ 13,9%:

Այս բացասական ցուցանիշը ավելի բարձր է 70-74 տարեկան կանանց մոտ, անցնելով 20%-ի սահմանագծից:

Այս մարդիկ փաստորեն գտնվում են հոգեբանական դեպրեսիայի մեջ և կարելի է ենթադրել, որ նրանք հակված են ինքնամեկուսացման ինչպես ընտանիքում, այնպես էլ մերձավորների հետ շփումներից և շրջապատից:

Ավելի բարձր տոկոսային պարունակություններ ունեն 50+ տարիքի կանանց և նրանց 50-տարիքի զուգընկերների կողմից նույն հարցադրմանը տրված պատասխանները՝ 12,67%:

Այս պնդմանը տրված դրական պատասխաններում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց՝ 14,62% և կանանց՝ 16,3% տեսակարար կշիռները:

Հանրապետությունում այս հարցադրմանը բացասական պատասխաններ են տվել տղամարդկանց 68,07%-ը, կանանց՝ 58,16%-ը:

Ինչպես ցույց են տալիս տարածաշրջաններում տրված պատասխանների համախմբերի տվյալները, այս բացասական երևույթը համեմատաբար ցածր տոկոսային պարունակություն ունի Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի 50+ տարիքի տղամարդկանց՝ 4,94%-ի և կանանց 9,31%-ի մոտ:

Այս հարցադրմանը պատասխանել են նաև ընտանիքի կազմում գտնվող զուգընկերները,

որոնց պատասխաններում դիտվել են մոտեցումների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ:

Այս իրողության հետ նույն տրամաբանությամբ և մոտեցումներով կազմվել է ընտանիքում զույգերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և վիճակի սանդղակը, որը բերված է ստորև.

Մատրիցա 12.3

		Կանայք			ԳՂ-ում կշռված քանակը	Զույգերի մոտ %		
		1	2	3		1	2	3
Տղամարդիկ	1	9710	7081	7466		3,90	2,85	3,00
	2	3451	25763	21123		1,39	10,36	8,49
	3	7222	24865	142034		2,90	10,00	57,11
Ընդամենը					248715			

Վիճակի սանդղակը	
0,00	Խիստ բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ մեկի մոտ
0,00	Դրական՝ զույգի մոտ
0,00	Խիստ դրական՝ զույգի մոտ

Ինչպես երևում է մատրիցայից, այս հարցադրմանը տրված պատասխանների տարբերակներից, զույգերի պատասխանները լիակատար համընկել են զույգերի 57,11%-ի մոտ և չեն համընկել 3,90%-ի մոտ:

«Ես հաճախ եմ ինձ մերժված զգում» հարցվողների կողմից տրված պատասխանների տոկոսային պարունակություններից հետևում է, որ հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի զուգընկերների 9,06%-ը հաճախ շրջապատում իրենց մերժված են զգում:

Ավելի բարձր տոկոսային պարունակություններ ունեն 50+ տարիքի կանանց և նրանց 50-տարիքի զուգընկերների կողմից նույն հարցադրմանը տրված պատասխանները՝ 12,61%:

Դրական պատասխաններում համեմատաբար բարձր տեսակարար կշիռ ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց՝ 12,76%-ը և Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի կանանց՝ 17,04%-ը:

Հանրապետությունում այս հարցադրմանը միանշանակ բացասական պատասխաններ են տվել տղամարդկանց 69,19%-ը, կանանց՝ 61,73%-ը:

Այս բացասական երևույթը համեմատաբար ցածր տոկոսային պարունակություն ունի Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի 50+ տարիքի տղամարդկանց շրջանում՝ 2,95 %:

Կանանց շրջանում հանրապետությունում ամենացածր տեսակարար կշիռ արձանագրվել է Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջաններում՝ 9,41%:

Այս հարցադրմանը տրված զուգընկերների պատասխաններում ևս դիտվել են անհատական գնահատումների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ: Այս իրողության հետ նույն տրամաբանությամբ և մոտեցումներով կազմվել է ընտանիքում զույգերի

տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և վիճակի սանդղակը, որը բերված է ստորև.

Մատրիցա 12.4

	Կանայք			ԳՂ-ում կշռված քանակը	Ձույգի մոտ %		
	1	2	3		1	2	3
Տղամարդիկ	1	9363	7114	5845	3,76	2,86	2,35
	2	8506	26271	18045	3,42	10,56	7,26
	3	5229	15258	153084	2,10	6,13	61,55
Ընդամենը				248715			

Վիճակի սանդղակը	
0,00	Խիստ բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ մեկի մոտ
0,00	Դրական՝ զույգի մոտ
0,00	Խիստ դրական՝ զույգի մոտ

Ինչպես երևում է մատրիցայից, հարցադրմանը տրված պատասխանների տարբերակներից զույգերի պատասխանները լիակատար համընկել են 61,55%-ի մոտ և չեն համընկել 3,76%-ի մոտ:

«**Ես զգում եմ ինձ շրջապատող մարդկանց պակասության կարիք**» հարցվողների կողմից տրված պատասխանների տոկոսային պարունակություններից հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի զուգընկերների 11,15%-ը գտնում են, որ զգում են իրենց շրջապատող մարդկանց պակասության կարիք:

Այս հարցադրմանը տրված պատասխաններում ավելի բարձր տոկոսային պարունակություններ ունեն հանրապետության 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի զուգընկերները՝ 15,77%:

Շրջապատող մարդկանց պակասության առավել մեծ զգացում ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց՝ 16,6%-ը և Երևան քաղաքում բնակվող 50+ տարիքի կանանց՝ 17,86%-ը: Շրջապատող մարդկանց առավել պակասություն ունեն Երևանում բնակվող 70-74 տարիքային շերտում գտնվող կանանց 23,92%-ը և 75 տարեկանից բարձր կանանց 26,59%-ը:

Տարեց բնակչության սոցիալականացման տեսանկյունից այս բացասական երևույթի առկայությունը, որը լայն տարածում ունի հանրապետության բոլոր տարածաշրջաններում բնակվող հատկապես բարձր տարիքային շերտերում գտնվող կանանց շրջանում, լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ ոչ միայն Հայաստանում, այլև բոլոր երկրներում կանայք ավելի երկար են ապրում ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված և նրանց թվաքանակը զգալիորեն գերազանցում է նույն տարիքային խմբերում գտնվող տղամարդկանց թվաքանակին: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ նշված գենդերային առանձնահատկության հետ կապված հասարակության մեջ տարեց կանանց ինտեգրացման խնդիրը առկա է հանրապետությունում և պետական ռազմավարության մեջ, և այն իր արտացոլումը պետք է գտնի:

Բարձր տարիքային շերտերում գտնվող տղամարդկանց համար այս երևույթը ավելի թույլ է արտահայտված գրեթե բոլոր տարածաշրջաններում: Այս տեսակետից բացառություն են կազմում

Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 75 տարեկանից բարձր տղամարդիկ, որոնց 22,53%-ի պատասխաններում արձանագրվել է շրջապատող մարդկանց կարիք:

Հանրապետությունում այս հարցադրմանը միանշանակ բացասական պատասխաններ են տվել տղամարդկանց 60,12%-ը, կանանց՝ 53,11%-ը:

Ինչպես ցույց են տալիս տարածաշրջաններում տրված պատասխանների համախմբերի համեմատական գնահատումները, այս բացասական երևույթը համեմատաբար ցածր տոկոսային պարունակություն ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում՝ 7,21%, ինչպես նաև Երևան քաղաքի 50+ տարիքի տղամարդկանց շրջանում՝ 8,97%:

Կանանց շրջանում հարցադրմանը տրված դրական պատասխանների ամենացածր տեսակարար կշիռ արձանագրվել է Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում, որտեղ այն կազմել է 13,44%:

Այս հարցադրմանը տրված գույքընկերների պատասխաններում ևս դիտվել են անհատական գնահատումների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ:

Այս իրողության հետ նույն տրամաբանությամբ և մոտեցումներով կազմվել է ընտանիքում գույգերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և վիճակի սանդղակը, որը բերված է ստորև.

Մատրիցա 12.5

Մատրիցա 12.5								
		Կանայք			ՀՀ ընդհանուր կշռված քանակը	Զույգի մոտ %		
		1	2	3		1	2	3
Տղամարդիկ	1	11027	9350	5272	248715	4,43	3,76	2,12
	2	9991	35691	23598		4,02	14,35	9,49
	3	4892	19514	129380		1,97	7,85	52,02
Ընդամենը								

Վիճակի սանդղակը	
0,00	Խիստ բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ զույգի մոտ
0,00	Բացասական՝ մեկի մոտ
0,00	Դրական՝ զույգի մոտ
0,00	Խիստ դրական՝ զույգի մոտ

Մատրիցայից հետևում է, որ հարցադրմանը տրված պատասխանների տարբերակներից գույգերի պատասխանները լիակատար համընկել են գույգերի 52,02%-ի մոտ և չեն համընկել 4,43%-ի մոտ:

Երկրի տարեց բնակչության սոցիալիզացիայի ցածր մակարդակի առկայության պատճառահետևանքային կապի բացահայտման նպատակով հարցաշարի մեջ ներառվել են առանձին խումբ կազմող պնդումներ, որոնք խմբավորվել են **«Եթե համարում եք, որ մեկուսացված եք հասարակությունից, ապա ինչու եք արտահայտվում այդ մեկուսացումը»** հարցադրման մեջ: Այդ պնդումներն ունեցել են հետևյալ բովանդակությունները՝

1. Հաշվի չեն առնվում իմ արտահայտած կարծիքը և դիտողությունները ընտանիքում:
2. Չի ընդունվում արտահայտած կարծիքը շրջապատի կողմից:
3. Դժկամությամբ է ընդունվում իր ներկայությունը միջոցառման մասնակիցների կողմից:

4. Չեն հրավիրում համայնքում կենսաթոշակառուների համար կազմակերպած միջոցառումներին:

5. Ընկերներս խուսափում են հանդիպել ինձ հետ:

6. Չեն համակերպվում արժեքային համակարգում, վերջին տարիներին, տեղի ունեցած փոփոխություններին:

Ներկայացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հանրապետությունում ամենաբարձր տոկոսային պարունակություն ունի «**հաշվի չի առնվում կարծիքը շրջապատում**» պնդումը՝ 57,04%, երկրորդ տեղում է «**հաշվի չի առնվում կարծիքը ընտանիքում**»՝ 35,73% և երրորդում՝ «**համայնքի միջոցառումներին չեն հրավիրում**»՝ 25%:

Հատկանշական է, որ ամենացածր տոկոսային գնահատականն ստացել է «**ընկերները խուսափում են հանդիպելուց**» պնդումը: Այսինքն՝ տարեցների գերակշիռ հատվածը շփվում է իր միկրոմիջավայրում գտնվող ընկերների հետ, որը սակայն անբավարար է հասարակության մեջ ինտեգրման ներքին պահանջների բավարարվածության համար:

Վերևում բերված պնդումների ամփոփ գնահատումը ցույց է տալիս ավագ սերնդի բնակչության նկատմամբ հասարակության, այդ թվում նաև համայնքային մարմինների կողմից ուշադրության ցածր մակարդակի առկայությունը: Այս երևույթը ևս պետք է լուրջ քննարկումների առարկա դառնա և ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ իրավիճակը շտկելու ուղղությամբ:

Հասարակության տարեց անդամների կենսապահովման և երկրային կյանքի բավարար պայմանների ապահովումը նրանց ընտանիքների անդամների և, առաջին հերթին, զավակների պարտականությունն է: Հայաստանի Հանրապետությունում տնտեսության ազատականացման ընթացքում լրջագույն փոփոխություններ են տեղի ունեցել ընտանեկան արժեքային համակարգում: Եվրոպական արժեքների զանգվածային ներթափանցումը հանրապետությունը բերեց հայ ավանդական ընտանիքում դերակատարումների զգալի փոփոխությունների, որը չէր կարող չազդել ընտանիքի տարեց անդամների ավանդական համարվող ընտանիքի գլխավորի դերակատարման վրա:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը և տեղի ունեցած պրոցեսների գնահատման նպատակով հարցաշարում ներառվել են պնդումներ, որոնցում կարևորվել են հարցվողների կարծիքները ընտանեկան արժեքների վերաբերյալ:

«Ամուսնությունը հարաբերությունների հնացած տարբերակ է»:

Այս պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 85,11%-ը և կանանց 82,5%-ը: Այս պնդմանը համաձայն են 50+ տարիքի տղամարդկանց 7,88%-ը և կանանց 10,37%-ը: Այսինքն, կանայք ավելի լոյալ դիրքորոշում ունեն հայկական ավանդական ընտանիքին անհարիր այս պնդման հետ:

Այս պնդման հետ կապված առավել պահպանողական դիրքորոշում ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի կանայք: Այս պնդումը դրական է գնահատվել նրանց 0,54%-ի և մերժվել է 85,7%-ի կողմից:

Տղամարդկանց շրջանում այս պնդման հետ կապված հանրապետությունում առավել կոշտ դիրքորոշում ունեն Երևանում բնակվող 50+ տարիքի տղամարդիկ: Նրանց կողմից մերժողական պատասխանները գերազանցում են հանրապետական միջին գնահատմանը և կազմում են 86,9%:

Այս պնդմանը տրված զուգընկերների պատասխաններում ևս դիտվել են անհատական գնահատումների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ:

Այս իրողության հետ կապված կազմվել է ընտանիքում զույգերի տված պատասխանների

համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և դիրքորոշումների սանդղակը, որը բերված է ստորև:

Մատրիցա 12.6

Կենսաձևի հաստատումներ											
	Տանայք					ԳՂ-ում կշռված քանակը	Զույգերի մոտ %				
	1	2	3	4	5		1	2	3	4	5
Տղամարդիկ	1	2646	1266	3825	153	0	1,06	0,51	1,54	0,06	0,00
	2	612	6222	4568	0	0	0,25	2,50	1,84	0,00	0,00
	3	4351	8118	108607	19913	2364	1,75	3,26	43,67	8,01	0,95
	4	2297	1533	28132	37769	1364	0,92	0,62	11,31	15,19	0,55
	5	339	1945	7782	1314	3594	0,14	0,78	3,13	0,53	1,45
Ընդամենը						248714					

Դիրքորոշման սանդղակը	
0,00	Երկկողմանի խիստ համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը համաձայնություն
0,00	Երկկողմանի համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը անհամաձայնություն
0,00	Երկկողմանի անհամաձայնություն
0,00	Երկկողմանի խիստ անհամաձայնություն
0,00	Հակասություններ
0,00	Անհամաձայն-չկողմնորոշված
0,00	Համաձայն-չկողմնորոշված
0,00	Երկկողմանի չկողմնորոշված

Այստեղ բարձր տոկոս են կազմել զույգերի երկկողմանի անհամաձայնությունները: Այսպես, «ամուսնությունը հարաբերությունների հնացած տարբերակ է» պատասխանների երրորդ տարբերակում «**համաձայն չեն**» պատասխանների անհամաձայնություն է եղել զույգերի 43,67%-ի միջև:

Անհամաձայնության տեսակետից երկրորդ տեղում է զույգերի կողմից տրված «**բոլորովին համաձայն չեն**» պատասխանը՝ 15,19%:

«**Դա նորմալ է, երբ չամուսնացած զույգը ապրում է միասին, նույնիսկ եթե նրանք չեն պլանավորում ամուսնանալ**» պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 67,5%-ը և կանանց 70,3%-ը: Այս պնդմանը համաձայն են 50+ տարիքի տղամարդկանց 20,4%-ը և կանանց 20,1%-ը: Այսինքն, սեռերի միջև առկա է այս պնդման վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքների համապատասխանություն:

Այս պնդմանը հանրապետությունում առավել դրական դիրքորոշում են ցուցաբերել Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող ինչպես տղամարդիկ՝ 27,63%, այնպես էլ կանայք՝ 22,35%:

«**Դա նորմալ է, երբ չամուսնացած զույգը ապրում է միասին, նույնիսկ եթե նրանք չեն պլանավորում ամուսնանալ**» պնդման հետ կապված, հանրապետությունում առավել կոշտ դիրքորոշում ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի և տղամարդիկ՝ 72,66%, և կանայք՝ 76,37%: Նրանց կողմից մերժողական պատասխանները գերազանցում են հանրապետական միջինը, տղամարդկանց մոտ՝ 5,2% և կանանց շրջանում 6,1%-ով:

Այս պնդմանը տրված զուգընկերների պատասխաններում դիտվել են անհատական կարծիքների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ: Այս իրողության հետ

կապված ընտանիքում գույգերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և դիրքորոշումների սանդղակը բերված է ստորև.

Մատրիցա 12.7

Կանայք												
		1	2	3	4	5	ՀՀ-ում կշռված քանակը	Ձույգերի մոտ %				
		1	2	3	4	5		1	2	3	4	5
Տղամարդիկ	1	3710	3490	1098	0	591	248715	1,49	1,40	0,44	0,00	0,24
	2	1418	26906	12156	1652	250		0,57	10,82	4,89	0,66	0,10
	3	1093	11772	78726	13989	3160		0,44	4,73	31,65	5,62	1,27
	4	2489	2935	20932	33047	4013		1,00	1,18	8,42	13,29	1,61
	5	472	2733		2696	11203		0,19	1,10	3,29	1,08	4,50
Ընդամենը							248715					

Դիրքորոշման սանդղակը	
0,00	Երկկողմանի խիստ համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը համաձայնություն
0,00	Երկկողմանի համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը անհամաձայնություն
0,00	Երկկողմանի անհամաձայնություն
0,00	Երկկողմանի խիստ անհամաձայնություն
0,00	Հակասություններ
0,00	Անհամաձայն-չկողմնորոշված
0,00	Համաձայն-չկողմնորոշված
0,00	Երկկողմանի չկողմնորոշված

Այստեղ ևս բարձր տոկոս են կազմել գույգերի երկկողմանի անհամաձայնությունները: Այսպես, «**դա նորմալ է, երբ չամուսնացած գույգը ապրում է միասին, մույնիսկ եթե նրանք չեն պլանավորում ամուսնանալ**» պնդման երրորդ տարբերակում «**համաձայն չեն**» պատասխանների անհամաձայնություն է եղել գույգերի 31,65%-ի միջև:

Անհամաձայնության տեսակետից երկրորդ տեղում է գույգերի 13,29%-ի կողմից հնարավոր պատասխանների թիվ 2՝ «**համաձայն են**», տարբերակին տրված պատասխանները, որը վիճակի սանդղակում ստացել է «Երկկողմանի անհամաձայնություն» գնահատականը:

«**Ամուսնությունը հարաբերություն է ամբողջ կյանքի համար, որը պետք չէ երբեք խզել**» պնդմանը համաձայն են 50+ տարիքի տղամարդկանց 62,6%-ը և կանանց 66%-ը: Այսինքն, սեռերի միջև առկա է այս պնդման վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքներ (միջինում 5% շեղումներ):

Այս պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 18,5%-ը և կանանց 23,5%-ը: Այսինքն, կանայք ավելի են հակված խզել ամուսնությունը, եթե դրա անհրաժեշտությունը կա:

Այս պնդմանը հանրապետությունում առավել դրական դիրքորոշում են ցուցաբերել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող ինչպես տղամարդիկ՝ 80,7%, այնպես էլ կանայք՝ 78,1%:

«**Ամուսնությունը հարաբերություն է ամբողջ կյանքի համար, որը պետք չէ երբեք խզել**» պնդման հետ համաձայն չեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 33%-ը և կանանց 27%-ը: Նրանց կողմից մերժողական պատասխանները գերազանցում են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց կարծիքները:

Այս պնդմանը տրված գույքընկերների պատասխաններում դիտվել են անհատական կարծիքների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ: Այս իրողության հետ կապված ընտանիքում գույքերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և դիրքորոշումների սանդղակը բերված է ստորև.

Մատրիցա 12.8

Գնահատման մատրիցա											
	Կանայք					ԳՂ-ում կշռված քանակը	Զույգերի մոտ %				
	1	2	3	4	5		1	2	3	4	5
Տղամարդիկ	1	39315	18742	3750	560	506	15,81	7,54	1,51	0,23	0,20
	2	18878	73486	10330	1211	3593	7,59	29,55	4,15	0,49	1,44
	3	2672	11030	29679	2428	2947	1,07	4,43	11,93	0,98	1,18
	4	1716	206	1744	4276	773	0,69	0,08	0,70	1,72	0,31
	5	2063	5392	5415	1541	6460	0,83	2,17	2,18	0,62	2,60
Ընդամենը						248713					

Դիրքորոշման սանդղակը	
0,00	Երկկողմանի խիստ համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը համաձայնություն
0,00	Երկկողմանի համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը անհամաձայնություն
0,00	Երկկողմանի անհամաձայնություն
0,00	Երկկողմանի խիստ անհամաձայնություն
0,00	Հակասություններ
0,00	Անհամաձայն-չկողմնորոշված
0,00	Համաձայն-չկողմնորոշված
0,00	Երկկողմանի չկողմնորոշված

Այս պնդման հետ կապված ևս առկա են գույքերի տարակարծություններ: Համեմատաբար բարձր տոկոս են կազմել գույքերի երկկողմանի խառը անհամաձայնությունները՝ 29,55%:

Կարծիքների անհամապատասխանության տեսակետից երկրորդ տեղում է գույքերի 12%-ի կողմից «ամուսնությունը հարաբերություն է ամբողջ կյանքի համար, որը պետք չէ երբեք խզել» պնդման «համաձայն չեմ» պատասխանի տարբերակը, որի հետ կապված գույքերն ունենցել են «Երկկողմանի խիստ անհամաձայնություն»:

«Եթե գույքը երջանիկ չէ ամուսնությամբ, ապահարգանք լիովին ընդունելի է, եթե նույնիսկ ընտանիքում կան երեխաներ» պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 33%-ը և կանանց 30,33%-ը: Այս պնդմանը համաձայն են 50+ տարիքի տղամարդկանց 50,4%-ը և կանանց 53%-ը: Այսինքն, սեռերի միջև առկա է այս պնդման վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքների համապատասխանություն: Այս վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանրապետության բնակչության կյանքում տեղի են ունեցել ընտանեկան ավանդույթային արժեքների զգալի փոփոխություններ: Որպես կանոն, հայ ընտանիքում երեխաների առկայությունը եղել է այն հիմնական արգելքը, որը խանգարել է ընտանիքների քայքայմանը: Երեխաների առկայության գործոնն այն բաժանարար գիծն է հանդիսացել, որով հիմնականում տարբերվում են եվրոպական և ասիական ընտանիքները: Հանրապետությունում այդ բաժանարար գիծը ընդամենը 20%-ից էլ պակաս մակարդակում է գտնվում:

Փաստորեն, մենք ակնառես ենք լինում տխուր իրողության: Եթե հանրապետության ավագ սերնդի կեսից ավելի հատվածը գտնում է, որ երեխաները չեն կարող լինել ընտանիքի

ամրության հիմք, ապա դժվար չէ տխուր կանխատեսումներ անել ավելի երիտասարդ սերնդի կողմից ընտանիքի ինստիտուտի ամրության դիրքորոշումների վերաբերյալ: Ասվածը հիմնավորվում է նաև հանրապետությունում ամուսնալուծությունների թվաքանակի աճի միտումների վերաբերյալ վիճակագրական տվյալներով:

Հայկական ընտանիքներում դեռևս կարևոր դերակատարում ունեն ընտանիքի գլխավորը հանդիսացող տարեցները, մասնավորապես, զավակների ընտանիքների ամրության ապահովման հարցադրումներով: Ընտանիքի ինստիտուտի կայունացման հարցադրումներով ևս անհրաժեշտ է ինչպես հասարակական կարծիքի ձևավորում, այնպես էլ, հատկապես երիտասարդ ընտանիքներին, պետական աջակցության տրամադրում: Ամուսնալուծությունների հիմքում շատ հաճախ ընկած են սոցիալական հիմնախնդիրներ: Այս կարևորագույն միջոցառումը ևս պետք է լինի պետության ուշադրության կենտրոնում:

«Եթե զույգը երջանիկ չէ ամուսնությամբ, ապահարզանը լիովին ընդունելի է, եթե նույնիսկ ընտանիքում կան երեխաներ» պնդմանը հանրապետությունում առավելապես հակված են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող տղամարդկանց 59,1%-ը, կանանց 62,2%-ը:

Այս պնդման հետ կապված առավել պահպանողական դիրքորոշում ունեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի 50+ տարիքի կանայք՝ 35,44%:

Այս պնդմանը տրված զուգընկերների պատասխաններում դիտվել են անհատական կարծիքների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ: Այս իրողության հետ կապված ընտանիքում զույգերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և դիրքորոշումների սանդղակը բերված է ներքևում.

Մատրիցա 12.9

		Կանայք						Զույգերի մոտ %				
		1	2	3	4	5		1	2	3	4	5
Տղամարդիկ	1	19147	7182	1639	0	811	ԳՂ-ում կշռված քանակը	7,70	2,89	0,66	0,00	0,33
	2	6090	63173	15893	2855	7494		2,45	25,40	6,39	1,15	3,01
	3	6539	20416	33946	4712	6156		2,63	8,21	13,65	1,89	2,48
	4	221	2503	3449	6675	4491		0,09	1,01	1,39	2,68	1,81
	5	2261	5703	9043	1978	16335		0,91	2,29	3,64	0,80	6,57
Ընդամենը							248712					

Դիրքորոշման սանդղակը	
0,00	Երկկողմանի խիստ համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը համաձայնություն
0,00	Երկկողմանի համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը անհամաձայնություն
0,00	Երկկողմանի անհամաձայնություն
0,00	Երկկողմանի խիստ անհամաձայնություն
0,00	Հակասություններ
0,00	Անհամաձայն-չկողմնորոշված
0,00	Համաձայն-չկողմնորոշված
0,00	Երկկողմանի չկողմնորոշված

Այս պնդման հետ կապված ևս առկա են զույգերի տարակարծություններ: Համեմատաբար բարձր տոկոս են կազմել զույգերի «Երկկողմանի համաձայնություն» դիրքորոշումը՝ 25,4%:

Կարծիքների անհամապատասխանության տեսակետից երկրորդ տեղում է զույգերի 13,65%-ի կողմից «**Եթե զույգը երջանիկ չէ ամուսնությամբ, ապահարզանը լիովին ընդունելի է, եթե նույնիսկ ընտանիքում կան երեխաներ**» պնդմանը «**համաձայն չեն**» պատասխանը:

«**Ամբողջական ինքնիրացման համար կինը պետք է երեխաներ ունենա**» պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 8,79%-ը և կանանց 8,67%-ը: Այս պնդմանը համաձայն են 50+ տարիքի տղամարդկանց 75,08%-ը և կանանց 75,11%-ը: Այսինքն, սեռերի միջև առկա է այս պնդման վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքների համապատասխանություն:

Հայկական ընտանիքներում ավագ սերնդի ներկայացուցիչները կարևորում են երեխաների առկայությունը և շատ հաճախ երիտասարդ ընտանիքները քայքայվում են երեխաներ չունենալու պարագայում:

«**Ամբողջական ինքնիրացման համար կինը պետք է երեխաներ ունենա**» պնդմանը հանրապետությունում առավելապես հակված են Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 59,1%-ը, կանանց 87%-ը:

Այս պնդմանը տրված զուգընկերների պատասխաններում դիտվել են անհատական կարծիքների ինչպես համընկնումներ, այնպես էլ տարբերություններ, որոնք որակ չեն կազմում: Չույգերի տված պատասխանների համապատասխանությունների և տարբերությունների գնահատման մատրիցան և դիրքորոշումների սանդղակը բերված է ստորև.

Մատրիցա 12.10

Կանայք												
		1	2	3	4	5	ԳՂ-ում կշռված քանակը	Զույգերի մոտ %				
		1	2	3	4	5		1	2	3	4	5
Տղամարդիկ	1	50581	16649	0	0	1383	ԳՂ-ում կշռված քանակը	20,34	6,69	0,00	0,00	0,56
	2	21687	84030	8690	140	4923		8,72	33,79	3,49	0,06	1,98
	3	1187	6332	8775	310	2194		0,48	2,55	3,53	0,12	0,88
	4	221	531	1292	969	501		0,09	0,21	0,52	0,39	0,20
	5	4224	7792	3368	1082	21854		1,70	3,13	1,35	0,44	8,79
Ընդամենը							248715					

Դիրքորոշման սանդղակը	
0,00	Երկկողմանի խիստ համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը համաձայնություն
0,00	Երկկողմանի համաձայնություն
0,00	Երկկողմանի խառը անհամաձայնություն
0,00	Երկկողմանի անհամաձայնություն
0,00	Երկկողմանի խիստ անհամաձայնություն
0,00	Հակասություններ
0,00	Անհամաձայն-չկողմնորոշված
0,00	Համաձայն-չկողմնորոշված
0,00	Երկկողմանի չկողմնորոշված

Այս պնդման հետ կապված զույգերի տարակարծություններ գրեթե չկան:

«**Ամբողջական ինքնիրացման համար տղամարդը պետք է երեխաներ ունենա**» պնդմանը համաձայն են 50+ տարիքի տղամարդկանց 72,52%-ը և կանանց 70%-ը: Այս պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց 12%-ը: Այսինքն, սեռերի միջև առկա է այս պնդման վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքների լիակատար համապատասխանություն:

«Ամբողջական ինքնիրացման համար տղամարդը պետք է երեխաներ ունենա» պնդմանը հանրապետությունում առավելապես հակված են Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 94%-ը և կանանց 84,5%-ը:

Այս պնդումը ամենաբարձր բացասական տոկոսային պարունակությամբ պատասխաններ է ստացել Երևան քաղաքում: Բացասական պատասխան են տվել 50+ տարիքի տղամարդկանց 18,63%-ը և կանանց 18,43%-ը:

«Որպեսզի երեխան երջանիկ մեծանա, նրան հարկավոր է տուն, որտեղ կան և հայրը և մայրը» պնդման հետ համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 95,04%-ը և կանանց 93,54%-ը: Այս պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 2%-ը և կանանց՝ 2,5%-ը: Այսպիսով, սեռերի միջև առկա է այս պնդման վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքների համապատասխանություն:

«Որպեսզի երեխան երջանիկ մեծանա, նրան հարկավոր է տուն, որտեղ կան և հայրը և մայրը» պնդմանը հանրապետությունում առավելապես հակված են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 98,86%-ը, կանանց 95,83%-ը:

Այս պնդումը ամենաբարձր բացասական տոկոսային պարունակությամբ պատասխաններ է ստացել Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց մոտ՝ 5,05%-ը: Իսկ կանանց շրջանում՝ Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանի՝ 3,69 %-ը:

«Կինն իրավունք ունի երեխա ունենալ, եթե անգամ նա չի պատրաստվում մշտական հարաբերություններ հաստատել տղամարդու հետ» պնդմանը դրական պատասխաններ են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 37,7%-ը, կանանց 38,7%-ը, բացասական պատասխան են տվել տղամարդկանց 45,2%-ը և կանանց 45,4%-ը:

Այս պնդումը ամենաբարձր բացասական տոկոսային պարունակությամբ պատասխաններ է ստացել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 56,52%-ը, ինչպես նաև կանանց շրջանում՝ 58,93%-ը:

«18-20 տարեկան հասակից երեխաները պետք է սկսեն ինքնուրույն ապրել» պնդման հետ համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 26,2%-ը և կանանց 28,2%-ը: Այս պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 43,9%-ը և կանանց 43,6%-ը: Այսինքն, սեռերի միջև առկա է պնդման վերաբերյալ ինչպես դրական, այնպես էլ բացասական կարծիքների համապատասխանություն:

«18-20 տարեկան հասակից երեխաները պետք է սկսեն ինքնուրույն ապրել» պնդմանը հանրապետությունում առավելապես հակված են Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 40,8%-ը և Երևան քաղաքում բնակվող կանանց 38,1%-ը:

Այս պնդումն ամենաբարձր բացասական տոկոսային պարունակությամբ պատասխաններ է ստացել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 55,52%-ը, կանանց 58,93%-ը:

«Յուրաքանչյուր կին պետք է աշխատի 25 տարեկան հասակում ամուսնանալ և երեխա ունենալ» պնդման հետ համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 36%-ը և կանանց 28,6%-ը: Այս պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 48%-ը և կանանց 44,6%-ը:

«Յուրաքանչյուր կին պետք է աշխատի 25 տարեկան հասակում ամուսնանալ և երեխա ունենալ» պնդումը հանրապետությունում առավելագույն դրական պատասխաններ է ստացվել Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 41%-ի և Երևան քաղաքում բնակվող կանանց 43,24%-ի մոտ:

Այս պնդումը ամենաբարձր բացասական տոկոսային պարունակությամբ պատասխաններ է ստացել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 55,5%-ի մոտ, ինչպես նաև կանանց 59%-ի մոտ:

«Արդրտները /հղիության արհեստական ընդհատումները/ առանց բժշկական ցուցումների պետք է խիստ սահմանափակվեն կամ արգելվեն» պնդման հետ համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 68,15%-ը և կանանց 70,71%-ը: Այս պնդման հետ համաձայն չեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 15,9%-ը և կանանց 15,3%-ը:

Այս պնդումը հանրապետությունում առավելագույն դրական պատասխաններ է ստացել Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 68%-ի, ինչպես նաև Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող կանանց 80,1%-ի մոտ:

Այս պնդումն ամենաբարձր բացասական տոկոսային պարունակությամբ պատասխաններ է ստացել Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 19%-ի, ինչպես նաև կանանց 70,3%-ի մոտ:

Ընտանիքի ներսում «Ծնող-երեխա» փոխհարաբերությունների գնահատման նպատակով հարցաշարում ներառվել է հարցախումբ հարցվողների կարծիքների գնահատման համար:

Ներկայացնենք դրանք տրված յուրաքանչյուր հարցադրման համար:

«Պապիկներն ու տատիկները պետք է հոգ տանեն իրենց թոռնիկների մասին, եթե ծնողները չեն կարողանում դա անել» հարցմանը դրական են պատասխանել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 88,93%-ը և կանանց 90,27%-ը:

Բացասական պատասխան են տվել տղամարդկանց 6,82%-ը և կանանց 5,55%-ը: Ամենաբարձր տոկոսային պարունակություններ ունեն Երևան քաղաքի 50+ տարիքի տղամարդկանց՝ 90,84% և Արմավիր, Արարատ, Վայոց ձոր, Սյունիք տարածաշրջանում բնակվող կանանց 93,08% դրական պատասխանները:

«Ծնողները պետք է ցուցաբերեն ֆինանսական աջակցություն իրենց հասուն երեխաներին, եթե վերջիններս ունեն ֆինանսական դժվարություններ»՝ բոլոր տարիքային խմբերում գտնվող հարցվողների դրական պատասխանները գտնվում են 90 տոկոսի սահմանագծում կամ գերազանցում են այն:

Հարցադրմանը տրված բացասական պատասխանների միջին տոկոսային պարունակությունները չեն գերազանցում 4 տոկոսի սահմանագիծը ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար:

«Եթե հասուն երեխաները հայտնվել են դժվարին պայմաններում, ծնողները պետք է փոխեն իրենց ապրելաձևն այնպես, որ կարողանան օգնել երեխաներին» հարցադրման պատասխանների դիտարկումը ցույց է տալիս, որ բոլոր տարիքային խմբերում գտնվող հարցվողների դրական պատասխանները գտնվում են 90 տոկոսի սահմանագծում: Այս պնդման վերաբերյալ հանրապետական միջին կարծիքը տղամարդկանց և կանանց շրջանում կազմում է 88%:

Այս հարցադրմանը ամենաբարձր բացասական կարծիք ունեն 75 տարեկանից բարձր կանայք՝ 9,1%:

Հարցվողներին տրվել են հարցեր, թե **ն՞վ պետք է հոգ տանի տարեց ծնողների մասին:**

«Օգնության կարիք ունեցող տարեց ծնողների նկատմամբ հոգ տանելու պատասխանատվությունը պետք է կրեն երեխաները» հարցադրմանը լիովին համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց 50%-ը, համաձայն են տղամարդկանց և կանանց 45%-ը: Այսինքն՝ դրական են պատասխանել տղամարդկանց և կանանց մոտ 95%-ը:

Հարցադրմանը բացասական պատասխան են տվել տղամարդկանց 3,13%-ը և կանանց 1,91%-ը: Առավելագույն բացասական պատասխաններ են տվել 65-69 տարեկան շերտում գտնվող տղամարդիկ՝ 9,18%-ը և նույն տարիքային շերտում գտնվող կանայք՝ 3,35%-ը:

«Երեխաները պետք է կազմակերպեն իրենց աշխատանքն այնպես, որ դա չխանգարի տարեց ծնողների նկատմամբ հոգատարությանը» հարցադրմանը լիովին համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց 39%-ը:

Հարցադրմանը համաձայն են տղամարդկանց և կանանց 45%-ը: Այսինքն՝ դրական են պատասխանել տղամարդկանց և կանանց 85%-ը:

Հարցադրմանը բացասական պատասխան են տվել տղամարդկանց 8,8%-ը և կանանց 8,63%-ը: Առավելագույն բացասական պատասխաններ են տվել 70-74 տարեկան տարիքային շերտում գտնվող տղամարդիկ՝ 15,98% և 65-69 տարեկան տարիքային շերտում գտնվող կանայք՝ 12,5%:

«Երբ ծնողները օգնության կարիք ունեն, դուստրերը պետք է իրենց վրա ավելի շատ հոգսեր վերցնեն, քան որդիները» հարցադրմանը լիովին համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 27,71%-ը և կանանց 25,04%-ը:

Հարցադրմանը բացասական պատասխան են տվել տղամարդկանց և կանանց 44%-ը: Առավելագույն բացասական պատասխաններ են տվել 75 տարեկանից բարձր տարիքային շերտում գտնվող տղամարդիկ՝ 50%:

«Երեխաները պետք է ֆինանսական աջակցություն ցուցաբերեն ծնողներին, եթե դա անհրաժեշտությունն առաջանա» հարցադրմանը լիովին համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 46,50%-ը և կանանց 44%-ը:

Հարցադրմանը համաձայն են տղամարդկանց 50%-ը և կանանց 52%-ը: Այսինքն, դրական են պատասխանել տղամարդկանց և կանանց 97%-ը:

Հարցադրմանը բացասական պատասխան են տվել տղամարդկանց 1,67%-ը և կանանց 2,11%-ը:

Առավելագույն բացասական պատասխաններ են տվել 70-74 տարեկան տարիքային շերտում գտնվող տղամարդկանց 3,08%-ը և 50-54 տարեկան տարիքային շերտում գտնվող կանանց 46,53%-ը:

«Երեխաները պետք է ապրեն տարեց ծնողների հետ, երբ նրանք ի վիճակի չեն ինքնուրույն հոգ տանել իրենց մասին» հարցադրմանը լիովին համաձայն են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 47,17%-ը և կանանց 44,26%-ը:

Հարցադրմանը բացասական պատասխան են տվել տղամարդկանց 2,58%-ը և կանանց 3,43%-ը:

Առավելագույն բացասական պատասխաններ են տվել 75 տարեկանից բարձր տարիքային շերտում գտնվող տղամարդկանց 3,08%-ը և 70-74 տարեկան տարիքային շերտում գտնվող կանանց 6,94%-ը:

«Համարու՞մ եք Ձեզ հասարակության լիարժեք անդամ» հարցադրմանը հարցվողների

կողմից տրված պատասխանների տոկոսային պարունակություններից հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 75%-ն իրենց համարում են **հասարակության լիարժեք անդամ:**

Հասարակության լիարժեք անդամ լինելու առավել մեծ զգացում ունեն Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց՝ 82,67%-ը և 50+ տարիքի կանանց 75%-ը:

Հասարակության մեջ թերաբժեքության զգացում ունեն հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 22%-ը, ինչպես նաև հանրապետության 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի գուգրնկերները՝ 29%-ը: Այսպիսով, կանայք մոտ 7%-ով գերազանցում են տղամարդկանց հասարակության մեջ իրենց լիարժեքության գնահատումներով:

Այս հարցադրմանը տրված բացասական պատասխանների տարածաշրջանային արդյունքների գնահատումները ցույց են տալիս, որ առավել բարձր տոկոսային պարունակություն ունեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող հարցվողների կողմից տրված պատասխանները, ինչպես տղամարդկանց՝ 25,37%-ը, այնպես էլ կանանց շրջանում՝ 31,43%-ը:

Նշենք, որ հարցվողների շրջանում հասարակության մեջ թերաբժեքության ինքնագնահատումը ավելի մեծ տոկոսային ընդգրկում է ստանում տարիքի մեծացմանը գուգրնթաց: Այս միտումն ավելի հստակ է արտահայտված կանանց շրջանում:

Հայկական իրականության մեջ բնակչության կենսակերպի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում մերձավորների հետ շփումների առկայությունը:

Ստորև բերվում է մերձավորների, հարևանների, ընկերների և նախկին աշխատանքային կոլեկտիվի հետ ավագ տարիքի անձանց շփումների գնահատման նպատակով կատարված հարցադրումների արդյունքները:

Հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 87%-ը, ինչպես նաև 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 80%-ը **շփվում են մերձավորների հետ:** Չեն շփվում 50+ տարիքի տղամարդկանց և կանանց մոտ 2%-ը:

Հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 84,31%-ը, ինչպես նաև 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 80,68%-ը **շփվում են հարևանների հետ:** Ավելի թույլ են շփումները հարևանների հետ տղամարդկանց 14,02%-ի և կանանց 16,65%-ի մոտ: Չեն շփվում 50+ տարիքի տղամարդկանց 1,67%-ը և կանանց 2,66%-ը:

50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 80%-ը, ինչպես նաև 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 57,12%-ը **շփվում են ընկերների հետ:** Ավելի թույլ են շփումները ընկերների հետ տղամարդկանց 17,02 % -ի և կանանց 29,52 % -ի մոտ: Չեն շփվում ընկերների հետ տղամարդկանց 3,27%-ը և կանանց 13,36% -ը:

Բերված արդյունքները ցույց են տալիս, որ կանայք զգալիորեն զիջում են տղամարդկանց ընկերների հետ շփումների գնահատումներով: Ասվածն ավելի ընդգծված է արտահայտված ավելի բարձր տարիքային խմբերում:

50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 38%-ը, ինչպես նաև 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի գուգրնկերների 25%-ը **շփվում են նախկին աշխատանքային կոլեկտիվի հետ:** Ավելի թույլ են շփումները նախկին աշխատանքային կոլեկտիվի հետ տղամարդկանց 34,68%-ի և կանանց 26,19%-ի շրջանում: Չեն շփվում նախկին

աշխատանքային կոլեկտիվի հետ տղամարդկանց 27,32%-ը և կանանց 48,86%-ը: Տարիքի մեծացման հետ այս խզումն ավելի է խորանում:

Բերված արդյունքները ցույց են տալիս, որ կանայք զգալիորեն զիջում են նախկին աշխատանքային ընկերների հետ շփումների գնահատումներով:

Հարցերի հաջորդ խումբը վերաբերվում է բնակչության ավագ սերնդի ներկայացուցիչներին հասարակության մեջ ինտեգրացման ուղղությամբ հանրապետությունում իրականացվող միջոցառումներին պոտենցիալ շահառուների տրված ամփոփ գնահատականների ստացմանը, որոնց վերլուծությունները հնարավորություն կտան գնահատել այդ ծրագրերի արդյունավետությունը և ցույց տալ դրանց հետագա զարգացման ուղղությունները:

Ներկայացնենք կատարված հարցադրումները և դրանց տրված պատասխանների համախմբերը:

«Կցանկանայի՞ք հաճախել տարեցների ակումբ, որտեղ կկարողանայիք հաղորդակցվել Ձեր հասակակիցների հետ» հարցադրմանը դրական պատասխաններ են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 15,34%-ը և կանանց 10,92 %-ը:

Բացասական պատասխան են տվել հանրապետության տղամարդկանց 59,1%-ը և կանանց 67,1%-ը:

Ինչպես երևում է, այս հարցադրման վերաբերյալ տղամարդկանց և կանանց շրջանում դրական և բացասական կարծիքների զգալի տարբերություններ կան: Բացասական կարծիքները տղամարդկանց մոտ գերազանցում են 33,8%-ով, իսկ կանանց շրջանում՝ 56,2%-ով:

Նման ակումբներ հաճախումներին բացասական են վերաբերում Երևանում բնակվող տղամարդկանց 69,57% -ը և Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի կանանց 74,29%-ը:

Տարեցների ակումբներ հաճախումներին թերահավատ են վերաբերվում հանրապետության տղամարդկանց 25,52%-ը և կանանց 22%-ը: Թերահավատ կարծիքներն առավել բարձր տոկոսային պարունակություններ ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց շրջանում՝ 29,57%, ինչպես նաև Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանի կանանց շրջանում՝ 27,06%:

Թերահավատ կարծիքներն առավել բարձր տոկոսային պարունակություններ ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող տղամարդկանց՝ 30%-ի և կանանց շրջանում՝ 27%-ի մոտ:

Եթե կողք-կողքի դնենք այն կարծիքները, որոնք վկայում են բնակչության տարեց շերտերի մեկուսացվածության, շփումների թուլացման, հասարակության մեջ ինտեգրվածության ցածր մակարդակի մասին, ապա տարեցների ակումբներ հաճախումների վերաբերյալ ցանկությունները սպասվում էր, որ բարձր տոկոսային գնահատումներ կստանար: Սակայն վիճակագրական պատկերը հակառակն է: Այս երևույթի միակ բացատրությունը կարող է լինել այն, որ բնակչության տարեց շերտերն անտեղյակ են նման ակումբների գոյության մասին:

Անսպասելի էր նաև Երևան քաղաքի տարեց բնակչության կողմից տարեցների ակումբների հաճախումների վերաբերյալ տրված հանրապետությունում ամենաբարձր բացասական կարծիքներն այն պարագայում, երբ Երևանում գործում է տարեցների ակումբ, որտեղ հարյուրավոր տարեցներ հաճույքով են հաճախում և շատ գոհ են բազմաբնույթ միջոցառումներից, որոնք իրականացվում են նրանց համար:

«Հետաքրքրվո՞ւմ եք հանրապետության քաղաքական կյանքով» հարցադրմանը դրական

պատասխաններ են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 49%-ը և կանանց 22%-ը:

Բացասական պատասխան են տվել հանրապետության տղամարդկանց 23,19%-ը և կանանց 41%-ը:

Ինչպես հետևում է բերված ցուցանիշներից, այս հարցադրման վերաբերյալ տղամարդկանց և կանանց շրջանում դրական և բացասական կարծիքների զգալի տարբերություններ կան: Դրական պատասխանները տղամարդկանց մոտ գերազանցում են բացասականներին 26%-ով, իսկ կանանց շրջանում դիտվում է հակառակ պատկերը՝ բացասական պատասխանները 18,11%-ով գերազանցում են դրական կարծիքներին:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հանրապետության 50+ տարիքի տղամարդիկ ավելի քաղաքականացված են, քան կանայք:

Հանրապետության մարզերում այս հարցադրմանը տրված պատասխանների տոկոսային պարունակությունների համեմատությունը ցույց է տալիս, որ երկրի քաղաքական կյանքով հետաքրքրվում են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 55,76%-ը և կանանց 31,12%-ը:

«Կուզենա՞ք պարբերաբար հանդիպումներ անցկացնել, զրուցել պատանիների և երիտասարդների հետ դպրոցներում, մանկական խնամքի հաստատություններում» հարցադրմանը դրական պատասխաններ են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 15,05%-ը և կանանց՝ 11,25 %-ը:

Բացասական պատասխան են տվել հանրապետության տղամարդկանց 54,87%-ը և կանանց 66,15%-ը:

Ինչպես հետևում է բերված ցուցանիշներից այս հարցադրման վերաբերյալ տղամարդկանց և կանանց շրջանում դրական և բացասական կարծիքների զգալի տարբերություններ կան:

Բացասական կարծիքները տղամարդկանց մոտ գերազանցում են դրականին 39,8 %-ով, իսկ կանանց շրջանում՝ 54,9 %-ով:

Պատանիների և երիտասարդների հետ դպրոցներում, մանկական խնամքի հաստատություններում պարբերաբար հանդիպումների անցկացմանը բացասական են վերաբերում Երևանում բնակվող տղամարդկանց 68,52% -ը և կանանց 78,47%-ը:

Նույն հարցադրմանը համեմատաբար բարձր դրական կարծիքներ են հայտնել Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանում բնակվող տղամարդիկ՝ 18,82% և կանայք՝ 13,57%:

Հարցադրմանը **«ոչ այնքան»** պատասխան են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 30,08%-ը և կանանց 22,60%-ը: Այս պատասխանների տոկոսային պարունակությունները կրկնակի անգամ գերազանցում են դրական պատասխաններին:

Այս հարցադրմանը տրված դրական և բացասական պատասխանների մեծ տարբերությունները պետք է քաղաքականություն մշակողների ուշադրության կենտրոնում լինի, քանի որ ծերացման հիմնախնդիրների լուծումները մեծապես կապված են սերունդների միջև կապերի ուժեղացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության հետ:

«Ձեր կարծիքով, անժառանգ ծեր մարդկանց համար շահեկան կլինի՞ իրենց անշարժ գույքը պետության տնօրինությանը հանձնելու դիմաց, լրացուցիչ խնամքի, կենսապահովման և բժշկական երաշխավորված ծառայություններ ստանալը՝ իրենց ընտրությամբ ապրելով այդ բնակարանում կամ տարեցների տուն-ինտերնատում» հարցադրմանը դրական պատասխաններ

են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց 35%-ը:

Բացասական պատասխան են տվել հանրապետության տղամարդկանց 38,31%-ը և կանանց 42,61%-ը:

Ինչպես հետևում է բերված ցուցանիշներից, այս հարցադրման վերաբերյալ տղամարդկանց և կանանց շրջանում դրական և բացասական կարծիքների զգալի տարբերություններ չկան:

Հարցադրմանը դրական պատասխաններ են տվել Երևանում բնակվող տղամարդկանց 40,68%-ը և կանանց 45,42%-ը: Այս ցուցանիշները ամենաբարձրն են հանրապետությունում:

Նույն հարցադրմանը ամենաբարձր բացասական կարծիքներ են հայտնել Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող տղամարդիկ՝ 45% և կանայք՝ 50,46%:

Հարցադրմանը «ոչ այնքան» պատասխան են տվել հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 27,32%-ը և կանանց 21,68%-ը:

«Ձեր կարծիքով ո՞վքեր պետք է գլխավորապես հոգ տանեն կենսաթոշակառուների /ծերերի/ մասին» հարցադրմանը դրական պատասխանների համախմբերից ամենաբարձր տեսակարար կշիռ ունի **«պետությունը»** պատասխանը, որը տվել են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 80,77%-ը և կանանց 82,46%-ը:

Երկրորդ տեղում է **«գավակները»** պատասխանը, որը տվել են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 76%-ը և կանանց 74,27%-ը:

Երրորդ տեղում է **«ինքը»** պատասխանը, որը տվել են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց 12%-ը և կանանց 11,35%-ը: Վերջին տեղում է **«համայնքը»** պատասխանը, որը տվել են հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց 12%-ը:

Ինչպես հետևում է վերևում բերված ցուցանիշներից **ո՞վքեր պետք է գլխավորապես հոգ տանեն կենսաթոշակառուների /ծերերի/ մասին** հարցադրման վերաբերյալ, հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց գերակշիռ հատվածը գտնում է, որ իրենց մասին պետք է հոգ տանի պետությունը: Այս արդյունքը օրինաչափ է, քանի որ հարցվողները ծնվել և ապրել են Խորհրդային երկրում, որտեղ ամեն ինչ որոշվել է պետության կողմից:

Հայաստանի Հանրապետությունում 50-ից բարձր տարիքի անձանց սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը

- 50-ից բարձր տարիք ունեցող անդամներով տնային տնտեսությունները կազմում են ՀՀ բոլոր տնային տնտեսությունների 2/3-ը:
- Հանրապետության բնակչության սեռատարիքային կառուցվածքում տարիքի մեծացման հետ դիտվում է գենդերային անհամաչափություն, ինչը առավել ցայտուն է արտահայտված 50-ից բարձր բոլոր տարիքային խմբերում, որտեղ կանայք մեծամասնություն են կազմում:
- ՀՀ-ում կանանց մահացության կտրուկ աճ է նկատվում 65-70 տարեկանում: Տղամարդկանց մահացությունն իր զագաթնակետին է հասնում 70 տարեկանից հետո:
- Նկատվում է հետևյալ օրինաչափությունը՝ գյուղաբնակ կանայք և տղամարդիկ ավելի երկար են ապրում (միջինում 5 տարով), քան քաղաքաբնակները:

Ամուսնական կարգավիճակը

- 50-54 տարեկան տղամարդկանց 90%-ն ամուսնացած է, մինչդեռ նույն տարիքի կանանց շրջանում ամուսնացածները կազմում են ընդամենը 65%: Երբևէ չի ամուսնացել 50-54 տարեկան տղամարդկանց 2%-ը, կանանց՝ 10%-ը: Ամուսնալուծված են կան ապրում են գույզից առանձին այս տարիքի տղամարդկանց 2%-ը, կանանց՝ 10%-ը: Կնոջը կորցրել են տղամարդկանց 6%-ը, այրի են կանանց 15%-ը: Այսինքն, միայնակ կանանց տոկոսը այս տարիքային խմբում զգալիորեն գերազանցում է միայնակ տղամարդկանց տոկոսին:
- 55-59 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում նկատվում է մի հետաքրքիր առանձնահատկություն՝ այս տարիքային խմբում ավելանում է ամուսնալուծված տղամարդկանց թիվը, փոխարենը՝ նվազում է ամուսնալուծված կանանց թիվը (բացառություն է կազմում Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանը, որտեղ ամուսնալուծված կանանց թիվը գրեթե 2 անգամ աճում է՝ 7%-ից հասնելով 12%-ի): Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ երբևէ չամուսնացած տղամարդիկ Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում հանդիպում են միայն այս տարիքային խմբում:
- 60-64 տարեկան կանանց շրջանում այրիների կտրուկ աճ է նկատվում (գրեթե 3 անգամ) Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում: Նշված տարածաշրջանում այս տարիքի կանանց մոտ 41%-ը (այսինքն՝ գրեթե ամեն երկրորդը) այրի է, ինչն, իր հերթին, վկայում է 60 տարեկանից հետո տղամարդկանց մահացության կտրուկ աճի մասին: Այսինքն, այս տարածաշրջանում տղամարդկանց կյանքի միջին տևողությունը հանրապետական միջինից ցածր է:
- 65-69 տարեկան տղամարդկանց 14%-ն է կնոջը կորցրել, այրի է կանանց 49%-ը (Երևանում այս տարիքի այրի կանայք կազմում են 58%): Այս տարիքի Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի տարածաշրջանի ու երևանաբնակ կանանց ընդամենը 37%-ն է ամուսնացած (համեմատության համար՝ միջին հանրապետականը կազմում է 45%):
- 70-74 տարեկան տղամարդկանց շրջանում չամուսնացածներ կան ամուսնալուծվածներ չկան, կան միայն ամուսնացածներ ու կնոջը կորցրածներ: Այս տարիքային խմբում

Հայաստանի Հանրապետությունում միջինը կնոջը կորցրել է ամեն 5-րդ տղամարդը, իսկ այրի է ամեն 2-րդ կինը: Սակայն կնոջը կորցրածների թիվը բարձր է հանրապետական միջինից Լոռիում, Շիրակում, Արագածոտնում (ամեն 4-րդ տղամարդը), Արմավիրում, Արարատում, Վայոց ձորում ու Սյունիքում (գրեթե ամեն 3-րդ տղամարդը):

- 75+ տարիքային խմբում կնոջը կորցրել է տղամարդկանց 34%-ը, այրի է կանանց 75-80%-ը: Ամուսնացած են այս տարիքի տղամարդկանց 63%-ը, կանանց՝ 19%-ը («հաճելի բացառություն են» կազմում Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանի կանայք՝ նրանց 30%-ն ամուսնացած են):

Կրթական ցենզը

- Գրեթե բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ 75+ տարիքի, տղամարդիկ ավելի հաճախ են բացի դպրոցից մեկ այլ տեղ ևս սովորել, քան կանայք: Սակայն այստեղ կան տարածաշրջանային առանձնահատկություններ:
- Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանում 50-54 տարեկան կանանց թիվը, որոնք բացի դպրոցից մեկ այլ տեղ էլ են սովորել, գրեթե 10%-ով գերազանցում է նույն տարիքի տղամարդկանց թվին: Փոխարենը, 75+ տարեկան կանանց ընդամենը 7%-ն է բացի դպրոցից այլ տեղ սովորել՝ տղամարդկանց 27%-ի դիմաց:
- Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում 55-69 և 75+ տարեկան կանայք ավելի բարձր կրթական ցենզ ունեն, քան նույն տարիքի տղամարդիկ: Հատկապես ուշագրավ է 75+ տարիքային խումբը: Այս տարիքի կանանց 35%-ը բացի դպրոցից սովորել է մեկ այլ տեղ ևս, մինչդեռ այդպիսիները տղամարդկանց շրջանում լիովին բացակայում են (0%):
- 50+ տարիքի կանայք ավելի հաճախ, քան տղամարդիկ, բավարարվել են միջին մասնագիտական կրթությամբ: Տղամարդիկ հիմնականում նախընտրել են ավարտել պրոֆեսիոնալ տեխնիկական, կամ ստանալ բարձրագույն կրթություն: Այս հանգամանքն է պատճառներից կամ բացատրություններից մեկը, որ 50+ տարիքային բոլոր խմբերում կանանց գործազրկության տոկոսն ավելի բարձր է, քան տղամարդկանցը: Այսօր աշխատանքի շուկայում հիմնականում պահանջարկված են կամ բարձրագույն կրթություն ունեցող մասնագետները կամ էլ, ընդհակառակը՝ բանվորական մասնագիտությունները: Թեև գործազրկության տոկոսը առհասարակ բարձր է այս տարիքային խմբում, այդ թվում նաև տղամարդկանց շրջանում:

Ընտանիքն ու ընտանեկան հարաբերությունները 50+ տարիքի անդամ ունեցող տնային տնտեսություններում

- Տնային պարտականությունների բաշխումը 50+ տարիքի մարդկանց և նրանց զույգերի միջև կարելի է բնութագրել իբրև «ամուսինների փոխհարաբերությունների առավել անջատ ու խտրազատված ոլորտ»: Այսպես՝
- **Երևանում** 14 տարեկանից փոքր երեխաներ ունեցող 50+ տարիքի ծնողները, երեխայի խնամքի հետ կապված պարտականություններն իրենց զույգերի հետ *չատ թե քիչ հավասարապես են բաշխում միայն երեխաներին հազցնելու և երեխաների հետ խաղալու գործում*: Մյուս կողմից՝ Երևանում, այլ մարզերի հետ համեմատած, չափազանց բարձր է առանց ծնողական օգնության և վերահսկողության ինքնուրույն հազմվող և ինքնուրույն քնող երեխաների տոկոսը: Մնացած բոլոր դեպքերում, այն է՝ *մնալ երեխայի հետ տանը, երբ նա հիվանդանում է, օգնել նրան կատարել իր տնային աշխատանքները, տանել-բերել*

դպրոց հիմնական ծանրությունն ընկնում է երեխայի մոր վրա: Տնային տնտեսությունում ապրող այլ անձանց մասնակցությունը երեխայի խնամքի հետ կապված ցանկացած հարցում Երևանում գրեթե բացակայում է: Համենայն դեպս, պատասխանողները նման դեպքեր գրեթե չեն նշել: Փոխարենը՝ Երևանում հանդիպում են դեպքեր, երբ հիվանդ երեխայի հետ տանը մնում է, օրինակ, տնային տնտեսությունից դուրս ապրող որևէ մեկը: Երևանաբնակների 67,5%-ը նշում է, որ բավարարված է պարտականությունների նման բաշխվածությունից իրենց՝ թե տնային տնտեսության ներսում, թե տնային տնտեսությունից դուրս ապրող այլ անձանց միջև:

- **Կոտայքի, Տավուշի ու Գեղարքունիքի տարածաշրջանում** 14 տարեկանից փոքր երեխաներ ունեցող 50 և ավելի տարիքի ծնողները երեխայի խնամքի հետ կապված պարտականություններն իրենց զույգերի հետ *հավասարապես են բաշխում հիմնականում երեխաներին քնեցնելու և նրանց դպրոց կամ ցերեկային կենտրոն տանելու գործում*: Գրեթե բոլոր հարցերում՝ կապված երեխայի խնամքի հետ, այս տարածաշրջանում նկատվում է երեխաների ինքնուրույնության չափազանց ցածր մակարդակ: Ինչպես և Երևանում, այս տարածաշրջանում նույնպես, տնային տնտեսությունում ապրող այլ անձինք գրեթե ոչ մի մասնակցություն չունեն երեխայի խնամքի հարցում: Հիմնական դերակատարը մայրն է: Ինչպես և Երևանում, այս տարածաշրջանում նույնպես հանդիպում են դեպքեր, երբ հիվանդ երեխայի հետ տանը մնում է տնային տնտեսությունից դուրս ապրող որևէ մեկը:
- **Լոռու, Շիրակի ու Արագածոտնի տարածաշրջանում** 14 տարեկանից փոքր երեխաներ ունեցող 50 և ավելի տարիքի ծնողները երեխայի խնամքի հետ կապված պարտականություններն իրենց զույգերի հետ *համեմատաբար հավասար են բաշխում, երբ անհրաժեշտ է մնալ հիվանդ երեխայի հետ տանը, կամ երբ պետք է օգնել երեխային կատարել տնային աշխատանքները*: Գրեթե աննշան է տնային տնտեսությունում ապրող այլ անձանց մասնակցությունը երեխայի խնամքի հարցում: Նման իրավիճակը դուր չի գալիս այս տարածաշրջանի 50+ տարիքի ծնողների գրեթե կեսին (46%): Բոլոր հարցվողների մեջ իրենց և այլ անձանց միջև պարտականությունների նման բաշխվածությունից նույնպես դժգոհ են այս տարածաշրջանի 50+ տարիքի ծնողների մոտ 80%-ը: Այս տարածաշրջանի երեխաները համեմատաբար ինքնուրույն են հետևյալ հարցերում՝ ինքնուրույն քնում են, տանը կարող են մենակ մնալ, երբ հիվանդանում են, ինքնուրույն խաղում են, ինքնուրույն են դասերը սովորում, ինքնուրույն գնում-գալիս են դպրոց կամ ցերեկային կենտրոն:
- **Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանը** աչքի է ընկնում *երեխայի խնամքի հարցում տնային տնտեսությունում ապրող այլ անդամների բավականին ակտիվ և բարձր մասնակցությամբ՝ ի տարբերություն մյուս բոլոր տարածաշրջանների*: Թեև տարածաշրջանի ներսում պարտականությունների նման բաշխվածությունը հիմնականում արժանանում է դրական արձագանքի, սակայն ընդհանուրի մեջ գոհունակության ամենացածր տոկոսը նույնպես այս տարածքի բնակիչներինն է:
- Երեխաների խնամքի համար նախատեսված ցերեկային կենտրոնները, նախադպրոցական հաստատությունները, երկարօրյա խմբերը, դայակները կամ բացակայում են, կամ դրանց քանակը բավական չէ, կամ էլ՝ պարզապես անմատչելի են (վճարովի լինելու դեպքում) բնակչության մեծ մասի համար, բացառությամբ Երևանի: Սա է պատճառներից մեկը, որ հարցվողները նշել են, որ գրեթե չեն օգտվում նման ծառայություններից: Բոլոր

հարցվողների մեջ օգտվողների մեծ տոկոս է արձանագրվել Երևանի և Լոռու, Շիրակի ու Արագածոտնի քաղաքներում, այսինքն՝ քաղաքային զարգացած ենթակառուցվածքներ ունեցող տարածաշրջանի բնակիչների շրջանում: Այլ տարածքներում օգտվողների թիվը ձգտում է 0-ի:

- Ծնողների հետ չբնակվող 14+ տարիքի երեխաների զբաղվածության ամենաբարձր մակարդակը նկատվում է 35-ից բարձր տարիք ունեցողների մոտ (81%): Այս ցուցանիշը գերազանցում է ծնողների հետ ապրողների զբաղվածության ցուցանիշները: Մյուս կողմից, գործազրկության ամենաբարձր մակարդակը նույնպես այս տարիքային խմբում է:
- 50+ տարիքի մարդկանց և նրանց զույգերի կամ ընտանիքի այլ անդամների միջև տարածայնությունները հիմնականում փողի սակավության, պակասության վերաբերյալ են:
- Տարեցների առողջական վիճակի փոփոխությունը ընտանիքում նույնպես առաջացնում է կոնֆլիկտներ, քանի որ տարեցները այլևս չեն կարողանում կատարել նախկին գործերը և ընտանիքի անդամներից կախվածության մեջ են:

50+ տարիքի անդամ ունեցող տնային տնտեսությունների ունեցվածքը, մուտքերը և դրամական ներհոսքերը

- Մեկ շնչին ընկնող եկամուտների միջին ցուցանիշով համեմատաբար բարվոք վիճակում են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի տարածաշրջանները, ուր այն գրեթե համընկնում է նվազագույն սպառողական զամբյուղին: Ամենացածր ցուցանիշը Կոտայք, Տավուշ, Գեղարքունիք տարածաշրջանում է (28200 դրամ), ընդ որում՝ ցուցանիշը ցածր է և քաղաքային (26400 դրամ) և գյուղական (29900 դրամ) բնակավայրերի տնային տնտեսություններում: Երևանում տնային տնտեսությունների միջին ցուցանիշը կազմում է 32000 դրամ, որը հակասական է այն առումով, որ Երևանը Հայաստանի Հանրապետությունում տնտեսական այլ ցուցանիշներով գրավում է առաջատար դիրք, սակայն 50+ տնային տնտեսությունների համար վերոնշյալ ցուցանիշը հիմնավորվում է իր յուրահատկություններով:
- Տնային տնտեսությունների անդամների թվաքանակից կախված տարածաշրջաններում դիտվում են մեկ շնչին ընկնող միջին եկամուտների զգալի տատանումներ՝ 1 անձով տնային տնտեսություններում՝ 29600-71000 դրամ, ավելի քիչ՝ 2 անձով և 3-5 անձով տնային տնտեսություններում (28200-50900 և 23000- 41200 դրամ): Միջին ամսական եկամտի տատանումները ցածր են 6 և ավելի անձ ունեցող տնային տնտեսություններում:
- Բոլոր տարածաշրջաններում անկախ տնային տնտեսությունների թվաքանակից, մեկ շնչին ընկնող եկամուտներով գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններն առավել բարվոք վիճակում են, քան քաղաքային տիպի բնակավայրերի տնային տնտեսությունները:
- Հայաստանի Հանրապետության 50+ տնային տնտեսությունների 27.94%-ը ընկած են ծայրահեղ աղքատության գծից ցածր խմբում, աղքատության գծից ցածր գտնվում են տնային տնտեսությունների 49%-ը, իսկ սպառողական զամբյուղը ապահովված չէ տնային տնտեսությունների մոտավորապես 73%-ի մոտ: Այսինքն երկրի բարեկեցության մակարդակի ցուցանիշն ապահովող “միջին խավին” (50000-75000 դրամ մեկ շնչին՝ ամսական) պատկանող տնային տնտեսությունները կազմում են 22%-ը: Հարաբերական առումով “հարուստ” շերտը (75000 դրամից ավելի մեկ շնչին՝ ամսական) կազմում է 5%: Այս թվերը առավել, քան ցայտուն կերպով ցուցանում են երկրի վիճակը, ինչպես նաև դիրքը

համաշխարհային հանրության այլ երկրների շարքում:

- Քաղաքային տիպի բնակավայրերում տնային տնտեսությունների ծայրահեղ աղքատ, աղքատ և նվազագույն սպառողական զամբյուղը չապահոված, ինչպես նաև եկամտային բավարարվածության շերտերի տոկոսային արժեքները մի փոքր ավելի բարձր են, քան գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների մոտ, իսկ ունևոր և բարեկեցիկ ապահովվածության շերտերի կշիռները գյուղում են առավել բարձր, քան քաղաքում:
- Ծայրահեղ աղքատության, աղքատության, նվազագույն սպառողական գծերից ցածր գտնվող տնային տնտեսությունների տեսակարար կշիռները աճում են 2 և ավելի անձով տնային տնտեսության թվակազմից կախված, իսկ 1 անձով տնային տնտեսությունների ցուցանիշը մոտ է 2 անձով տնային տնտեսությունների ցուցանիշին: Իսկ նվազագույն սպառողական զամբյուղի գծից բարձր (37000 դրամից ավելի) շերտերում, ցուցանիշը անկում է արձանագրում տնային տնտեսությունների անդամների քանակի աճի հետ:
- Տնային տնտեսությունների անդամ վարձու աշխատողների ամենաբարձր միջին աշխատավարձը (առանց հարկերի և սոց.վճարների) Երևանում՝ 74500 դրամ է, ամենացածրը Կոտայքի, Տավուշի, Գեղարքունիքի տարածաշրջանում՝ 56400 դրամ:
- Տարածաշրջաններում՝ գյուղաբնակ աշխատողների միջին աշխատավարձն ավելի բարձր է, քան քաղաքաբնակների միջին աշխատավարձը: Սա առավել ցայտուն երևում է կին աշխատողների աշխատավարձերը համեմատելիս: Այս արդյունքը հավանաբար կապված է բարձր վարձատրվող աշխատանքներում գյուղաբնակների առավել ներգրավվածության հետ:
- Կանանց միջին աշխատավարձը և տարածաշրջաններում և հանրապետությունում 1.44-1.71 անգամ զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձին: Գյուղերում այս տարբերությունը մի քիչ մեղմ է՝ 1.07-1.25 անգամ, իսկ քաղաքներում այն առավել զգալի է՝ 1.40-1.99 անգամ: Այս ցուցանիշի ամենաբարձր արժեքներ արձանագրվել են Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի տարածաշրջանի քաղաքներում:
- Հայաստանի Հանրապետության 50+ տարիքի անդամներ ունեցող տնային տնտեսությունների 30.7%-ը օգտվում են սոցիալական դրամական և ոչ դրամական աջակցություններից՝ միջինում մեկ շնչին 11400 դրամի չափով: Եկամտային ապահովվածության բոլոր շերտերում առկա է սոցիալական աջակցության համակարգում (պետական և հասարակական) 13.9-18.6% ընդգրկման մակարդակ, բացառությամբ 50000-75000 դրամի չափով մեկ շնչին ընկնող եկամուտ ունեցող տնային տնտեսությունների, որոնց ընդգրկվածությունը 72.1% է: Սա տեղի է ունենում ի հաշիվ 2 (91.2%, 10 000 դրամ) և 8 անձից ավելի (100.0%, 5800 դրամ) կազմ ունեցող տնային տնտեսությունների:
- Հանրապետությունում տնային տնտեսությունների աջակցության ծրագրերում ընդգրկվածության ծավալները փոփոխվում են կախված տնային տնտեսությունների անդամների թվաքանակից: Այն 1 անձ ունեցող տնային տնտեսությունների համար կազմում է 23.5%, 2 անձ ունեցող ընտանիքներում հասնում է 59.5%-ի, 3-5 անձով տնային տնտեսությունների համար նվազում է մինչև 11.6%, իսկ այնուհետև աճում է տնային տնտեսություններում ընտանիքի անդամների թվաքանակի մեծացմանը զուգընթաց (17.7-34.5%): Այս միտումը առկա է նաև գյուղական բնակավայրերում: Աջակցության ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշը քաղաքային բնակավայրերում 1 անձով տնային տնտեսություններում ավելի բարձր է, քան 2 անձով տնային տնտեսություններում (25.7% և

11.0%), ավելի մեծ տնային տնտեսություններում արձանագրվում է ցուցանիշի անընդհատ աճ՝ մինչև 36.9%:

- Տրամաբանական օրինաչափությամբ պետք է, որ ընդգրկվածության ցուցանիշը աղքատության շերտերից դեպի բարեկեցության շերտերը անցնելիս շատ բարձր արժեքից նվազեր մինչև 0-ական մակարդակ վերջին երեք շերտերի համար, սակայն և հանրապետական և տարածաշրջանային ցուցանիշներում այս օրինաչափությունը առկա է էական խախտումներով, թերևս համեմատաբար բարվոր է վիճակը Երևանում: Սա հուշում է օժանդակությունների հասցեականության մեծացման պետական միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին:
- Հայաստանի Հանրապետության 50-ից բարձր տարիքի անդամ ունեցող տնային տնտեսությունների եկամտային ապահովվածության բոլոր խմբերում մեկ շնչին ընկնող ամսական օժանդակության միջին գումարները մոտավորապես նույն չափի թվեր են (10000–14000 դրամ), բացառությամբ ամենաբարձր եկամտային ապահովվածության խմբի (27600 դրամ), որը մեկ անգամ ևս հուշում է վերոնշյալ եզրակացությունների վերջին կետի իրավացիության մասին:

50+ տարիքի անձանց զբաղվածությունը և կենսաթոշակը

- Հանրապետությունում եկամտաբեր գործունեությամբ զբաղված են 50+ տարիքի տղամարդկանց 51%-ը և կանանց 28%-ը: Հարցվողների շրջանում զբաղվածության ամենաբարձր ցուցանիշներ ունեն 50-54 տարիքային շերտում գտնվող անձինք՝ տղամարդկանց 78,5%-ը և կանանց 49%-ը, ինչպես նաև 55-59 տարիքային խմբում գտնվող տղամարդկանց 75%-ը և կանանց 43%-ը:
- Երբևէ աշխատանք կամ սեփական գործ են ունեցել հանրապետության 50+ տարիքի անձանց 79%-ը: Ընդ որում, նախկինում աշխատանք կամ սեփական գործ են ունեցել 50+ տարիքի տղամարդկանց 94%-ը, կանանց 72%-ը, ինչպես նաև 50-ից ցածր տարիքի զուգընկերների 42%-ը: Այս ցուցանիշները կապված են մինչև տնտեսության ազատականացման, խորհրդային ժամանակահատվածում տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության բարձր մակարդակի հետ:
- Բնակչության շրջանում 50+ տարիք ունեցող անձանց զբաղվածության ցածր ցուցանիշները բացատրվում են գործատուների կողմից պահանջվող աշխատուժի տարիքային սահմանափակումներով: Մասնավոր ոլորտի գործատուները գերազանցապես պահանջում են երիտասարդ աշխատողների: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ պետությունը ևս ներկայացնում է սահմանափակումների պահանջ քաղաքացիական ծառայողների տարիքի նկատմամբ՝ այն սահմանելով 65 տարեկան (առանձին դեպքերում մեկ տարով երկարաձգմամբ), առանց հաշվի առնելու անգամ նախարարությունների աշխատողների բարձր պրոֆեսիոնալիզմը, ապա ակնհայտ է դառնում, որ հանրապետությունում առկա են արգելքներ ավագ տարիքի անձանց զբաղվածության ապահովման համար:
- Հանրապետության բոլոր մարզերում կանանց զբաղվածության ցածր մակարդակի պատճառները պետք է փնտրել երկրի տնտեսության ազատականացման արդեն երկու տասնամյակ տևող պրոցեսների ընթացքում արդյունաբերության անկման, երբեմնի հզոր պլանային տնտեսության քայքայման, ինչպես նաև կանանց շրջանում երկարատև գործազրկության հետ: Այս երևույթն իր բացասական հետևանքները կունենա այսօրվա

ինչպես 50-ից ցածր, այնպես էլ 50-54 տարեկան կանանց կենսաթոշակի չափերի վրա: Այս տարիքային շերտերում գտնվող կանանց կենսաթոշակի չափերը զգալիորեն ավելի ցածր կլինեն այն կենսաթոշակներից, որոնք ներկայումս ստանում են տարիքային կենսաթոշակի անցած կանայք, քանի որ հանրապետությունում գործող կենսաթոշակային համակարգում կենսաթոշակի չափի որոշման մեջ վճռական դերակատարում ունի աշխատանքային ստաժը:

- Տղամարդկանց միայն 12%-ը և կանանց 18%-ը փորձել են աշխատանք փնտրել զբաղվածության պետական գործակալության միջոցով: Տղամարդկանց ևս 6%-ը և կանանց 4,5%-ը՝ զբաղվածության մասնավոր գործակալությունների միջոցով: Երևան քաղաքում այս ցուցանիշը կանանց համար կազմում է 11%: Նշենք, որ զբաղվածության մասնավոր գործակալությունները գործում են գերազանցապես Երևան քաղաքում:
- Երկու սեռերի մոտ էլ աշխատանք գտնելու կամ սեփական գործ սկսելու համար երեք ամենակարևոր գործոնների վերաբերյալ կարծիքները համընկել են: Դրանք են՝ *կապերի և ծանոթությունների առկայությունը, փողը և կրթությունը*: Ընդ որում, երկու սեռերի կողմից առավել կարևորվել է կապերի կամ ծանոթության գործոնը:
- Հանրապետության 50-ից բարձր տարիքի բնակչության գերակշռող մեծամասնությունը չի ցանկանում զբաղվել տնայնագործությամբ և ձգտում է վարձու աշխատանք գտնել գործատուների մոտ:
- Հանրապետության ինքնազբաղված 50+ տարիքի տղամարդկանց 48,5% -ը և կանանց 18%-ը համոզված են, որ իրենց գործը կամ կազմակերպությունը մոտակա երեք տարիների ընթացքում կաճի և կընդլայնվի կամ կմնա նույն մակարդակին: Տղամարդկանց 21%-ը և կանանց 18%-ը գտնում են, որ իրենց գործը կամ կազմակերպությունը մոտակա երեք տարիների ընթացքում անկում կապրի կամ հնարավոր է, որ ընդհատի իր գործունեությունը: Իրենց գործի ապագայի նկատմամբ անորոշության մեջ են գտնվում տղամարդկանց 31%-ը և կանանց 26%-ը:
- Հանրապետության 50+ տարիքի վարձու աշխատող տղամարդկանց 75%-ը և կանանց 92%-ը տարվա ընթացքում աշխատում են անընդհատ ռեժիմով: Ընդհանուր առմամբ, սեզոնային և ընդհատումներով աշխատանքով են զբաղված տղամարդկանց 23%-ը և կանանց 7%-ը:
- Հանրապետության բոլոր մարզերում 50+ տարիքի անձինք աշխատանքի հետ կապված խորհրդատվական աջակցության կարիք ունեն:
- Հանրապետությունում 50+ տարիքի ինքնազբաղված տղամարդկանց 21%-ը և կանանց 13%-ը մոտակա երեք տարիների ընթացքում պատրաստվում են դադարեցնել այժմյան եկամտաբեր գործունեությունը: Սակայն գերակշիռ հատվածը՝ 80%-ից ավելին, մտադրություն չունի դադարեցնելու ինքնազբաղվածությունը:
- Վարձու աշխատողներ են եկամտաբեր գործունեությամբ զբաղված 50+ տարիքի տղամարդկանց 61%-ը: Նրանց գերակշիռ հատվածը մինչև 65 տարեկան են: Վարձու աշխատանքը լիովին բավարարում է հարցվողների 4%-ին, բավարարում է 33%-ին, մասամբ է բավարարում 41%-ին, չի բավարարում 17%-ին, ընդհանրապես չի բավարարում 5%-ին:
- Ուշադրություն է գրավում այն փաստը, որ աշխատանք են փնտրում անգամ 75 տարեկանից բարձր անձինք՝ տղամարդկանց 3,2%-ը և կանանց 2,8%-ը: Չգալի է նաև 70-74 տարեկան անձանց աշխատանք փնտրելու ակտիվությունը, որը տղամարդկանց շրջանում հասնում է 17%-ի: Աշխատանք փնտրող 50+ տարիքի բնակչության շրջանում համեմատաբար ակտիվ են 50-54 տարեկանները, ընդ որում՝ առավել ակտիվ են տղամարդիկ՝ 58,5%, կանանց 38%-ի

դիմաց:

- Հանրապետությունում 50–ից բարձր տարիքի տղամարդկանց 3%-ը և կանանց 2%-ը ունեն որոշակի մտադրություն սեփական բիզնես սկսելու համար: Տղամարդկանց 17%-ը և կանանց 10%-ը տատանվում են մոտական ամիսներին սեփական գործ սկսելու մտադրության մեջ:
- Տարբեր պատճառներով կենսաթոշակառուի կարգավիճակից դժգոհ են հանրապետության կենսաթոշակառուների 90%-ը:

Ֆինանսական տրանսֆերտները

- 50+ տարիքի մարդկանց և նրանց զույգերի միայն 12%-ն է գումար կամ նյութական ցուցանիշներով, կամ աջակցություն ցուցաբերել ընտանիքի անդամներին կամ այլ մարդկանց: Նվիրած գումարի չափը տատանվել է 3 000-400 000 դրամի սահմաններում, միջինում կազմելով 58 500 դրամ: Հիմնականում հետևյալ նպատակներով են գումար նվիրել՝ *ամենօրյա կարիքները հոգալու համար, խոշոր գնումներ կատարելու համար (բացի տուն կամ բնակարան գնելը), ընտանեկան խոշոր իրադարձությունների համար (ծնունդ, ամուսնություն), օգնություն բարեկամներին՝ կորստի կամ հիվանդությունների ժամանակ, ուսումը շարունակելու համար:*
- 50+ տարիքի մարդկանց և նրանց զույգերի 19%-ն է գումար կամ նյութական ցուցանիշներով, կամ աջակցություն ցուցաբերել ընտանիքի անդամներից կամ այլ մարդկանցից: Ստացված գումարները միջինում կազմել են 176 000 դրամ: Հիմնականում գումար են նվիր ստացել *ամենօրյա կարիքները հոգալու համար, ընտանեկան խոշոր իրադարձությունների համար (ծնունդ, ամուսնություն), օգնություն՝ հիվանդության ժամանակ:*

Բնակարանային պայմանները

- Տարեց անձանց ներկայիս սերունդը սովորաբար ունի սեփական բնակարան: Տարբեր պատճառներով (ընտանիքի կազմի և հետաքրքրությունների փոփոխություն, առողջություն, նվազած եկամուտ, բնակարանի պահպանման մեծ ծախսեր) նրանք ցանկանում են փոխել իրենց բնակարանները և ձեռք բերել ավելի փոքր տարածքով ավելի էժան բնակարաններ: Ունեցած բնակարանի վաճառքի և ձեռք բերած ավելի փոքր մակերեսով բնակարանի գների տարբերությունն օգտագործելով կարիքները բավարարելու համար:
- Բնակարանների համապատասխանեցումը տարեց անձանց կարիքներին հատկապես հրատապ է գյուղական վայրերում: Գյուղական բնակիչներից քչերն ունեն կոմունալ հարմարություններ իրենց տներում, հաճախ սենյակները տաքացվում են փայտի վառարաններով: Ավելին՝ այդ անձանցից շատերն ունեն անձնական հիգիենայի կարիք, որպեսզի կարողանան հնարավորինս երկար ապրել իրենց տներում:
- Քաղաքներում բնակիչների գերակշռող մեծամասնությունը ապրում են բազմաբնակարանային շենքերում, որոնք համապատասխանեցված չեն տարեց անձանց կարիքներին: Վերելակները տեղադրված են միայն 5 հարկից բարձր շենքերում, դռների տարածքները, սանիտարահիգիենիկ հարմարանքները չափազանց փոքր են հենաշարժողական ապարատի խանգարումներով տառապող անձանց համար: Շրջակա հանրային տարածքը, շենքի մերձակայքը, սոցիալական ենթակառուցվածքը համապատասխանեցված չեն տարեց անձանց կարիքներին:
- 50+ տարիքի բնակչության 27%-ին բնակարանային պայմանները չեն բավարարում, մասամբ են բավարարում 33%-ին, բավարարում են 34%-ին, լիովին բավարարում են 6%-ին:

- Եթե համեմատենք Եվրամիության անդամ պետություններում մեկ շնչի հաշվով մոտ 30 քառակուսի մետր բնակելի մակերես ունենալու ստանդարտների հետ, ապա Հայաստանում բնակարանների մեկ շնչին ընկնող բնակմակերեսի կարիքն էլ ավելի մեծ է: Բնակարան ընտրելու հնարավորությունները խիստ սահմանափակ են, ներկայիս բնակարանային ֆոնդը խղճուկ վիճակում է, քանի որ շատ քիչ ֆինանսական միջոցներ են հատկացվում բնակելի շենքերի մասին հոգ տանելու և դրանք վերանորոգելու համար:

Մոցիալական աջակցությունը

- Հանրապետությունում 50+ տարիքի տղամարդկանց և կանանց համար առաջին երեք ամենակարևոր կարիքները նույնն են՝ *դրամական, առողջապահական և սննդապահովման*: Ընդ որում՝ դրամական աջակցության կարիքը կրկնակի անգամ գերազանցում է առողջապահական և սննդապահովման կարիքներին, եռակի և ավելի անգամ դեղորայքի, բարոյական աջակցության և բնակարանային պայմանների բավարարման կարիքներին:
- *Դեղորայքի* ամենաշատ կարիքն ունեն Կոտայքի, Տավուշի և Գեղարքունիքի տարածաշրջանում բնակվող 50+ տարիք ունեցող տղամարդկանց 28%-ը և կանանց 36%-ը: Առհասարակ, դեղորայքի կարիքն առավել արտահայտված է կին կենսաթոշակառուների մոտ:
- *Բնակարանային պայմանների բարելավման* ամենաշատ կարիքն ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդիկ՝ 19% և կանայք՝ 18%: Այս վերջին իրողությունը կապված է երկրաշարժի հետևանքով ավերված բնակֆոնդի դեռևս մեծ պահանջարկի առկայության հետ:
- *Դրամական օգնության* կարիք ունեն կենսաթոշակառուների 70%-ից ավելին: Հանրապետությունում դրամական աջակցության ամենաշատ կարիքն ունեն Երևան քաղաքում բնակվող 50 տարեկանից բարձր տղամարդկանց և կանանց մոտ 80%-ը:
- *Առողջապահական աջակցության* կարիք ունեն բոլոր կենսաթոշակառուները: Առողջապահական կարիքներն աճում են տարիքի հետ: Հանրապետությունում առողջապահական աջակցության ամենաշատ կարիքն ունեն Երևան քաղաքում բնակվող 50+ տարիքի կենսաթոշակառու տղամարդկանց և կանանց 43%-ը:
- *Առօրյա խնամքի և սպասարկման կարիք* ունեն 65 տարեկանից բարձր գրեթե բոլոր կենսաթոշակառուները:

Արժեքները և դիրքորոշումները

- Հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գույզներների 95%-ը քրիստոնյա են, այլ կրոն են դավանում 0,5%-ը, և ոչ մի կրոն չեն դավանում 2%-ը:
- Հարսանեկան, կնունքի և այլ արարողություններից բացի, կրոնական ծիսակատարություններին մասնակցության պարբերականության գնահատումները ցույց են տալիս, որ հանրապետությունում 50+ տարիքի անձանց և նրանց 50- տարիքի գույզներները կրոնական ծիսակատարություններին մասնակցում են տարին մեկ անգամ՝ 37%-ը, ամիսը մեկ՝ 29%-ը և շաբաթը մեկ՝ 13,5 %-ը:
- Տղամարդկանց համեմատ կրոնական ծիսակատարություններին մասնակցության բարձր ակտիվություն ունեն կանայք: Այսպես, կրոնական ծիսակատարություններին հանրապետությունում յուրաքանչյուր ամիս մասնակցում են կանանց 32%-ը, որը 7%-ով

գերազանցում է տղամարդկանց ակտիվությանը:

- Հանրապետությունում հարցվողների 70%-ից ավելին կարևորում է ընտանիքներում տարբեր միջոցառումների ընթացքում պահպանել կրոնական արարողակարգը:
- Հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց 44%-ը շրջապատում ճանաչում են բազմաթիվ մարդկանց, որոնց կարող են դիմել խնդիրներ առաջանալու դեպքում: Բացասական պատասխաններ են տվել 50-ից բարձր տարիքի տղամարդկանց 20%-ը և կանանց 23%-ը:
- Հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գույզներների 54%-ը գտնում է, որ շրջապատում կան ոչ քիչ թվով մարդիկ, որոնց նկատմամբ լիահույս են: Ընդհանուր առմամբ կարծիքները համընկել են գույզերի 88%-ի և չեն համընկել 12%-ի մոտ:
- Հանրապետության բնակչության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գույզներների 11%-ը զգում են իրենց շրջապատող մարդկանց կարիքը: Շրջապատող մարդկանց պակասության առավել մեծ զգացում ունեն Լոռու, Շիրակի և Արագածոտնի տարածաշրջանում բնակվող 50+ տարիքի տղամարդկանց 17%-ը և Երևան քաղաքում բնակվող 50+ տարիքի կանանց 18%-ը: Այս երևույթը լայն տարածում ունի հանրապետության բոլոր տարածաշրջաններում բնակվող, հատկապես բարձր տարիքային շերտերում գտնվող կանանց շրջանում, ինչը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս, քանի որ կանայք ավելի երկար են ապրում և նրանց թվաքանակը զգալիորեն գերազանցում է նույն տարիքային խմբերում գտնվող տղամարդկանց թվաքանակին:
- **Հասարակության մեջ թերաթեքության զգացում ունեն** հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և նրանց 50- տարիքի գույզներների 22%-ը, ինչպես նաև 50+ տարիքի կանանց և նրանց 50- տարիքի գույզներների 29%-ը: Այսպիսով, կանայք մոտ 7%-ով գերազանցում են տղամարդկանց՝ հասարակության իրենց մեջ լիաթեքության գնահատումներով:
- Հանրապետության 50+ տարիքի տղամարդկանց և կանանց գերակշիռ հատվածը գտնում է, որ տարեցների մասին պետք է հոգ տանի պետությունը: Այս արդյունքը օրինաչափ է, քանի որ հարցվողները ծնվել և ապրել են Խորհրդային երկրում, որտեղ ամեն ինչ որոշվել է պետության կողմից:

I. Տարեց մարդկանց համայնքային կյանքում ներգրավվելու ուղղությամբ

- Հայ հասարակությանը և հայկական ընտանիքին բնորոշ հոգածությունը տարեցների նկատմամբ զգալի նահանջ է ապրել: Դրա հետ կապված, անհրաժեշտ է, որպեսզի առավել մեծ ուշադրություն դարձվի կենսաթոշակառուների համար կազմակերպվող միջոցառումների ակտիվացմանը և համայնքի հասարակական կյանքին կենսաթոշակառուների մասնակցության շրջանակների մեծացմանը, որը համահունչ է նաև ծերացման հետևանքները մեղմելուն ուղղված Մադրիդյան պլանով նախատեսված հանձնարարականներին:
- Լուրջ անելիքներ կան տարեցներին հասարակության մեջ ինտեգրելու և միջանձնային հարաբերությունների լավացման ուղղությամբ, որտեղ զգալի դերակատարում պետք է ունենան ինչպես ընտանիքները, այնպես էլ քաղաքացիական հասարակության բոլոր օղակները: Հատկապես կարևորվում է համայնքների և հասարակական կազմակերպությունների աշխատանքների վերակառուցման և տարեցների դերի բարձրացման ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը: Տեսանելի արդյունքների ստացման համար անհրաժեշտ է խրախուսել կենսաթոշակառուների կողմից հասարակական կյանքում և քաղաքացիական հասարակության զարգացման գործում ակտիվ մասնակցությունը:
- Համայնքներում ստեղծել տարեցների ակումբներ և ցերեկային կենտրոններ:

II. Մերունդների միջև համերաշխության և համագործակցության ընդլայնման ուղղությամբ

- Խրախուսել բազմասերունդ կամ ընդլայնված ընտանիքներին, լուսաբանել այդ ընտանիքների դրական օրինակները հանրապետական և տեղական զանգվածային լրատվամիջոցներով:
- Վերահաստատել ընտանեկան և միջսերնդային համերաշխության դերը՝ նպատակ ունենալով համայնքի զարգացման մեջ բարելավել տարեց մարդկանց կյանքի որակը:
- Կատարել տարեց մարդկանց երկարաժամկետ խնամքի հետ կապված պատասխանատվությունների և պարտականությունների բաշխում: Անհրաժեշտ է աջակցել տարեցներին խնամող ընտանիքներին և խթանել միջսերնդային ու ներսերնդային համերաշխությունն այդ ընտանիքների անդամների միջև:
- Ցուցաբերել հատուկ օժանդակություն տարեց և խնամքի կարիք ունեցող անդամներին խնամող ընտանիքներին, թե նյութական, թե բարոյական օգնության տրամադրման ձևով:
- 50+ տարիքի մարդկանց ակտիվ ներգրավել համերաշխության և առավել ծերերի խնամքի կամավոր խմբերում:
- Անհրաժեշտ է ձևավորել տարեց անձանց և ծերացման առավել դրական վարկանիշ, նախատեսել միջոցառումներ՝ բարձրացնելու հանրության, հատկապես երեխաների և երիտասարդների, իրազեկվածությունն այն մասին, որ տարեց անձանց նպաստը ընտանեկան և հասարակական կյանքին չափազանց էական է:
- Կարևորել հանրության իրազեկության բարձրացումը՝ ծերացման դրական կողմերի, տարեց անձանց իմաստության ներկայացումը, դրա ընկալման զարգացումը, այն որ տարեց անձինք և նրանց կենսափորձը մեծ արժեք են՝ անկախ նրանց կրթության,

տնտեսական գործունեության և ինքնուրույնության մակարդակի տարբերությունների:

III. Աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում տարեց մարդկանց նկատմամբ իրականացվելիք քաղաքականության ուղղությամբ

- Հանրապետության աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում իրականացվող քաղաքականության մեջ պետք է դերակատարում վերապահվի նաև կենսաթոշակառուների աշխատանքային երկարակեցությանը և համապատասխան քաղաքականության վարման ուղղությամբ միջոցառումների ծրագրմանը, որը միանշանակ համահունչ կլինի նաև Մադրիդյան պլանի հանձնարարականներին: Այս պարագայում կենսաթոշակառուների մի զգալի հատված կվերածվի կամ կշարունակի մնալ կենսաթոշակային համակարգում եկամուտների ապահովադիր:
- Հանրապետությունում 50+ տարիքի անձանց եկամտաբեր գործունեության երկարատևության ապահովման համար կարևորել որոշակի մասնագիտություն ունեցող անձանց տնայնագործական աշխատանքներում ներգրավման խթանումը, մասնավորապես ժողովրդական արհեստներ տիրապետողներին՝ գորգագործներին, կարպետագործներին, ժանյակագործներին, կավագործներին, դարբիններին, գորելեն գործողներին և այլ մասնագետներին: Տնայնագործության խթանումը, բացի ավագ սերնդի ներկայացուցիչներին զբաղվածություն ապահովելուց, կնպաստի նաև ժողովրդական արհեստների պահպանմանը, որը կարևորվում է նաև ազգային արժեքների պահպանման և երիտասարդ սերնդին փոխանցման նկատառումներով:
- Ծերացման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ համապատասխան ռազմավարության մշակման հեռանկարում կարևորել ավագ սերնդի աշխատաշուկայում մրցունակության բարձրացման հարցադրումների ներառումը և դրանց լուծումների ուղղությամբ մեխանիզմների սահմանումները:
- Ներդնել կենսաթոշակի անցած անձանց համար զբաղվածության ավելի ճկուն համակարգեր, առանց աշխատաշուկայում անհամաչափություններ և սերունդների միջև կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծելու:
- Իրականացնել միջոցառումներ գործատուների համար՝ տարեց մարդկանց աշխատանքի վերցնելու բացասական դիրքորոշումների հաղթահարման և նրանց աշխատանքային փորձի ու հմտությունների ավելի երկար կիրառության, ինչպես նաև 50+ տարիքի անձանց կողմից հասարակական կյանքին և քաղաքացիական հասարակության զարգացման գործում ակտիվ մասնակցության խրախուսման նպատակով:

IV. Տարեց մարդկանց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային գործունեության խրախուսման ուղղությամբ

- Ծերացման հետևանքների հաղթահարմանն ուղղված ռազմավարության մեջ անհրաժեշտ է, որ նախագծվող ծրագրային միջոցառումների արդյունքում լիարժեք պայմաններ ստեղծվեն տարեց անձանց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային գործունեության համար: Նրանք պետք է հնարավորություն ունենան աշխատելու, սովորելու և կատարելագործվելու, քանի դեռ ունեն ցանկություն և կարողություն:
- Այս նպատակին հասնելու համար համապատասխան միջոցառումներ պետք է ձեռնարկվեն հետևյալ ուղղություններով.
- Բնակչության ծերացման հարցերով գործուն քաղաքականության մշակում և իրականացում

- Սոցիալական ապահովագրության համակարգի համապատասխանեցում ծերացման հիմնախնդիրներին
- Սոցիալական և առողջապահական ծառայությունների համակարգի զարգացում և տարեց մարդկանց կյանքի որակի բարելավում
- Հասարակության մեջ և ընտանիքում տարեցների նկատմամբ դրական դիրքորոշման և սերունդների միջև փոխհամաձայնության և համերաշխության ձևավորում:

V. Տարեց մարդկանց շարունակական կրթության և աշխատավայրում մասնագիտական ուսուցման խրախուսման ուղղությամբ

- Անհրաժեշտ է ստեղծել շարունակական կրթության համակարգ, որն ուսուցում կապահովի ողջ կյանքի ընթացքում, կլինի մատչելի և սոցիալապես արդար: Կարիք կա մշակել «Մեծահասակների ոչ ֆորմալ կրթության մասին» օրենք, որը կամրագրի մեծահասակների ոչ ֆորմալ կրթության նպատակները՝ անձի ողջ կյանքի ընթացքում սովորելու, իր իմացաբանական կարիքները բավարարելու, որակավորումը բարձրացնելու կամ լրացուցիչ որակավորում ձեռք բերելու և դրանց իրականացման համար պայմանների ստեղծումը:
- Տնտեսական և սոցիալական բարգավաճման համար առանցքային նախապայման է հանդիսանում մարդկային կապիտալի պահպանումը և զարգացման ապահովումը: Անկախ տարիքից, բնակչության շարունակական կրթությունը խրախուսելուն ուղղված միջոցների, մասնագիտական ուսուցման մակարդակը բարձրացնելու և կրթական համակարգի բարեփոխումների հարցերը պետք է նախատեսել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ստեղծելով կիրառման արդյունավետ մեխանիզմներ:

VI. Սոցիալական և առողջապահական ծառայությունների համակարգի զարգացման և տարեց մարդկանց կյանքի որակի բարելավման ուղղությամբ իրականացնել՝

- ծերերի համար նախատեսված հաստատություններում և համայնքներում սոցիալական ծառայությունների որակի բարձրացում
- հատուկ մասնագիտացված հաստատություններում բնակվող տարեց մարդկանց կյանքի որակի ապահովում
- հանգստի, սպորտի, տուրիզմի և մշակութային կյանքին մասնակցելու տարեց մարդկանց հնարավորությունների ընդլայնում
- տարեց մարդկանց մասնագիտացված խնամքի ապահովման համար սոցիալական աշխատողների վերապատրաստում և հմտությունների զարգացում
- տարեց մարդկանց խնամքի և սոցիալական ծառայություններ մատուցելու գործում հասարակական կազմակերպությունների դերի խթանում
- առողջապահության բնագավառում սոցիալական արդարության, հանրային առողջության անվտանգության, կյանքի միջին տևողության ավելացման, բնակչության համար անվճար բժշկական օգնության մատչելիության առավելագույն ապահովում՝ սկիզբ դնելով ոլորտում սոցիալական և շուկայական արժեքների նպատակաուղղված հավասարակշռմանը
- առողջության պահպանումը սոցիալական և տարիքային բոլոր խմբերի համար պետք է ընդունվի որպես մարդու հիմնական իրավունք և երկարաժամկետ տնտեսական ռազմավարության բաղկացուցիչ
- տարեց մարդկանց բավարար առողջական վիճակի և կյանքի որակի ապահովում՝ համապատասխան ծավալի, տեսակի և որակի առողջապահական ծառայությունների տրամադրման միջոցով

- տարեցներին խնամքի ծառայություններ տրամադրող բոլոր հաստատություններում, հնարավորության սահմաններում, ծերաբույժի և ծերաբանի հաստիքների ապահովում
- հոսպիսային օգնության ծառայության ներդրում
- տարեցների յուրահատուկ կարիքների համար հարմարեցված սոցիալական տների կառուցման ծրագրեր
- տարեց բնակչության հոգեկան առողջության ամրապնդման շրջանակներում անհրաժեշտ միջոցառումներ՝ սթրեսային վիճակների կանխման ուղղությամբ, որոնք կարող են ներառել վստահության հեռախոսահամարների կիրառումը, բժիշկ-հոգեբանների, հոգեբույժների, սոցիալական աշխատողների հմտությունների կատարելագործումը, այդ ծառայությունների հասանելիության ու մատչելիության բարձրացումը: Այդ ոլորտներում կարևոր դերակատարում ունեն Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, մասնագիտացված ՀԿ-ը՝ համապատասխան ծառայությունների իրականացման կազմակերպման ուղղությամբ
- տարեցների համար մատուցվող առողջապահական, խորհրդատվական ծառայությունների տեղական, մարզային, հանրապետական կենտրոնների հետագա զարգացման ու ամրապնդման միջոցառումներ կիրառելով շրջիկ խմբերի աշխատանքը՝ գյուղական վայրերի և հեռավոր տարածքներում ապրող բնակչությանը ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով
- մեծացնել զգալի դերակատարում ունեցող ընտանեկան նպաստների չափերը, առողջապահական ծառայությունների անվճար կամ զեղչված գներով մատուցման և անվճար դեղորայքի տրամադրման ծավալները և տարածաշրջանային ընդգրկվածությունը: Նշված պետական տրանսֆերտները հատկապես կարևոր են սոցիալական կենսաթոշակառուների ընտանիքների համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական կենսաթոշակը, անգամ 2009թ. բարձրացումներով հանդերձ (8000 դրամ), կրկնակի անգամ զիջում է ծայարին աղքատության պարենային գծին: